

ԵՒԿՈՒԱՅ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՐՄԲԱԿԱՏ  
ԵՐԿՐՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կուսակցության հայտարարության վերաբերության  
ազգային ակադեմիայի պահպանապահության ինստի-  
տուտի քարտ, ուղարկած վերաբերության շրջանու  
պահպահության հայտարարության վերաբերության  
վայրության վեպահանքության գրքից. Դա նորոյ ա-  
րդարացնելիք ակադեմիայի նպային սպառ-  
ուցակ խմբավայրերինի վերաբերության մ-  
տածացնելու ակադեմիայի Շնորհական Ակադեմիա-  
վերաբերության մասնակիցների համար է ֆա-  
կուս. Այսուհետեւ պահպան վերաբերության առջև-  
ան տեղական և ազգային պահպա-  
հանքության շենքը կայուն ու պահպա-  
հանքության պահպահության նկատ-

ՄԵԼԻՔՆԱՍՈՒԹՅԱՆ  
«ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՏՈՎԱՔԵ ԶԵՐԵԶՑԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ»  
(ԱՄՀՆ)



THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY  
"ARMEN AND BERSABE JEREJIAN  
FOUNDATION" Inc.  
(USA)

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

NIKOLAY HOVHANNISYAN

HISTORY  
OF THE ARAB COUNTRIES  
I

*FROM VII CENTURY TO 1516*



---

YEREVAN 2003

950 (-011)

✓

ԱՐՄԵՆԻԱՆ ԳՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԱՎԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱՊՐԻՆՈՅԱՆ ԻՆՍՏԱՏՈՒ


ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՈՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

ԱՐՄԵՆԻԱ VII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1516 թ.

A 28678



ԳՐԵԿՈ 2003

Դրաստարակման է ՀՀ ԳԱՍՏ Արևելագիտուրյան ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՖԴ 93/99  
ԳՄԴ 63.3(5 Արար)  
Ն 854

Խմբագիր Վահան Թայրուրյան  
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ն 854 Հովհաննիսյան, Եիլույայ  
ԱՐՄԱԿԱՆ ԵՐԿՐՈՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: Խառորդ I. Արարները VII դարից մինչև 1516 թ.՝ Եր.: Զանգակ-97, 2003. – 416 էջ \* 16 կալճ.

VII դարում պատմության բատերաբնույթ Խաքովից Աշարական խայիթայուրունց, որը մեծ դեր է խառացել Խանաշխարհային պատմուքյան մեջ։ Սշխառությունն առաջին փորձն է նոյ ընթրցողին իր ճայրնելի լազմով, եթեր հասորով, ֆառուցելու մեջ մերժավորացնելուն հարեւամբ՝ պար մոդովոյն սպանությունը մ.թ. VII դարից մինչև մեր օրերը։

Եռահասուրյակի սույն առաջին հասորը ընթրցվել է VII դարից մինչև 1516 թ. ընթաց ժամանակահատվածոց, մինչև արարական երկների նվազումն օսմանյան պետության երրորդից։

Այս ժողով իններարդուրամաս ժամանակաշրջանը ներառունք է այնպիսի առանձքային հարցերի լուսաբանությունը, թեզման Սուլամմար ծարգարի հայությունը, համաշխարհային նոր կրոնի խրամի առաջացումը, պարական խայիթայուրյան ծխավորումը, Օմայան (661–750 թթ.) և Աքրանան խայիթայուրյանները (750–1258 թթ.), Զարիմյանները և Ալուրինները, մածությունի հանջն գայը և այլն։

Պատշաճ ուշադրություն է դրաժմիկ Խայ-արարական պատմական Խարաբրություններին, խայիթայուրյան կազմուն Արմինիա վարչական միավորի ծեսավորումնը և Խարակից այլ հարցերի։

Զգայի տես է գրաւուն նույն խայիթայուրյունում, մշակութային կյանքի լուսաբանությունը։

Նախառանակած է պարագաների, պանձագետների, պատմաբանների, պիտույքագույն և քաղաքացիների և առաջազդությունների համար։

Ն 0503000000  
0003(01)–2003 2003 թ.

ԳՄԴ 63.3(5 Արար)

ISBN 99930-2-725-1

© Ն. Ն. Հովհաննիսյան, 2003 թ.

## Առաջարկ

Արարները աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն են, որոնք ունեն հարուստ, հետաքրքիր և ուսանելի պատմություն: Նրանք հնագույն ժամանակներից ի վեր խաղացել և այսօր էլ շարունակում են խաղալ կարևոր դեր համաշխարհային պատմության մեջ:

Դեռևս վաղ միջնադարում արարները ստեղծեցին իրենց պետություն՝ Արարական խալիֆայությունը, որի տիրապետության ներքո հայտնվեցին Սսիայի և Աֆրիկայի ռազմում երկրներ և ժողովուրդներ: Դա մի հզոր և ընդարձակ կայսրություն էր, որը տարածվում էր Անդրկական օվկիանոսից մինչև Աստղանոյան օվկիանոս և Վենական դեր խաղում ժամանակի միջազգային հարաբերություններում:

Սեծ է արարների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության բնագավառում: Նրանք եղան համաշխարհային ամենատարածված կողմներից մեկն՝ խալաֆի հիմնադիրը և մի նոր՝ արարական այրութեան ստեղծողները, որը գործածվում է Սսիայի և Աֆրիկայի քաղաքական խալամադական ժողովուրդների կողմից: Նրանք մեծ գարկ տվօնին պատմագիտության, աշխարհագրության, փիլիսոփայության, քիմիայի, նարեմատիկայի, աստղագիտության և այլ գիտությունների զարգացմանց: Արարներն իրավամբ համարվում են մի ինքնատիպ քաղաքակրթության հիմնադիրը, որը հայտնի է արարա-իսլամական քաղաքակրթություն անվանումով:

Այս բուքը խոր հետք է բողել նարկության պատմության մեջ:

Սակայն հեշտ ու խարազ չի եղել արարների զարգացման պատճեական ուղին: Դաշտանակների և նվաճումների քաղցրության հետ միասին նրանք նաշակել են նաև պարտությունների և կորուստների դաշնությունը:

Արարների համար ճակատագրական եղավ օսմանյան լոի տակ հայտնվելը: Մոտ չորսդարյա օսմանյան դաման տիրապետությունը (1516-1918 թթ.) կասեցրեց արարների քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացումը: Դա քեզուս արարների պատմության ամենամոռայլ ժամանակահատվածն էր:

1918 թվականից, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, արարաբները բնակչության իրենց զարգացման նորագույն շրջանը, որն առանձնահատուկ տեղ է գրավում նրանց հազարամյա պատմության մեջ: Դա նաև առաջարկության նշանակություն ունեցող և իրադարձություններով հարուստ, հաղթանակների և պարտությունների, հույսերի և հիմասրափությունների, քայլ և վերընթաց զարգացման դարաշրջան է:

Արաբական ժողովուրդներն իրենց զարգացման պատճական այս վիւլում հասան իրենց դարավոր երազանքի իրականացմանը: Նրանք բորբագիչներին օսմանյան 400-ամյա դաժան լուծը, որը նրանց քաղաքական հետամնացության և տնտեսական թշվառության գլուխավոր պատճառներից մեկն էր: Արաբական լուսավոր քաղաքական միտքն օսմանյան տիրապետությունից ազատագրվելու մեջ էր տեսնում արաբական զարգանքի և վերածննդի նախադրյալները և հնարավորությունը: Ուստի և Օսմանյան կայսրության վիւլումն արարաբները, Երանց տարբեր սոցիալական խավերը և բոլոր հասարակական-քաղաքական ուժերը դիմավորեցին խանդավառությամբ: Նրանք հայտադարձ էին, որ հասել է իրենց պատմության աստեղային ժամը՝ դառնալու իրենց սնիփական ճակատագիրն ազատորեն տնօրինումներ և իրենց զարգացման ուղին ցայտ իրենց պատճական ավանդությների, պատկերացումների և աշխարհըմբռնների:

Սակայն դեռ հետու էր այդ պահը: Արաբական երկրները դեռևս ուշից շենի եկել օսմանյան տիրապետության տապալումից և դեռևս ինչպես հարկեմ է շենի ըմբուղչինել երևակայական ազատության քաղցր պատուիները, եթե նրանք ընկած մեկ այլ օտար տիրապետության տակ, այս անգամ Անգլիայի և Ֆրանսիայի, որոնք 1920 թ. ստացան արաբական մի շարք երկրներ կառավարելու Ազգերի լիգայի մանդատը:

Նիշտ է, միայ կլիմեր հավասարության նշան ունել օսմանյան բարբարուսական լծի, որի վերցնական նպատակը կայսրության ռուլոր ոչ քուրք ժողովուրդների՝ արարաբների, հույների, հայերի, քրիստոնեացիների, ալավինների թօնի բրցացումն էր, և անզիյական և ֆրանսիական տիրապետության միջև: Մատեան փաստը մնում է փաստ, որ արարաբներին չհաջողվեց այդ ժամանակ հասնել քաղաքական անկախության և ազգային ինքնուրույն պետության ստեղծման: Այդ կարևոր ազգային-քաղաքական խնդիրը նրանք կարողացան լուծել միայն Երկրուող համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանում, որը նրանց պատճեն մեջ մտել է որպես ազգային-ազատազրական պայքարի դարաշրջան:

ջան; Այդ պայքարը հիմնականում ավարտվեց 1940–1970-ական թվականներին, եղր աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց 18 անկախ արարական պետություն:

Արարաները մշտական փայլիսան են միասնական արարական պետություն տանեցնելու, իսկ նրանց որոշ գաղափարախռությունը անգամ Արարական խալիֆայության վերականգնման գաղափարը: Սակայն իրականությունն ավելի զրոյե գտնվեց, քան թե երազանքը: Մի շարու քաղաքական, տնտեսական, տցիալական, ինչպես նաև արտաքին քաղաքական գործուների պատճառով, մեկ միասնական արարական պետության փոխարժեն ստեղծվեցին մոտ երկուամյակ ամկախ պետություններ:

Արարաների կողմից անկախության նվաճումը և ինքնիշխան ազգային պետությունների կազմակորումը կարևոր պատճական նշանակություն ունեցող երևույթ է, որն արմատապես փոխեց իրադրությունը և ուժիքի փոխարարաթերությունն ամրող Մերձավոր Արևելյում: Արարական երկրները միջազգային հարաբերությունների կրավորական ներականներից վերածվեցին համաշխարհային պատճական գործնքացի ակտիվ նաևնակիցների, որոնք այսօր նշանակալիուն ներգործում են միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքական մրույրուի ծևակվորժան վրա:

Անկախության ուղին ուղած արարական երկրների զարգացման ուղին հեշտ ու խաղաղ չի եղի: Դա մացառումների, քաղաքական փորորիկների, բախտմների, մեծ և փոքր պատերազմների, վրիպումների և սայրացումների ուղի է եղի: Դա միաժամանակ եղել է հայրամակների, ազգային ամկախության ամրապնդման, պետական շինարարության և տցիալ-տնտեսական աշաջընթացի ուղի:

Սակայն զարգացման հետ կապված դժվարությունները և քարոզությունները բնորոշ են ոչ միայն արարական երկրներին, այլև աշխարհի բոլոր երկրներին: Այդպիսին է Կյանքը, այդպիսին են քաղաքական իրույրությունները:

Ինչպես նշվեց, արարական աշխարհը ծգվում է Դներկական օվկիանոսից մինչև Աստղանոյան օվկիանոս, գրադեցնելով հսկայական տարածքներ ասիական և աֆրիկան մայոցամարմներում:

Պայմանականորեն այն քաժանվում է Արարական Արևելքի՝ ալ-Մաշհիկ, և Արարական Արևմուտքի՝ ալ-Մադրիք:

Սովորաբար ալ-Մադրիդի մեջ մտցնում են Հյուսիսային Աֆրիկայի բոլոր արարական պետությունները՝ Սուդանը, Լիբիան, Թունիսը, Ալ-Ճիրը, Մարոկոն և Մալթիտանիան:

Բացառություն է կազմում Եգիպտոսը, որը թեև գտնվում է Հյուսիսային Աֆրիկայում, սակայն ավանդաբար մասնագետներն այն համարում են Արարական Արևելքի մի մասը, ելնելով հավամարտ այն իրողությունից, որ Եգիպտոսը պատմականութեն, բայց արական, տնտեսական և մշակութային առումով սերտորեն կապված է Եգիպտոսի և այժմ էլ կապված է Արարական Արևելքի հետ: Նա իր պատմաբաղադրական և հոգևորմշակութային ժառանգությամբ ավելի շատ մերձափորարնելյան, քան թե աֆրիկյան երևույթ: Մենք նույնպես, հնտեսեցով այդ ավանդույթին, նպատակահարմար ենք գտել Եգիպտոսը ներառնել ալ-Մաջրիկի մեջ:

Արաբների պատմության ուսումնախորհրդական հետաքրքրություն է ներկայացնում հայերի համար: Արարական Երկրության մեջ հայաստանի մերձավոր հարևաններն են և նրանք պատկանում են միևնույն՝ մերձավորարևելյան աշխարհաբաղադրական տարածաշրջանին: Դայ ժողովոյի պատմությունը սերտորեն կապված է Արարական Արևելքի պատմության հետ թե՝ Արարական Խալիֆայության շրջանում, թե՝ օսմանյան տիրապետության ժամանակ, եղր արաբները և հայերը գտնվում են միևնույն սուլթանական դաման լոի ներդու և դարձել էն քահիտակից ժողովուրդներ, և թե՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ի մասնավորին հայոց ցեղասպամության ընթացքում, եղր արաբները, որոնց գլխին նույնպես կախված եր ցեղասպամության իրական վտանգը, օգնության ծեղը մեկնեցին հայ տարագիրներին:

Արարական Արևելքի Երկրներում, առաջին հերթին Միջիայում, Լիբանանում, Իրաքում, Եգիպտոսում, Պորտանանում և այլն, հնուց ի վեր գյոյնություն են ունեցել հայ համայնքներ, որոնք որոշակի ներդրում ունեն հյուղների արարական Երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կանցքում: Նրանք ըստ երեքյան կամրջի դեր են կատարում արարական Երկրների և Հայաստանի միջև:

Իսկ Հայաստանի անկախության նվաճումից հետո հայ-արարական հարաբերությունները բարձրացվեցին միջանական հարաբերությունների մակարդակի: Արարական աշխարհից, մասնավորապես Արարական Արևելքը, սորատեղիական, ինչպես նաև տնտեսական կարևոր նշանակություն ունեն Հայաստանի համար, և հարաբերությունների

սերտացումը նրանց միջև կամրջավճի ՝ Պայտառամի միջազգային դիրքը և կնքամատի նրա տնտեսական զարգացմանը:

Սակայն այս բոլորի համար անհրաժեշտ է լավ իմանալ մեր հարցան և քարեկան արար ժողովրդի ճշմարտացի պատմությունը:

Սույն աշխատության կարևոր խնդիրներից մեկն է հենց դա է:

Դեղինակը ծովանամուխ լինելով արարական երկրների պատմության ուսումնամիջությանը հենագույն ժամանակներից մինչև մեր օրերը. նպատակ է որեւ լուսարանեւ այդ շրջանի հանգուցային հարցերը և զարգացման օրինաշահությունները՝ ըստ պատմական փուլնի:

Աշխատությունը կազմված է երեք հատորից:

Առաջին հատորն ընդգրկում է արարաների պատմությունը VII դարից, համաշխարհային քամերարթում նոր կրոնի՝ խալամի և Արարական խալիֆայության հայտնվելուց. մինչև 1516 թ., երբ սկսվեց արարական երկրների նվաճումը օսմանյան բուրքերի կողմից:

Երկրորդ հատորը նվիրված է արարական երկրների պատմության քննարկմանը օսմանյան տիրապետության տարիներին, որն ընդգրկում է չորսհարյուրամյա մի վիրտսարի ժամանակաշրջան, 1516–1918 թվականները:

Եվ, լինջապես, երրորդը հատորն ընդգրկում է նորագույն շրջանը, 1918–2000 թթ., երբ արարաներին հաջողվեց նվաճել իրենց քաղաքական և մայակայությունը և ծևավորվեցին 18 սուլթանն անտություններ՝ Ալժիրը, Արարական Միացյալ Եվրոպյունները, Բահրեյնը, Եգիպտոսը, Եմենը, Թումհիսը, Իրաքը, Լիբանանը, Լիբիան, Կատարը, Հոդիյանանը, Մաուլան Արարիան, Սիրիան, Սուլյանը, Շուվեյրը, Օմանը, Մարոկոն, Մավրիտանիան:

Սույն աշխատությունն առաջին փորձն է հայ իրականության մեջ ամփոփ կերպով ներկայացնելու արարական երկրների պատմությունը հենագույն շրջանից մինչև մեր օրերը, թեև պետք է նշել, որ դա կատարվում է մեծ ուշացումով, քանի որ վայուց եր զգացվում նման աշխատության կարիքը:

Դեղինակը ոչ մի հավակնություն չունի աշխատություն համարել ամրողական և ամբողջի: Թե որքանով է դա հաջողվել նրան, որը քառասուն տարուց ավելի մասնազիտորեն ուսումնամիջություն է արարաների պատմությունը, արարական երկրների ներդին և արտաքին քաղաքականության հարցերը, թողնում ենք անայտ ընթացողի անկողմնակալ դատին:

## Գլուխ առաջին

# ԱՐԱԲՆԵՐԸ ԴՆԱԳՈՒՅՆ ԺԱՍՏԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ VII ԴԱՐԸ

## I. ԱՐԱԲՆԵՐԻ ԲՆՈՐՐԱՆԸ

### 1. Արաբական թերակղզին և նրա բնակչության պայմանները

Արաբների բնօրրանց Արաբական թերակղզին է, որի տարածքը կազմում է 3 մլն. քառ. կմ.: Արևմերից նրա ափերը ողողում են՝ “Պարսից ծոցի, արևմուտքից՝ Կարմիր ծովի, իսկ հարավից՝ Արաբական ծովի ջրերը։ Նրա բնույթունը դաժան է և մարդու կյանքի և գործունեության համար ոչ այնքան բարենպաստ։

Թերակղզու կենտրոնից առվիշին կազմում են ամապատճերը և կիսաանապատճերը։ Դրանց մեջ իր մեծությամբ և անկենդան բնույթյամբ ամենահայտնին Ոուր ալ-Խալիք («Դատարկ քառորդ») անապատն է, որը գրավում է թերակղզու հարավ-արևմելյան հատվածը։ Մյուս անապատներից պետք է նշել Սիրիական անապատի մի մասը՝ հյուսիսում, ան-Լաֆուդյ, սպիտակագույն և կարմրավուն ավագաթմբերի մի խկական քաջավորություն, Շահնան, որն անվանում են նաև Կարմիր նրկի նրա կարմրավուն ավագների պատճառով, որը ծգվում է հյուսիսում ան-Լաֆուդյից մինչև Ոուր ալ-Խալիք հարավում, և այլն։

Թերակղզու կենտրոնական մասը գրավում է ան-Լազդ սարահարքը, մի ջրագուրկ և կանաչագուրկ տարածքը։ Ընդհանրապես Արաբիայի տարածքի 1/8-Ծ անմարդաբնակ է։

Արարական թերակղզին այն եզակի տարածքներից է, որտեղ չկան մշտական գետեր: Կան միայն այսպիս կովկած վաղիներ, չորացած զետահուներ, որոնցով հոսում են անձրևացրելով հազվագյուտ անձրևներից հետո: Կարենի է ասել, որ թերակղզին ծածկված է վաղիների, չորացած կամ ցամացած գետերի, գետակների և առվակների ցանցով, որոնցով հոսող սակավ անձրևացրելով շատ կարճ ժամանակով՝ կյանք են պարզութեամբ՝ ցովվոր թերպիներին և անցնոր քարավաններին: Ընդհամարական տեղումները շատ թիւ են, իսկ որոշ շրջաններում նրանք համարյա չեն լինում: Ռուբ ալ-Խալիֆ անապատում տարեկան տեղումները կազմում են ընդամենը 10 մձ.: Ռասիդ և ավազախանը քամեները՝ սամումները, խամսիները և այլն, անապատույին կամքի տիրակալներն են, որոնց մեջ վտանգ են ներկայացնում անապատներում պատահականորն կամ անզգուշաբար հայտնված մարդկանց, ինչպիս նաև քարավանների համար:

Թերակղզու բնապատկերը փոխվում է արևմտյան և հարավային մասներում, որոնց ավելի նպաստավոր են մարդկանց ֆիզիկական գոյության և տնօտեսական գործունեության համար:

Արևմտյան մասում, Կարմիր ծովից ափերին, ծզվում են թիհամի հարրավայրային և Յիջազի քարծրավանդակային շրջանները, որոնց շարունակակրցուն է կազմում ալ-Մսիրի լեռնային շրջանը: Ինչպիս հետում, այնպիս էլ մեր օրերում, այդ շրջաններում են գտնվում Արարական թերակղզու անենարարեթեր հողերը և նրանք Արարիայի ամենակենտրոնակ տարածքներն են:

## 2. ԲՈՒՏԱԿԱՆ ԱԺԽԱՐԺԸ

Արարիայի հարավային մասը գրադեցնում է Եմենը՝ Յաղրամառութեամբ: Այստեղ, շնորհիկ մուսունային համեմատաբար հորդառատ անձրևների, գոյություն ունեն արևադարձային խոնակ գոտիներ փարամ բռւսականությամբ:

Դնում և վաղ միջնադարում Եմենի շատ լնոնազոտիներ պատված են նոյն անգամ անտառներով, որոնք հետագայում վնրացել են: Մերկացած սարաւանցերում Եմենցիները զարկ են տվել տերասային համակարգին, որն անձրևացրելով ավելի երկար ժամանակով պահելու և հավասարակի քաշինելու շատ հարմար միջոց է և մեծապես նպաստել գյուղատնտեսության զարգացմանը:

Այս բոլորին պիտք է ավելացնել նաև օազիսների գոյությունը: Օազիսները ցրված են ամրող Արարիայի տարածքով, թերակղզու բոլոր մասերում: Նրանք գոյություն ունեն հիմնականում շնորհիվ սուրբ գետնա ջրերի, որոնց համարդիկում են անձրևաջրերով: Օազիսները սովորաբար յուրատեսակ կանաչ գոտիներ են, հարուստ բուսականությամբ, որտեղ տիրապետող է արմավճնին, որին արարներն անվանում են «Բույսերի թագուհի»:

Արարիայի կլիման չորային, արևադարձային է, ամառը սաստիկ չոք է, իսկ ձմեռը չափավոր, մեղմ կլիմա է, թեև սարերում երթեմն նաև ձյուն է գալիս:

Արարիայի բուսական աշխարհը առցատ է, սարերը և լեռները լեռկ են, նրանք վաղուց կորցրել են իրենց անտառային ծածկությը, ցածրադիր վայրերում և սարահարթերում աճում են անապատմերին բնորոշ փշատերև գաճաճ բուսատեսակները: Բացառություն են կազմում օազիսները, որտեղ աճում են արմավճնիներ, իսկ բուսականությունն ավելի քաղաքատեսակ և փարբած:


Արմավճնիներով հատկապես հարուստ է Յիշազը: Նրանց պտուղը՝ արմավճ կամ արարերեն թամրը, դարձն շարունակ կաթի հետ միասին կազմել է թթուին արարի հիմնական սնունդը: Նրա համար մշտական նրազանք է եղել մշտապես ունենալ քուր և արմավճ: Սուհամադադար մարդարենին են վերագրվում «Յարզիր քո հորաքրոջը» արմավճնուն, որը ստեղծված է այն նույն կավից, ինչ որ Սոհամը» արտահայտությունը: Բույսերի թագուհու նման աստվածացումը հասկանայի կրյանա, եթե հաշվի առնենք թերվինի կրանքի ծամր պայմանները կամ արմավճնու կենսատու որդակները:

Եմենում և օազիսներում մշակում են ցորեն, ինչպես նաև զարի, որն օգտագործվում է որպես անասնակեր ծիերի համար: Առանձին վայրերում մշակում են նաև բրինձ:

Զգայի են նաև սուրճի պլանտացիաները: Սուրճն արարական աշխարի, առաջին հերթին Յարավային Արարիա, մուտք է ցործել XIV դարում Յարեշստանից և անմիջապես լայն տարածում գտնել արարների մոտ, իսկ այնուհետև Արարիայի սահմաններից դուրս, թեև նրա մասին հիշատակումներ կան VI դարի արարական ալերյութերում:

Սուրճը շատ հաճախ նաև անվանում են «Խալամի գինի»:

**LA PLATA** (URUGUAY)



Ցածրադիր վայրերում, ռազմական գոտիներում և համեմատարար անձնագատ հարթավայրերում մշակում են ճիշտապոյի, խաղողի, խնձորի, ծիրանի, նարնջի և այլ պտղաբուլ այգիներ:

### 3. Կենդանական աշխարհը: Ռուտոց

Մոքաստ է նաև Արարիայի կենդանական աշխարհը, բներ հնուց, երրուսական աշխարհն ավելի հարուստ է, բազմազան է եղել նաև ֆառանամ: Նրա անրածան նասն են կազմում ռուտոց, բարացօք, աղվեսց, քայլամը, բռնենին, գայլը, վայրի այծը, հովազը և այլն: Եմեմում համեմիալում են կապիկներ: Դատենով արարական իինավուրց հերիաքններից, հնուց Արարիայում տարածված է եղել նաև այսուց, որը հետագայում, ընակլիմայական պայմանների և բուսական աշխարհի փոփոխությունների հետևանքով, ամփերադարձ անհնտացել է:

Ընտանի կենդանիներից պիտք է նշել ռուտոց, ծին, կատուն, այծը, ոյշաբր և այլն: Թթվակինի կյանցում զգալի տեղ է գրավում ցորին, որը, ինչպես ենթադրում են, եզիստուսից ներմուծել է Սուհամմադը, որը նախընտրում էր նրան ծիուց: Այդուհանները, ծին արարմներն են առաջինը VIII դ. տարածել Եվրոպայում՝ նրանց կողմից նվաճած Իսպանիայից:

Արարի համար բացառիկ նշանակություն ունի ռուտոց, որին նա սիրով անվանում է քամակ: Նա համարվում է «անապատի նավ»: Դեռ ավելին, Կորիանում գրված է, որ ռուտոց Աստծոն հասուն պարզեն է:

Առանց ուրսի ոժմար է պատկերացնել կյանքը անապատում: Եա թեղինին արարի՝ «մյուս եսն է»: Նա վաշկառուն արարին կնքակրուն է, նրա հիմնական և ամենահուսալի փոխադրամիջոցը: Նա հարսի օժիտն է, առյան վլուծի գինը, ցեղապետի հարստության շափանիցը և այլն, և այլն: Թթվակինն օգտագործում է ռուտոի կաթը ցոյի փոխացնն, որը նա մշտապես խնայում է, նրա մորթին՝ ավագից և ցուտից պատսպարվելու և տնային պետքերի համար է, իսկ մազեների բաղիք և վրանների և պատրաստում:

Ջինվորական մասնագետ-տեսաբաններն արարների ռազմական հացողությունների և նվաճումների գաղտնիքներից մեկը համարում են նրանց կողմից ուղարկելի գանգավաճային օգտագործումը, որն արարական գործերին արտավարգ շարժունակություն էր հաղորդում և դրանով գերազանցություն ապահովում հակառակորդի նվաճումամբ:

Ուղարք անապատային դաժան պայմաններում, առանց ջոկ և կերի կարոր է դիմանալ 4–5 օր, օրենքան քայլելով՝ 120–130կմ:

Ուղարք, սակայն, ոչ միայն վաշեաստուն թերվիմի անփոխարինենի օգնականն է, այլև ծառայում է նստակաց արարին: Վերջինս նրան օգտագործում է գյուղատնտեսական աշխատանքների մեջ՝ վարդի ու ցանքի, ցրիդուներից ջուր քաշելու և կենցաղային այլ նպատակների համար:

Պատահական չէ, որ մինչև օրս արարմեջի մոտ տիրապետում է ուղարքի պաշտօնամունքը, որը միանգանայն պատճառարանված է:

Արարիայում տարածված թաջումներից են արծիվը, քազին, աղավնին, մեծ արռաջ, լորձ, բուն և այլն:

Այսպիսով, Արարիայում հնուց ի վեր մարդոց մշտապես մաքառել է բնության հետ, դաժան բնակչինայական պայմաններում իր գոյությունը և տնտեսական գործունեությունն ապահովելու համար:

## II. ԱՐԱԲՆԵՐԸ

### 1. Ինքնանգանումը և կազմավորումը

Արարիան համարվում է սեմական ըմտանիրին պատկանող ժողովուրդների օրինանք:

Նրանց դեօւ հնագույն ժամանակներում դուրս գալով Արաբական թերակղզուց, տարածվում են Բարեբեր Մահիկի՝ Սիրագեստի և նրա հարակից տարածքներում, և հիմք դնում առանձին ժողովուրդների՝ ասուլուների, բարեկացիների, փյունիկների, արամեացիների, հրեաների կազմավորմանը:

Նրանց բնում էր նաև մի երնու, որի իմքնավանումն է «այ—արար»:

Արարներց, աշխաղիկ այդ հնագույն ժողովուրդներից մենք, ծնավորվել ե քուն Արաբական թերակղզում, ինչպես ներադրվում է, հնագույն սեմական ազգակից ցեղերի հիմքի վրա, հականաբար մ.թ.ա. երկրորդ հազարամյակում:

Ասուլներց, արամեացիներց, բարեկացիները և փյունիկները հետազայում ընդմիշտ հետացան պատմության թեմից և տարածաշրջանում մնացին միայն նրանք, սեմական ժողովուրդ՝ արարներց և հրեաներց: Այսօր արարներն աշխաղիկ սեմական ըմտանիրին պատկանող ամենամեծարիկ ժողովուրդն են:

Արդին մ.թ.ա. առաջին հազարամյակում կազմավորվել են Երանց առաջին պետական միավորությունը՝ Թաղմորը, որն ավելի հայտնի է Պալմիրա ամսով, Նարաքեամ՝ Պետրա մայրաքաղաքով, որը հոյակած է իր իր վարդագույն ժայռափոր շինքերով և այլն: Հետագայում, մ.թ. Վ-ՎI դարերում, կազմավորվեցին արաբական նոր պետություններ, ինչպես Դյուսիսային Արաբիայում Դասաւնիների և Լախմի անտությունները, և Թինյահների պետությունը Կենտրոնական Արաբիայում: Դրանք ըստ Էտրյան ցրցվորական ցեղերի կամ ցեղային միությունների պետական կազմավորություններ էին:

Արաբական այս պետությունները ոչ միայն միավորված չեն, այլև շատ հաճախ պայքարում են միմյանց դեմ: Դրա հետևամբով Երանք բռնագամ, ապա և քայլայվեցին, որը հանճեցրեց ՎI դարում Շիջազի դերի քարծրացմանը: Նրան իր երեք քաղաքներով՝ Մեքքա, Էասիրի, որ հետագայում կոչվեց Մարին, և Թաիֆ, վիճակված էր պատմական կարևոր դեր խաղաց արաբների պատմական ճակատագործությամբ:

Արաբական թերակղզու բնակչության արարականացումը գնում էր արագ տեսապերով և արդեն V-VI դարերում արաբները կազմում էին թօրակղզու բնակչության մեծամասնությունը: Արաբականացումն ավարտվեց խալամի ձևավորումից և արաբական միասնական պետությամբ՝ խալիֆայության ստեղծումից հետո:

Սակայն պետք է նշել, որ այդ ժամանակ դեռ վաղ էր խոսել արաբների որպես միակու ժողովովի մասին: Նրանց մոտ շատ ուժեղ էին ցեղերը և ցեղային միությունները, որոնք շատ նախանձախնդիր էին իրենց «ցեղային հնդություն» պահպաններու հարցում: Նման միտումներ էին դրսնորում նաև ոչ բնիկ արաբական սեմական ցեղերը, որոնք թեև ուժացման էին ենթադրվել, սակայն նրանց մոտ դեռ ուժեղ էին անցյակի հիշողությունները:

Արաբական թերակղզու արարականացումը և արաբների որպես ժողովոյի կազմավորումը, որը երկար պատմական պյոցին է, ավարտվեց հետագա դարերում, հատկապես խալամի ընդունումից և Արաբական խալիֆայության ձևավորումից հետո:

## 2. Արաբերնն լեզուն և արաբական գիրը

Արաբները երկար ժամանակակի շնորհեց իրենց սեփական գիրը: Արաբներնը պատկանում է աֆրուսիական լեզվաըմբանիցի սեմա-

կան ճյուղին: Այդ նույն ընտանիքին են պատկանում մի շարք սեմական ծեռած լեզուներ, ինչպես աքքաբերենց, ասուրերենց, արամերենց և այլն: Իսկ կենդանի խոտակցական լեզուներից այսօր ամենատարածվածը արաբերենն է, ապա երրայներենը:

Արաբմերը մինչև իրենց սեմական գրի ստեղծումը երկար ժամանակ օգտվում էին սեմական այլ ժողովուրիշների գրերից, մասնավորապես արամերենից: Չենց նրա հիմքի վրա V դարում առաջացավ արաբական այրութենք և գիրը:

Մինչև արաբական գրի ստեղծումը արաբների մոտ զարգացած էր քանակոր ստեղծագործությունը՝ քանաստեղծություն, ասք. հերիաք, հերոսապատում և այլն, որն ավանդաբար քանավոր կերպով փոխանցվում էր սեմբոնից սերունդ: Ցուրաբանը յատ թե թիւ նշանակալի ցեղ կամ ցեղային միություն ուներ իր սեմիական էպոսը, որը փառարանում էր տվյալ ցեղին, նրա կատարած հնորությունները և քաջագործությունները, նրան վերագրում անգամ գերբնական հատկանիշներ, պարսպավում և ստորացնում հակառակորդ և թշնամի ցեղերին: Դրանով փորձ էլ արվում բարձրացնել տվյալ ցեղի կարևորությունը և դերը հայս արաբական մյուս ցեղերի:

Այդ գործում կարնոր դեր էին խաղում քանաստեղծները՝ շահրմերը, որոնք շատ հաճախ ունեին հասարակական, անգամ դիվանագիտական դերակատարում, մանավանդ միջքեղային հակամարտությունների կամ քահութեների ժամանակ, երբ հարգանք վայելող շահրմերը հանդես էին զայիս որպես հաշտադարմեր:

Դնտագայում, VIII դ., այդ պատումները գրի են աօնվել, պահպանվել և մնե են հասել գրավոր ձևով և ստացել «Այսամ աշ-արար» («Արաբների օրեր») անվանումը: Դրանք ոչ միայն մշակութային արժեք են ներկայացնում, այլև նշանակալի հնորությունն ներկայացնու պատմական աղբյուր են, որոնց օգնությամբ հնարավոր է որոշակի գաղափար կազմել արաբների նախախամական շրջանի պատմական և քաղաքական զանազան հրադարձությունների նախ:

Արաբական գրի ստեղծումը պատմաքաղաքական կարևոր դեր է խաղացել արաբների ճակատագրում, մանավանդ եթե նկատի ունենամք, որ դա տեղի ունեցավ արաբների միջազգային ասպարեզ դուրս գայլու, նոր կորոնի՝ իշլամի, և արաբական միասնական պետության ստեղծման նախօրենին:

Սյուս կողմից, արարական ինքնուրույն գդի շնորհիվ ծնավորութեան մի նոր, մինչ այդ անհայտ արարա-իսլամական մշակույթը, որը կազմում է համաշխարհային մշակույթի անբաժանելի մասը:

Արարական նվաճումների և հայամի տարածման շնորհիվ արարական գիրը լայն տարածում գտավ աշխարհում և դարձավ գործածական գիր մուտքամանական բոլոր ժողովուրդների համար:


Արարերենն միջին դարերում, ընդուաւ մինչև նորագույն շրջամի սկիզբները, կատարում էր միջազգային լեզվի գործառույթ մուտքամանական երկների և ժողովուրդների համար. ինչպես լատիներենը միջնադարան Արևմտյան Եվրոպայում:

Արարերեն գիրն ունի իր յուրահատկությունները: Ի տարբերություն հնդկուական լեզուների, նա գրվում է ոչ թե ծախսից աջ, այլ, ընդհակառակց, աջից ծախս: Արարերեն լեզվում գրվում են միայն երկար ծախսավորները, իսկ կարճ ծախսավորները բաց են բողոքում: Ռաստի տվյալ բացը ծիշտ հասկանալու և ծիշտ արտասանելու համար պահանջվում են անհրաժեշտ գիտելիքներ, նախնական վարժանք, որոշակի փորձ և ուսումնառություն: Այս հանգամանքը որոշակի դժվարություններ է ստեղծում արարերենին տիրապետելու ճանապարհին, հատկապես օտար, ոչ արար ընթերցողի համար:

Արարական այրութեանը պարունակում է 28 տառ, 25 բաղամայն և 3 ծախսավոր՝ ա, ի, ու:

Արարականի անվան տակ են հայտնի նաև թվական այն համակարգը և թվանշանները. որոնք այսօր գործածական են ամեռուց աշխարհում և որոնց օգնությամբ են կատարվում բոլոր հաշվարկները՝ 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9: Իրականում դրանք ոչ թե արարական, այլ հնդկական ծագում ունեն: Դրանք ստեղծվել և շրջանառության մեջ են դրվել հնդիկների կողմէն դեռևս V դ., սակայն Եվրոպացիներին հայտնի են դառնում միայն X-XIII դր., շնորհիվ արար ծանապարհորդների և արարական տարաբնույթ պատմագիտական և աշխարհագրական աղբյուրների, որոնց հետ ծանոթանալով, բարգանում են Եվրոպական հետազոտողները և այդ թվանշանները կոչում արարական:

Պատմական այս դարաշրջանը, որը հարատևեց մինչև VII դ. մինչև արարենի կողմից հերանությունից հրաժարվելը և հայամի ընդունումը, արարերմ անվանում են «Զահիշայի»՝ անգիտության կամ տօֆիտության դարաշրջան:



### III. ԱՐԱԲՆԵՐԻ ՄԻԱՅՆԱԿԱՆ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԱՁԵՎԸ

#### 1. Տոհմ, ցեղ և ցեղային միություն

Արաբների մոտ տիրապետող էին արիսայիկ, նաևապետական, տոհմատիրական հարաբերությունները:

Արաք թեղվիճները բնալելում էին վրամներում և յուրաքանչյուր վրան համարվում էր մի ընտանիք: Մի քանի ընտանիքների միավորությունը առաջանում էր տոհմը, իսկ արյունակից տոհմներից՝ ցեղը կամ կարիլամ: Բեղվիճների սոցիալ-հասարակական կառուցվածքի հիմքը, նոր առումով, տոհմն էր, իսկ ավելի լայն առումով՝ ցեղը և ցեղային միությունները:

Նրանց մոտ գոյություն ուներ ամիատական և ըմբիանուր-համայնքային սեփականություն: Վրանց և այն ամենը, ինչ որ կար նրանում՝ հազուստ, անկողին, տնային օգտագործման իրեր և այլն, համարվում էր ամիատական սեփականություն: Սակայն արտադրության հիմնական միջոցները, որոնցից կախված էր անապատարնակ արարի գոյությունը՝ մշակելի հողատարածությունները, արոտավայրերը, ջուրը և այլն, համայնքական սեփականություն էին:

Չատ հստակ էին ամիանված հարաբերությունները տոհմի և ցեղի ներսում: Առօրյա խնդիրները, գանձան բնույթի վեճերը, հողաշին և գույքային հարցերը, ամուսնությունը և ամուսնալուժությունը, արյան վրեժի խնդիրը և այլն, կարգավորում էին սովորութական իրավունքի՝ աղարի հիմնական վրա:

Եթե, օրինակ, տոհմի անդամներից մեկը սպանություն էր կատարել տոհմի ներսում, ապա նրան ոչ ոք, անգամ հայրը, նորայրը և այլն, չեր կարող պաշտպանել: Սարդասպանը չեր կարող փախչել, որովհետև նա կիսյուտարվեն օրենքից դուրս. իսկ դա մահվանը հավասար դատավճիռ էր: Տոհմի անդամն պարտավոր էր ամրող կյանքում ամեն ինչ անել կապն իր տոհմի հետ պահպանելու համար, որը նրան պաշտպանություն և գոյություն էր ապահովում, հակառակ պարագայում նա դատապահ էր օտար և անօգնական:

Ինչ եթե մարդասպանությունը կատարվել էր տվյալ տոհմից դուրս, այսինքն սպանվել էր մեկ այլ տոհմի անդամ, ապա հրապարակ

եր իշխում վենդետտաճ՝ արյան վրեժի իրավունքը, ելեւով «արյուն առյուն է ուղում» սկզբունքից: Դա նշանակում էր, որ սպանվածի տոհմակիցներն իրավունք ունեին սպանել սպանողի տոհմի անդամներից յուրաքանչյուրին: Ըստ որում արյան վրեժի իրավունքը գործում էր տասնյակ տարիներ, մինչև որ վերեն իրազորդվելը:

Տոհմի արյունակցական-ազգակցական կապերի առաջին աստիճանը տվյալ ցեղակետի որդիները (բանու) լինելու հանգամանքն էր, ինչպես, օրինակ, «բանու Շասան» կամ «բանու Անահ» և այլն. որոց նշանակում է «Շասանի որդիներ», «Անահի որդիներ»:

Տվյալ արյունակցական-ազգակցական խմբին պատկանող կարիաները կարող էին միավորվել և կազմել ավելի մեծ ցեղախումք՝ աշխարհ և այլն:

Սակայն անտոք է նկատի ունենալ, որ տոհմի և կարիայի կազմը կայուն չէր: Նրա մաս կարող էին կազմել այսպես կոչված «օտարները», որոնք արյունակցական կապերով կապչած չեն տվյալ կարիլաշին. սակայն ընդունում էին նրա գերակայությունը և հարմարվում նրա ադաբներին և պահանջներին: Սովորաբար այդ քայլին էին դիմում թռւյլ տոհմերը, որոնք միավորվելով որևէ ուժեղ տոհմի և ընդունելով նրա գեղակալությունը, որանով ապահովում էին իրենց առավել անվտանգ գոյրեցունը:

Տոհմի ամեջամ կարող էին դատնալ նաև ազատություն ծնեց թերած ստրուկները, որոնք չեն ցանկանում լքն տվյալ տոհմը և նրան անորանմացում էին ներահումանավորյալի կարգավիճակով:

Կարիլայի և զանազան ցեղային միությունների գլուխ կանգնած էին սեյյիները, շեյխները և գաֆիմները (առաջնորդները): Այստեղ իսպան բացակայում էր ցնորական որևէ սկզբունք, եւ չեն խոսում ցնորական համակարգի մասին: Ռևստի ցեղախմբի սեյյիդ կամ զահի դատում էին ոչ թե ցնորությամբ, այլ շատ տվյալ անձի արժանիքների, գործունեության և հարատության: Նետագայում ցեղակետի պաշտոնը, մանավանդ շեյխի, շատ հաճախ դառնում է ժառանգական:

## 2. Վաշկատուն-քոչվորներ

Արաբներ հույց ի վեր բաժանված էին քոչվորների և նատակացների:

Վաշկատուն քոչվորների՝ թելիմների տնօրինության տակ էր գտնվում Արարիայի տարածքների մեծ մասը, թեև նրանք չեն կազմում

բնակչության մեծամասնությունը: Բեղվինները հնուց ի վեր, նախախուլամական շրջանից, բաժանված էին հյուսիսարարական՝ կայսիական, և հարավարարական՝ կալքիական կամ յամանական ցեղախմբերի: Նրանք գտնվում էին մշտական մրցակցության և պայցարի մեջ, որը շատ հաճախ կործանարար էր լինում Պյուսիսային և Դարավային Արարիայի համար:

Բեղվինների հիմնական գրադրունքը ցոչվորական անսանսպահությունն էր: Նրանք պահում էին զիսավորապես ոչխար, այժ և ուղտ, որը նրանց ապրուստի միակ միջոցն էր: Անսառուների զիսարամակը բնուվիմի և ցնդապետի հարուստ լինելու գլխավոր չափանիշն էր:

Սակայն հարդ է նշել, որ ցոչվոր թեղվինների և նստակաց արարածերի միջև բաժանարար գիծն այնքան է հստակ չլի: Իրականում առկա էին կիսարշագրուներ և կարծեցյա նստակյացներ կամ բաղարարներ:

Երբ խոսք է գնում թեղվինների մասին, նրանց չպետք է շփոթել բափառոյ գնչուների հետ: Բեղվիննական ցոչվորությունն ապրելածն է, թելաշրջակա անապատային կյանքով, այդ կյանքին հաղորդարկելու և գոյատունելու պահանջով:

Բեղվիննի հասկացողությամբ ոչխար և այօ պահելն ու բազմացնելը, որարդությունը և ասպատակությունը տղամարդում վայել միակ գրալմունքն է Նա վերնից է Եայում բոլոր նրանց վլա, ովքեր գրադրում են հողագործությամբ, առևտորվ և արհեստներով, այդ բոլոր համարելով իր արժանապատվությունից ցածր գործ:

Իր միջավայրից դուռը թեղվինը դադարում է թեղվին լինելուց: Այդ պատճառով թեղյունված է ասնել, որ թեղվինը, ուղտոց, արմավենին և ավազը կազմում են մի ամբողջություն, գյուրթյան մի բացառիկ տեսակ:

Բեղվիննի հագուստը նույնպես շատ պարզ է: Նա կրում է երկար շապիկ՝ գլուխով, գլուխը կապում է շալում՝ քուֆիյա, տարատ չի հագնում, իսկ կոշիկ՝ հազվադեպ:

### 3. Նստակյացներ

Նստակյացները կազմում էին Արարիայի բնակչության մյուս կարևոր հատվածը: Նրանք բնակվում էին զիսավորապես ոչ անապատային գոտիներում, հատկապես Արարիայի հարավային մասերում Եմեմում, Պատրամառում, ինչպես նաև Կենտրոնական և Պյուսիսային Ա-

բարիայի համեմատաբար բարերեր և օսպիսային շրջաններում: Նրանք գրաղվում էին հողագործությամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Թնակցության գգայի մասը գրաղվում էր արհեստներով, բայց բարելով թերվինների և նստակյացների հիմնականում կենցաղյային պահանջները:

Նստակյաց վայրերում գյուղերի կողմին առաջանում էին նաև ցաղացներ և քաղաքատիպ բնակավայրեր:

Նստակյացների, առաջին հերթին քաղաքների և խոշորասիրաց գյուղերի բնակչության տոցիալական կառուցվածքի հիմքը կազմում էին շաքարանները: Դրանք յուրատեսակ ինքնավար համայնքային մարմիններ էին: Տոցիալական—պետական կառուցվածքի այս ձևը հասկապես ընդուզ էր Եմենի, երա տարածքում գորություն ունեցած պետությունների համար:

Որոշ մասնագետների կարծիքով, շաքար-համայնքը ֆունկցիոնալ առումով նման էր անտիկ պոլիսներին կամ հինգարևեցած քաղաք—պետություններին: Համենայն դեպքում նրանք նման էին իրենց գործառույթով: Շաքարները, ինչպես պոլիսները և քաղաք—պետությունները, գրաղվում էին հասարակական շենքերի, ամրոցների, ուղղամասների կառուցումով: Երանց պահպանումով և այլն:

Սակայն հետովագ դարերում, հաստկացնեն ՎI դ., շաքարների իրավունքները խիստ սահմանափակվում են և շատ վայրերում նրանց ինքնակառավարվող համայնք լինենցը դասենում է ծեական: Դա բացառական հետևանքներ ունեցավ տնտեսական ոլորտի վրա՝ ուղղամասներու շարժից ուրիշ ուրուս նկան, դադարեցվեց հասարակական շենքերի կառուցումը և այլն:

Դա հարցի մի կողմն էր:

Հարցի մյուս կողմն էլ այն էր, որ թերվինները և նրանց կարիւանները թշնամարար էին վերացերելում նստակյացներին, նրանց համայնքներին: Նրանք, ինչպես արդեն նշել ենք, վերսից էին նույնու նրանց վրա և նրանց գրաղմունքը համարում ցածր կարգի, հարզանքի ոչ արժան գործունեություն: Թերվիններն իրենց նույրական և սմնեամբերուի պահանջները բավարարում էին նույնու արարենների հաշվին: Եվ դա նրանք իրականացնում էին երկու ճանապարհով՝ կամ հարկադրելով նրանց մաքրթների փոխանակություն կատարել, կամ, որոն ավելի շատ տարածված մնն էր, թշնամարար, ասպատակության միջոցով: Ասպատակությունը շատ տարածված երևույթ էր: Թերվիններն ասպատակում էին ուղղութիւն:

Օնայյանների շրջանի {VII–VIIIդդ}: արար բանաստեղծ ալ–Քութամին իր մի բանաստեղծության մեջ մատու է. «Մեր գործն է ասպառակել մեր քշնամուն, մեր հարևանին և մեր սեփական եղբորը, այն դեպքում, եթե մենք ուրիշ ոչ ոքի, բացի մեր եղբորից չենք գտնում ասպառակելու համար»:

Քեղվինների հարժակումներն իրենց նստակյաց ազգակիցների վրա, սովորական երևույթներ էին:

Այդպիսի պարմաններում նստակյաց արարմերը, ինչպես նաև բոլոր քոչվոր ցնդերը, շատ հաճախ գնում էին իրենց սահմանակից ուժներ վիճական քոչվոր ցեղի հովանավորությունը և պաշտպանությունը, վճարելով նրան համապատասխան գիմ: Սա շատ տարածված երևույթ էր:

Բայց քանի որևէ շա՞րամներն ուժեղ էին, ունեին լայն լիազորություններ և ներկայացնում էին ինքնակառավարություն համայնք, թեղվինների հարժակումները հաջողությամբ հնտ էին նոյնում, համեյամակով արժանի հակահարվածի: Շա՞րամների բուլացումից հետո Յարավային եմենն այլևս ի վիճակի չեր դիմակայել քոչվոր–թեղվիններին, որոնք վերջիվերջո իրենց քաղաքական տիրապետությունը հաստատեցին Արարիայի այդ մատում:

#### 4. Առևտուրը

Նախահամական Արարիայի տնտեսական կյանքում զգալի տեղ էր գրավում նաև առևտուրը, հատկապն քարտավանային առևտուրը: Դնուց ի վեր քարտավանային տարանցիկ առևտորի խոշոր կենտրոն էր Մերքան, որն առևտորական ճանապարհներով արարական ծայրագույն հարավ Եմենը կապում էր արարական հյուսիսային շրջանների՝ Պաղստինի. Ասորիի, Միջազգնորդի և Եգիպտոսի հետ: Մերքայում առևտորական գործումներության քնագավառում առանձնապես ազդեցիկ ոլործը ուներ Կոռայշ ցեղը, որին շատ հաճախ անվանում էին «վաճառականների ցեղ»: Այս ցեղի վերնախավի ծնորում կենտրոնացվել էր հսկայական հարաստություն, որը դարձել էր նրա քաղաքական իզորության արյուրը: Մերքայի ազդեցության ամերող Արարիայում նպաստում էր նաև այն համգանձնը, որ հիշապյան այս քաղաքում էր գտնվում հեքանդական Արարիայի գլխավոր սրբավայր Կապարան:

Ազդեցիկ էին նաև Յարիի Առևս և Խազրաջ ցեղերը, որոնք հաճախ մրցակցության մեջ էին մտնում Մերքայի Կոռայշ ցեղի հետ, և Թալիֆ քաղաքի Սակիֆ ցեղը, որի ծնորում էր գտնվում քաղաքի կառավարումը: Սաղարի Սակիֆ ցեղը, որի ծնորում էր գտնվում քաղաքի կառավարումը:

և այս Սալիկի ցողը, ի տարրերություն Սեբքայի ախոյան Յասրիի ցեղերի, նախընտրում էր համագործակցությունը Կուռայշ ցեղի հետ:

Տնտեսական, հատկապես առևտուրի զարգացումը, առաջ թիրոց դրամի գործածության պահանջ: Արարտիայում այդ դարերում շրջանառության մեջ էին գտնվում տեղական եճենում հաստվող դրամը, ինչպես նաև բյուզանդական ունկնդրամը և պարտկական արծաթյա դրամը:

Տնտեսական զարգացումն աստիճանաբար հանգեցրեց տոհմատիրական կարգերի քայլայմանը, ցեղային հարաբերությունների բռնացմանը, մասնավոր սնիփականատիրության հայտնվելուն և արարտական հաստակեցության, այդ թվում և կարիլայի ներսում, տօֆիական շերտավորմանը:

Սակայն տոհմատիրական կարգերն արագորեն և խայտ չվերացան: Նրանց մնացուկները պահպանվեցին նաև հետագա դարերում: Եռոյնը պետք է ասել նաև ցեղային հարաբերությունների մասին, որոնք պահպանվել և մինչև օրս եւ իրենց գգացնել են տալիս:

## 5. Կրոն

Արաբները մինչև VII դարի միջամբ հեթանումներ էին: Գրեք յուրաքանչյուր ցեղ կամ ցեղային միուրյուն ուներ իր կուսր-աստվածը, որի հզորությունը ուղղակի համեմատական էր նրան պաշտոն ցեղի հզորությանը: Դերանոս աստվածների կամ քաղմասառվածության համակարգում ամենահզորը Քիջազի զիսավոր աստվածն էր, որը կոչվում էր Ալլահ: Քաղմասառվածությունը լինելով արարտական ցեղերի տարածատվածության արտօնայտություն, ավելի էր խորացնում արաբների քամանվածությունը և լրջորեն խոշոշություն նրանց միավորմանը և ազգային-երնիկական կրնալիդացիային:

Դերանուության հետ Արարտիայում մինչև մ.թ. VII դարը, տարածված էր նաև հուղարականությունը, քրիստոնեությունը, ինչպես նաև գրայաշուտականությունը: Սակայն քնակչության մնշող մեծամասնությունը, անշուշտ, հեթանոս էր:

VII-VIII դարերը որոշակի սահանարաժան են հանդիսանում Արարտիայի պատմության մեջ: Ցենց այս ժամանակահատվածում խիստ սրբեց քաղաքական և սոցիալ տնտեսական զգնամանը: Բանի գնում խորանում էր տոհմատիրական կարգերի քայլայումը, համայնական սեփականության վնասությունը, մասնավոր սեփականության ծեսավորումը:

սոցիալական քննօսացումը: Մրովել էին միջցեղային հարաբերությունները, որոնք սովորաբար վերածվում էին արյունայի քայլումների քաղերերի դաշտավայրերի, արտօնավայրերի և ջրի աղբյուրներին տիրելու համար:

Մրաբները, թեև ստեղծել էին առանձին պետություններ և պետական միավորումներ, քայլ, և այնպես, նրանց ջիաջողվեց ստեղծել մեկ միամանական պետություն, որն ի վիճակի վիճեր կարգավորել քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունները, հաստատել կարգ ու կամոն, լուծել վճները և կանխել արյունայի ընդհարումները հասարակության տարբեր հաստվածների, առաջին հերթին ցեղերի միջև:

Եզնաժամի խորացմանց նպաստում էր նաև բազմաստվածությունը, որը փաստորեն պրագործում էր արարական հասարակության ներքին տրոհվածությունը:

Երկիրը քաղաքական, սոցիալ-տնտեսական և գաղափարա-կրոնական լրուրջ և արմատական վերափոխումների կարիք էր զգում և գտնվում էր որա նախաշեմին:

## Գլուխ և բարորդ

# ՅԱՄԱՉԻԱՐՅԱՅԻՆ ՆՈՐ ԿՐՈՆԻ – ԽՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

### I. ՄՈՒՀԱՄՄԱԴԻ Կյանքը և գործունեությունը

#### 1. Մուհամմադի կյանքը և գործունեությունը

Կերպարվածությունը սկսվեցին մ.թ. VII դարի սկզբում, որը կապված է Մուհամմադի ամփան հետ: Նա համեմատ ներկավ որպես նոր մարդարն նարի, և դարձավ արաբներին միավորողը, որը կրոնի՝ իսլամի ստեղծողը և արաբական միասնական կենտրոնացված պնտության հիմնադիրը:

Մուհամմադի կենսագրական տվյալները կցնուուր են, շատ քանի հետազայում ավելացվել են որա ժամանակակիցների վկայությունների և պատմությունների հիման վրա: Մուհամմադի առաջին համակարգված և կանոնակարգված կենսագրությունը՝ սիրան, պատկանում է VIII դ. հեղինակ Իրն Խսիհակին: Նետազայում, IX դ., նրա կենսագրությունը հարստացվել է նոր տվյալներով:

Մուհամմադի կենսագրության համար յուրօրինակ աղյուր են ծառայում նաև մուսավանների սուրբ գրքի՝ Կորանի մելքությունները:

Նամենայն դեպք, չնայած առանձին տարրակարծություններին, անգամ վեճներին, մասնագետների կողմից այսօր կարելի է ընդիհանուր գծերով ընդունել համարել Մուհամմադի սորորն թերվող կենսագրությունը:

Մուհամմադը ծնվել է 570 թ. «վիդի տարում», Մեծքայում: Նա պատկանում էր Մեծքայում ամենազդեցիկ Կուտայշ քաղի Պաշիմի ոչ հարուստ տոհմին և զավակն էր Արդալլահի և Ամինայի: Մուհամմադի

մանկությունը ներեւ է շատ դատն: Դեօսև նա նոր էր ծմվել, երբ մահանուն է հայրը, իսկ վեց տարեկանում զրկվում է մորից: Որո մանուկի հոգսը սկզբում իր վրա է վերցնում նուա հորական պամպը՝ Արդ ալ-Մուտավիրը, իսկ երկու տարի անց, նրա մահվանից հետո, հորնորայրը՝ Արու Տալիրը: 12 տարեկան հասակում պատաճի Մուհամեադն առաջին անգամ դուրս է գալիս Մեքրայից և հորեղոր ուղեկցությամբ մեկնում Սիրիա: Այսուեղ նա, ըստ ավանդության, հանդիպում է քրիստոնյա հոգնորական թափրային, որի հետ ունեցած գորուցները, լեզենդի համաձայն, անցնցի հետը նն րուղում ապագա մարգարեի վրա:

Մուհամմադի հորեղոր տնտեսական վիճակն այնքան էլ նախանձելի չէր և նրիտասարդը հարկադրված էր 15 տարեկանից հոգալ իր ապրուստը: Նա արածեցնում էր հարուստ մեքրայիների ամասունների հոտը, երբեմն մաս կազմում քարավաններին, իսկ 590 թ., ըստնամյա Մուհամմադը, մասնակցում է Պեկազայի մոտ տեղի ունեցած ճակատամարտին և Խիլֆ ալ-Ֆուրուլ ցոյնի հետ Հաշիմիների կերպ դաշինքին:

Մուհամմադի անձնական կյանքում շրջադարձային եղավ 595 թ., երբ նա որպես գործավար—օգնական ժառայության մեջ նուայի խաղիքա բնուտ Խուվայիլիի մոտ: Նա խելացի, հարուստ և այրի մի կիմ էր, որն աշքի էր ընկնում ծեսներեցությամբ և վայելում իր ցեղակիցների հարգանքը: Երիտասարդ, ետանդում և աշխատաեր 25-ամյա Մուհամմադը դուր է գալիս նրանից 15 տարով մեծ Խաղիքային և նրանք ամուսնութ են: Նա ամրապնդում է Մուհամմադի տնտեսական և սոցիալական դրույթում: Նա այլևս նախկին կիսաադրատ նրիտասարդը չէր, որ հաճախ օրերը կիսաքաղց էր անցկացնում: Այժմ նա կարող էր անձնատուր լինել իր սիրած գրադմունքին՝ մելիտացիային: Նա հաճախ էր առանձնանում Մեքրայի մուտակայրում գտնվող Դիրա սարի քարանձավներում և այնտեղ անցկացնում խորասուզված իր մուրումների մեջ:

Նրանք ունեցան հինգ զավակներ, մեկ որդի՝ ալ-Կասիմը (նա մահացել է վաղ հասակում), այդ պատճառով էլ արաբական ավանդույթի համաձայն Մուհամմադը կոչվում է նաև Արու ալ-Կասիմ (Կասիմի հայր), չորս աղջիկներ՝ Զայնարդ, Ռուկայյան, Ռոմն Կույլումը և Ֆարիհման:

Հետագայում Մուհամմադը, համաձայն արացական սովորույթի, որը թույլատրում էր պոլիկամիա՝ բազմակնություն, և որն իր զինանոցը վերցրեց նաև իսլամը, պաշտոնապես ունեցավ ևս երեք կիմ՝ Այշան, Արու Բաքրի 9-ամյա կրտսեր աղջիկը, որն ամռանուն ներկայացավ իր խաղալիքներով հանդերձ, Խաֆսան՝ Օմարի աղջիկը, և Զայնարդ՝ Քու-

զայնայի աղջիկը: Նրանց երկուսի ամուսիններն էլ գոհվել էին Բայրի ճակատամարտում: Այսպիսով, Ալլահի առաքյալը պաշտոնապես ուներ չորս կին:

Դեռագայում, առ այսօր, չորս կին ունենալու իրավունքից պաշտոնապես օգտվում են բոլոր մուսուլմանները:

## 2. Մուհամմադի խալամի հիմնադիր

Մուհամմադը Խաղիջայի հետ անուստությունից հետո, քարավանային առևտորով գրադպելու շնորհիվ, ճամապարհորդելու լայն հնարավորություններ է ստանում: Բայց դա նրա առջև քայլում է տարրեր մարդկանց հետ շփվելու, գործցելու, զանազան կրոնական ուսմունքների հետ ծանրանալու, աշխարհի ճանաչելու դժոնները: Մուհամմադի գրութակիցների մեջ առանձնանում էր քրիստոնյաց վանական Բահիրան, որից մա, լեզենի համաձան, շատ բան է վերցրել:

Այդ բոլոր անհետուամբ շի անցնում Մուհամմադի համար: Նա ընդհանուր գծերով ճամրանում է քրիստոնեության և հույսայականության դրույթների հետ:

Սակայն դա նրան շի քավարարում և նա փմտրում է մեկ այլ, բոլորովին տարրեր բան: Եվ նա աօանձնանում է առօրյա սին հոգսերից, ապաստանելով Քիրա սարի վրա գտնվող քարանձավում: Անքրպատվելով արտաքին աշխարհից, Մուհամմադը խորասուզվում է ինքը իր մեջ, մոլորում աշխարհի և նրա առեղջման, կրանքի և մահիկան, շարի և քարու, հանդերձյալ աշխարհի, մարդկանց մեղքերի, պատժելիության, երանության և նմանատիպ այլ հարցերի մասին: Եվ ինչքան ճտասուզվում է իրեն տանըդոր խնդիրների մեջ, այնքան ավելի է հավատում իր առանձնահատուկ առաքելությանը և վերուստ իրեն սահմանված կրչմանը:

Կենսագիրները հավաստում են, որ Մուհամմադը ինքնախորասուզման և հոգով վեր սավասնելու պահերից մեկի ժամանակ ինչ—որ ծայն է լսել, թերևս ննջքին ծայն, որը նրան ոգեկրցէ է քարոզի: Եվ Մուհամմադը 610 թ. սկսում է իր քարոզը, հիմք դնելով մի նոր կրոնի, որն ստացավ Խալամ անունը:

Մուհամմադն իր քարոզները սկսեց իր Խայրենի Սեբքայում, ծեսը բնենով առաջին, ոչ մեծաքիչ հետևորդները: Սակայն նա միանգամյա ծեղը թիրեց նաև գործող հակառակորդներ՝ ի դեմք Կուրայշ ցեղի Օմայյա տոհմի և նրա առաջնորդ Աբու Մուֆիսնի: Հակառակորդները նրանց

միջև խիստ սրվում եմ և աստիճանաբար ընդունում առնվազատման ընույթ։ Օճայյանները սաստիկացնում են հալածանքները, ուղղված Մուհամմադի և նրա համախոհների դեմ, որոնց գգալի մասը նորահայտ մարգարեի հարազատները կամ տոհմակիցներն էին։

Ստեղծված սպառնալից պայմաններում, Մուհամմադը մոտ 200 համախոհներով, 622 թ. Սեբաստիոն հարկադրված զայրում է Յասրի, որ հետագայում անվանվեց Մասհիմա ամ-Նարի, այսինքն՝ Մարգարեի քաղաքը։ 622 թվականը՝ գարդի, կամ ինչպես արարմներն են անվանում, հիջրայի տարին, ընդունված է համարել արարական և համայն մուսուլմանական աշխարհի թիվագրության և տարեգրության սկիզբը։

Պատահականություն չեղ Մուհամմադ մարգարեի և նրա զինակիցների գաղթը Յասրի։ Մարգարեի ընտրությունը կանգ էր առն այդ քաղաքի վրա, որովհետև, ինչպես նշվել է, մատինացիները՝ Յասրիի բնակիչները, թշնամարար էին տրամադրված մեթքացիների գեղային վերնախավի նկատմամբ։ Մուհամմադի քարոզներն այսուղեղ պարարտ հոդ գտամ և շրոտով Մուհամմադը Մատինայում կազմակերպում է հավատացյալ մուսուլմանների առաջին համայնքը՝ ունման։ Մուհամմադը դասում է այդ համայնքի և Մատինայի դեկավարը, իր ծեռքը վերցնելով կառավարման գաղաքական, ռազմական, տնտեսական և կրոնական-հիգնոր բոլոր լժակները։

Մուհամմադի գործունեությունը Մատինայում համոլիսամում է մի առամձին փուլ հսկամի դրույբների հետագա մշակման և գաղօգացման, մասնավորապես, միասուլիմանության, իրավունքի, բարոյախոսության, ծիսակարգի, և ընդհանրապես իշեամի համակարգման ընազավառում։

Դրա հետ զուգահեռաբար, Մուհամմադը և նրա համախոհները շարունակում են պայքարը մեթքացիների դեմ, ծգտելով իրենց վերահսկողությունը հաստատել ՝ թիրազի այդ ամենակարևոր կենտրոնի վրա, շատ լավ հասկանալով, որ հաղթանակը Մերքայի Ակատմամբ կարող է վճռորոշ նշանակություն ունենալ նոր կողմի իշեամի հետագա ճակատագրում։

624 թ. տեղի է ունենում Մուհամմադի կողմնակիցների և մեթքացիների առաջին ճակատամարտը Բայր Վայրում, որն ավարտվում է Մուհամմադի զինված քոլատների հաղթանակով։ Դաջորդ տարի տեղի է ունենում Երկորրի ճակատամարտը Շեհուդում, որը, սակայն, ավարտվում է մուսուլմանների պարտությամբ։ Բայց 627 թ. կայացած Երրորդ ճակատամարտը, երբ մեթքացիների և նրանց դաշնակիցների տաս հազարա-

նոց գործը պաշարեց Սուհամմաղի միջնաբերդը Խանջիսացող Յասրիրը, կրկին ավարտվեց Սուհամմաղի գործերի հաղթամանով: Դա մեծապես բարձրացրեց Սուհամմաղի հետինականությունը, ուժեղացրեց հավատը նրա քաղուզած գաղափարների Ըկատմամբ, մի կողմից, և բոլուացող Օմայաների դիրքերը Մերքայում, մրոս կողմից: Այստեղ ևս ավելի ու ավելի շատ մարդիկ դառնում էին Սուհամմաղի համախոհ և դավանակից: Իրադրությունն արմատապես փոխվեց հօգուտ Սուհամմաղի:

Ստեղծված քարենապատ պարմաներում, Սուհամմաղը 630 ր., իր տաս հազարամոց գործի գլուխն անցած, մտավ իր հայրենի Մերքա քաղաքը:

Դա Սուհամմաղի և մուսուլմանների կատարյալ հաղթամակն էր, որի ունեցավ համաշխարհային պատմական նշանակություն:

## II. ԽՈՎԱՄԸԸ ԵՎ ՆՐԱ ՀՐՄՆԱԿԱՆ ԴՈԳՄԱՆԵՐԸ

Սեղծավոր Արևելքը համաշխարհային կրոնների ծնավորման կարևոր բնօրդեններից մեկն է: Այստեղ են առաջացել, դեռևս մեր քվականությունից առաջ, հույսայսկանությունը և քրիստոնեությունը: VII դ., դարձաւ Սեղծավոր Արևելքում, հրապարակ իրավ իւլամբ, մի նոր համաշխարհային կրոն, որը կապված է Մուհամմաղի ամվաճ հետ:

Խոլամ նշանակում է հնագանողություն: Նա պահանջում է մուսուլմաններից հնագանողություն նախ և առաջ Ալլահին, նոր կրոնի բոլոր դոգմաների անշեղ կատարում, ենթակայություն հոգևոր առաջնորդներից հմամներին, աստվածաբան—ուլեմներին և այլն: Խոլամը դավանող ներ կոչվում են մուսուլմաններ:

Դայ իրականության մեջ, այդ թվում և միջնադարյան պատմագիտական գրականության մեջ, «խոլամի» փոխարին շատ հաճախ օգտագործվում է «մահմեդյականություն» եղբայր՝ կապված նրա ստուդուի՝ Մուհամմաղի անվան հետ: Խոլ այդ կրոնի դավանողը կոչվում է «մահմեդյական»: Այս ավանդությօք շարունակվում է ժամանօք: Կարծում ենց, որ եղիւ անվանումներն են հավասարապես կիրառելի են:

## 1. Խոլամի հինգ գլխավոր հենասյուները

Խոլամը խարսխված է հինգ հենասյուների վրա, որոնք արտահայտում են խոլամի ռուն երթունը և նպատակառուղղվածութունը:

Առաջին հիննասյունը միաստվածության սկզբունքի հաստատումն է, որը եղակետային և անկյունացրարային է խոլամը ռւսմունքի և համակարգի մեջ: Այդ սկզբունքն արտահայտված է «Լև Ալյահի իշխանականական ուստուզ ուլլահ»՝ բանածինի մեջ: Այդ բանածին ստուգարար բարգմանվում է: «Դկան Աստված բացի Ալլահից, իսկ Սուլիմանը նրա առաքյալն է»: Դա հավասուի հաստատումն է՝ շահադա, առ միաստվածություն: Դրանով վերը էր տրվում տարբեր ցեղերի և տոհմերի բազմաթիվ կուռքների և ասուլվածների պաշտամունքին, և հաստատվում էր Ալյահի պաշտամունքը իրու միակ Աստված:

Բանածին միաժամանակ հաստատում է, որ միակ աստծո՝ Ալյահի վերջին առաքյալը Մուհամմադն է, որի միջոցով Ալյահը մարդկանց հասցնում է իր միակ ճշմարտուցի խոսքը, որն անփոխված է մուսուլմանների սուրբ գրքում՝ Կորանում:

Խոլամն ընդունում է, որ Մուհամմադից առաջ եղել են նաև այլ առաքյալներ, այդ թվում Մովսեսը, Յիսուսը և այլն, որոնք նույնական մարդկանց թրելի են աստծո խոսքը: Բայց, ցատ մուսուլմանական դրգմանիկայի, մարդկի մեծ մեղք են գործել, մոռացության տալով այն ամենը, ինչ նրանց տուորեցողը են նախորդ նարգարնները: Ռւստի և հայունքն է վերջին մարգարնե՞ն՝ Մուհամմադը, որի առաքելությունը է մարդկանց վերջին անգամ նախազգուշացնելով, հնարավորություն տալ նրանց կանգնելու ճշմարտու ուղու վրա և դրանով փրկվելու: Այլապես կամ աշխարհի վերջը և ահեղ Դատաստանի վերջին ժամը, և մարդիկ կստանան ցատ իրենց արարցների, արդարներին դրախտավայր՝ ջանճար, իսկ մեղավորներին՝ դժոխք՝ ջահնան, այրվելու հավերժական կրակի վրա:

Խոլամը Ալյահին օժտել է ամենազոր, ամենակատարյալ, ամենարարի, ամենաողորմած և այլ ամենաբարձր հաստկանելիներով: «Դա, ինչպիսի նորություն չէ և հասուն է բոլոր կրոններին, որոնք իրենց ասուլվածներին վերագրում են ամենաբարձր որուակները:

Խոլամն Ալյահին օժտել է մի շարք ամենաբարձր մակողիրներով: «Ալյահու աքրարը», «Ալյահն ամենամեծն է», «Ալ-մուլք լի-լլահ»՝ «Թագավորությունն Ալյահինն է», նաև «Ուահմամաթ-ո-ռահիմը», «Գրատաւոց գրասիրութը» և այլն: Խոլամական ավանդույթի համաձայն խոլամական

բոլոր կարևոր փաստաբորբերը, տեքստները, պաշտոնակամ գելույցները մկանում են «Բիսմի-լլահի-օ-օահմանի-օ-օահիմ»՝ «Նանուն գրատա և գրասիրու աստծո» բանաձևով: Թուղու ողիմապահ հավատացյալ մուտքմանները պարտավոր են հետևել այս կարգին, որի խախտումը համարվում է ծանր մերդ:

Երկրորդ հիմնայունը աղոքը է՝ սալար (իգն. սալավար): Խպամը սահմանում է յուրաքանչյուր օր աղոքի հինգ անգամ, արտօննելով աղոքը կատարել տաճոյ, աշխատատեղում, քացօքյա և մզկիրում: Մզկիրը՝ մասնիշ, և աղոքատեղի է, և կրոնական-պաշտամունքային կառուց: Այստեղ գտնվում են հոգեր դպրոցներ՝ մարդասաներ, անց են կացվում բներկումներ կրոնական զանազան հարցերի շուրջ, լուս աղոքներ, կարդում Կորան և այլն:

Ըստ կարևոր է ուրբաթօքա՝ յատմ ալ-Գումա, աղոքը, որն անպայման կատարվում է մզկիրում՝ զյուղական, ավանային և քաղաքային: Այդ օրը զյուղակու մզկիրում հավաքվում են տվյալ վայրի բոլոր մուսուլմանները և կատարում կոլեկտիվ աղոքը:

Ամեն մի մզկիր ունի իր միհրաբը, որմախորշը, որն ուղղված է յոսպի մուսուլմանների զյուղակու սրբատեղին, Սեքքայի Կաարան: Դավատացյալներն աղոքում են դեմքով դնալի այդ որմախորշը, այսինքն հայացքն ուղղելով դնալի Մեքքա: Աղոքը կատարում է իմամթ, առջևում կանճնածք, որը կարդում է Կորանից համապատասխան գլուխ և դնկավարում ամրոջ աղոքը: Աղոքը կարդացող իմամթ կոչվում է Իմամ Խաքիր: Նա սովորաբար կամզում է միհրաբի կոորդը, մինքարի, ամրիունի առջև: Յուրաքանչյուր մզկիր ունի իր մինարենը, աշտարակը, որտեղից մուեզզինը օրը հինգ անգամ հավատացյալներին կանչում է, հրավիրում (ազան) աղոքի:

Դայերն այլևս շին կարող տանել ծամր լուծը և դիմանալ անողոք բռնություններին: Անա այսպիսի լարված մընուրուում 702 թ. վերջերին սպանվեց Արմինիայի ոստիկանը:

Բայց դա չփոխեց և շեր էլ կարող փոխել դրույթյունը դեպի լավը Դայաստանում: Ռատիկան Արդալլահը լոկ կուսակալ Մուհամմադի իր Մրգանի քաղցականության կիրառողն էր, հետևաբար նրա վերացումը շիանգեցրեց լիքքարափման:

Այդ բանը լավ էին ցընթանում հայոց աշխարհիկ և հոգմոր առաջնորդները և նրանք նոր էին փմտրում ատեղծված ծամր դրույթյունից դուրս գալու համար: Այդ նպատակով Սմբատ Բագրատունին իր մոտ, Դարույնը ունեցած էր հայ նախարարների գաղտնի ժողով, որին մասմակցում էին Բագրատունի Աշոտ իշխանի որդի Սմբատը, Թեղողոս Ոշտունը, որդի Վարդը, իր նորայոց՝ Աշոտը, Վասպուրականի և մյուս հայ նախարարները:

Դանգամանորեն քննարկելով ստեղծված իրավիճակը և քաղաքական հետամէլքարները, նպատարանները որոշեցին չապտամբել արաբների դեմ, բայց հետանալ և կենտրոնանաց հայկական Տայք օսմանագում: Իսկ իշլու հասկապիս Տայքում: Դա քացատրվում է նրանով, որ նա գտնվում էր Բյուզանդիայի ազդեցության ոլորտում, որը որոշակի դժվարություններ կարող էր ստեղծել արաբների համար, եթե նրանք որոշեին հայ նախարարաներին ոչնչացնելու համար մտնել Տայք:

Բացի այդ, հայերը հույս ունեին որոշ ժամանակ մնաց Տայքում, այնտեղից հետոնել դեպքների զարգացմանց և առաջին իսկ հնարավորության դեպքում լուրջն վերադառնաց Դայաստանի ներքին նահանգները:

Պետք է ենթալ, որ ապստամբությանը դեմ էին Սահակ կարողիկոսը և մյուս հոգմոր առաջնորդները:

Ի կատարումն Դարույնում ընդունված որոշման՝ ապստամբություն զարգացնել, բայց տեղակիումից և ամրանալ Տայքում, հայ նախարարներն իրենց գմիներով և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, անցնելով Արարատ լեռը, դրւս եկան Ալոտի հայկական պատ-

մական ավանը: Սակայն նրանք չկարողացան շարունակել իրենց ճանապարհը դեպի Տայք, քանի որ Նախիջևանից նրանց դեմ դուրս եկավ արտաքալքան ուժ հազարանոց գործը: Հայկական երկու հազարից կազմված գորամարտկը կանգ առաջ Վարդանակերտ ավանում, որը գտնվում է Արարս գետի ծախ ափին:

Սմբատ Թագրատումին կապի մեջ մտնելով արար գորավարի հետ, նրան հայտնեց, որ հայերը մտադիր չեն ապաժամրէն, այլ լոկ ցանկանում են իրենց ճանապարհը շարունակել Տայք, արարմերին թողնելով իրենց ողջ ունեցվածքը:

Արար գորավարը մերժեց բանակցությունների մեջ մտնել հայերի հետ, վստահ, որ իր գործը, որը մի քանի անգամ գերազանցում էր հայկական գորդին, հեշտությամբ հաղթանակ կուտանի և ծնոց կրերի մեջ քանակորյամբ ավար, այդ բառում և գերիներ, որոնց որպես ստրուկներ մեծ արժեք էին ներկայացնում:

Դայլական գործը ականայից ընդունեց մարտահրավերը: Նրանք ամրացրին Վարդանակերտ ավանի փողոցները, պահակներ կարգեցին և սպասարկին լուսանալուն:

Վարդանակերտի ճակատամարտը տեղի ունեցավ 703 թ. հունվարյան մի ցրտաշունչ առավոտ, որն ավարտվեց հայոց գործի փառահեր հաղթանակով: Ինչպես Ղումոնի է Եղում, խմայեցիններից «զօազումս հարեալ սատակերին ի սուր սուսերի»: Չովհաննես Դրախտանակերտոցին Ծովմանի հավաստելով, որ «բնաշնչվում է խմայեամ քանակը», գրում է. «Դրա համար հազարացինները ցարու իրենց բանձր լեզվով պատմում են, թև «Վարդանակերտի կոհիկը բռու շիշչվի մեզ մուռ»:

Փրկվեց միայն 300 արար գինվոր, որոնց խոհահարությունից ապաստան տվեց Կամսարական տիկին Ծուշամիլը: Այնուհետև նա այդ գերյալմերին ուղարկեց խալիֆային:

Վարդանակերտի հաղթանակի լուրն արագործն տարածվեց Հայաստանում, առաջ թրելով ապատամբությունների լայն աշխը հայկական տարրեր շրջաններում՝ Կասպուրակամում, Վանանդում և այլուր: Բոլոր տեղերում ապատամբություն պարտության մատնեցին իրենց դեմ ուղարկված արարական գործներին:

Արարմերի ռազմական պարտությունները խորապես զայրացրին խալիֆա Արդ ալ-Մալիկին, որը հրամայեց կուսակալ Մուհամմադ իր Սրբանին 150 հազարանոց գործով մտնել Հայաստան և դաժանորին նշշել ապստամբությունը, չխնայելով ոչ ոքի:

Սահակ կարողիկոսց, տեսնելով, թէ ինչ ահավոր վտանգ է կախված հայության գլուխն, հայ եպիսկոպոսների ուղեկցությամբ մեկնեց Յարրան, բանակցնելու իր Մրկանի հետ հաշտության համար: Կարողիկոսի առաքելությունը միայն նրա սեփական նախաձեռնությունը չէր: Այդ ուսուն կարծիքի էմճ նաև հայ նախարարները, որոնք և նպաստակահարմար գտան հայ հովվապեսի բանակցությունները արար կուսակալի հետ:

Սակայն յարրանում Սահակ կարողիկոսց իիվանդացավ և մահացավ: Նրա խնդրանքով նրա նամակը, որտեղ շարադրված էին հաշտության վերաբեյալ հայկական կողմից առաջարկությունները, հանձնվեցին Մուհամմադ իր Մրկանին:

Պայկական կողմից առաջարկներն ցատ եռթյան հանգում էին հետևյալին: Առաջին, հայերն իրենց հապատակությունն են հայտնում խալիֆային, երկրորդ, խալիֆան հանձն է առնում զիջմել արյունահետության, և, երրորդ, պարուսավորվում է ցուցաբերել կրօնական հանդուրժողականություն հայերի նկատմամբ:

Կարողիկոսի նամակը հասավ հասցեատիրոջը և իր Մրկանը, հարգելով կարողիկոսի խնդրանքը, գոավոր երդմեց կատարել վերոնշյալ պահանջները: Նա Սահակ կարողիկոսի դին մեծ պատիվներով և հայ եպիսկոպոսների ուղեկցությամբ, ուղարկեց Պայտատան:

Առժամանակ Պայտատանում տիրեց անդրու և Մուհամմադ իր Մրկանն անգամ ժամանեց Պայտատան, որտեղ նա անցկացրեց 703 թ. ամառն ու ձմեռը:

Սակայն 705 թ. հարաբերությունները կրկին լարվեցին: Արաբները չեն մոռացել հայերի ապստամբությունը և իրենց պարտությունը Կարդանակերտի ճակատամարտում և հարմար առիթ էին վնատրութ նրանց պատճենու համար: Այդպիսի առիթ տվեց Սմբատ Բագրատունին, որը 705 թ. անցնելով բյուզանդացիների կողմը, բյուզանդուկան գործընի հետ հանդիս եկավ ընդդեմ արաբների:

705 թ. ճահացաւ խալիֆա Աբդ ալ-Մայլիջը և Երան փոխարինեց նրա որդին՝ Վալիջը (705–715 թթ.): Նա շարունակեց իր հոր կոչությաց անությունը կայսրության ոչ մուսուլման քանակության, այդ թվում և հայերի նկատմամբ: Նա հավատարիմ մնաց հայ նախարարական տներու ոչնչացնելու իր նախարիդի քաղաքականությանը:

Մուհամմադ իր Մրկանը, ստամալով խալիֆա Վալիջի հրամանը հայերին խստագույնս պատճենու վերաբնրյալ, հանձնարարեց Կասիմ

գրրավարին, որը գյխավորում էր Նախիջևանում տնդակայլած արարական գրրագումը, իր մոտ հրավիրել հայ նախարարներին: Որպես պատրիակ օգտագործվեց հայ հեծյալների, այսինքն հայոց այրուծին հաշվառում կառարելու և աշխատավարձ վճարելու խալիքայևան արքայական դիմանի պահանջը:

Ոչինչ չկասկածող հայ նախարարներն իրենց ընտանիքներով և ուղեկիցներով ժամանեցին երկու խմբի: Այսուեց նրանց Կասիմի հրամանով քամանեցին երկու խմբի: Մի խումբը՝ ութ 800 մարդ, փակվեց Նախիջևանի, իսկ մյուս խումբը՝ 400 մարդ, Խրամի նկենցնեցու: Երկու եկեղեցին է Կասիմի հրամանով հրկիզվեցին և եկեղեցիներում գտնվող բոլոր նախարարներն իրենց ընտանիքներով և ուղեկիցներով ողբակից-վեցին: Նրանցից ոչ ոք չփրկվեց: Իսկ հայ նախարարների մի խմբի, որոնց խռոտացել էին ուսկով և արծարով փրկազին տալու դեպքում ազատ արձակել, փրկազինը վերցնելով, Կասիմի հրամանով կախաղան բարձրացրեցին:

Ծոհկան նախարարների մեջ էին Բագրատունի, Արծրունի, Ամատունի և այլ իշխաններ:

Այս քառմենի հետաքեր տեղի ունեցած 705 թ. ուշ աշնանը:

Պարկ է Եջել, որ այդ տարիներին, երբ սաստկացել էր խալիքաններ քաղաքականությունը, իմաստ քննություններ և հայածանքներ էին լիրառվում նաև Արմինիայի մյուս ճամանակ, Վիրքում և Աղվանքում:

## 8. Արարական տիրապետության ամրապնդումն Արմինիայում

705 թ. արյունակի դեպքերից հետո, աստիճանաբար փոփոխություն է նկատվում խալիքա Կալիդի քաղաքականության մեջ, որն իր պատացույնն է գտնում նաև Արմինիայի նկատմամբ խալիքայության դիրքորոշման մեջ: Նա դատմում է ավելի մեղք և հանդուրժողական: Ամրապնդելով ամենուր խալիքայության դիրքերը, Կալիդը այլևս անհրաժեշտ չէր գտնում իր հոր դաման քաղաքականությանը հետևելը: Ընդհակառակը, նա նպատակահարմար է համարում հաշտության և համածայության եզրեր գտնել բոլոր նրանց հետ, ովքեր տուժել էին քանություններից և հայածանքներից:

Խալիքա Կալիդը լավ էր հասկանում, որ Արմինիայի նախակին կառավարիչը՝ ոստիկանը, այնս պիտանի չի կարող լինել իր նոր քաղաքականության համար: Ուստի նա 705 թ. վերջերին Արմինիայի նոր ու-

տիկան է նշանակում Արդ ալ-Ազիզ իբն ալ-Շատիհ ալ-Բահիլիին, որը լայնախոհ և հանդուրժող մի անձնավորություն էր:

Նախիցեամի և Խորամի սահմանեցուցիչ դեպքերից ամենահապես հետո, Սմբատ Բագրատունին և նրա հետ մի շարք նախարարներ հեռացել էին Պայաստամից: Քյուզանդական կայսրը նրանց ապաստան էր տվել Փուլքում (Փորի): Խայիֆա Կայիշի հանճնարարությամբ Ալմինիայի նոր կառավարից Արդ ալ-Ազիզը Փուլքում գտնվող Սմբատ Բագրատունուն և մյուս հայ նախարարներին հրավիրում է վերադառնալ իրենց երկիր՝ Պայաստամ, տալով համապատասխան երաշխիքներ: Այդ երաշխիքների մեջ մտնում էր հայոց նախարարական տոհմերի ժառանգական իրավունքների ճանաչումը ու հաղործությունը, և Պայաստամի կառավարման համակարգում նրանց ավանդական տեղերի (պաշտօնների) ապահովումը և այլն:

Եվ հայ նախարարները վերադարձան: Սմբատ Բագրատունին կույնո ճանաչվեց Պայտո իշխան: Արդ ալ-Ազիզի ջամբերով վերակառուցվեց Ղվինը, որը մեծ ավերածությունների էր ենթարկվել քազմարիվ արշավանքների հետևանքով:

Կարևոր փոփոխություն տեղի ունեցավ Խայիֆայությամ քաղաքականությամ մեջ նաև քրիստոնյա եկեղեցիների նկատմամբ: Նրանք հասկացան, որ ամերածեցի է աքալեցն միարժակ քրիստոնյա եկեղեցներին, որոնք հայածանքի էին ենթարկվում Արարական խայիֆայությամ հակառակորդ Քյուզանդիայի և նրա եկեղեցու կողմից, որոնք միարժակությամ մոլեսանդ հակառակորդներ էին:

Ելնելով այդ տեսադրությունը, Խայիֆայությունը քարյացակամ դիրք գրավեց միարժակ՝ ասորական, դպտի, ապա նաև հայկական եկեղեցների հանճեաւ:

Դրա վկայությունն էր 719 թ. հայոց կաթողիկոս Պովիաննես Օծնեցու ուղղորդությունը Պամասկոս և նրա հանդիպումն ու քանակցություններն Օմար Խայիֆայի հետ: Այդ քանակցությունների արդյունքում խայիֆան գրավոր հակառակագիր տվեց Պայաստանում քրիստոնեական հավատն ազատորն ուավանելու, ինչպես նաև եկեղեցուց հարկ չգանձնուելու վերաբերյալ:

Դայոց կաթողիկոս մի կարևոր հարց էլ լուծեց: Խայիֆան ընդառացնեց հայոց կաթողիկոսի միջնորդությանը և ազատ արձակեց 705 թ. Խայիֆանի և Խորամի դեպքերից հետո գերեվարված և Ասորիք տարված հայերին, որոնց զգալի մասը նախարարական ընտանիքներից էր:

VII դ. 30-ական թվականներին խալիֆայությունը նոր արշավանքներ ծեռնարկեց Մրժինիայի որոշ մասերում: Այդ ժամանակ նիմատ ակտիվացել էին խազարները, որոնք հաճախ ներխուժում էին խալիֆայության տարածքները և մեծ ավերածություններ գործում:

Խազարների այդ արշավանքների հետևանքով բռլացել էին Վիրքի կապերը Օմայյան խալիֆայության հետ: Դամանման խնդիրներ էին ծագել կապված Աղյանի, առավել և Ղեղթենի հետ: Անհրաժեշտություն էր առաջացել Վերջ տալ այդ բռլորին և վերահաստատել խալիֆայության տիրապետությունը:

736 թ. Քիշամ խալիֆան փոխարքա Մրգանին հանձնարարեց այդ դժվարացով խնդրի լուծումը: Սակայն Մրգանը նախքան խազարների դեմ պատերազմ սկսեց, ներխուժեց Վիրք, ասպատակեց այն, և ոչնչի առաջ չկանգնեցով, վերցնականական հապատակեցոց Վիրքը:

Այնուհետև արարական զորքերը ներխուժեցին ալյանս Երկիր և նա նույնանու գրավեցին, ամրանայով ռազմավարական մեծ Զշանակություն ունեցող Բար Ալանում՝ Ալանաց դռներում:

Քերքը հասակ Ղերթենին: Օմայյանների տիրապետությունը Դաշտանում այդ ժամանակ լիաստորեն գոյություն չուներ: Մրգանը արտեր Ծովանին հաջողության հասավ: Նա նվաճեց Թումանջահ և Լարգ ոչ մեծ իշխանությունները, ապա ամբողջ Ղերթենդ-Դաշտանը:

Մրգանը հաջորդ տարի, 737 թ. նոր արշավանք սկսեց, որի անմիջականորեն ուղղված էր խազարների դեմ: Նրա 135 հազարանոց բանակը 15 հազարանոց հայոց այրուծի հետ միասին փայլուն հաղթանակ տարավ խազարների նկատմամբ: Արարա-հայկական միացյալ բանակի մի մասն Ալանաց դռներով ներխուժեց Ջուսիսային Կովկաս, իսկ մյուս մասն էլ Դարրամոնդի կողմից առաջ շարժվեց և հարձակվեց խազարների վրա: Վերջիններս նահանջեցին մինչև Վոլգա գետի ավագանը: Պարտություն կրած խազարական ղեկավարը՝ խարան իր հպատակությունը հայտնեց Օմայյան խալիֆայությամբ: Նրան պարտությունը ընդունել իսլամ, որը և նա կատարեց:

Այսպիսով, VII դ. 30-ական թվականների վերջերին Օմայյան խալիֆայունը ոչ միայն իր տիրապետությունը վերականգնեց և ամրապնդեց Արժինիայում՝ Պայառանում, Աղյանում, Վիրքում, Ղերթենում, այլև իր տիրապետությունը տարածեց Ջուսիսային Կովկասի որոշ մասերի վրա:

### III. ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸԸ

Խալիֆայուրիան անատոմիայի մասին լրիվ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նաև լուսաբաննել նրա ներքին կյանքը, մասնավորապես կառավարման համակարգը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները և սեփականության ծննդը, մուսուլմանների և ոչ մուսուլմանների հրավորությունները և պարտականությունները, զինված ուժերի դերը և ֆունգիաները, պալատական կյանքի ու տիրապետող բարերը և այլն:

#### 1. Պետական կառավարման համակարգը և ապարատը

Արաբական պետության մեջ պետական կառավարման համակարգը ծնակորով է աստիճանաբար, և վոլուստիոն ճանապարհով: Նա անցում է կատարել նախական արխայիկ ցեղային հարաբերությունների կառավարման մերույներից, կանոններից և սովորություններից դեպի արևելյան դեսպոտիաները՝ բռնապետություններին հասուլ կառավարման ծննդը, որոնք անընդհատ կատարելագործվել են, սակայն երեք լրիվ չեն ծննդրազատվել իրենց ճնող արաբական ցեղերին ընորոշ կառավարման պարզությամբ:

Խալիֆայության պետական համակարգի ծնակորման վրա մեծապես ազդել են Արևելյան Հույնեական կամ Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի պետական կարգերը, որոնք արաբականի համեմատ ավելի զարգացած և կատարյաց էին: Պատահականություն չեր, որ շատ խալիֆաներ փորձում էին ընդօրինակել բյուզանդական արքունիքին և իրենց պալատական կյանքը կառուցել բյուզանդականի նմանակությամբ:

Օմայյան խալիֆայությունում բաղադրական, ուազմական, դատական և կորոնական բարձրագույն իշխանությունը կենտրոնացված էր խալիֆայի ծնորում: Նա անսահմանափակ տիրակալ էր:

Սակայն Օմայյան խալիֆայությունում գործություն չուներ կառավարություն մամանեկակից հասկացողությամբ:

Դրա փոխարեն խալիֆայությունում զարգացած էր տեղական կառավորությունը՝ փոխարքաների կամ կուսակալների ինստիտուտը: Օ-

մայյաների ժամանակ խալիֆայությունը, որ տարածվում էր Հնդկաստանից մինչև Աստղանու օվկիանոս, բաժանված էր ինը փոխարքայությունների. 1) Սիրիա և Պարսկաստին, 2) ալ-Կուֆա և համայն Իրաք, 3) Իրան, Սիստան, Խորասան, Բահրեյն, Օման, գուցն և Նաջր և ալ-Յամամահ, որի կենտրոնն էր Բասրան, 4) Արմինիա, 5) ալ-Ջիջազ, 6) Ֆերման և Հնդկաստանի գրավյաց տարածքները, 7) Եգիպտոս, 8) Իրիմիյա՝ Աֆրիկա, 9) Եմեն և Հարավյային Արարիայի հարակից տարածքները:

Այս քամանումը քարացած չեղ և խալիֆաները հաճախ տարածային փոփոխության էին ներարկում փոխարքայությունները: Այսպես, օրինակ, Մուավյան Կուֆան և Բասրան միավորեց մենց փոխարքայության՝ Իրաքի մեջ, Եերասննելով Իրանի մեծ մասը և Արևելյան Արարիան, և նրա կենտրոնը դարձրեց Կուֆան: Փոփոխություն տեղի ունեցավ նաև չորրորդ կուսակալությունում: Այստեղ Զագդրան, որը գրավված էր Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած տարածքը, Արմինիան, Արվանքը և Փոքր Ասիայի արևելյան տարածքները, միավորվեցին մենց՝ նորորդ կուսակալության մեջ, որի կազմում Արմինիան առանձին վարչական միավոր էր:

Փոխարքան օժուված էր լայն լիազորություններով: Նա իր փոխարքայության քաղաքական, գինվորական, տնտեսական և կրոնական առաջնորդն էր և միանձնյա կառավարիչը, որը ենթակա և պատշաճանաւոր էր միայն խալիֆային, որը նրան ուզած ժամանակ կարող էր ազատել իր զրայիցքած պաշտոնից: Փոխարքաները կոչված էին լինել խալիֆաների հուսալի հենարանը տեղիբուռ և ապահովել Արարական լայնածավալ կայսրության միասնականությունը: Նրանք պետք է հանդիսանային իշխանության կենտրոնաձիգ ակզգունեցի մարմնավորությունը և կանխին կինուրունախույս միտունների ամեն մի դրսնորում:

Այս այս պատճառով էլ կարևոր նշանակություն ուներ, թե ով է զրայիցք փոխարքայի քարծը և պատշաճանաւոր պաշտոնը: Ռւսակի խալիֆաները քացակի քայլմուիր էին փոխարքաների թեկնածությունների հարցում: Նրանց սովորաբար այդ պաշտոնները քամանում էին իրենց եղայլուններին, ամենամուտ հարազատներին, ազգականներին և ցեղակիցներին, որոնց մեծապես վստահում էին: Դազգարեաց չեին այն դեպքերը, երբ ազգեցիկ փոխարքաներն իրենք էին հետագայում դասում խալիֆա:

Օճայյաների ժամանակ կարևոր նշանակություն ծնոր քերեց փոստային ծառայությունը, որը, որպես այդպիսին, փաստորեն մասվորվեց նրանց օրոր: Դա կապված էր այն հանգանակի հետ, որ խալիֆայու-

բյունն ընտարծակելի էր և կապց կենտրոնի՝ Դամասկոսի, և ծայրագավառների միջն առանձնահատուկ նշանակություն էր ստացել: Նա դարձել էր խալիֆայության քաղաքական և տնտեսական միասնության ապահովման կարևոր գործիքներից մեկը:

Դրա մասին է վկայում նաև այն հաճգամանքը, որ փոստային ծառայությունը առևկ նամակատարություն չէր, թեև դա նույնպես կարելոր էր, այլ հրատակի աղյօտը խալիֆայության փոխարքայություններից տեղեկատվության հավաքման և խալիֆայի հրամանագրերց ժամանակին տեղյանց հասցնելու հմաստուի: Փոստային ծառայության միջոցով էր տեղյուում հավաքված և պատերազմների ժամանակ ծնող ընդունակ ավարց կենտրոն հասցվում: Իսկ հենցան հարկածավարությունը, այնպես էլ հարկերը սահմանված կարգով և չափարաժիններով մայրաքաղաք հասցնելը խալիֆայության գոյության, հօդորության և տնտեսական քարգավաննան ամենաեւական նախապայմաններից մեկն էր:

Այս նկատառումով է Օմայյան խալիֆայությունում փոստային ծառայության դեկավարն օժտված էր քավականին լայն լիազորություններով: Նրանց հսկողական իրավունքը էր տրված հարկերի հավաքման վրա: Նրանց իրավասության մեջ էր մտնում նաև տեղյուում կամիսնելու դրանց լուրացումը փոխարքաների կողմէից:

Փոստային ծառայության դեկավարի պաշտոնական պարտականությունումների մեջ էր մտնում նաև հետևել փոխարքաների, գորապետերի և դատավորների գործունեությանը և այդ մասին պարբերաբար տեղյակ պահել խալիֆային:

Այսպիսով, կարենի է ասել, որ փոստային ծառայությունը Օմայյան խալիֆայությունում ծնավորվող կառավարման պետական ապահովի և համակարգի ամենաեւականոր օրդակներից մեկն էր դարձել:

Պետական ապարատի մյուս, նույնպես շատ կարևոր օրդակը, հարկերի հավաքման ծառայությունն էր: Նարկածավաքները հարկերը հավաքում էին մեծ դաժանությամբ, կանգ չառնեցու ոչ մի միջոցի առջև, և խալիֆայության գանձարանն ապահովում անհրաժեշտ ֆինանսներով: Այս ծառայությունը մշտապեղ գտնվել է խալիֆաների ուշադրության կենտրոնում:

Օմայյանների ժամանակ ծնավորվեց նաև պետական գործավարությունը, առանց որի անհմար էր պետական ապարատի, պետական մերժնայի անխափան գործունեությունը: Մուավիայի հրանանով ստեղծվեց Շաշվասման քյուր, որը որոշ մասնագետներ հակած են

Ըստ Կայունացնելու՝ Պետական գրաստնյակի հետ: Նրա հիմնական խնդիրներից մեկն էր պատմենահամել յուրաքանչյուր պաշտոնական փաստաթուրը նախարան նրա կնքելը և առաքելը: Պաշտոնական փաստաթուրի խալիքայի հրամանների, զամանակ ֆիրմանների, հարկային հաշվետվությունների, տեղական կառավարիչների հաղորդումները կենտրոն և համայնքայի համար կարևոր նշանակություն ունեցող այլ փաստաթուրների կրկնօրինակումն երդուրեցուն էր խալիքայի բարձրագույն մեջ:

Հետագայում, խալիքա Արդ աշ-Մալիքի (685-705 թթ.) հրամանով Պամասկուում ստեղծվեց պետական արխիվ:

## 2. Արարերեն լեզվի պետական կարգավիճակը

Արդ աշ-Մալիք խալիքայի և նրան հաջորդած նրա որդիների, մասնավորապես խալիքա Կայիդ և անվան հետ է կապված գործազարդության հետագա կատարելագործումը Օմայյան խալիքայությունում: Այն, ինչ նրանք արեցին, կատարյալ հեղաշրջում էր: Արդ աշ-Մալիքի հրամանով ամրող խալիքայությունում, նրա թուղթ կուտակվալություններում, գործակարությունը սկսվեց կատարվել արարերեն լեզվով: Արարերեն լեզվին տրվեց պետական կարգավիճակը:

Մինչ այդ գործակարությունը տարվում էր հունարեն՝ նայեաթարադաց Դամասկոսում, պահապետնեն՝ Իրարում և արևելյան նահանգներում, Պարսկաստանում, և Պատերեն՝ Եգիպտոսում:

Արդ աշ-Մալիքի մկրունքային նշանակությունը ունեցող այս նորածությունը համարվում է խալիքայության արարականացման միջոց: Եթե մինչ այդ տեղի էր ունենում խալիքայության նշանացում, եռոր ոչ արար ժողովուրդները դավանակիր լինելով, ընդունում էին խւամ, առաջ այժմ խալիքայությունը թնակուինց գարգացման արարականացման վուլը:

Այս նորածությունը ուներ թե՛ պետական վարչակառավարական, և թե՛ քաղաքական նշանակություն:

Թամի որ գործակարությունը կատարվում էր ոչ արարերեն, այլ հունարեն, պահապետնեն և դպտներեն լեզվուներով, ուստի և գործակարությունը իրականացնում էին ոչ թե արարերը, այլ օստար հպատակները որպես ֆինանսական ծառայողներ: Նաև կամացի է, որ արարական տիրապետող վերնախառվը երկար չեղ կարող հանդուրժել այդ խալի-

ճակը, քամի որ թնակըության դեկավարումն իրականացվում էր հարկեղի, նացասային տուրքների, տուզանցների հավաքման, պատերազմների ժամանակ մեռ թնաօծ ավարի և թաղանի հաշվառման և թամանման միջոցով։ Իսկ պետական կառավարման այդ կարևոր թնագավառը այլնս չեղ կարելի բռնըների ծեղությունը։

Կարելի է ասել, որ արարական լեզվի կիրառումը պետական գործակարության, վարչաֆինանսական կառավարման մեջ, նշանակում էր, որ արարական կառավարող վերնախավը լուրջ հայտ էր ներկայացնում ընդիանությամբ դեկավարներու խալիքայության պետական կառավարման ապարատը։ Նա լուսվին վերահսկողություն էր սահմանում ֆինանսական-հաշվառման ամրող ոլորտի վրա։

Նոր մոտեցումը կառավարման պետական ապարատին և գործակարությունը արարերին լեզվով վարելու որոշումը, ասկայն, չէր նշանակում, որ նախընտառ աշխատավիճները, օտար հաստակեներն ազատ արձակեցնել և փոխարձնվեցին արած պաշտոնյաներով։ Այդպիսի նրուուր զանգվածարար տեղի չունեցավ։ Ոչ արաբ հաստակեներն այդ ժամանակ մեկ դար էր, ինչ գտնվում էին արարեների տիրապետության տակ և առնվազն երկու սերունդ էր ամեն, որը ռավականին յուրացող էր արարական բարերջ և ստորոտքյունները, և նրանց մեջ ցիշ շին այնպիսի նասնագետներ, այդ թվում և գրագիրներ, հաշվառողներ, ֆինանսիսաներ և այլ գործակար-նախանագետներ, որոնք տիրապետում էին արարերին լեզվին և ի վիճակի էին գործակարությունը վարել արարերին։ Նրանց մնացին իրենց տեղերում, գործակարությունը վարելով արարերին։ Իսկ մի ճասան է սկսեց արագացքած տնմակերով ստվորել արարերին։

Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ արաքմերը, անգամ երեկով քեզվիններց, որոնք տնդափոխվել էին քաղաքներ և քաղաքատիա թնակավայրեր, ոչ մի հակում և ցանկություն չունեին նստել գրասեմյակներում և հաշվառում կատարել։ Դա նրանք համարում էին ոչ միայն տաղումկայի, այլև իրենց համար ոչ արժանապատիվ գործ։ Դրա փոխարեն, նրանք իրականացնում էին ընդհանուր, և պետք է ասն, ինչտեղ վերահսկողություն ամրող գործակարության, որպես պետական կառավարման համակարգի ամենաեական օդակի, վրա։

Դպրուտակ և նվաճված մուտքաման ժողովուրդներին արարերին լեզվի պարտադրմանց նպաստում էր մի կարևոր հանգամանց նս։ Մուտքամանների սուրբ գիրքը՝ Կորանն արգելվում էր բարգմանել այլ լեզուների։ Ուստի նրանք Կորանը կարդալու համար ունեին միայն մեկ ելք՝

սովորել և տիրապեսով արարենքնին: Եվ գերմեռանդ ու աստվածավախ մուսուլմանները զանգվածարար ընտրեցին այդ ուղին. նրանք մկնեցին սովորել արարենքն:

### 3. Ազգային արարական դրամի ստեղծումը

Արդ ալ-Մալիքի կարևոր նորամուծություններից էր ազգային արարական դրամի ստեղծումը: Խալիֆայությունում մինչև VII դ. վնյօթերը շրջանառության մեջ էին բյուզանդական ոսկյա և պարսկական արծաթյա դրամները, ինչպես նաև, սահմանափակ ծավալներով, Դիմարիների արծաթյա մետաղադրամները: Եիշտ է, առաջին խալիֆաներ Օմարը, Սուլավիան և մյուսները, այդ մետաղադրամների վրա դրոշմում էին Կորանից վերցրած առանձին արտահայտություններ և դարձվածքներ, սակայն դրանով ազգային դրամի ստեղծման հարցը չէր լուծվում: Այդ կարևոր հարցը պահանջում էր արմատական փոխիշտություն:

Եվ Արդ ալ-Մալիքը ծոյակ այն խալիֆան, որին վիճակված էր կատարելու այդ քայլը: Նրա հրամանով շրջանառությունից հանվեցին բյուզանդական ոսկյա և պարսկական բոլոր մետաղադրամները: Ամբողջ խալիֆայության մեջ մուցվեց արարական ազգային դրամ՝ ոսկյա դիմարներ և արծաթյա դիրիեններ: Խալիֆայությունն անցավ միասնական դրամական համակարգի: 695 թ. Ռամասկուսում հատվեցին առաջին ոսկյա դիմարները:

Դրամահատուարաններ ստեղծվեցին ոչ միայն մայրաքաղաքում, այլև առանձին քաղաքներում: Բայց պահպանվեց մի նաև ան տարրերություն: Ուսկյա դիմարներ հատելու բացահիկ հրավումը պատկանում էր խալիֆային, իսկ մնացած կուտականները կարող էին հատնել միայն արծաթյա դիրիենները: Մովորաքարար այդ մետաղադրամների վրա գրվում էին իսլամին և Ալլահին վերաբերող ասույթներ, դրոշմվում էր խալիֆայի պատկերը, որի ժամանակ այն հատվել էր, հատման տարերիվն ու վայրը:

Ազգային դրամի ներմուծումը շրջանառության մեջ վկայում էր երկու քանի մասին, առաջին, որ խալիֆայության տարրեր մասների միջև արդյն բավականին բարձր մակարդակի էին համաց առևտորական և տնտեսական կապերը, որն անհրաժեշտ էր դարձրել միասնական ազգային դրամի ստեղծումը և օտար դրամի դրւում մղումը տնտեսական ոլորտից, և, երկրորդ, խալիֆայության կառավարող վերնախավը որդեգրիլ էր կառավարման համակարգի հնտագա կենտրոնացման և խալիֆայու-

բյան համար կենսական նշանակություն ունեցող հարկացին ապարատի գործունեությունը կարգավորելու և նոր հիմքերի վրա դնելու քաղաքականություն:

Շշշագոյավ է, որ Բյուզանդիան բացահայտ թշնամանքով ընդունեց արարական ազգային դրամի ստեղծումը ու շրջանառության մեջ դնելը և բյուզանդական դրամի շրջանառությունից դուրս մղումը, հերթական պատերազմական գործողությունները մկնարկվ խալիֆայության դեմ:

Մակայն դա դույզն իսկ չսասաննց խալիֆաների դիրքորոշումն ազգային դրամի հարցում:

#### 4. Արարական ազգային գինված ուժերը

Օճայյան խալիֆայության պետական և վարչական կառավարման համակարգի բաղկացուցիչ մասն էին կազմում երկրի գինված ուժերը: Նրանք կառարում էին թերթիմ և արտաքին բնույթի թագմակի ֆունկցիաներ:

Կառուցվածքային առումով խալիֆայական բանակը շատ բան վերցրել էր բյուզանդական բանակային կառուցվածքից: Նա բաժանվում էր հիմնական բանակային կորպուսների, որոնք ունեին իրենց մնայում տեղակայումը՝ կենտրոնում, աշ և ձախ թևերում, առաջապահ և վերջապահ: Այսպիսի բաժանումը պահպանվեց ընդհուպ մինչև վերջին խալիֆան՝ Մրկան II (744–750 թթ.):

Մրկան II գրյուրյուն ունեցող բանակային կառուցվածքը համարելով արդեն հնացած և իր դարն ապրած, հրաժարվեց նրամից և լուծարելով կորպուսները, անցավ նոր ծեփ: Նախ, նա գգալիորեն կրնատեց գործերի բանակը, ապա ստեղծեց համեմատարար վիզր, սակայն հաւաց, կոմպակտ մի ոազմական օրգանիզմ, որը նա անվանեց կուրորուս՝ կուրորուս: Նա այքի էր ընկույտ իր արագաշարժությամբ և մաներելու մեջ հնարավորություններով:

Արարական գինված ուժերը կազմված էին հետևակից, հեծելազրից, նավատարմից և ուղտերի գնդերից: Եիշտ է, ուղտերը նրբեմն նույն մասնակցում էին նաև տանաօմարտերին, սակայն, նույն հիմնականում օգտագործվում էին որպես փոխադրամիչոց ամրություն պաշարման և գրավման համար սարքերը, բանակը կենսագործութեալումն ապահովող տարբեր թեռները և այլ անհրաժեշտ իրեն տեղափոխելու հա-

Ծար: Այդ պատճառով է նրանց տեղը բանակի հետնամասում էր, նրանց սովորաբար գմում էին գործերի հետնից:

Օճայլան բանակի ներքին ֆունկցիաների մեջ առաջնայինը տիրապետող դինաստիայի և տայալ խալիֆայի իշխանության անվտանգության պահպանությունը էր: Զինված ուժերն էին հանդիսանուն խալիֆաների հենադանց և այդ իմաստով արաբական հասարակության մմագած բրոդ խավերը գիրում էին նրանց: Զինված ուժերի օգնությամբ էին խալիֆաները ճնշում ժողովրդական ներքեմները և վերացնում գահի նկատմամբ այլ հավակնորդների ոստնօգությունները, լինեին ողանց կառավարող դինաստիայից, թե այլ, օտար ցնողական մերժից:

Երկար ժամանակ արաբական գինված ուժերի միջուկը կազմել են արաբական տարբեր ցեղերի աշխարհագրությունը: Սակայն խալիֆայության անընդհատ ընթարժակումը, նորանոր նվաճումները և դրանց հետ կապված նվաճած նրկրների բնակչությանց հնագանու պահելու խնդիրները, ակնհայտ դարձնեցին, որ ցեղային աշխարհագրությունը ի վիճակի շնորհայտության առօտ կանգնած քարտ խնդիրները լուծեցր համար: Անհրաժեշտ էր որոշակի փոփոխություններ կիրառել գինված ուժերի համակարգում և կառուցվածքում:

Եվ Օճայլաներն այդ փոփոխությունն իրականցրին: Նրանց սկսեցին գործը համայնք կամ ժամանակակից տերմինալոգիայով ասած, գինակոչներ քաղաք-ճամբարների քնակիչներից:

Սակայն բոլորը չեն, որ կարող էին գործակուզել և ծառայել բանակում: Զինված ուժերում ծառապելու պարտականությունը որված էր արաբների վրա, որը միաժամանակ նրանց համար համարվում էր առանձնաշերտում: Ըստորում գորակուզվում էին ոչ միայն նույնության, այլև քրիստոնյա արաբները, որոնց թիվը բավականին շատ էր հասուլացիս Միջիայում և Պարտեանիում:

Զինված ուժերի մյուս հատվածը խալիֆայության տարրեր քաղաք-ճամբարներում տնօղակարգված արաբական կայազորներն էին: Արաբական կայազորներ կային նույտառություն (Կաթիրե), Բասրայում, Կուֆայում, Ալբայում, Նախիջևանում, Թրիլիսիրում, Դերբնորում, Սանալողանդում, Կորդովայում, Մուլտանում և այլ կենտրոններում: Կայազորների գինվորները և նրանց ընտանիքի անդամները պահպեմ էին տվյալ քաղաքի և նրա շրջակա բնակավայրերի տեղական բնակչության հաշվին:

Որու հետ միասին գինվորները ստանում էին ոռիկ և նյութական այլ օգնություն պետական գանձարանից, որը բավականին բարձր էր և

նրանց ապահովում էր բարեկեցիկ կյանք: Սակայն այստեղ հավասարություն չկար: Միդիացինները, որոնք կազմում էին խալիֆայական գվարդիայի կորիգօր, ավելի բարձր էին վճարվում և օգտվում էին գանձան արտոնություններից, քան թե մյուսները:

Սակայն թող այն տպավորությունը չստացվի, թե ցեղերի գիմուժը կորցրեց իր նշանակությունը: Թնավ: Խոսքն այդ մասին չէ, այլ այն, որ ցեղային աշխարհազորները սկսեցին ավելի ու ավելի մոտենալ կամոնավոր և կարգապահ գործերին և ավելի մեծ արդյունավետությամբ կատարել նրանց վրա դրված պարտականությունները:

Այս բնագավառում կատարվեց մի փոփոխություն ևս: Բադաբ-ճամբարներում գործերը և նրանց ուղեկցող բնակչությունը տեղակայվում էին ոչ թե խաօս, այլ ըստ ցեղային պատկանելության: Փաստութեան տեսիլ էր ունենուն ցեղերի սահմանազատում: Դա կատարվում էր նկատի ունենալով երկու հանգամանը: Նախ, կամիսել բախումները տարբեր ցեղերի միջև, որը սովորական երևոյք էր Արարիայում: Կամանալի է, որ միջցեղային բախումները կրույացնեին բանակը և խալիֆայությունը, ընդհանրապես: Տեղերի սահմանազատումը կոչված էր կամիսել այդ վտանգավոր միտումներոց:

Երկրորդ, դա կարող է պարագուս բվալ, սակայն ցեղերի գիմուժը պահելով միմյանցից անցառ և չըողներով նրանց շփմբել միմյանց հետ, որանով խալիֆաները պահպանում էին ցեղերի միջև գոյություն ունեցող քնանական հարաբերությունները, որը նրանց հնարավորությունը էր տալիս հարկ եղած դեպքում ցեղերին լարել միմյանց դեմ, թույլ չտալ նրանց միավորվել ընդդեմ իշխանությունների, և այդ կերպ նրանց օգտագործել իրենց նպատակների համար:

Խալիֆայության բանակում ծառայում էին նաև ստրուկներ, բայց նրանց շին վստահում ուսպանական գործողություններ, այլ հիմնականում օգտագործում էին օժանդակ աշխատավայրների մեջ:

Բանակ էին զրահակովզում նաև այսպես կոչված մավանեցր: Դրանք իրենց նախկին հավաստից հրաժարված և խպամ ընդունածներն էին, որոնց հաճախ անվանում էին կլիստմեներ: Նրանք պարտադիր դառնում էին այս կամ այն արաթական տորմիկ խալամական ցեղի կլիստուց: Ֆ. Դիերին և Շ. Քելյանը գեղադասում են նրանց անվանել Շնորհաւամները: Շնավանդեն նրանց իրավահավասար էին արաք բնիկ մահմեթականներին, սակայն իրականում այդպիս չեն: Նրանց նկատմամբ գործում էին մի շարք սահմանափակումներ և միշտ չեր, որ նրանց լրիկ վստահում էին:

Դա դրսնորվում է նաև բանակում: Օրինակ, արար զորավետերը լրիվ շին վստահում նեռուստվավաններին հասունացն մարտի ժամանակ և միշտ ապահովագրական միջոցառումներ էին նախատեսում:

Օմայան խալիֆայության ժամանակ արարական գինված ուժերին կառուցվածքային առումով բնորոշ էր ևս երկու առանձնահատկություն:

Առաջին, զիմմեններին բույզառիկում էր ունեմալ իրենց առանձին ռազմական ցոկատներ, որոնք մասմակցում էին ռազմական գործողություններին:

Երկրորդ, Օմայյաններն իրենց մեծածավալ կայսրության առանձին շրջաններում կամ երկրամասերում բույզառի էին պահպանել տեղաբնիւմների տեղական գործերը՝ իրենց իշխանների հրամանաւորության ներքո: Պահպանվել էր, օրինակ, հարց արդումին որպես առանձին միավոր: Նա մարտի էր գնում Պայտո իշխանի հրամանաւորության, սակայն չէր տարրապում արարական բանակում: Նույնպիսի կարգավիճան ունեին նաև պարսկական առանձին ֆեռազական զինված ցոկատներ, Բարթլի իշխանները և այլն, որոնք պարտավոր էին խալիֆայի կամ փոխարքայի հրամանի դեպքում ամփեքապես իրենց գործերը դնել խալիֆայի տրամադրության տակ և մասնաւոցել ռազմական գործողություններին:

Ինչ վերաբերում է արտօքին ֆունկցիաներին, ապա խնդիրն այս տեղ պարզ էր: Արարական բանակի գլխավոր խնդիրն էր Օմայյան դինաստիայի նվաճողական քաղաքականության հրագործումը և նոր երկների նվաճումը, մի կողմէն, և արարական կայսրության տարածքային ամրոցականության պահպանումը և խալիֆայության վրա այլ պետությունների հարձակումների կանխումը, մյուս կողմէն:

Մյուպիսին էր ռազմական ուժերի կառուցվածքը Օմայյանների տիրապետության շրջանում:

Ինչպես տեսնում ենք, նա բազմաստիճան էր և ուներ բավականին բարդ կառուցվածք, սակայն հարմարեցված էր արարական մուահայեցորդությանը, սոցիալական կառուցվածքին, խալիֆայության կազմում գտնվող երկների և նախկին պետությունների կարգավիճակին ու խալիֆայության առջև կանգնած ներքին և արտօքին խնդիրների կատարմանը:

Այդ խնդիրների հրագործումը համընկնում էր կենտրոնական իշխանության պահպանման և ամրապնդան առանցքային խնդրի հետ, որը բանակը միշտ համարել է իր կարևոր մենաշնորհը:

Չնայած վերոնշյալին, Օճայյան խալիֆայության ժամանակ պետական կառավարման համակարգում չըստեղծվեց առանձին զինվորական ծառայություն, ինչպես հարկային և փոստային ծառայությունները: Յավանաբար դա բացառրվում է այն կարևոր դերով, որ բանակը խաղում էր խալիֆաների իշխանության պահպանման և ընդհանրապես պետության կյանքում: Խալիֆաները, բնականաբար, այդ կարևոր ուժը ցանկանում էին պահել իրենց անմիջական կառավարման ներքո ու հոկության տակ և չին վստահում դա փոխանցնել ուրիշներին:

### 5. Ազրարային հարաբերությունները

Մուսավամանական իրավունքի համաձայն հորդը պատկանում է Ալ-Ղաջին, նա է զերագոյն սյուօբերները: Դա նշանակում է, որ մուսուլմանական իրավունքը մերժում է հորդի մասնավոր սեփականությունը: Սակայն դա տիսական իիմնադրություն է: Իրականում հորդօգոտագործման տարրեր ծննդրի անվան տակ գոյություն ունեն սեփականության տարրեր տեսակներ:

Դրանց մեջ ամենահինգ համայնքային հորդատիրությունն էր, որն այդ շրջանում կար ինչպես նույակյաց և բռչվոր արարների, այնպիս էլ նվաճած Արլիրների գյուղացիների մոտ:

Սակայն համայնքային հորդը քանի զմում այնքան պակասում էին և չին կարող բավարարել համայնքների անդամների հորդային պահանջները: Դրանց նվազումը կապված էր համայնքային բնակչության աճի հետ այն պայմաններում, երբ համայնքային հորդատարածքները ոչ միայն չին աճում, այլև, ընթափառակը, պակասում էին: Շատ հարուստ և ազդեցիկ հորդատերներ աստիճանաբար յուրացնում էին համայնքներին պատկանող հորդը և այն օգտագործում որպես մասնավոր սեփականություն:

Հորդասակավ կամ հորդագույք գյուղացիներն իրենց ապրուստը և գոյությունն ապահովեցու համար հարկադրված էին դիմել հարուստ հորդատերներին:

Ինչո՞ւ:

Գոյություն ունեցող սովորությի համաձայն հորդատերն իրենք անձամբ ամմիջապես չին գրադպամ հորդագործությամբ, այլ նախընտրում էին հորդ վարձակալման տակ հորդագույք գյուղացիներին, որոնք դրա պահանջը գգում էին: Կային վարձակալության տարրեր չափարա-

ժիմներ՝ կիսրար, եղբ գյուղացին հողատիրոցը տալիս էր ստացված բերքի կեսը, սակայն ավելի շատ տարածված էր բերքի մեկ երրորդի կամ մեկ քառորդի վճարումը:

Չափարաժնի սահմանումը կախված էր այն համգամանքից, թի կողմերից ույ ինչ էր տալիս կամ կատարում: Վարժակալի չափի նվազում էր, եթե հողատիրը հողի հետ միասին գյուղացուն տալիս էր նաև, առևնջ, սերմացուն, գյուղատնտեսական գործիքներ և այլն:

Վարձակայ գյուղացին, այդուհանդեմ, չեր կարողանում դուրս գույ ադրատուքյան միջաններից: Նրա և նրա բազմանդամ ընտանիքի տնտեսական վիճակը շարունակում էր մնայ շատ ժամոր:

Օմայյան ողբանատիայի կառավարման ժամանակաշրջանում հողային տիրապետության գյուղավոր ծնց դարձավ պետական հողատիրությունը: Նկատի ունենք այս հանգամանքը, որ հողերի, ինչպես նաև ոռոգման համակարգի հիմնական մասը կըմտրունացված էր պետության ծեղում: Նա էր Մոնօրինում այլ վիճակարի զանգվածը խալիֆայուրյան անձայրածիր տարածըներում, ինչպես թուն Արարիայում, այնպես է նրա կազմի մեջ մտմոլ նվաճած երկրներում:

Օմայյան խալիֆաներն իրնենց էին հանդիսանում մնջ հողատիր, որոնք տնօրինում էին պետական հոգայական հողատարածքներ: Մեծ հողատարածքներով էին օժտվում խալիֆաների ազգականները, ցեղակիցները, հարազատները և այլ մերձավորներ, որոնց թիվը հասնում էր մի քանի հազարի:

Խալիֆաները մեծ հողակառուներ էին շնորհում արքարական հողային ավագանում: Նա անընդհատ ընդարձակում էր իր հողային տարածքները, որը ժամանուեն օգտագործում էր որպես սեփականություն:

Արքական հողային արիստոկրատիայի համար իր հողային ունեցվածքի ընդարձակման մյուս արյուղը նվաճած երկրներում հողերի բռնագրավումն էր, ինչպես նաև հողերի գնումը, որը նրանք պարտադրում էր իրնեն կողմից գրաված երկրների հողատերերին: Տիպարանորեն դրանք պատղանում էին պայմանական մասնավոր հողատիրության ծնին:

“Նետուքյան պատղամուր հողերը, անվանական մեջ պետական, իրականում, օգտագործվում էին որպես մասնավոր սեփականություն:

Բայց կար նաև մասնավոր հողատիրություն՝ մուլք, որն առաջացել էր Երկու ծանապարհով: Առաջին, արքարական նվաճումների ժամանակ խալիֆայուրյան կազմում հայտնվեցին զավայի թվով բյուզանդական և պարսկական ֆեոդալ-հողատերներ, որոնց պատկանող հողերը

մասնավոր սեփականություն էին հանդիսանում: Որանց բվում էին այն ֆեռագիտությունը, որոնք կենացի էին մնացել, պահպանել էին իրենց սեփականատիրական իրավունքներն իրենց այդ հողերի նկատմամբ:

Սաստավոր հողային սեփականության ծևավորման երկրորդ ճանապարհը արարմերի կողմից տարրեր ուղիղներով՝ բանությամբ կամ պարտադրված վաճառքով մեռ թերած հողերն էին:

Ի տարրերություն հողատիրությամ մյուս ձևերի, մուլյ հանդիսացող հողերը ժառանգաբար հորից անցնում էին որդում: Մինչդեռ հողատիրության մյուս ձևերի դեպքում, հողատիրերը շին օգտվում այդպիսի իրավունքից: Խակ եթե ճուլցատնոր մահանում էր և չլուսեր ժառանգորդը, ապա նորա հողերմ անցնում էին պետության տնօրինության տակ:

Սյապիտով, Օմայյան խալիֆայության ժամանակ գործություն ունեին հողատիրության երեք ծև՝ համայնքային, պետական և մասնավոր, որոնք և ընկած էին ազգարային հարաբերությունների հիմքում:

Օմայյան խալիֆայությունում գոյություն ուներ նաև ստրկություն: Ստրուկտուրի հիմնական աշխարհը պատերազմներն էին և նրանց ընթացքում գերի ընկածները, որոնց այնուհետև տեղափոխում էին Դամասկոս և արևարական այլ կենտրոններ ու վաճառում շուկամերում: Դա շատ եկամտաբեր գործ էր, ուստի և ոչ որ շեր խորշում նման գործունեությունից:

Մյուս արջություն պարտապաններն էին, որոնց ի վիճակի շին վճարել իրենց պարտքերը և դրա համար նրանց ստրկացվում էին և վաճառվում պարտի ողմաց:

Ստրուկտուրի աշխատանքի կիրաօնան ոլորտոց հիմնականում շինարարական ոլորտն էր՝ ճանապարհների և ամրությունների կառուցում: Տրամց օգտագործում էին նաև գուղատնութեան ոլորտում, ուղագման համակարգում, երթեմն նաև հողերի մշակման համար:

Խալիֆայությունում կարևոր տեղ էին գրավում հարկերը և նրանց գանձումը: Շարկահավաքը խալիֆայության գոյության և հզրության գլխավոր աշխարհներից մեկն էր: Գոյություն ուներ հիմնականում հարկի նրկու տեսակ՝ հողահարկ և գլխահարկ:

Շողահարկը՝ խարաց, կարծի է ասել գլխավոր հարկատեսակն էր: Նա զանձվում էր բոլորից, և մուսալմաններից: Պետական հողերից զանձվող խարացը վճառում էին այն համայնքները, որոնք մշակում էին այդ հողերը: Նրա չափերը, կախված զանձան հանգանակներից, տարբեր էին: Սուլորաքար նաև կազմում էր բեր-

թի կեսից մինչև երկու հինգերորդը՝ խարացի այդ տեսակը կոչվում էր խարաջ մուկասաման: Կար նաև նրա մեկ այլ տեսակը՝ խարաջ միտախա, երբ հարկը վճարվում էր խառը՝ բնամքերորդը և դրամով: Դրանց համամանուրյունը կախված էր հողի բարեբերությունից, հողատարածության չափերից և այլ գործոններից:

Իսկ այն հոդերը, որ պատկանում էին անհատ մուսուլմաններին, նրանցից զանձվում էր տասամորդ, թերցի մեկ տասերորդը՝ ոչչոյ:

Դարվերի զանձման հարցում իշխանությունները վերին աստիճանի հետևողական և դաժան էին: Իսկ խալիֆա Ջիշամի ժամանակ (724–743 թթ.) պատմամիջոցների կիրառումն ընդունեց ամենաայլանդակ և սարսափելի ձևեր: «Պարտապահներին ծեղբակալում և քանու էին նետում: Թամսերը լիքը էին այնպիսի գյուղացիներով, որոնք ուշացրել կամ ի վիճակի չէին վճարել հարկերը: Նրանց նկատմամբ կիրառում էին կոտորանենք, որը վկայված է արաբական և օտար միջնադարյան ադրբյուններում: Դարվեր չեն վճարույն գամում էին անարդանքի պյունին և ժամերով պահում արևի կիզիչ ճառագայթների տակ, մինչև ուշագնացության աստիճան: Սակայ չէին այն դեպքեր, երբ պարտապահի գլուխ եռացողությունը լուսավորության մեջ էր առաջանակագույն առաջարկը:»

Կիրառում էր նաև մեկ այլ, մարդու արժանապատկությունը ուսմահարող մեթոդ: Դողագործը պարուավոր էր վահից կրել արծիճյա հաշվեափտակ, որը վկայություն էր այն բանի, որ նա վճարել է խարացը, եթե մուսուլման է, և խարացն ու գլխահարկը, նրա ոչ մուսուլման քրիստոնյա, քրիստոայլան, կրուսիապաշտ, հրեանական է: Այդ հաշվեափտակի վրա ստվարաբար գրված էր լինում Ծով կրողի անունը և ընդունակավայրը: Որն նա իրավունք չուներ լրել, հակառակ դեպքում նա կիամարվեր շրջութիւն, դրանից բխող ամենածանր հետևանենքներով:

Դարվերի մյուս տեսակը գլխահարկն էր՝ ջիջիա, որը զանձվում էր միայն ոչ մուսուլմաններից՝ քրիստոնյաներից և այլ կրոնների հետևորդներից: Եթե, օրինակ, քրիստոնյան հավատափոխ էր լինում և ընդունում էր խալամ, ապա նա ազատվում էր ջիջիա վճարներց:

Խոյամի տարածման և խալիֆայության կազմավորման սկզբնական շրջանում, խալամը տարածելու նպատակով, խրախուսվում էր դավանափոխությունը և խալամ ընդունելը: Եվ պետք է նշել, որ դա մեծ տարածում ստացավ: Շատ-շատերը, ոչ միայն անհատներ, այլև ամբողջ ժողովուրդներ, գլխովին խալամ ընդունեցին:

Բայց դա ունեցավ նաև իր բացասական հետևանքները: Խստ պակասեցին նույթները պիտական գանձատուն, որը լրջորեն անհամազ- տացրեց խալիֆայության կառավարող վերնախավին: Դա ստեղծեց բարորություններ նվաճողական քաղաքակամություն վարելու, զինվոր- ների ոռմիկը վճարելու, ոտզօնան համակարգն աշխատանքային վիճա- կում պահելու, և ընդհանրապես խալիֆայության տնտեսական գար- գացման և այլ հարցերում:

Այդ պատճառով դավանափոխությունը և խլամ ընդունելն այլևս այնպիսի ջերմեանոյությամբ չեղ քաջալերվում, ինչպես դա կատար- վում էր խլամի ծնավորման արշալույսին:

Ուստի ավելին, թիւ չեն այն դեպքերը, հատկապես նայուաքաղաքից դրւոս, կուսակալություններում, եթե կուսակալները կուպորուն խախ- տելով խալամական կանոնները, շարունակուն էին քիզիա գանձնել նրան- ցից, ովքեր դավանափոխ լինելով ընդունել էին խլամ: Դա հատկապես վերաբերում էր մավաներին՝ նոռուառումաններին, որն առաջ էր բնրում նրանց լիստ բողոքը: Խալիֆաները, վախենալով հետագա քարու- թյուններից, ստիպված էրի լինում «կարգի հրավիրն»՝ կուսակալներին և վերականգնել մավաների իրավունքները:

Օմայյան խալիֆայությունը զարգացման առումով գտնվում էր անցումային շրջանում՝ օախմաղարյան տոհմատիրական-համայնքա- յին հասարակությունից, որի շրջանակներում գոյություն ուներ յուրա- հատուկ ստրկատիրություն, դեսի ավատատիրական հարաբերություն- ների նախնական փուլ, դեօս պահպանվող տոհմատիրական-ստրկա- տիրական հարաբերությունների քավականին շոշափելի մնացուկներով հանդերձ:

## 6. Օմայյան արքունիքը

Օմայյան խալիֆայության կառավարման համակարգում բացա- սիկ դերակատարում ուներ արքայական պալատը և արքունիքն ընդ- հանրապես: Դա միանգամայն համահունչ էր ժամանակի ողուն և կառա- վարման ընագավառում: Արևելքում գոյություն ունեցող ավանդություններն: Սակայն դա լոկ որպանով չի բացատրվում:

Պայատի բացատիկ դերակատարումը բացատրվում է նաև նրա- նով, որ այդ ժամանակ դերսն չկար իշխանական ֆունկցիաների բաժա- նում և կառավարությում՝ իր համապատասխան նախարարություննե-

րով։ Այդպիսի պայմաններում խալիֆան և նրա մերձավորագույն շրջապատող, պալատց, մօռում էին միակ քաղցրագույն կառավարող մարմինը, որը նրանց ոչ ոքի հետ չէին կարող ն, իորոք, չէին կիսում։

Խալիֆայի ծեղզում էր կենտրոնացված ամրող գրոժադիր, օրենսդիր և դատական իշխանությունը։ Եվ եթե դրան ավելացնենք, որ նա խալիֆայության կրոնական առաջնորդն էր՝ նմիր ալ-մումինին, այսինքն բոլոր հակառացյալների էմիրը, վեհապետը, ապա պարզ կրաօնան խալիֆայի իշխանության վիրխայիր ժապաւները։

Խալիֆան, հարկավ, միայնակ է վիճակի չէր կատարել նույնի կառավարման չափազանց քարտ խնդիրները, անավանդ, երբ Օմայյաների նվաճողական քաղաքականության հետևանքով խալիֆայությունը վերածվեց վերխարի կայսրության։ Նա օգնականների կարիք ուներ։ Եվ, իորոք, կային օգնականներ։ Սակայն դրանք պաշտոնական չէին հաստատված և չընեին համապատասխան կարգավիճակ և անվանակոչումներ։ Դա տեղի ունեցավ հետագայում, արդեն Աբրասյան խալիֆայության ժամանակ, երբ ստեղծվեցին վագիրների և խորիրդատունների պաշտոնները։

Օմայյանների ժամանակ խալիֆաները նախքան կարևոր որոշումներ ընդունելու խորիրդակցում էին իիմանկանում իրենց ընտանիքի ավագ անդամների, առանձին դիճաբերում նաև ամենամոտ և մտնելի ցեղակից ազգականների հետ։ Սակայն վերջին խոսքը պատկանում էր խալիֆային։

Խալիֆան և արքունիքն էին խալիֆայության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուժղությունների որոշումները և կենսագործումները։

Այսպիսի կառուցվածքի պայմաններում, երբ գոյություն չուներ առանձին, հասուն կառավարություն, չափազանց մեծ էր փոխարքաների ռերդ, որոնց իրենց տրպած փոխարքայության սահմաններում եղենքն որոշում էին որպես փոքրիկ քագավորներ։ Առաջի խալիֆաները և արքունիքը մշտական իրենց ուշադրության կենտրոնում էին պահում փոխարքաններին և նրանց գործունությունը։

Արքունիքը, բնականարար, խիստ թճախնելի էր փոխարքայի թեկնածուի ընտրության և նշանակման հարցում։ Փոխարքայի պաշտոնում առվրարար նշանակում էին Օմայյան դինաստիայից կամ նրան հակառարին և նվիրված գնդակիցներից։ Պավատարմությունը խալիֆային և դինաստիային, փոխարքա դառնալու առաջին պայմանն էր։

Բայց նույնիսկ այդ դեպքում քաջակայտ և գաղտնի հալորդություն փոխարքայի գործունեության վրա, պալատի կարևոր խնդիրներից մեկն էր: Պատահականություն չէր, որ Օմայյանները շատ լայն լիազորություններով օճունեցին տեղերում փոստային ծառայությունների դեկավայրներին: Նրանց պարտականությունների մեջ էր մտնում հետևել փոխարքաների գործունեությանը և այդ մասին կանոնավոր կերպով տեղեկություններ ուղարկել անձանը խալիֆային կամ պալատին:

Պալատում առաջնային նշանակություն տալով ղիմաստիական շահերին և եղիկի ներում կայունությունը պահպանելու և արժապնդելու հարցին, կարևոր տեղ էր հատկացնում ամուսնական–խնամիական կապերին:

Դրա փայլուն օրինակն են հանդիսանում այն փոխահարաբերությունները, որ Օմայյանները հաստատեցին քամու կալք ցեղի հետ: Օմայյաններին, որոնք ծագումնարանորեն պատկանում էին կուռայշ տոհմին, ավելի մոտ էր քամու կայսի ցեղախումբը: Այդ երկու ցեղախմբերի միջև մշտապես գոյություն ունեց քշմամանք, ղիմակայություն, քախուններ և այլն: Չնայած այդ հանգամանքին, Օմայյան ղիմաստիայի հիմնադիր Մուավիան ամուսնացավ քամու կալք ցեղախմբին պատկանող կնոջ հետ, որն ազդեցիկ ընտանիքից էր: Մուավիայի այդ քայլը միանգամայն մտածված քաղաքական քայլ էր: Դրանով Օս շահեց այդ ցեղախմբի աջակցությունը, պահպանելով սերտ հարաբերություններ իրեն հարազատ քամու կայսինների հետ:

Նույն քայլին ղիմեց նաև Մուավիայի որդին՝ Յազիդը, իսկ ապա նաև Արդ ալ–Մայիրը, որը Յազիդի մահվանից հետո ամուսնացավ Յազիդի այն այրու հետ, որը քամու կալքի ցեղից էր: Այս բոլոր ամուսնությունները քաղաքական բնույթ էին կրում և Օմայյանների ղիրքերի ամրապնդան նպաստակ հետապնդում:

Օմայյան արքունիքը, ինչպես աշխարհի բոլոր արքունիքները, ոչ միայն քաղաքական կենտրոն էր, այլև ազդեցության համար տարրեր խմբավորումների պայցարի քատերաբեմ, քանսարկությունների, զեխությունների կամքի խալիֆաների քահանությունների կենտրոն: Սակայն կոմիկեստ յուրաքանչյուր խալիֆայի անձից, օրա ուժեղ կամ բույլ քաղաքությունից և հակումներից էր կախված արքունիքի ղերակատարումը և նրա մասին համապատասխան կերպարի ծնամիրումը:

Լայն տարածում ունի այն տեսակները, թե, իր, խալիֆանները, որոնք համարվում էին խոլամի օրենքների ամշեղ պաշտպան–պահա-

պանծեր և կիրառողմեր, վարել են ասկետիկ, ճճնավորին վայել գուսականց և կենցադում եղել սակավակնություն: Օմայյան խալիֆաների շարքում ընդունված է հատկապնդ այդախոյն համարել Օմար II խալիֆային (717–720 թթ.), որին ամփանում են բարեպաշտ: Սակայն նրա կյանքը բաժանվում է երկու փուլի, որոնք միմյանցից տարրերվում են արմատականորեն:

Առաջին փուլը ընդգրկում է նրա կյանքի մինչև խալիֆա դառնալու ժամանակաշրջանը: Այդ փուլում նրա պարիվածքը վերաբերում է, որ նա շատ հեռու է եղել բարեպաշտ լինելուց, իսկ նրա ապրելածնը ոչ մի կերպ հնարավոր չէ համարել ասկետիկ: Նա վարել է շվայր կյանք, մեծ գումարներ ծախսել զանազան հաճույքների, հագուստի, օճանելիքի, նորովզների և այլ զվարճաշրմների վրա: Նրա կյանքում շատ մեծ տեղ են գրավել բազմաթիվ կամացը: Դայտոնի է, որ նա իր ամենասիրելի տարփութիւն ստրկութեու ունեցել է ինը երեխա, իսկ ընդհանրապես նրա բողած երեխաների թիվը հասել է տասնվեցի:

Նա աչքի է ընկեր նաև արտակարգ դաժանությամբ, հատկապն եղը նա Մադինայի փոխարքան էր Վայիդի և խալիֆայի ժամանակ: Նրա հրամանով, խալիֆա Վայիդի և հասցեին քննադատաբար արտադայտված Մեքքայի մասին խալիֆա իրմ ազ-Շուքերի որոշում ծանր պատճի ներարկեցին: Նրան մտրաւի 100 հարված հասցրեցին և նրա արճաշադակ մարմնի վրա ցուրտ մօնամբ սառը ջուր լցնելով, մերկ փորդոց նետեցին, որտեղ և նա իր շունչը փեց:

Սակայն, ըստ աղյուրեների, Օմար խալիֆա դառնալով, թուրովին կերպարանափոխվում է Իրոք, նա դառնում է գուսակ և հեռու աշխարհիկ կյանքի հաճույքներից, աստվածավախ և բարեպաշտ: Նա և շատ պայտականներ հագնում էին հասարակ կողորդից աև զօր զայտնեն: Եվ երբ մի անգամ նա մի քանի պալատականների հետ միասին ընդունում է մի պատվավոր իրուրի, ապա վերջինս չի կարողանում որոշել, թե նրանցից ովք է խալիֆան, քանի որ նա այնպես պարզ ու հասարակ էր հագնված, ինչպես մյուսները, և նա նրանցից ոչնչով չէր տարրելովում:

Օմար խալիֆայի ժամանակ պալատուից ուրիս նոյնեցին թուրդ տեսակի պարիսը, երգերը, ծիարշավները և ամեն տեսակի այլ հաճույքները:

Խալիֆայական պալատու նման լցնուածեց, անշուշտ, իր ազդեցությունն էր գործում ամբողջ խալիֆայության վրա: Մասնավորապես, տեղերում շատերը նույնական փորձում էին ամեն բանութ նմանվել խալիֆայի ապրելածնին:

Նման խալիֆաների թիվն այնքան է շատ շեր: Ավելի շատ են նորի Օմայյան դինաստիայից այնպիսի խալիֆաներ, որոնք անձնատուր են նորի կանոնի հաճուրացներին և վարել են շվայտ աշխարհիկ կյանք:

Օմայյան խալիֆայությունում այդ բնագավառում առաջնության դրամին պատկանում է երկրորդ խալիֆա Յազիդ I (680–683 թթ.): Նա գինեմող էր, որի պատճենով նրա ժամանակակիցներն են արդեն նրան ամենամեծ «Գինեմող Յազիդ»: Նրա սիրոծ գրադարանը, հարթեցողության հետ միասին, որտորոշությունն էր: Նա շեր հրցմում պալատում կազմակերպի խորախնանըներ գինեմորուրով, երգեցողությամբ, պարերով և այլն: Գինեարուրությունը նրա անքածան մասմակիցն ու «գործընկերն» էր նրա վարժեցրած կապակից, որին նա անվանում էր Արու Թայս: Այդ պատճենով նրա ժամանակակից աստվածաբան խօսմագետները նրա ապրելածնը համարել են անմերժի շեղում խօսմի հիմնադրությանը, և դեմ արտահայտվել նրան զահամատանգ հոչակելու նրա հոր, Օմայյան դինաստիայի հիմնադիր Մուավիա թաղաքականությանը:

Գինի օգտագործեցու հարցը շատ կարևոր է խօսմի մեջ: Կորանն արգելում է ոգելից խմիլըներ օգտագործել: Սակայն այդ կարևոր պատճամը մշտակես խախտուվն է, այդ բնում և խալիֆաների կողմից:

Ըստ գինի օգտագործեցու հաճախականության, խալիֆաները քաժանվել են չորս կատեգորիայի՝ ամենօրյա խմողներ, ինչպես խալիֆա Յազիդ I, օրմեծ խմողներ՝ Վալիդի և խալիֆան, ուրբաթօրյա աղորքից հետո խմողներ, որոց կիրառում էր խալիֆա Յիշամը, և ամիսը մեկ ամամ խմողներ, որի դասական նորկայացուցիչն էր Արու աշ-Սալիհ խալիֆան: Այդ օրը նա ստվորաբար այնքան էր խմում, որ հաջորդ օրը հագիկ էր հաջորդվում հետ թերեւ նրան:

Գինեարուրացները և դրա հետ կապված այլ «զվաճալիքները» խօսկամ սեօի նախանշեցությամբ, եթենքն պալատում ընդունում էին ամենայալնոյնակ մետք, որի կազմակերպիչներն ու ոգեշնչողները շատ հաճախ իրենք խալիֆաներն էին լինում: Այդ բնագավառում հատկապես փայլել է խալիֆա Վալիդ II (743–744 թթ.), որը առվորություն ունեն լորակ և սուզվում գինով լցված ավագանում, անձնատուր լինել մարմնակամ հաճուրացներին:

Արցունիցում համեմատաբար ազատությամբ էին օգտվում բարձրաստիճան կանայք և զգալի դիր խաղում պալատական կյանքում: Նրանցից ոճանք օգտվել են որոշակի ազդեցությամբ խալիֆաների վրա, անգամ հակառակութել իրենց խալիֆա ամուսնում:

Պատմությունը սերունդներին է բողել նման բազմաթիվ դեսպօք, որոնցից արժե հիշատակել ստորև ցերպող օրինակը:

Խալիֆա Արջ ալ-Մալիքի կինը էր խալիֆա Մուտավիայի ծոռը, գեղեցկութիւն Ստիկան, որը շափազանց մեծ ազդեցություն ուներ նրա վրա, անգամ կարող էր հակառակել նրան, վիճու հետո, զայրանալ, որը դասում էր արքունիցի խոսակցության թեման: Ստիկան մի անգամ զայրանում է Արջ ալ-Մալիքի վրա և փակվում իր առանձնասենյակում: Խալիֆայի բոլոր խմբանքները և արշազանքները գուր նն անցնում, նա դուքը չի բացում և նրան ներս չի բողնում իր առանձնասենյակը: Դուսահատ խալիֆամ դիմում է խորածանկության: Նրա հանձնարարությամբ Սուլիկայի մոտ է գնում պարաւական մի բարձրաստիճան կին, որը հելենալով Ստիկային հայտնում է, որ նրա երկու տղաներից մենց սպանել է մյուսին և նրա ամուսինը, խալիֆա Արջ ալ-Մալիքը մուադիր է նրան մահապատճի ներարկել եղայրապահության համար: Միայն դրանից հետո է Ստիկան դուքը բացում իր խալիֆա ամուսնու առջև:

Օմայյան խալիֆաների ժամանակ ոչ բոլոր ազնվական կանայք էին համաձայնվում քողով ծածկել իրենց դեմքը և մարմինը: Երբ Սուհամմադ մարգարեին հաջորդած առաջին ուղղակիա խալիֆա Արջ թաքրի բողոսնը, որը փայլաստակում էր արտապարզ գեղեցկությամբ, նրա ամուսինն առաջարկում է ծածկել իր դեմքը, ապա վերջինս հրաժարվում է նրա կամքը կատարելուց, պատասխանելով նրան հետևյալ կերպ. «Բանի որ Ալլահը, բոդ օրինյալ լինի նա, ինձ դրոշմել է գեղեցկություն, իմ գանկությունն է, որ հասարակությունը տեսնի այս գեղեցկությունը և դրանով ճանաչի»:

Խալիֆան և ավագանին ունեին իրենց հարեմները: Սակայն սկզբնական շրջանում նրանք անկազմակերպ էին և կանոնակարգված չէին: Սասանակորակներ բացակայում էր ներքինի ինստիտուտը: Միայն հետագայում, Կայի II ժամանակ, կանոնակարգվում է հարեմը, բյուզանդականի ընդունինակրամարք: Եվ Օմայյան արքունիքում հայտնվում են հարեմների առաջին ներքինները, որոնք հիմնականում հույններ եղան:

## IV. ՄՏԱՎՈՐ-ՄԾՎԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԹԱՆՔԸ

### 1. Արաքերեն լեզվի դերը

Օմայյան խայիֆայության շրջանում սկսեց ծնավորվել և գարզանալ նաև մտավոր-մշակութային կամքը: Խիարկե, ոյա դեռևս զարգացման այնաժիշտ բարձր մակարդակի վրա չեղ գտնվում և այնպես տպավորիչ չեղ: Խնչպես հետագա դարերում, այդուհանդեմ, այն ինչ տեղի ունեցավ այդ ժամանակաշրթանում, բռնվ է արհամարդելի չեն և, որ շատ կարեղ է, նա համբաւացավ այն իհմքը, որի վրա հետոազ դարերում մօծ ժաղկում ապրեց արարական գիտությունը, մշակույթը և արվեստները, որպես հաճաշխարհային քաղաքակրթության յուրօրինակ նրբույթ:

Արարական մշակույթի ծնավորման և զարգացման հիմքում ընկած էր նաև սառաջ արարական լեզուն: Ի տարրերություն միջնադարում նույնպես միջազգային լեզու համարվող լատինոներնի, որն ընտրյալների և կրթվածների, այսինքն սոցիալական համեմատարար նոր շրջանակի լեզու էր, և այդ առումով սկզբից ներ պարունակում էր մերյալ լեզու դատնակու նախարիյաններ, արաքերենը կենդանի նորակցական լեզու էր, որով խոսում էին բոլորը, ուսմիկը թե ազնվականը, ուսյալը թե անօրգանը:

Աստիճանաբար նաև հարստացավ նաև նվաճված ժողովուրութերի լեզուների հաշվին, նրանցից վերցնելով կյանքին, պետական գործունեությանը, արվեստներին, գիտությանը և այլ բնագավառներին վերաբերող քաղմաքահվ փոխառություններ: Դրա շնորհիվ նա ավելի հարստացավ և ճիխացաւ:

Միահամանակ որոշակի նվաճումներ արծանագրվեցին արարական թերականության կատարելագործման և գրական լեզվի ծնավորման բնագավառում: Ու թեև պահպանվեցին մեծաբանակ արարական բարերանները, իսկ նրանք պահպանվել են մինչև օրս, այդուհանդեմ, արարական գուական լեզվի ծնավորումը հուսալի և ամերաժշշաւ հիմք համբաւացավ արարական միասնական մշակութային և գիտական դաշտի առաջացման համար:

Եվ եթե ծնավորվեց արարական խայիֆայությունը և Օմայյաների շրջանում արաքերեն լեզուն հայտարարվեց պետական լեզու, որով տարվելու էր գործավարությունը, ապա նա արդեն գտնվելու էր գարզացման թափականին բարձր մակարդակի վրա և նրանով միանգամայն

հնարավոր էր արտահայտել քարո՞ գիտական հասկացությունները և ածնանորդին զգացմունքները, որը արարական մշակույթի և գիտության զարգացման արջն մեծ հնարավորություններ ստեղծեց:

## 2. Գրականությունը

Օմայյան շրջանում մշակութային կյանքի և արվեստների զարգացման վերաբերյալ ազդեցություն են բռնի երկու կարևոր երևոյթ:

Առաջինն Եախահալամական շրջանի՝ քահիլիյայի, շատ հարուստ և ինքնաշխատ գրականությունն էր, ծագումնաբանական կապը նրա հետ, իսկ երեցորդ՝ Կորանից: Մուսավամանների սուրբ գիրքը արարական մշակույթը, փիլխափայությունը, իրավագիտությունը և արվեստը սեծ է ոչ միայն զարաֆիարական առումով, այլև ինըն է համարվում փիլխափայական և գրական գործ: Առանց այս կապը տօնմելու, շատ դժվար է ճիշտ հասկանալ և գնահատել արարական մշակույթը, գիտությունը և արվեստը, նրա զարգացման ուղիները և առանձնահատկությունները:

Օմայյաների շրջանում մտավոր կյանքի ամենապայծառ դրամությունը համբաւացայի պոխայան, որն ամենասարհան մերելք ապրեց: Ակզ-Բական շրջանում հրաման մնա տեղ եր գրավում Խալամի, որպես կրոնի, Ալլահի և նրա մարդարների՝ Մուհամմադի ժառանակումը: Այդ ընտրիք գրումներից, որոնք զախամիկորական բանաստեղծներ են, ոմանք մկնել են ստեղծագործել դեռևս մարդարների կենսանության օրոց և արժանացել նրա գործունակությանը: Նրանց շարունակ ացիք են ընկել Կասրա իրն Ծուրեցը (մահ. 662 թ.) և Քասան իրն Սարիսը (մահ. 674 թ.): Նրանց փառարանները Մուհամմադին, նշում են, որ Ալլահի մարդարնեն հայտնվեց այն ժամանակ, երբ ուղղոր հուսահատված են և երկրի վրա թագավորում են կուսրեց: Նրա հայտնությունը նրանք համեմատում են փայլատակող սրի հետ, որը լուսավորեց Եղանակացության ուղին:

Մի շարո պրետներ իրնենց արվեստը ծառայեցին են Օմայյան ողնաստիան և նրա ականավոր խալիֆաներին փառարաններում: Այդ ընագավառում առանձնահատուկ տեղ են գրավում ալ-Ախուր (640-710 թ.), ալ-Ֆարարակ (640-732 թ.) և Զարիր (մահ. 729 թ.) պրետները, որոնք հայտնի են «Օմայյան եռյակ» հորդորությունով: Նրանց պրետներն իր ընույթով ներրողական են: Նրանց գրվեցում էին ոչ միայն խալիֆաներին, այլև նրա շրջապատը, պալատի և արքունիքի երևալի ուժքերին: Նրանց խալիֆաներին ներկայացնում էին ուղախ Ալլահի ընտրյալներ:

Սման ներողումը, հասկամացի է, ախտոժալուր էր խալիֆաների ականջներին: Ուստի նրանք, ինելով պալատական պոետներ, վայելել են խալիֆաների հովանավորությունը, բարոյական և նյութական ռադեհանուքունը և արժանացել բարձր գովասանքների և պարզների: Ալ-Ախսալին, որը եղել է նրան խալիֆաների՝ Մուսավիայի, Յազիդի և Արդ ալ-Սալիհի պալատական պոետը, վերջինիս կողմից արժանացել է «Օմայյաների պոետ» կոչմանը, որն իր ժամանակի համար թերևն ամենաբարձր տիտղոսն էր:

Օմայյան շրջանում պոետական արվեստի մեջ իր արժանի տեղն ուներ նաև քնարական պոեզիան, պլատոնիկ և մարմնական սիրո գովերգումը, որը գալիս էր դեռևս քահիլյայի դարաշրջանից: Դրա կարկառուն ներկայացուցիչն էր Օմար իբր Արի Շարիհան (մահ. 719 թ.), որը համարվել է «Էրոտիկ պոեզիայի իշխան» և «Մրարիայի Օվիդիոս»:

Ժամբային առումով շատ տարածված էր նաև հերոսապատումը, արար գիմփորի բարության, խիզախության և հերոսության, արարական նվաճումների փառացանումը և այլն:

Օմայյաների ժամանակ լայնորեն կիրառվում էր պոետների մրցությունը, որը խալիֆաները կազմակերպում էին մեծ համույցուն: Պոետների միջև նման մրցություներ էին տնօյի ունենում նաև մեյրաններում հրապարակմերում, սուկնում (շուկաներում) և հասարակական այլ վայրերում, ինչ քազմության ներկայությամբ:

Այդ մրցությունների ժամանակ համախ տվյալ բանաստեղծությունը կարող էր ոչ ոք ինցը հեղինակը, այլ մշտապես նրան ուղեկցող ասմունքող, որը կարողանում էր դերասանական գրավիչ արվեստով ներկայացնել տվյալ բանաստեղծությունը: Դրա շնորհիկ ասմունքի արվեստը հասել էր բարձր մակարդակի, իսկ ասմունքողը վայելում էր մեծ հարգանք: Գեղարվեստական ասմունքը արարական նշակույթի անբաժան տարրն էր, որը մինչև այսօր էլ մեծ համարում ունի արարական երկրներում:

Արարական պոեզիան Օմայյաների շրջանում տիպարանորեն կարելի է բաժանել ներքոյական, սիրային-էրոտիկ, քնարական, հայենամայրական-հերոսական, բարոյախոսական և երգիծական պոեզիայի:

Համեմատաբար բույլ էր զարգացած արձակը, համենայն դեպք նրանից Օմայյան շրջանից շատ թիշ բան է հասել: Մակար հաւաստի է, որ արձակի ժամրում հատկապես տարածված են եղել պատմական ընույթի պատմվածքները և հերոսական ասքերը, նվիրված արարական երկրների:

անցյալի պատմության հերոսական էջերին, իրական և առասպելական հերոսների քաջազրություններին, որը սիրելի ժամը էր ոչ միայն հասարակ արարոնների, այլև խալիֆաների համար:

Դրա նվիրուակ երկրապահուն էր խալիֆա Մուսավիհա I, որտ իր պալատում հավաքեց էր պատմության բանիմացների և հիշանալի ասքասացների: Նա ստվորություն ուներ երեկոներոց մինչևն ուշ գիշեր, քաղաքած իր զահավորակին, իր ծնողի տակ ունենալով իր օախընտրելի խմիչը՝ վարդի օշարակը, չսե ճան պատմվածքներ, հաստկապիս այնպատիներոց, որոնք վերցված էին Շարավային Արարիայի իրականություններ: Մուսավիհան այնքան էր իրապիրված այդ պատմվածքներով, որոնք իրենց թմուրով հերոսապատումներ էին, որ Եմեմից պայտ հրավիրեց այդ ժամանակ մեծ հոգակ վայելող քանասաց Արդ իրն Սարայակին, որն անցյալի հերոսական էջերից վերցուած իր հիմարանչ պատվածքներով զարդարում էր խալիֆայի անցուն գիշերները:

### 3. ՀԵՏՈԹՐՈՒԹՅՈՒՆԸ

Օմայյաների ժամանակ իր զագարմակեսուին հասավ հոնտորական արվեստը, որը հետագայում այլանու է մնաց չգեղագանցված: Հետոթրական արվեստը խիստ անհրաժեշտ էր մզկիթներին և ինմաններին, մանավանդ Խարիթ ինամին, որը ստվորաբար ուրբաթօրյա աղոթք անցկացնույն էր:

Քարծյալարզ հոնտորությունը և ճարտասանությունը մի խալվական արվեստ էր, որը գերում և հրապեցում էր հավատացյալներին, նրանց մեջ բորբոքում հավատցի կրուսն առ Ալլահ, ինչպես նաև նպաստում խլամի տարածմանը: Դրանով խակ հոնտորությունը որպես արվեստ կատարում էր նաև քաղաքական առաջելություն: Դրա փայլուն ներկայացուցիչն էր Ալին, որի իմաստուն խոսքներ, ընավոր դարձվածքներ, համեմատությունները և զգայացունց խոսքները ուժեղ ներգործություն էին ունենում շրջապատի մրա:

Հետոթրության այդ ֆունդամենտալ ավելի ցայտունորեն էր դրսարկում գինվորական գործողություններից և վճռական ճակատամարտներից առաջ հրավիրել ճարտասան հօեսորմների, ինչպիսին էր Միյադ իրն Արիհեց, որոնց համերս զայով արարական գինվորների առջն, ովսորում էին նրանց, արթնացնում արիության ոգին, փառարանում հերոսներին և ա-

նարգանքի սյունին գամում երկշոտներին և տմարդիներին, հերոսւթյամբ կոչում նրանց:

Դժետողութեր կային, որոնք հանդս էին գայիս քարոյական-Երիկական հարցերի շուրջը, հանդիսանալով մաքրության, անաղարտության, հավատարմության, իսլամի պատգամներին անմնացորդ նվիրված լինելու քատագովներ: Բարերախտաբար պատմությունը մեզ է բռուց նամ մի ականավոր հետորդ անուն՝ Ղասան ալ-Բասրի (մահ. 728 թ.), որն անգամ իրավունք էր նվաճնել իր հետորական արվեստը ցուցադրելը Օմար խալիֆայի ներկայությամբ:

Նրանց վայր և խորիմաստ նարտասանությունները սերունդներին բողած արարական գրական և գիտական լավագույն գանձերից են:

#### 4. Նարտարապետությունը

Արաբները Օմայյաների ժամանակ ստեղծել են նարտարապետական հիմնայի հուշարձաններ, որոնք արվեստի խակական գլուխացրուցներ են: Նրանց գգալի մասը կանգուն է մինչև օրս:

Նրանք, թնականաբար, սկզբնական շրջանում, ինչպես այլ ժողովուրդների մոտ, եղել են պաշտամունքային կառուցմեր, որոնց ծառայել են տիրապետող լուրները: Տվյալ դեպքում խոսքն իսլամի և զգլիքների մասին է: Նշենք նրանցից մի քանիսը:

Խալիֆա Արդ ալ-Մալիքը 691 թ. նրուսադեմում կառուցվում է Կուրքաթ աս-Սախրա մզկիթը, որը համարվում է սրբավայր և մուսուլմանական աշխարհի չորս ամենակարևոր մզկիթներից մեկը: Այդ տպավորիչ կառույցը զարդարում են նախշեր հիշեցնող կուֆիական գրչամուկ գրված կորանական ասուլյաները: Արարական այդ գրելածնի հնքին մի խսկական արվեստ է իրենից ներկայացնում:

Այդ նույն խալիֆայի ժամանակ է կառուցվել մուսուլմանական աշխարհի ճարտարապետական մյուս հիմանական ստեղծագործությունը Սասխի ալ-Ակսամ՝ Ղետավոր մզկիթը: Նրա կառուցման վայրը պատահական չեղ ընտրված: Այդ վայրը նշված է Կորանում, որը գլուխում է Երուսաղեմի հարավային մասում: Մոււհամմադ մարգարեն, Ծախրան համբարձվելն առ Ալլահ, իր Բուրակի վրա տեղափոխվել է այդտեղ: Եվ Արդ ալ-Խալիքը որոշում է հենց այդտեղ, Կուրքաթ աս-Սախրայից ոչ հեռու, կառուցել այդ մզկիթը, որը ստուգել է Մասքիդ ալ-Ակսա ամունը:

Երուսաղեմի Կուռքար աս-Սախրան և Մասրիդ ալ-Ալյասան, Մերքայի Մասրիդ ալ-Շարամի, որի կենտրոնում գտնվում է Կաարան, և Սահինայի Մասրիդ ան-Նարիի, որի բակում բարձրած է մարզարեն, ինչ միասին մուտքավաճական աշխարհի չորս ամենահեղինակավոր մզկիթներն են, որոնք համարվում են սրբավայրեր:

Դրանց կողքին ճարտարապետական և պաշտամունքային կարևորության առումով պիտօք է նշել Օմայյան մզկիթը Ղամասկուտում: Դա նախկինում Պոլիխամննես Մկրտչի եկեղեցին էր, որը Վալիդ Ի Խալիֆան 705 թ. վերածեց մզկիթի, որը մինչև օրս գոյություն ունի, և իր ճարտարապետական գեղեցկությամբ և ծավալներով հիանում է այցելուներին:

Մուտքավաճական աշխարհում գրված են նաև մեծարանակ այլ մզկիթներ, որոնք օգնում են որոշակի պատկերացում կազմելու Օմայյան շրջանի արարական ճարտարապետական և կառուցդական արվեստի մասին:

Բացի պաշտամունքային կառույցներից, Օմայյանների ժամանակ իրականացվել են նաև քաղաքացիական կառույցներ՝ պալատներ, ամրոցներ, անգամ ամրող քաղաքներ: Կալիդ 1 վերակառուցել է Մադինան, կառուցել հատուկ և առանձին շինուազրուներ որորունների, կադերի և կուլյերի, հիվանդանոցներ խրոմիկական հիվանդություններով տառապու հիվանդների համար, իսկ օրեա եղբայրու, խալիֆա Սուլեյմանը, որը կառավագել է 715–717 թթ., Երանց ամմիջապես հետո, կառուցել է Ռամալլահ քաղաքը Պարսկականում, որը գոյություն ունի և այսօր, և այնտեղ հաստատել իր նստացք:

Մեծ տեղ է հատկացվել նաև ռազմական ճամբարների շինարարությամբ, որոնց հիմքի վրա հետագայում առաջացել են քաղաքներ, ինչպես Կայրուականը և այլն: Դրանց կառուցման ժամանակ օգտագործվել են ճարտարապետական և քաղաքաշինական շատ ինքնատիպ սկզբունքներ:

## 5. Այլ արվեստներ

Օմայյան խալիֆայության մեջ զարգացման բարձր մակարդակի վրա են գտնվել նրգարվեստը և պատրավեստը: Նա լայնորեն կիրառվել է պալատներում, խալիֆաների և արարական տոհմիկ ավագանու ժա-

մանցի, գինարրությի և բարձրաստիճանան հյուրերի պատվին կազմակերպված պաշտոնական ընդունելությունների ժամանակ:

Արվեստի այդ երկրու տեսակմերը, որոնց արժատները ժողովրդական են, ջշտապես ուղեկցել են հասարակ արարին, կազմելով նրա սույու լյանքի ուրախություններից մեջը: Արարները սիրում են երգել և պարել, իրենց խոսքը և ասքը համեմելով իրադարձությանը պատշաճ եռածշուրթամբ, եղորև և պարով:

Իր ուրույն տեղու ուներ կիրածական արվեստը: Լայն տարածում էր ստացել ծննդացայ կոտրի պատրաստումը՝ համապատասխան նույր և ճաշակավոր ճաշկանախշերով, կաշվեղենից պատրաստված իրերը, կահույքը և այլն, որոնցից շատերն արվեստի հօկանան գործեր էին:

Թարձո՞ Ծակարյակի էր հասել ծննդագրործությունը այդ թվում և զենցի՞ տարածեսակ սրերի, նիգակների, տեգերի, վահանների և սահավարտների արտադրությունը, որոնց զարգացումը խրանում էին խալիֆաների անվերջ բակացրդ պատերազմները: Դատկապես անուշը է նշել աշխարհականական դամասկոսյան պլողապատից, որի ստացման գաղտնիքը հայտնի էր միայն արարներին, պատրաստված զենցերը, որը սիրում էին կուե խալիֆաները, արաբական գործապետները և ցեղային ու սագմական ավագանին: Նրանցից շատերը, մանավանդ նրանց պատշաճնոր, կատարյալ գեղարվեստական գործեր էին:

Կատարյալ արվեստի գործեր էին ուսկուց և արծարից պատրաստված սպասարք. որից օգտվում էին խալիֆաները, պալատականները և արաբական մեծահարուստները: Նրանց սիրում էին ուստեւ արծարյա ամաններնից և խմել ուկյա գավաթներից, որոնք նրին գեղարվեստական գործեր էին:

Արաբական մեծահարուստ տոհմիկ կանաց մեծ բուլություն էին տածում ազնիկ մետաղներից և թամնարժեք քարներից պատրաստված զարդերի նկատմամբ, որանով իսկ խրախուսելով ուկերպության և ականագործության զարգացումը, որը շատ հաճախ արհեստի մակարդակից բարձրանում էր արվեստի մակարդակին:

## 6. Կրթությունը

Օմայյան խալիֆայության շրջանում կրթություն հասկացողությունն օգտագործվում էր ոչ միայն դպրոցական կորության, այլև ավելի լայն առումուն:

Կրրական կենտրոնները էին մզկիրները, որտեղ գործում էին դպրոցներ: Դասարաններում հիմնական առարկան Կողանն էր: Աշակերտներին սովորեցնում էին կարող Կողանի սուրահմերը և հաղիսները, ըստ այդի է որոշվում էր աշակերտների առաջադիմության աստիճանը: Դպրոցում կենտրոնական դեմքը Կորան կարող սովորեցնողն էր, որը կոչվում էր կուրա՛ա: Իսկ դա որոշակի հմտություն, նույնիսկ արվեստ էր պահանջում:

Այդ գործին տալով պետական կարևորություն, խալիֆա Օմարի հրամանով խալիֆայության բոլոր շրջաններ ուղարկվեցին նման ուսուցիչներ, որոնք տեղիբույն, մզկիրներում բացում էին հասուու դասարաններ Երիխաններին Կորան և հաղիսներ կարող սովորեցնելու համար: Նա միաժամանակ հրամայեց, որ ոչ միայն Երիխանները, այլև մծահասակ մարդիկ ուրբար օրենք մզկիրներում պարտադիր հանդիպեն այդ ուսուցիչներին և ներկա գտնվեն Կորանի ընթերցումներին:

Ուսուցիչները, իհարկե, բացի ընթերցելուց, տալիս էին նաև համապատասխան բացարություններ, քանի որ Կորանը շատ բարդ գրվածք է և նրա հմաստն անհասանիլի է առանց համապատասխան բացարությունների: Նմենաբանությունների:

Օմայյան խալիֆայությունում բացվել են առաջին տարրական դպրոցները, թեև դրանց թիվը շատ չի եղել: Պայտնի է, որ նման դպրոց՝ կուտաք, Կուֆայում անվճար բացն է ոմօ Շահինակ իր Մուօզահիմը (մահ. 746 թ.): Եղել են նաև զբարովի դպրոցներ, ինչպես Բասրայում:

Կրթությունը Օմայյան խալիֆայությունում, ինչպես նշվեց, միայն դպրոցական՝ ուսումնական կրթությունը չի համարվել: Լավագույն դպրոց է հանդիսացել անապատը: Օմայյան խալիֆաներն իրենց որդիներին և ընդհանրապես իշխաններին փոքր տարիքում ուղարկում էին բարդացած անապատ, մասնավորապես Միջիակամ անապատ, մաքուր արարական լեզվին տիրապետելու և պոեզիայի արվեստում վարժվելու համար, խառնվելով տեղական թուգինների հետ: Դրա օրինակն առաջինց ցուցը է տվել դինաստիայի հիմնադիր Մուավիա ի խալիֆան, իր որդուն, ապագա խալիֆա Յազիդ Ի ուղարկելով անապատ:

Ուղարկի գարմանաց կարծիք է, թե արարական խալիֆաներն ինչքան մեծ նշանակություն են տվել լեզվի մարդությանը և պոեզիային: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Օմար II խալիֆան խստորեն պատժում է իր որդուն արարերեն ընդականության կանոնները խախ-

տեղու համար: Եվ դրանից հետո նման «մեղքերի» համար պատճելը դասնում է սովորական երևոյթ խալիֆայությունում:

Ընդունված տեսակետում համաձայն, կրթված էր համարվում նա, ու կարող էր կարդալ և գրել իր լեզվով, օգտագործել նիզակ ու ննտ, և լող տալ: Աղյափիսի մարդուն կոչում էին քամի՝ կատարյալ: Դրա համար պահանջվում էր նաև լինել իշխան, ոլոմացկուն, առատածեռն, հյուրասիր, կնամնծար, հարգել տվյալ խոսքը և այլն:

Դաստիարակելության հարցը կանոնավորելու համար, Արդ ալ-Մայմիք մտցրեց դաստիարակի ինստիտուտը, որը մինչ այդ բացակայում էր: Այդ պահից դաստիարակը դասնում է որոշակի դեմք արդայական պալատում: Արդ ալ-Մայմիքն իր որդիներին կրթության և դաստիարակության համար նրանց դաստիարակին հրահանգում է: «Մովորեցրու նրանց լող տալ և վարժեցրու, որ նրանք քիչ քննն»: Խալիֆամերի կողմից դաստիարակներին տրվող հրահանգներից կարևոր էր նաև հետևյալը: «Թող առաջին դասը, որը պետք է տպավորություն թողնի նրանց վրա, լինի ասելությունը հանուվների նկատմար, որի նախաձեռնողը շերպանն է, և որի հետևանքը Ալլահի զայրույթն է»:

Օմայյամերի կրթական հայեցակարգը խարսխված էր արարի ծուավոր և Ֆիղիկական համաչափ զարգացման գաղափարի վրա:

## 7. Գիտությունը

Գիտությունը Օմայյամերի ժամանակ գտնվում էր խանճարուրում, նա դեռևս չէր ճևավորվել որպես իմքնուրույն ուղղություն: Լուրջ գիտության բնագավառում միայն առաջին քայլերն էին կատարվում և միայն առաջին ծիւերն էին ճշմարիկում:

Տիրապետող էր հանդիսանում Մուհամմադ մարգարեի այն տեսակնութ, որ գիտությունն «այն է, ինչ վերաբերում է կրոնին և այն, ինչ վերաբերում է մարմնին»: Այս վերջինի, մարմնի տակ, նկատի ունենին թշվությունը:

Եվ, իրոց, արաթական իրականության մեջ երկար ժամանակ ամրաժամուրեն տիրապետում էր աստվածաբանությունը, կրոնի վերաբերյալ գիտությունը: Լավագույն ուղենինը զրադշաքած էին Կորամը մեկնաբանելով, սումնայի և հայդամերի եռթյունը բացատրելով, խորածուխ լինելով մարգարեի ասույթների ներքին ծալքերն ըմբռնելու և մեկնելու մեջ: Նրանց այդ աշխատանքը, հարկավ, արժանի է բարձր զնահատա-

կամի: Բավական է նշնչ Կորանի մեկությանը նվիրված այն տասնյակ հաստորմները, որոնք մեծապես օգնում են միշտ հասկանալու և բացառիկության համար:

Հնորիդիկ մուսուլման ուկենների աստվածաբանական տրակտատումների, իսլամագիտությունը բարձրացավ համաշխարհային աստվածաբանության մակարդակին, դառնալով նրա օրգանական մասը:

Ինչ վերաբերում է թշշկությանը, ապա նա գտնվում էր շատ ցածր մակարդակի վրա: Ակադեմական շրջանում բացարձակապես տիրապետում էր պարզունակ տմային թշշկությունը, հիմնված հմայիլիքների, եռազների մեկնության և ոչ հարուստ տնային բուժման պրիմիտիվ փորձի վրա: Արարական հոչակավոր գիտնական երմ Խալդումը նշում է, որ Մուհամմադն Ալլահի կողմից ուղարկված էր ավելի շատ կրոնական օրենքներ և սկզբունքներ առվարեցնելու, չան թե թշշկություն:

Արարական թշշկագիտության բնագավառում արմատական փոփոխություններ տնօղ ունեցան, եթե Օմայյաններ իրազործեցին ճակարտական քաղաքականությունը և խալիֆայության կազմում հայտնվեցին գարզացնան բարձր մակարդակի վրա գտնվող մի շարք ժողովուրդներ, հոյները, պարակենները, հնորիկները, հայերը և այլն: Դեմ առ դեմ շվեյցար նրանց հետ, արաբները նրանցից շատ քան սովորեցին և վերցրեցին գիտության տարրեր թմագավառներում, այդ բոլով և թշշկագիտության:

Արաբները մի կողմից ընդօրինակեցին նրանց փորձը և բուժման մեթոդները, իսկ մյուս կողմից սկսեցին հունարևեցից, ինչպես նաև ասուներեցից և պարսկերեցից արաբներն բարգմաններ թշշկագիտության վերաբերյալ նրանց գիտական աշխատությունները: Դա նոր հեռանկարներ բացեց արարական թշշկագիտության առջև, խթանեց նրա զարգացումը, որի պատուններն արդեն երևացին Արքասյան խալիֆայության շրջանում և հետագա դարերում:

Ըստ այդմ, առաջին ոչ թե հերիմները, այլ խելական թիշկները, եղել են օտարերկրացիները, զյուսպորապես քրիստոնյաները, թեև արաբների մոտ է հայտնվել են այդպիսիները: Դրանց թվին է պատկանում Յարին իր աշ-Խալդահը Թափիֆից, որը գործել է VII դ. և կրու «Արաբների թիշկ» պատվավոր կողումը:

Օճայյան խալիֆաներն եղան առաջին արար կառավարողները, որոնք սկսեցին կյանքում կիսնազործել գիտական թշշկության տվյալները: Արդեն նշվեց, որ Վալիդ և Խալիֆան հատուկ և առանձին հիվան-

դամոցներ կառուցներ խրոմիկական հիվանդությունների բուժման համար: Խոկ Օմար II խալիֆան Ալեքսանդրիայում գտնվող քշչկական դպրոցները տեղափոխեց Մեսիհոց և Դարրում, խալիֆայության կենտրոնական նասց, հաշվի ամենլով բնակչության ավելի մեծ կուտակումներն այս տարածքներում:

Արաբները որոշակի հետօրդրություն են ցուցաբնիք նաև այլ գիտությունների նկատմամբ, մասնավորապես փիլիսոփայության, աստղագուշակության, որն այդ ժամանակ մեծ համարում ուներ, մարդմատիկայի, ուսուարանության՝ կապված դեղարույսների հետ, և այլն:

Արաբական գիտության մեջ բացառիկ կարևորություն է տրվել ալ-Քիմիային, որը երկար ժամանակ եղել է արար հետազոտողների ուշադրության կենտրոնում: Գիտության այդ ճյուղի անվան հիմքում քիմիա բառն է, որին պարզապես ամենացնելի է արաբական լեզվին բնորոշ «ազ» հոլոր և ստացվել է ալքիմիա եղբայր: Պուրան ինչ շիրտելով այն իմաստային առումով:

Ալքիմիան եղակատ ունենալով իր համար ընդունելի այն թեզը, որ քիմիական ռեակցիաների միջոցով մի մետաղից կարելի է ստանալ մի այլ մետաղ, մի մետաղով կարելի է վերածել մեկ այլ մետաղի, փորձում են ոչ ազնիվ մետաղները վերածել ազնիվ մետաղների և այդ ճանապարհով ստանալ ուսիի և արծաք: Դա է կազմում ալքիմիայի եռքջումը:

Մի մետաղը մի այլ մետաղից վերածելու տեսությունը չի պատկանում արաբներին: Այդ տեսակետից ջատագովներն են եղել դեօսն անտիկ աշխարհի, մասնավորապես հիմն Դունաստանի գիտնականները: Բայց թվում էր, թե այդ տեսակետը մոռացության էր մատնվել: Արաբների ծառայությունը կայանում է նրանում, որ նուանք, տուրք ժաւուկ հարստանալու և ուսիի ու արծաք ծեռ բերելու անհաջորդ տեմզին, որը շունչ հալորդեցին նրան և փորձեցին վերակենդանացնել մահվան դաստապարուկած այդ վարկածը:

Արաբները, անվիճելի է, ունեն որոշակի ներդրում ալքիմիայի զարգացման բնագավառում: Այստեղ առաջինը պետք է հիշատակել Օմայյան երկրորդ խալիֆայի որորը, իշխան Խալիֆի անունը (ծահ. 704 կամ 708 թ): Նա իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկն էր, որը սիրում էր կարդալ և բարգմանել օտարություն հեղինակների գիտական աշխատությունները: Նա բնագրից բարգմանն է հունարեն և դպտերն զրկած գրքներ, որոնց վերաբերեն են ալքիմիային, ինչպես նաև քշչությանը և աստղագուշակությանը: Դրապարակի վրա նման գրքների հայ-

տնվելը, բնականարար, խիանել է հետաքրքրությունը գիտության նկատմամբ, ի մասնավորին, աշքիմիայի:

Սյս իշխանի անվան հնու է կապված մեծ հօջակ ծեռած Զարը իրն Կայյանի գործություններում, որը ալքիմիային և աստղագուշակությանը նվիրված տրամադրությունը նաև չպահպանված հետինակ է: Նա իր գիտական գործունեությունը սկսելով Օմայյաների շրջանում, առանձնակի հաջորդության հասավ արդեն Երանց հացորդների՝ Մըքայանների օրոք:

Արարական ալքիմիկոսները, ինչպես և պիտու էր սպասել, հաջորդության շիտաւան և չեն է կարող հասնել իրենց գիտական որոնումների մեջ: Սակայն նրանց պատմական ծառայությունը կայանում է Երանում, որ Երանք աննայսադիա կերպով զարգացրին փորձագիտությունը, հաստատեցին գիտական փորձի անհրաժեշտ բաղադրատարու, որպես գիտական պրոցեսի անհրաժեշտ բաղադրատարու, և մեծապես բարձրացին գիտական փորձի հետինակությունը, որից գիտնականների հետագա սերումներն այլևս չեն կարող նաև անհանջնել:

Արարական աշխարհում գիտությունը մեծ համարում ուներ և վայելում էր բարձր հետինակություն և հարգանք: Միայն այդպիսի միջավայրում կարող էր գիտնականին և գիտությունը մեծարող այնպիսի խորհմաստ ծոն ծնվել, որպիսին «Գիտնականի քանաքը պիտու և նահատակի արյանը հասասար գնահապալին» սրբանշելի դարձվածքն է: Խոկ եք նկատի ունենանք, որ արաբների մոտ նահատակը կամ շահիթը տուր է համարվում, արժանի պաշտամունքի, ապա լինել հասկանալի կրաօնա այդ դարձվածքի ամբողջ խորությունը: Ու է հաստատում նաև արաբների մոտ հանգումունքը ուժ ծնող թերած «Մարդու մեծագույն զարդը հմաստությունն է» կարևոր բանաձևը:

Անփոփոլով, կարելի է ասել, որ Օմայյաների շրջանում օազմական բատերաբնության փայլուն հաղործանակների կողքին նշանակալի են նոյն նաև արաբների նվաճումները մշակույթի և մտավոր կյանքի բարերարելում: Ու թե նաև արդարության պահության պիտու և ընդունել, որ դրանք անհամեմատելի նվաճումներ են և ծանրության նմարդ թերվում է ուզմականի կողմց, այդուհամենք, մշակույթի ասպարեզում ծնող թերածն էլ փոքր չեր:

Օմայյանների ժամանակ ցանած մշակույթի և գիտության սերմերը թերցաբեր նոյան հետագա դարերում:

## Գլուխ վեցերորդ

# **ՕՄԱՅՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ** (750 թ.)

### **I. ԽԱԼԻՖԱԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ**

#### **1. Հակասությունների հանգույցը**

Օմայյան խալիֆայությունն իր հօգորության զագարնակետին հասակ խալիֆա Վալիդ և տիրակալաւորյան օրոք, VIII դարի առաջին քսանամյակում: Դրանից հետո սկսվում է խալիֆայության աստիճանական բուկացումը, սակա և ճգնաժամը:

Մրուարին փայլը և արդունիքի անվերջ խրախնանքներին այլև չեն կարող սրոշել խալիֆայության ներքին ռուկությունը:

Խալիֆայության սկզբան ճգնաժամը համակարգային բնույթ էր կրում: Նա համակել էր պետության բոլոր ոլորտները՝ տնտեսական, ցաղաքական, կառավարման, ռազմական, միջցարդային հարարերությունների և այլն, որի տրամադրանական վախճանը համրիսացավ Օմայյանների անկումը:

VIII դ. 20–30–ական թվականներից սկսվում է խալիֆայության տնտեսական վիճակի վատրարացումը, որն իր համապատասխան անդրադարձն ումեծավ բնակչության տնտեսական վիճակի վրա: Խիստ պակասն էր եկամուտների մուտքը պետական գանձարան, որն արդյունք էր երկու կարևոր հանգամանքների:

Առաջին, արաքննորն ինչ որ հնարավոր էր նվաճել, արդեն նվաճել էին: Իսկ դա նշանակում էր, որ նկամուտների նոր աղբյուրների հայրայի թումը պատերազմների և նվաճված երկրների հաշվին, սպառվել էին:

Երկրորդ, շնայած այդ հանգամանցին, մեկը մյուսին հաջորդող ապաշնորի խայիֆանները ոչ մի կերպ չեն ցանկանում սահմանափակել ծախսերը, նախևինի պիտի շարունակում էին իրենց ցուի կանքը, վիրխայի գումարների մասինով իրենց և պալատականների հանուքների վրա: Օնայյանների ընտանիքի ամեամների, որոնց թիվը ամընդիատ աճում էր, արդունիցի, փոխարքամների, կառավարող պավագանու և զորապետների ազահությունը չափ ու սահման չուներ: Նրանք ոչնչի առջև կանց չեն տնում իրենց պահանջները քավարադելու և անձնական հարստությունը բազմապատճեն համար: Մեծ ժախսեր էր պահանջում նաև բանակը:

Իսկ բանի որ դրա համար այլս չկային այլ աղբյուրներ, ապա միակ աղբյուրը մնում էր ժողովորի շահագործման խորացումն ու ուժուացումը: Օնայյանները զգուան որևէ այլ բան, քան հարկային մամլիչի ուժնեցումը: Նրանք քաղաքական իշխացը դարձնակ այսպիս կոչված «վարչահարկային օրինակի ապարատի» ստեղծումը, որի օգնությամբ փորձում էին լուծել տնտեսական հարցերը, կրկին հարստացնել տնտեսական զանարանը և այլն:

Դարձերի մնացորմը, խառացումը և գանձման ժամանակ բոլոյ տրվող ամեն տնասկի անօրինականություններուն ուղղակի պատուհաս դարձան խայիֆայուրյան բնակչության, և արաքննորի, և՝ նվաճված ժողովուրդների, գլխին: Օնայյանները, թվում էր, թե ամեն ինչ ամուս էին ժողովուրդներին, հասարակ աշխատավորներին իրենցից վանելու համար:

Սակայն հարկերի գանձման ուժնեցումը, պարտապաններին հարկերը զբարեն համար ամենասարսափեցի պատիհմների ծննդրեկեց, հասկանալի է, եթե չեղ տնտեսական դժվարությունները հարցահարելու համար: Տնտեսական խմորներն այդպիս չեն լուծվում: Փոխարենը, այդ քաղաքականությունը հարուցեց բնակչության ամենալայն զանգվածների խոր դժգոհությումը, որն իր հերթին հաճգեցնեց Օնայյանների սոցիալական հենարանի բուլացմանը:

Մոհա, այսպես, տնտեսական ոլորտում ծնավորվեց հակասությունների առաջին և թիրս ամենավտաճակոր հանգույցը:

Դակասությունների մյուս համույցը ծնավորվեց միջնդեպային հարաբերությունների ոլորտում: Դրանում իր դեմ ռմբցակ Օնայյան խա-

իշխանությունը, որ նրանք սկսեցին լիրատել ՎIII դ. 20-ական թվականների վերջերին՝ 30-ական թվականների սկզբներին:

Օմայյանները, ինչպես օչվել է, ծագումնաբանության մոտ էին հյումային բանու կայսի ցեղին Սակայն Մուավիա և Խալիֆայից սկսած, Օմայյանները հենցվում էին հարավային բանու կալի ցեղի վրա: Այս վերջնոր շատուական շփումների բյուզանդացինների հետ, ավելի գարուացած և առաջարիմած էր, քան թե բանու կայսի ցեղը, որի մոտ ավելի ուժեղ էր նահանգներական կացուքածը: Մյուս կողմից, կալինները մեծամասնություն էին կազմում Միրիայում, որը դարձել էր արռօնիատ նահանգ: Օմայյանների համար: Այսուհետ էր գտնվում խալիֆայության մայրացաղաց Դամասկոսը:

Օմայյանները կաթոլինիտին սիրաշահելու համար իրենց կին էին վերցնում նաև այդ ցեղախնճի ավագանու ընտանիքների արժիկներից, դրանով իսկ իրենց ամռանություններին տալիս էին բարյարական գումավորում, ամրապնդելով իրենց բարյարական դիրքերը երկրի ներսում:

VIII դ. 20-ական թվականների վերցերից, սակայն, Օմայյանները վերակողմնորոշվում են դեպի իրենց արմատները և համագործակցության առաջընթացը դարձնում կայսիններին: Իսկ դա առաջարկեց կալինների խորը դժոխությունը, քանի որ նրանք կորցնում էին այն առավելությունները, որ նրանց տալիս էր խալիֆաների նախկին բարյարականությունը:

Կալինները դադարեցրին աջակցել Օմայյաններին և բացահայտ ընդհարումներ սկսվեցին բանու կալի և բանու կայսի հգրուագույն ցեղախմբերի միջև: Իսկ դա դարձավ իրադրությունն առավակայունացնող գործոն և նպաստեց Օմայյանների դիրքերի հետագա բուլացմանը: Նույնիկ բանց հասակ այնտեղ, որ Օմայյաններն իրենց այլևս ապահով չեն զգում Դամասկոսում և հետագան այնտեղից: Խալիֆա Մուհամման իր արքունիքը հաստատեց Ռամալլահում, Պատիստին, խալիֆա Քիշամը Ուստափում, Եփրատի վրա, իսկ Մրվան և Ջարրանում, որը գտնվում է Միջագետքում:

Միջօնեյային համերաշխության խարիստում, ապա նաև բացահայտ առճակատումները տարրեր ցեղերի և ցեղախմբերի միջև, ճակատագրական հնումնանքներ ուժեցան Օմայյանների համար: Դա նույնագույնացրեց Օմայյանների սոցիալական հետարանը և խորացրեց ճգնաժամը Խալիֆայությունում:

Այսպիսի մընուրուց չեր կարու չանորադանալ խալիֆայության գինված ուժերի վրա: Նրանք նոյնագույն մերօրավվեցին ճգնաժամի ուղր-

տը, որմ, իր հերթին ավելի խորացրեց այն: Գանձադանի աղքատացման հետևանքով գինվորները նախկին պես այլևս կանոնավոր և նույն չափերով ոտքիկ չեն ստանում, որը շատ բար էր: Դա առաջացրել էր գինվորների խորից վրոյովմունքը և նրանց պատրաստ էին ամեն տեսակ զրոժողությունների, այդ թվում և իշխանությունների դեմ, իրենց շահերը պաշտպանելու համար:

Տաճական ոլորտում, գինված ուժերի անքավարարվածությամ արդյունքում, ծեսավորվեց հակասությունների միտև կարևոր հանգույցը:

Օճայյաներից վերջնականապես երևու թերեւ Մերքայի և Մարի-նայի արարական վերնախավը, բոլոր նրանք, ովքեր իրենց համարում էին Սարգարեի գինակիցների ժառանգություններ և հացողություններ:

Նրանց և Օճայյանների միջև հարաբերություններոց մշտական լարված են եղել: Արարիայի վերմախավը Օճայյաններին մերեւ չեղ կարողանում այն հանգամանքը, որ վերջիններս իշխանությամ գլուխ գալով, «մոռացության» տվյալ, լրիվ անտեսեցին ու գրկեցին նրանց որևէ կերպ երկու կատավարմանը մասնաւեցելու հնարավորությունից և ոչ մի կերպ հաշվի չեն նստում նրանց հետ:

Երբ Օճայյանները դեռևս ուժեւ էին, նրանց կարող էին իրենց թույլ տալ նման քայլեր: Բայց այժմ, երբ նրանց դիրքերը թուլացել են և նրանց այլևս նախկինները չեն, Արարիայի վերնախավի հակածմայական դիրքորոշումը մեծ վտանգ էր ներկայացնում նրանց համար. ներատի ունենալով այն պարագան, որ նրանց դեռևս մեծ հեղինակություն էին վայելում և օգտվում էին բարոյական աղջեցիկ լծակներից:

Օճայյանների դեմ ուղղված նրանց նախկին մեղադրանքներին առ այն, որ նրանք հեռացել են Սարգարեի ավանդներից ու պատգամներից և հետեւողական շնչ իսլամի հիմնադրություններին հետևելու և կիրառելու հարցում, ավելացան նոր, ավելի ծանրակշիռ մեղադրանքներ:

Արարիայի վերնախավը և նրանց միացած աստվածաբարանները Օճայյաններին բացեիրաց սկսեցին մեղադրել այն թանում, որ նրանց դավաճանել են աստվածաբանությամ սկզբունքներին, որպիսին եղել է Սարգարեի և նրան հացորդած չորս բարեպաշտ խալիֆաների կողմից հաստատած արարական պետությունը: Նրանց կածավարող դիմաստիային մեղադրում էին խալիֆայությունը աշխարհիկ պետության վարածելու մեջ, որը հակասում է Սուլհանմաղի ավանդություններին, Կորանի և սուննայի սկզբունքներին:

Նման մեղադրները Ծերկայացնելուն նպաստում էր առանձին խալիֆաների առվայելու պահպանքը: Մենք արդեն նշել ենք խալիֆաների և արքունիքի աշխարհիկ հաճույքներին անծնառուր լինելու նասին: Այստեղ հարկ է ավելացնել Օմայյան վերջին խալիֆաներից մեկի՝ Կալիլ II (743–744 թթ.) արարութերի մասին, որոնք ցնցող տպավորություն են բռնու շրջապատի վրա: Ծարունակելով իր նախորդների ավանդույթները որսորդությամ, գինարտուրի և այլ աշխարհիկ հաճույքների թանգալառում, նա այնքան հեռուն գնաց, որ Կորանի թերթիկները դարձրել եր թիրախն և նետահարում եր դրամը, ծուտելով վարույթուաման նետածության ասպարեզում: Մուսուլման ուզմները խալիֆայի այդ արարությանաւատնեցին որպես սրբապատճեցրու: Նոյն կերպ որևէ վեց Կալիլ II համեմությունը, երբ նա, որպես իմամ, ուրբարօյս արդրքան անցկացնելու համար իր փոխարեն նշկիր ուղարկեց իր հարճներից մեկին:

Եվ, վերջապես, Կալիլ II հետագավ մայրագաղաքից և բնակություն հաստատեց անապատում հատուկ նրա համար կառուցված որսորդական տեսակ-պալատում, ամրութապես նվիրվելով որսորդությանը, հարթեցողությանը և մարմարական հաճույքներին:

Սեցք վերջապես վերնախավը, աստվածարան իրավագետները, ստեղծված վիճակից դուրս գալու եւց տեսնում էին խալամի սկզբունքներին վերաբանալու մեջ: Մակայն նրանք այլևս համոզված չէին, որ Օմայյաներն ի վիճակի էին կատարել դա, քանի որ նրանք շատ էին խորացել իրենց մեղքների մեջ:

Արաբիայի վերնախավի նման դիրքորոշումը ծանր հարված էր Օմայյաների հնդինակությանը, որն ավելի քուացրեց նրանց դիրքերը և ավելի խորացրեց ամրուց խալիֆայությանը համակած ճգնաժամը:

Դիմակայությունը արարական տոհմիկ ավագանու, որն էր արմատներով ուղղակի կապված էր Մուհամմադ մարգարեի հետ, և Օմայյան վերնախավի միջն, դարձավ հակասությունների մեկ այլ կարևոր հանգույց:

Խալիֆայությունում անկայունության հաստատմանը և քաղաքական ճգնաժամին նպաստում էր Օմայյան դիմաստիայում տիրող, կարելի է ասել, քառսային վիճակը:

Դիմաստիայի շրջանակներում գահին և ազդեցության համար բացիկայու և բացնված պայքար էր գնում խալիֆաների բազմաթիվ որոշների, նորայրների, հորեղորորդիների, հետու ու մոտիկ ազգականների միջև: Ծառ խալիֆաներ մահանում էին հանելուկային և խորհրդավոր

պայմաններում, հավանաբար ոչ առանց ոմանց օգնության: Այդպիսի ճակատագիր է Վերջո ունեցավ արդյօն հիշատակված Վալիդ II, որը սպանվեց իր ազգականների ժնորով:

Խալիֆաներն արագործեն հաջորդում էին մեկը մյուսին: Թափական է նշել, որ միայն 744 թ. խալիֆայության գահի վրա եղել է չորս խալիֆա՝ Վալիդ II (743–744 թթ.), Յագիդ III (744 թ.), Խրահիմ (744 թ.) և Վերջապես Օմայյան վերջին խալիֆա Մրվան II, որն իշխանության գլուխ գալով 744 թ., գահակալեց մինչև 750 թ.:

Այսպիսի խաօսաշփոր իրավիճակում թիւ շին այն դնաքերը, եթո մերթ այստեղ, մերթ այնուո՞ր հայտնվում էին ինքնակոչ խալիֆաներ, այդ թվում և Օմայյան էմիրների շարքերու, որու վկարուն եր բուն Օմայյան դիմաստիարում տիրող ճգնաժամի մասին:

Խալիֆաների զվարապետույթ փոփոխություններն անդրադանում էին նաև փոխարքաների ճակատագրի վրա: Երանք շնորհագրելվում և կորցնում էին ոչ միայն իրենց գրադարան պաշտոնները, այլև կյանքը: Այդպիսի ճակատագրի արժանացավ Միջին Ասիայի փոխարքա Կուտեյրը, որը պաշտոնանկ արվեց և տպանվեց խալիֆա Սուլեյմանի հրամանով: Տաճրամահ արվեց նաև արքեսցյան շրջանների կառավարիչ Սուհամադ իբր Կասիմը: Իսկ Շյուսիսային Աֆրիկայի փոխարքա Մուսայի «բախտը բերեց»: Նա թեև շնորհագրվեց, սակայն կյանքից չօրիվեց:

Այս բոլորն, ամշուշտ, թռւացնում եր Օմայյանների դիրքերը և խորացնում ճգնաժամը խալիֆայությունում, առաջացնելով հակասությունների մեկ այլ, բավականին յուրօրինակ հանգույց:

Օգտվելով խալիֆայությունում ծագած ներքին դժվարություններից, քաղաքական անկայությունից և համընդհանուր դժգոհությունից, կունին գլուխ քարծարացրին և ակտիվացան շիանները և Օմայյաններին քշնամի այլ մեծ ու փողը ուժեց:

Շիանների պահանջների և դժգոհության պատճառը մնացել էր նույնը: Երանք գտնում էին, որ Օմայյաններ խալիֆայության ոչ լւծի-տիմ, անօրինական կառավարողներն են, իշխանության բռնազարիչներ, և պատք է իրենց տեսք գիտեն Ալիի հետնորդներին՝ շիաններին: Երանց այս պահանջները նոր քափով առաջարկվեցին VIII դ. 40-ական թվականներին, որն ավելի սրբա ներքաղաքական պայքարը խալիֆայությունում:

Եղանակի, խարիզմիների, իսկ ապա նաև Արքայամների կողմից Օմայյաների դինաստիայի լավագության վիճարկման ֆոնի վրա ծևավորվեց հակասությունների, կարելի է ասել, հաջորդ հանգույցը:

Այսպիսով, տարատեսակ հակասությունների առաջացումը և նրանց սրվելը, հիրավի, վկայում էր, որ ճգնաժամը համակել էր խալի-Ֆայուքյան բոլոր խավերին, տարածվել վերևից ներքն, ուստի և կրուն էր համակարգային բնույթը:

Օրակարգի հարց էր դարձել Օմայյան խալիֆայության հետագա նակատագիրը. նրա լինել-չինելու խնդիրը:

## 2. Հակասմայյական ապստամբությունները և ելույթները

Դամակ դժուհության այս ընդհանուր ֆոնի վրա խալիֆայության տարրեր մասերում ծայր առան Օմայյաների տիրապետության դժուդրված ապստամբություններ և գինևած ելույթներ:

Դակասիշխանական ելույթներ խալիֆայությունում հաճախ են եղել: Սակայն այս փուլում ծավալված ելույթների յուրահատկությունը և վտանգավորությունը կայանում էր նրանում, որ նրանք դրսերդիքն Օմայյան դինաստիայի դիրքերի բոլության ժամանակ, երբ խիստ ներացել էր նրա սոցիալական հենարանը և սպականել էին այն ուժեղը, որոնց հակատարիմ էին նրան, և որոնց վրա Օմայյան վերջին խալիֆաները կարող էին նենվել:

Օմայյան վերջին խալիֆա Մրգան II իր գահակալումից անմիջապես հետո արդեն հարկադրված էր գործ ունենալ զյուղական և քաղաքային քնակզության ելույթների հետ, որոնց դրսերդիքին հրաքում և Սիրիայում:

Նոր խալիֆան իր նստոցը հաստատել էր Սիրիայից դուրս, Չարբանում, որը գտնվում է Սիրիակետքում: Բացի այդ, նա սկսեց հենվել քանու կայսի ցնոյի վրա, որը դժունություն առաջացրեց հիմնականում քանու կայրի ցեղերից կազմված հրաքի և Սիրիայի կայազորներում:

Սիրիա ապստամբություն բարձրացրիմ Սիրիայի քնակզության լայն խավերը, որոնց համար այլևս անտանելի էին հարկերը: Եվ Մրգան II Սիրիայի քնակզության դժուն, որը երկար ժամանակ եղել էր Օմայյան դինաստիայի քաղաքական կենտրոնը և հուսայի հենարանը, հանեց իր քանակը: Նա գրավեց ապստամբության կենտրոն Շիմսը (Շոմսը), քան-

ոնց նրան և Միջիայի մյուս խոշոր քաղաքաների պարհսպները և խստորեն պատժեց ապստամբությամ մասնակիցներին:

Իրարում նաև հարկադրված էր ծանր մարտեր մոլու խարիժիների դեմ, որոնց բավականին ամրապնդել էին իրենց դիրքերը և կառարելագործել իրենց մարտավարական արվեստը: Նրանց հակածայցական բարոզությունը, որը պարունակում էր սոցիալական հավասարության տարրեր, մեծ համապատասխան էր նվաճնել Իրաքի ժողովոյի մոտ: Նրանց պաշտամանությամբ հանուն նկատ անգամ Իրարում տեղակայված առանձին կայագործներ, որոնք համալրված էին կարի ցեղից, որն ավելի էր դժվարացնում խալիֆային դեռևս հավասարին գործերի գործողությունները: Նրանց ժժմարտականությամբ և մեծ գոհողությունների գնույթ էր հարդարությունը:

Պատկանաշական է, որ խարիժիների ազդեցությունը և գործունեությունը դուրս եկավ Իրաքի շրջանակներից և տարածվեց նաև Արարիայում: Սակայն այստեղ խալիֆան այլն ի վիճակի չեղ նրանց դեմ լուրջ մարտական գործողություններ ծավալել, քանի որ նրա բանակն այլևս նախկին չէր: Նա արդեն դարձել էր փողքարածնակ, մի կորմից, և հոգնած ու տկարացած Իրարում խարիժիների և Միրայում ապստամբ քաջության դեմ նրկարատն և հյուծիչ պատերազմներից հետո, մյուս լորդից:

Ամիանդոսության մշտական կենսորոն էին Խորասանը և Միջին Ասիան, մասնավորապես Սակարամնահրը: Այստեղ մեծ ազդեցություն ունեին շիաները, ինչպես նաև խարիժիները, որոնք բացահայտուեն հանդես էին գալիս Օմայյաների իշխանական իրավունքների դեմ, նրանց համարելով թռնառերեք:

721 թ. հունվարի ապստամբություն թօնվեց Սուրյում, որին մասնկցում էր 10 հազար մարտ: Նրանց ապստամբությունը ճնշվեց դաժանությամբ և բոլոր ապստամբները սրի քաշվեցին:

Սակայն 728 թ. Սուրյում թօնվեց նոր ապստամբություն: Այս անգամ ապստամբները, դաշամակիցներ ծեծ թերելու նպատակով, հրաժարվեցին խալամից, և օգնության խնդրանքով դիմեցին տեղաբակ բուրցերին: Վերցիններս, ինչպես նաև Տերզանայի և Շաջի (Տաշքենո) բուրցը քնակչության գինված ջոկատները օգնության եկան ապստամբներին: Նրանց միացան նաև Սուրյուի դիմիկաները՝ հողատերերը: Նրանց միացյալ ուժները պարտության մատնեցին օմայյական գործերին և, ի վերջո, Մակարաննահրը բռնափեց արարական տիրապետությունը:

734 թ. ապստամբություն մկանվեց Խորասանում Յարիսա իրն Սուրբյաջի զլաւավորությամբ, որին մասնակցում էին նաև արաքնօրը: Ապստամբները պահանջում էին հավատարմություն Կորանի դրույթներին և Մուհամմադ մարգարելի պատգամներին, քրիստոնյաների և այլ զինմիների հրավումների հարգում, մուսուլմաններից խարացի գանձան դաշտարնեցում և այլն:

Քանի որ Խալիֆայության գործերը գրադած էին Խորասանի ապստամբությունը ճնշելով, 736 թ. ապստամբության դրույց նորից բարձրացվեց Մողողում: Ապստամբներին հաջորդվեց գրավել Սամարդաշը, որի կորուստը ծանր հարկած էր խալիֆայությանը:

Անհամգիտ էր նաև Մրժմիայրում, որտեղ տեղի էին ունենում սույալական խմորումներ, իհմք դասնալով ապստամբական շարժում ծավալման համար: Երկրամասում, Յայաստանում, Վիրքում, Աղվանքում, Դաշտանում և հարակից տարածաշրջաններում նույնպես վիճակը ծանր էր, ժողովուրդը տնօռում էր ծանր հարկերի տակ:

Շնայած այդ համգամանքին, 725 թ. անցկացվեց բնակչության հաշվառում, որի հետևանքով սաստկացակ հողահարկի և զիյահարկի գանձումը: Արմիմիայի բնակչության մոտ կուտակվում էր խոր դժգոհություն, տեղի էին ունենում տեղական բռույթի քայլումներ բնակչության և արարական ուստիևանների գործերի միջն, որոնք, ի վերջո, վերաթուցին խոշոր ապստամբության: Նրա կենտրոնը դարձավ Յայաստանը:

Դայ իշխանները 748 թ. որոշեցին ապստամբվել, նպատակ ունենալով ազատագրվել արարական տիրապետությունից: Ապստամբությունը զլիավորեց նորընտիր Դայոց իշխան Մուշեր Սամիկիրնյանը: Ընդհանրապես այդ ապստամբության վճռական կողմնակիցները Մամիկոնյաններն էին, որոնք կանգնած էին երկու ազատագրության հարցը զենքի միջրուցվ լուծելու տեսակետի վրա:

Դայ իշխանության մեջ մյուս ազդեցիկ նախարարական տունը՝ Բագրատումինները, ավելի զգույշ քայլարականության կողմնակից էին: Այդ հանգամանքը, հնչեսն նաև դաշնակիցների քացակայությունը և դրանց որևէ ռազմական օգնություն ստանալու հետամկարի քացակայությունը իրենց քացասական դիրքը խարացին ապստամբության ընթացքի վեա: 750 թ. Խալիֆայական գործներին հաջորդվեց ճնշել այդ ապստամբությունը:

Օճայյաններին մեծ զլիացավանք պատճառուց Դյումիսալին Աֆրիկամ: Այստեղ հակածայական լայնածավալ քարոզչություն էին անում:

խարիքիները, որը բարենպաստ իր գոլավ տեղի բնակչություն, մասմավորացն թերթերների մոտ: Դա ունի իր բացատրությունը:

Թերթերները համարվում էին նեղուասուլմաներ, մավալիներ: Նրանցից սկսեցին գանձել այնպիսի հարկեր, որ սովորաբար գանձում էին ոչ մուսուլմաններից, և դա, բնականաբար, առաջացրեց իրենց մարտական բնավորությանը աչքի ընկնող թերթերների դժգոհությունը: Այս կողմից, հայանը թերթերների մոտ դեօւս խոր արմատներ չեղ զցել: Այդ կրոնը նրանց համար շարունակում էր մնալ օտար, որին նրանց արտաքուստ ցույց էին տալիս, թե, ի՞ր, հավատում էին, սակայն, իրականում նրանք գաղտնի կերպով շարունակում էին եղերպագել իրենց հերանու աստվածներին:

Հարկային ահավոր մամլիչին այլևս անկարող դիմանալու, թերթերները 740 թ. ապստամբթեցին: Ապստամբությունն ընդունեց համընդհանուր բնույթ և տարածվեց ամրող Յոթուսային Աֆրիկայում, որը գտնվում էր արաբների տիրապետության տակ: Ապստամբությունը ճնշելու նպատակով խալիֆա Ֆիջամի Սիրիայից ուղարկված 30 հազարանոց բանակը 741 թ. զլյոտվել քախչախվեց ապստամբ թերթերների կողմից: Դրա հետևանքով թերթերները մի կարճ ժամանակամիջոց ազատագրվեցին արաբական տիրապետությունից, իսկ Անդալուսը (Իսպանիան) կտրվեց խալիֆայությունից: Թերթերները Անդալուսում նույնպես ապստամբվեցին:

Դաջորդ տարի Ֆիջամը, հավաքելով ավելի մեծաքանակ զորք, կրտորդացավ Կայրավանի մոտ տեղի ունեցած նակատամարտում հասնել հաղթանակի ապստամբների նկատմամբ: Սակայն արաբների տիրապետությունն այդպես էլ չամրապնդվեց և եթեք էլ չըկեկանգնվեց նախկին կայուն վիճակը: Օնայյաների տիրապետությունը Յոթուսային Աֆրիկայում շատ երերուն էր, իսկ որոշ մասներում անգամ ծնական:

Այսպիսով, կարելի է ասել, որ ամբողջ խալիֆայությունը համակաված էր ապստամբական շարժումներով: Եվ չնայած այն հանգամանքին, որ որոշ շրջաններում խալիֆաներին դեօւս հաջողվում էր ճնշել այդ ելույթները, այդուհանդերձ, հոդն այրվում էր Օնայյաների ուղի տակ: Նրանց տապալելու համար անհրաժեշտ էր մի վճռական հարված: Այդ հարվածը հասցնողները եղան Արքայանները:

### 3. Արու Մուսլիմի ապստամբությունը և Օմայյան դինաստիայի տապալումը

Խալիֆայությունում առեղծված այս վերին աստճանի ծանր պայմաններում, որու կարելի է անգամ ընութագրել որպես անելանի, քաղաքական խառնի մեջ մտավ մի նոր ուժ՝ Արքայամները:

Այս անիշան ծագումը կապված է Մուհամմադ մարգարեի հորժը-բայրներից մեկի՝ Արքայի ամփան հետ: Մարգարեի հայրը, Արդալահը, ուներ երկու եղբայր՝ Արքասց և Արու Տալիբը: Այս վերջինը Այսի հայրն էր: Ուրեմն Արքայամները Մուհամմադ մարգարեի հորժերոր, Արքայի հետնորդներն էին, իսկ այնպահները կամ շխանթը, ինչպես նշվել է, նոր մյուս հորժերոր, Արու Տալիբի որդու, Այսի հետնորդներն էին:

Արքայամները, նախքան Օմայյաներին մարտահրավեր նետելը, փորձեցին հրավական և զաղափարական հիմնավորում տալ իրենց հավակնություններին խալիֆայության գահի նկատմամբ:

Նրանք չեն միտում, որ Օմայյաները որպես տոհմ նույնականացնելու համար կուրայց ցեղին: Սակայն օրանք չեն սերում կուրայց ցեղի Մուհամմադի տոհմից: Ավելին, Օմայյան դինաստիայի հիմնադրի՝ Մուհամմայի և հայրը, Արու Մուֆիխանը, նոյնի է Մուհամմադ մարգարեի հակառակորդը և չեղ ընդունում օրանք, եթո վերջինս սկսել էր նոր կորոնի բարոզությունը Մեքքայում: Արու Մուֆիխանը շատ մեծ ուշացումով հարց Մուհամմադին և ընդունեց իսլամ: Արքայամն զաղափարախոսները, եւ ներկ այս հիմնադրութիւց, գտնում էին, որ նման մարդու հետնորդները իրավական հիմք չունեն դաստակու խալիֆաներ, ուստի և Օմայյաների կաօպակարումց լեզիտիմ, օրինական չեն:

Ժխտելով Օմայյաների իրավունքները գահի նկատմամբ, Արքայամները կատարեցին հաջորդ քայլը: Նրանք առաջ քաշեցին այն տեսադրությունը, որ արաքական խալիֆայության օրինական կառավարողներ կարող են լինել միայն Մուհամմադ մարգարեի մերձավորացուն հարազատների ներկայացուցիչները: Իսկ այդպիսին նրանք տեսնում էին միայն Արքայամներին, Մուհամմադի հորեղբայր Արքասի սերունդի ներկայացուցիչներին:

Արքայամներն իրենց հակաօնայլական շարժումը մկնեցին արդարությունը և օրինականությունը վերականգնելու կարգախոսի ներքը:

Արքայամները համբերատարորդն և զաղտնաբահորն պատրաստվում էին հանդես գալ Օմայյաների դեմ: Պօես VIII դ. 20–30-ա-

կան թվականներին նրանք ստեղծել էին գաղտնի խմբավորում, որի ներկայացուցիչները խալիֆայության տարրեր շրջաններում տարածում էին Արքայանների գահի օրինական հակավորդներ լինելու գաղափարները և բնակչության շրջանում բորբոքում հակաօմայյական տրամադրություններ:

Խորը ժգնաժամի մեջ զտնվող, տարաբնույթ հակասություններից ծվեն ծվեն լինո՞ր խալիֆայությունում Արքայանների տեսադրույթները պարարտ հող գտան: Նրանց շուրջը համախմբվեցին Օմայյաններից դժգոհ բոլոր քաղաքական ուժերը, չնայած նրանց միջն գրյուբյուն ունեցող հակասություններին: Սակայն նրանց միավորությ համընդհանուր առելությունն էր Օմայյանների ներտմարք և ամեն գովզ նրանց տապալելու ծգուումը:

Ըստյիմադիր ուժերի համախմբումը Արքայանների շուրջը հնարավոր եղավ իրագործել նաև շնորհիվ վերջիններին բավականին ճկուն քաղաքականության: Նրանք տալիս էին մեծ խոստումներ ապառամբական շարժման մեջ ներգրավված տարրեր ուժերին: Այսպես, օրինակ, Արքայանները բնակչությանը խոստանում էին թքնացնել հարկերը, անգամ որոշ տեսակի հարկեր վերացնել: Մեծ խոստումներ էին տալիս ոչ արար հորդատեր Փեղուաններին նրանց կառավարության համակարգում ընդորկելու վերաբերյալ:

Դրա հետ միասին նրանք խուսափում էին ճշտել իրենց դիրքորոշումն առանձին սույն հարցների նկատմամբ, պատճառաբանելով, թե դրանց կարելի է անդրադառնալ Օմայյաններին տապալելուց և իշխանության գալուց հետո և այլն:

Նման հարցերի բյուն էր պատկանում հարաբերությունները այլականների՝ շիանների հետ, որոնց նույնական հավակնում էին խալիֆայության գահին, ընգծելով, որ այդ իրավունքը պատկանում է միայն նրանց, քանի որ Այն Սուլհամանադի Արու Տալիր հորեղբոր որդին էր և նրա նարեման դրանք ամուսինը:

Արքայանները մեծ համակրներ ունեին խորասանում և Մավարանահրում, այդ բյուն և պարսիկների մոտ:

Արքայաններն ապառամբության որոշը բարձրացրին 747 թ. հունիսի 9-ին: Նրա կենտրոնը դադավակ Անդվի օագիսը: Ապառամբությունն Արքայանների հանձնարարությամբ, որոնց գլուխավարն այդ ժամանակ իրեն ամրող մուսուլմանական ուսմայի առաջնորդ հաջակած Իրահիմ իր Սուլհամանադի էր, ամիցականորին դիմակարում էր ծագումով պար-

սիկ, Օմայյաների ղետ ատելությամբ լցված Արռ Մուսլիմը, որը որպես Աքքայանների գաղտնի խմբավորման անդամ, 743 թ. ծերթակալվել է Իշխանությունների կողմից, սակայն հետագայում ազատ արձակվել:

Արռ Մուսլիմի հրամանով սև շրջեր հագած ապատամբները հունիսի 9-ի վաղ ասավոտյան վառեցին խարուկները և բարձրացրին սև դրոշները: Անը հենց այդ ժամանակվանից դատնում է Աքքայանների պաշտոնական գոյունց:

Արռ Մուսլիմը հաստատվել էր Մերվից ոչ հեռու գտնվող Սաֆիզամց գյուղում, որը վերածել էր մի անառիկ ամրոցի: Ապատամբներին մնաց մյուսի հետևից միանում էին մարդիկ մոտակա և հետավոր վայրերոց, Քերարից, Մերվից, Թուսից, Նիսից, Թամականից, Թոխարստանից և այլ վայրերից: Նրանց կողմն էին ամցում ամրող գյուղեր: Քետագայում Արռ Մուսլիմն իր նստավայրը հաստատեց Սահվանում, ապա Մերվում:

Խալիֆա Մրվան II, ստանալով ապատամբության լուրջ, 748 թ. իր գործերն ուղարկեց ապատամբների դեմ: Սակայն նրա միակ հաջողությունն այն եղավ, որ կարողացավ գնորդ Իրրամիմին և բանտում սպանել տալ նրան: Իրրամիմին փոխարինեց նրա կրտսեր Եղբայրը՝ Արռ ալ-Աքքասը, որը ստանձնեց ապատամբության ընթանում դիմավարությունը:

Ապատամբները ոչ միայն հաջողությամբ հետ լին մղում խալիֆային հավատարիմ գործերի հարձակումները, այլև 748 թ. անցան վճռական գործողությունների: Նրանց գրավեցին Նիշապուր, Ույ, Սիհավանդ և այլ կարևոր քաղաքներ ու բնակավայրեր, ամրող Նրանց և առաջ շարժվելով արևմտյան ուղղությամբ, 749 թ. ներխուժեցին Իրաք և տիրեցին Կուֆային:

Վեօական ճակատամարտը ապատամբների և խալիֆայական գործերի միջև տևելի ունեցավ 750 թ., Միջագետքում, Մեծ Զար գետի ավելին: Ապատամբական ուժերը, որ դեկավարում էր Արռ ալ-Աքքասի հորեղայրը, տարան վայլուն հաղթամատ, գրավեցին Ջարդանը, որը խալիֆայի նստավայրն էր, և ապրիլի 26-ին մտամ Դամասկոս:

Տաճա պարտություններից հետո խալիֆա Մրվան II այլևս անկառող էր որևէ ոյնարդություն ցուց տալ Աքքայան գործերին, ուստի վախուստի ոյնից Եգիպտոս, հույս ունենալով այստեղ հաստատվել: Երբ գորդ հավաքն և ճնշել ապատամբներին: Սակայն նրա հույսերը շարդարացան: Նրա դեմ դուրս եկան դաշտիները, որոնց միացան տեղական ա-

ուարական կայագործները: Նա հեռացավ Գիզա, քայլ այստեղ 750 ք օգոստոսին թանձեց Ծովան հնտապնդող Արքայան գործերի կողմից և սպանվեց: Օմայյան վերջին խալիֆա Մրգան II գլուխ որպես ընծառ ուղարկվեց արդեն խալիֆա հոգակալած Արու ալ-Աքքասին: Արքայանների հաղբանակը կառուցրավ Էր:

Օմայյան դինաստիան, որ Արարական խալիֆայությունը կառավարեց 90 տարի, տապալվեց:

Ավարությունը արարական պետության պատմության մի կարևոր փուլը:

## Գլուխ յորերորդ

### **ԱՐԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅԻԹՅՈՒՆԸ (750–1258 թթ.)**

#### **I. ԱՐԲԱՍՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ**

1. Արու ալ-Աբբասը նոր ղիճաստիայի հիմնադիր  
և Աբբասյան առաջին խալիֆա (750–754 թթ.)

Աբբասյանների իշխանության գլուխ գալով Արարական խալիֆայությունում հաստատվեց նորորդ ղիճաստիան: Առաջինը ուղղափառ չորս խալիֆաներուն էին, որոնց երկրորդ կառավարեցին 632–660 թթ.: Սակայն նրանք դասական իմաստով ղիճաստիա չէին, քանի որ նրանց իշխանությունը չէր հիմնված հորից որդուն կամ նորորդ ժամանակելու սկզբունքի վրա, որը ղիճաստիական կառավարման կարևոր հատկանիշներից մեկն է: Նրանց ժամանակ գործում եր խալիֆաներին Առևամադ մարդարենի մերժավոր զինակիցներից ընտրելու կամոնը:

Երկրորդը Օմայյանների ղիճաստիան էր, որն իսկապես դասական ղիճաստիական կառավարում էր, շատ կողմնական ընդօրինակված Սասանյան Պարսկաստանում և Բյուզանդական կայսրությունում գործող համակարգերից: Այս ղիճաստիան խալիֆայությունը կառավարեց 661–750 թթ.:

Եվ, երրորդը, ինչպես նշվեց, Աբբասյանների ղիճաստիան էր, որը եղավ ամենաերկարակացը: Եթե ուղղափառ խալիֆաները կառավարեցին ընդամենը 30 տարի, իսկ Օմայյանները՝ 90, ապա Աբբասյանները՝ 700 տարուց եւ ավելի:

Հետագայում կայսրության տարրեր մասերում հայտնված զանազան դինաստիաները, ինչպես Ֆարփիյանները, Այուրինները և այլն, որոնք էլ ավելի կարճաժամկետ կանք են ունեցել, քան Աքրասյանները:

Պատմական գրականության մեջ մինչև այսօր էլ վեճ է գոյում այն հարցի շուրջը, թե ե՞ր են Աքրասյաններն եկել իշխանության գլուխ՝ 749, թե՝ 750 թվականին, ըստ այդմ էլ Աքրասյանները կառավարել են 749, թե՝ 750 թվականից մինչև 1258 թ.: Ի՞նչ է հիմք հանդիսացել նաև տարակարդության համար:

Եթե Աքրասյանները կազմակերպիցին ապստամբություն Օմայյաների դեմ, ապա նրանք, առանց սպասելու վերջնական հաղթամարտին և Օմայյանների տապալմանց, 749 թ. Արու ալ-Աքրասին հոչակեցին խալիֆա: Դա տեսիդի ունեցավ, եթե ապստամբություն մտան Իրաքի Կուֆա քաղաքը: Հենց այստեղ, 749 թ. հոկտեմբերի 30-ին, Արու ալ-Աքրասը նրա կողմնակիցների կողմից քաղաքի գլխավոր մզկիթում հօչակվեց խալիֆա: Ամենուր Օմայյանների սպահակ ոլորչներն իշխություն և գոյխարինեցին Աքրասյանների սև դրոշներով:

Այսպիսով, ստեղծվեց յուրահատուկ իրավիժնակ: Գոյություն ունեցող և գործող Օմայյան Մրգան և խալիֆայի կողմին, որը դեռևս համարվում էր երկրի օրինական, լեզվական, ասպարեզ խալ երկրորդը, ապստամբ և որոշ իմաստով իմբռակոչ, խալիֆա Արու ալ-Աքրասը:

Յարկ է նշնչ, որ դա առաջին դեպք չէր Աքրասյան խալիֆայության պատմության մեջ: Նման իրադրություն ստեղծվեց նաև խալիֆա Ալիի կենդանության օրոց, երբ 660 թ. Երուսաղեմում իրձն խալիֆա հռչակեց Մուավիյան Օմայյանների ընտանիքից: Եվ մինչև 661 թ., լեզվական խալիֆա Ալիի սպանությունը, քաղաքական ասպարեզի վրա էին երկու խալիֆաներ՝ Ալին և Մուավիյան, որը հետագայում հանդիսացավ Օմայյան դինաստիայի հիմնադիրը:

Պատմաբաններից ունանք, հիմք ընդունելով Արու ալ-Աքրասի 749 թ. խալիֆա հռչակվելու լիաստը, հակված են Աքրասյան դինաստիայի իշխանության գլուխ գալու տարրերիվ ընդունել այդ թվականը: Սակայն ուսումնասիրողների ճնշող մեծանանությունը համաձայն յէ նման մոտեցման հետ: Նրանք իրավադիորեն գտնում են, որ այդ թվականին օրինական խալիֆան դեռևս Մրգան և էր, որպէս նշշտ է, հայտնվել եր ծանր վիճակում, սակայն շարունակում էր մնալ երկրի լեզվական պեկալարը: Եվ միայն մրա սպանությունից, որը տեղի ունեցավ 750 թ. օգոստոսի 5-ին, և Օմայյան դինաստիայի տապալումից հետո, կարող է

խոր լինել նոր, Աքքասյան դինաստիայի իշխանության գլուխ զալու ժամանեց:

Ուստի ճիշտ է Աքքասյան դինաստիայի հաստատումն ընդունել 750 թ., եղբ Աքքասյաններն այլևս մրցակից չունեին, և մեւը մյուսի հետևից նրանց իրենց հավատարմությունը հայտնեցին խալիֆայության տարրեր շրջաններ:

Առու ալ-Աքքասը նրկիրց կառավարեց 750–754 թթ. և մահացավ ծաղկի հիվանդությունից, նրիտասարդ հասակում, հազիկ ռուղրած նրբություն:

## 2. Խալիֆաների միջացառումները Աքքասյան դինաստիայի անդապնդման ուղղությամբ

Առու ալ-Աքքասը, ինչպես նաև նրան հաջորդած ալ-Մանսուր, ալ-Մահրի, ալ-Շատի և Շարուն առ-Ռաշիդ խալիֆաները, դիմեցին վճռական քայլերի, որոնց նրբումն հասնում էին անասելի դաժանության, իրենց անձնական իշխանությունը և Աքքասյան դինաստիայի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Նրանց հետոնդականորեն ասպարեզից վերացնում էին իրենց աւանինությունը և հնարավոր մրցակիցներին, ռուղրին, թե բացահայտ քննամիներին, և թե իրենց բարեկամներին, եթե դույզն ինչ կասկածում էին նրանց: Այդ ուղղությամբ առանձնակի դաժանությամբ և վրիժառութամբ այլի եր ընկույն առաջին խալիֆան՝ Առու ալ-Աքքասը:

Առու ալ-Աքքասը դառնալով խալիֆա, իրեն կոչեց «աս-Սաֆ-ֆահ», որը նշանակում է «Առատածեռն»: Սասնազետները օման անվանակոչումը կապում են այն բանի հետ, որ Առու ալ-Աքքասը դառնալով խալիֆա, Կուֆայի մզկիրում իր առաջին խուստրայի ժամանակ մեծ խոստումներ տվեց իր հապատակներին: Նա հրապարակական հայտարարեց, որ նրանց կոյածնի ամենանդամնությունը, կրեթսացնի ծանր հարկերը, Դամասկոսն այլևս չի լինի խալիֆայության մայրաքաղաքը, նրա փոխարժեն արոռանիստ քաղաքը կղառնա Կուֆան և այլն:

Սակայն կա «աս-Սաֆ-ֆահի» բացատրության այլ տարրերակ ևս: Նա բարգմանում են որպես «Արյունահեծ», Եկատի ունենալով այն բազում սպանությունները, որ նա իրագործեց իր խալիֆա դասնալուց անմիջապես հետո:

Եվ, իրոք, Աբու ալ-Աբրասն իր իշխանությունը և Աբրասյան դիմաստիան ամրապնդելու ուղղությամբ առաջին և ամենակարևոր քայլը հաճարեց Օմայյաների տոհմի ընացնեցումը: Ակավեց մի խևական նարդարուս: Աբրասյան զորակրամանատարներից մեկը, Աբդալամ, իր մոտ ճաշի իրավիրելով Օմայյան ըմբանիցի 80 երների անուամների, խնդրվելի թե՛ թե՛ պահին բոլորին, մինչև վերջին ճարող, կոտորեց: Զորակրամանատարը և նրա օգբականները ապանվածների և վերավերների վրա կաշվե սփռոցմեր փոխով, մրանց հառաջանքների և տնօրոցմերի «Ազագակցությամբ», շարունակեցին իրենց վայրենի գինարրությը: Դավանարար դրա հետ է կապված Աբրասյան խալիֆաների գահի կողմին մշտապիս կաշվե մորթի ունենալու սովորությը:

Խալիֆայի հրամանով խալիֆայության բոլոր շրջանները գործակալներ և լրտեսներ ուղարկեցին, որոնց հիմնական նպատակը Օմայյան ցնուանիքին պատկանող մարդկանց հայտնաբերելը և ոչնչացնելն էր: Եվ պետք է ասել, որ, իրոք, Աբրասյաններին հաջորդվեց արժատավիշի անել Օմայյաների տոհմը: Անզամ շին հմայում երեխաններին և կանանց:

Օմայյաններից միայն մեկին՝ Աբր ալ-Ռահման իրն Սուլավիային հրաշքով հաջորդվեց ճողովությ և ասպասում գտնել Խալիֆայություն (Անդարշուստիայում), որտեղ նա հետազայտվեց. 756 թ. հիմնեց Կորուպվայի Օմայյան խալիֆայությունը:

Աբրասյանների ատելությունը և անհանդուրժողականությունն Օմայյանների համեմատ այն աստիճանի էր, որ նրանք շինայեցին ոչ միայն կենդանի մնացածներին, այլև ճահացած Օմայյաններին, այդ բնում և խալիֆաներին: Նրանք, չքահումացիայի ննջարկելով Օմայյան խալիֆաներից շատերի գերեզմանները, անարգանքի էին ենթարկվում նրանց շիրիմները: Իսկ Օմայյան վերջին խալիֆաներից մեկի՝ Յիշամի (724–743 թթ.) ամյունը գերեզմանից հանելով, ութան մտրակի հարված հասցրեցին, իսկ այնուհետև այրեցին և միխիրը ցուցին:

Օմայյանների տոհմի ընացնեցմ, սանրան, անորոշություն շքերեց Աբրասյան խալիֆայությամբ: Աբրասյանները դիմում շին հասցեե ընթրչնելու Օմայյանների դիմ տարած հաղթանակը, եթե խալիֆայության տարրեր մասնաւում քարծրացակ նրանց դիմ ուղղված հժողովության ալիքը:

Աբրասյանների դիմ ընդունեց Ալիրիան, որի ուներ իր պատճենները: Ալիրիան Օմայյանների ժամանակ հանդիսանում էր խալիֆայության քարյաթական կենտրոնը և օգտվում էր որոշակի արտոնություններից և առավելություններից խալիֆայության կառավարման, հարկերի վճար-

ման, աշխատավարձերի և այլ հարցերում: Արքայանների ժամանակ խալիֆայության կենտրոնը տեղափոխվեց Իրաք և Սիրիան վերածվեց մի սովորական նահանգի Իրաքի կառավարման ներքո: Սիրիացինները չեն կարող հաշտվել իրենց դիրքերը կորցնելու, ճամավանդ իրաքցինների տիրապետության տակ հայտնվելու իրավիճակի հետ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գոյություն ունին խոր հակառակություններ Գրանց միջև տարրեր ցեղախմբերի պատկանելու կապակցությամբ:

Սիրիացինները մի քանի անգամ գինված եղուրքներ ունեցան Արքայանների դեմ, նպաստակ ունենալով վերականգնելու իրենց նախնին կարգավիճակը, բայց հաջողության չհասան: Արու ալ-Արքաս աս-Մաֆֆահին այդ եղուրքները ճնշեց ամենայն դամանությամբ: Սիրիան առժամանակ հանդարտվեց և ենթարկեց Իրաքում հաստատված Արքայաններին:

Լարվեցին, ապա բացահայտ քշնանանքի վերածվեցին հարաբերությունները Արքայանների և շիաների միջև:

Շիաները Օմայյաններ դեմ ուղղված Արքայանների շարժման սկզբում պաշտպանում էին վեցոցիններին, միամտորեն հավատալով, որ Օմայյանների տապալման դեպքում իրենց, որպես իմամ Ալիի հետորդներ, կզան իշխանության գլուխ: Սակայն Արքայանները տանելով հաղթանակ, իրենց ճեղքում կենտրոնացրին ամրող իշխանությունը, և շիաները հերթական անգամ մնացին խաղից դուրս: Արքայաններն անգամ շիմ մտածում որևէ շափուկ խալիֆայության կառավարմանը մասնակից դարձնել Ալիի հետորդներին:

Այս հոդի վրա 750 թ. վտանգավոր հակասաթրայան եղույթներ տեղի ունեցան Մավրաբանահրում: Արքայանների դեմ ապատամբթվեց Քուիարան: Ապատամբների գլուխ անցակ Շարիկ իր ալ-Մահրին, որը շիա էր և գտնում էր, որ Արքայանները խալիֆայության գաղտ պետք է փոխանցեն Երա միակ օրինական հավակնորդներ Ալիի կողմնակից շիաներին:

Ապատամբների շարքերում միավորվել էին արաբները, պարսկները, Մավրաբանահրի այլ տեղաբնիկները, գյուղացինները, արիեսուալորները, առևտուականները և այլ ուժեր:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ նրանց միավորողը ոչ միայն, և թերևս, ոչ այնքան իշխանությունը Մուհամմադ մարգարեի փեսա Ալիի հետորդ շիաներին փոխանցելու պահանջն էր, որքան համընդահանուր դժգոհությունը Արքայաններից, Երանց կառավարման մերույներից և դամանություններից: Այդ պատճառով էլ Շարիկի գլխավորած

ապստամբության դրոշի ներքո կանգնել էին տեղական բնակչության ամենալայն զանգվածները, ըստավորացն 30 հազար մարդ, որն այդ ժամանակների համար մեծ թիվ էր:

Նորընծա խալիֆա Արու ալ-Աբրասմ ի վիճակի ցեր սեփական ուժերով մնշել Բուխարայի ապստամբությունը և նրան կրկին օգնության հասավ Արու Մուսլիմը, որն անզնահաստելի դեր էր խաղացել Օմայյաների տապալչան, Արքայանների հայթանալի և իշխանության զորիս զարու գրությամբ: Խալիֆայությունում բռնորդ հասկանում էին, թե ինչ մեծ վտանգ է ներկայացնում այդ ապստամբությունը:

Արու Մուսլիմը, որը Արքայայան խալիֆայության արևելյան նահանգների կառավարիչն էր, տասիհազարամոց մի գորաքանակ ուղարկեց Բուխարայի ապստամբների դեմ: Սակայն նև այս անգամ հաջողության չհասավ, ապստամբները հեշտությամբ հնատ մղեցին Արու Մուսլիմի հարձակումը և պահպաննցին իրենց ոդրքները:

Պժվար է ասել, թե ինչ վախճան կրնենար ապստամբությունը, եթե իշխանությունների կողմը չանցներ Բուխարայի կառավարիչ Կուտեյրան: Ապստամբներին դավաճաննեցին և Արքայանների կողմն անցան նաև Ռուխարայի առևտրականները, որոնք սկզբնական շրջանում միացել էին նրանց:

Ուզմական իրադրությունը հօգուտ Արքայանների փոխվնալուց հետո, Արու Մուսլիմի գործերը սկսեցին Բուխարայի գրոհը, որի ժամանակ գոհվեց ապստամբության դեկանար Շարիկը: Սակայն Բուխարան անձնառող չեղավ, այլ հերոսարար շարունակում էր մարտները: Արքայան գործերին հաջողվեց քաղաք ներխուժել միայն այն օրնից հետո, երբ քաղաքի պաշտպանների մեծ մասը գոհվեց մարտական դիրքերում: Կենդանի մնացած ապստամբների մեծ մասը ավելվեց և հրկիվեց:

Ուրիշ ելան նաև Կուֆայի շիանները, հիասքափիված Արքայաններից և իշխանության լծակներն իրենց ծեռք վերցնելու անհնարինությունից: Նրանց զլսավորում էր Կուֆայի կառավարիչ Արու Սալամ ալ-Խալալը, որին այդ պաշտոնում նշանակել էին իրենք Արքայանները՝ Օմայյանների դեմ մղած պայցարում նրա ծառայությունների համար: Նա մասնակցել էր 749 թ. Կուֆայում Արու ալ-Աբրասին խալիֆա ընտրելում: Սակայն Արու Սալամն ամենայն հավանականությամբ այդ քայ-

և կատարել է հարկադրված, համեմայն դեպքու ոչ սրտի կանչով, աշխատանք յունենալու պատճառով:

Պետք է ներաղիքը, որ Արու ալ-Արքասը, որը նրան նշանակել էր Կուֆայի կառավարից, նույնական այդ քայլը կատարել էր պայմանների հարկադրանքով։ Նօգուտ դրա է խոսում այն պարագան, որ խալիքան առաջին օրվանից մեծ կասկածներ ունեն Արու Սալամի նեատմանը, մանավանու, որ նա մեծ հեղինակություն էր վայելուն, ոչ պահան, քան Արու Մուսլիմը Արու ալ-Արքաս նրան համարում էր իր ամենավտանգավոր մոցակիցներից մեկը։ Եվ նրա որոշումը նոյն մեկը՝ ազատվել իր վտանգավոր մոցակցից։

Խալիքան լավ էր համանում, որ իր ծրագրի իրագործումը, այսինքն Արու Սալամի ֆիզիկական ոչմշացումը, հոյի էր ծանր հետևանքներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա Կուֆայում ուներ արտակարգ մեծ հեղինակություն և նրա սպամությունը կարող էր շիաների լայնածավալ շարժում առաջացնել, որը խիստ վտանգավոր էր դեռևս չամրապնդված խալիքայության համար։ Որովայտում քարդանում էր նաև նրանուն, որ Արու ալ-Արքաս դեօս յուներ հզոր և լավ կազմակերպված բանակ, ընդունակ ճնշելու ներքին լայնածավալ և վտանգավոր հակաարապայն ներքյաները։ Ռաստի նա ընտրեց այլ ուղի։

Արու ալ-Արքասի հանձնարարությամբ նրա նորայրը, Արու Զաֆարը, մեկնեց Խորասան և քանակցություններ վարեց Արու Մուսլիմի հետ նրա մնոցով կամ նրա օգնությամբ լուծնու։ Արու Սալամին մեջտեղից վերացնելու հարցը։ Արու Մուսլիմը հերթական անգամ իր պատրաստակամությունը հայտնեց օգնելու Արքայաններին։ Չափանարար նա դա արեց այն պատճառով, որ նա նույնական էր դեմք Արու Սալամի տեսնում էր վտանգավոր մոցակցի, որին վերացնելով ինքը կմնար Արքայաններին Ըմբռված միակ հզոր գործիքը։ որի հետ Արքայաններն ավելի շատ հարկադրված կլիմեն հաշվի նստել։

Արու Մուսլիմի հանձնարարությամբ նրա հավատարիմ մարդիկ սպանեցին Արու Սալամին, սակայն լուրեր տարածեցին, թէ նրան սպանել են խարիցիները։ Նույնական մենցությամբ սպանվեց շիաների մեկ այլ մեծ հեղինակություն վայելող դեկամար Սուլեյման Կասիրը, որին վտանգավոր էին համարում ոչ միայն Արքայանները, այլև ինքը Արու Մուսլիմը։ Ռաստի այս անգամ Արու Մուսլիմին համոզելու առանձակի հարկ շնորհական է։

Առաջին Արքասյան խաղիքաները լուրջ հիմնախմբիրներ ունեին նաև Շյուսիսային Աֆրիկայում, Օժանում, Սինդում, Խորասամում և այլ նահանգներում:

Այդուհանդերձ, Արու ալ-Արքասին հաջողվեց դիմակային Արքասյանների դեմ ուղղված առաջին ալիքը և զգալիորեն աճրապնդել նոր դինաստիայի դիրքերը:

### 3. Խաղիքա Արու Զաֆար ալ-Մանսուր (754–775 թթ.)

Արու ալ-Արքաս աս-Սաֆիահի մահից հետո խաղիքայության գահն անցավ նոր նորորոց՝ Արու Զաֆարին:

Քերեր ստրկութուոց ծնված Արու Զաֆարը քացածիկ կարնոր դեր է խալացնել Արքասյան դիմաստիայի պատմության մեջ: Թեև այդ դիմաստիայի հիմնադիրը պաշտոնական համարվում է Արու ալ-Արքասը, սակայն պատմագիտական գրականության մեջ դեռունված է դիմաստիայի խականան հիմնադիր համարեց նրա նորորոց: Արու Զաֆարին, դրամով իսկ ծնական դիրքականությունը բռննչվով Արու ալ-Արքասին: Նման տեսակետի համար հիմք են համոլիսացնել երկու հանգամանց:

Առաջին, Արու Զաֆարը համոլիսացավ հենց այն խաղիքան, որի ժամանակ քաղաքական և ռազմական առումով իրոք հաստատվեց և ամրապնդվեց Արքասյան դիմաստիայի իշխանությունը խաղիքայությունում: Այդ իշխանությունն այլևս մագից չեր կախված, ինչպես Արու ալ-Արքասի օրոք:

Երկրորդ, Արու Զաֆարին հաջողացած Արքասյան թուրու 35 խաղիքաներն անմիջական սերեւ են նրանց: Դրանք նոնց են Արու Զաֆարի տղաները, բռները, ծոռները և այլն:

Այս երկու պարագաներն առանձնահատուկ տնի են ապահովել նրան պատմության մեջ և նպաստել նրա ամփան շուրջը փառապակի ստեղծմանը:

Արու Զաֆարը գլուխյուն ունեցող ավանդույթի համաձայն իր համար ընտրեց հասուլ մականուն: Նյա ընտրությունը կանգ առակ «ալ-Մանսուր» տիտղոսի վրա, որը մշանակում է «Շաղրական»: Կարելի է ասել, որ նա այդ իրավունքը ուներ, քանի որ հայրանալով էր դուրս գալիս իր դեմ ուղղված դավերից և քացահայտ քշմամական գործողություններից: Դրան նպաստել էր նաև այն հանգամանքը, որ տիպարանո-

ըեն նա պատկանում էր այն գործիչներին շարքին, որոնք բարձրականության մեջ կոչվում են մարդիավելական:

Իր գահակալության առաջին օրվանցից, ալ-Մանսուրը հարկադրված էր ոյմակայեց զանազան փորձությունների, որոնց մի մասը շատ լուրջ մարտահրավերներ էին նրա իշխանությամբ: Առաջինը նրան որպես խալիֆայի գահի հավակնորդ ծեռոնց նետեց նրա հարազատ հորժորացը, Միրիհայք կառավարիչ Արդալահ իրն Ալին, որը մնա հեղինակությունն էր վայելում Արքայանությի շրջանում: Դրան մասնավորապես նպաստել էր այն հանգամանքը, որ նա տարել էր վճռական հարդաբակ Օմայյան վերջին խալիֆա Մուավիա II դեմ, Սեծ Զար գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում:

Սակայն Արու Զաֆարը ընազ մտադիր չէր նրան գիծն իր գահը: Նա իր գահակալության օրինականության համար որպես փաստարկ փորձեց օգտագործել այն հանգամանքը, որ Արու ալ-Մերասը, իբր թե, մահվանից առաջ նրան է նշանակել խալիֆա:

Սակայն այդ փաստարկն ամենայն հավանականությամբ ազդեցություն չի գործել և Արու Զաֆարը հարկադրված էր ոյմել ամենազորել փաստարկի՛ զննիքն: Նա օգնության համար ոյմեց Խորասանի կառավարիչ Արու Մուսլիմին: Կերծին համերս եկավ ալ-Մանսուրի պաշտպանությամբ: Նրա գործեցր 754 թ. նոյեմբերին տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին Արդալահին, որը զերի ընկավ և հետագայում տանջաման արվեց:

Սակայն ճակատագրի ինքանի հեգմանց: Արու Մուսլիմի ծնորով իր հորեղորդ, գահի զիսավոր հավակնորդի և զիսավոր ախոյանի հետ հաշվեհարդար տեսմեցուց հետո, ալ-Մանսուրն իր զիսավոր խնդիրը համարն ուղարկած է առաջնական գործություն էր դարձել, իր մեծ հեղինակությամբ իմաստ ազդեցիկ անծնավորություն էր դարձել, իր տրամադրության տակ ուներ լավ կազմակերպված բանակ և այլն: Ինչպիս արդեն նշվել է, Արու Մուսլիմը դեկտավարն ապաստամբությունն Օմայյաների դեմ և բացահիկ ծառայություններ ուներ Արքայանությի հայրանակի և կառավագորդ դիմաւորիա դառնալու գործում:

Գալով իշխանության, Արքայանության առաջին օրվանցից մեծագույն կասկածանքով էին վերաբերվում Արու Մուսլիմին, նրա մեջ տեսնելով խիստ վտանգավոր մրցակցի: Արու Զաֆարն իր եղորդը՝ Արու ալ-Մերասին անընդհատ հորդորում էր վերացնել Արու Մուսլիմին: Վեր-

շինս սկզբունքրին համածայն էր եղբար հետ, առևայն շուհմեց այդ քայլին, քանի որ իրն ըստարար չափով ուժեղ չէր գգում:

Ալ-Մանսուրը հործոքոր դավադրությունից հետո վերջնականապես որոշեց լուծն Արու Սուսլիմի հարցը, սակայն ոչ թե քացահայտ ճակատամարտ տալով, այլ խորածանկությամբ: Այստեղ իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ լուրեր էին պատվիրում, թե Արու Սուսլիմն իր անուղղակիրքն մասմակցություն է ունեցն: Արդառաջի դավադրությանը, թե դրա համար չկային հավաստի ապագույցներ:

Ալ-Մանսուրն իր մոտ հրավիրեց Արու Սուսլիմին, որին ուխտագնացության էր մեկնում Մեծքա, համապատասխան հրահանգմեր տալու պատրվակով: Արու Մուսլիմը, որին անսամբլամ վատահություն էր տածում Արքայանմերի մկանուամբ, իր ճամապարհող շնորհ և մեկնեց խայիֆայի մոտ: Ալ-Մանսուրին նրան ցնողություն մեծ պատիվներով, քացահեկ հարգանքի արժանացնելով նրան: Պարզոր օրն առավոտյան Արու Մուսլիմը, շագած փառակել ընդունելությունից և խայիֆայի հարգայի վերաբերությունից, ոչինչ չկասկածելով, պայտ մեկնեց և ներկայացակ խայիֆային առանց գննի և թիկնապահների, ակամայից հեշտացնելով ալ-Մանսուրի խնդիրը: Վերջինս օգտվելով այդ հանգամանքից, հրամայեց Արու Սուսլիմին ծերբակալել և ապանել: Դա տեղի ունեցավ 755 թ.: Այսպիսով, Արքայանմերի համար մի վտանգավոր հակառակորդ ևս առավելացից վերացվեց:

Արու Մուսլիմի սպանությունն անմեկատ չանցավ և չէր էլ կարող անցնել: Նա մեծ հոգունեց առաջացրեց Պարսկաստանի շիամերի մռա, որը նույն 755 թ. վերածվեց ապատամբության Մումբադի գլխավորությամբ: Ապատամբության որոշ բարձրացվեց Նիշապուրում: Թեև ապատամբության դիմակար Սունբարդ առաջադրեց չեր «Վրեժ հանուն Արու Մուսլիմի» կարգախոսը, սակայն ապատամբությունն ընդունեց շիամերի Արքայանմերի դեմ ուղղված նույնի մռույք: Ապատամբների հսկողության տակ անցան քաջը Նիշապուրից, նաև Ույ և Կումիս քաղաքներն իրեն շրջակացրով: Նրանց դիրքերը և նյութական վիճակը գգալիրքն ամրապնդվեց այն քաջից հետո, երբ նրանց ծեզըն ընկալ Արու Սուսլիմի գահարարանը:

Նիշապուրի ապատամբությունը գգալի վտանգ էր ներկայացնուած ալ-Մանսուրի իշխանությանը: Լավ գիտակցելով դա, խայիֆան գործեց արագ և վճռականորեն: Նա ապատամբների դեմ ուղարկեց 10 հազարանոց լավ գինված մի զորաբանակը: Վճռական ճակատամարտը, որը տե-

ոյի ումեցավ ապստամբների և քանակի միջև Պամադանի և Ոնչի միջև, ավարտվեց ապստամբների պարտությամբ: Նրանք զլխուղին ջախշախսվեցին: Քավական է նշել, որ ապստամբազմի ոյաշուում գրիվեց վեց հազար ապստամբ: Նրանց մեծ էր նաև Սունքառադը:

Ալ-Մանսուրը նույնականի վճռականությամբ արյան մեջ խեղից դրան հաջորդած մեկ այլ ապստամբություն Սավարաննահրում: Ռւշարավ է, որ այս ապստամբության առաջնորդ Խմիմկը, ինչպես և որան նախորդած Տիշապուրի ապստամբության դեկափար Սունքառադ, գրադաշտական էին, որը խոսում է այն մասին, որ Աբրասյանների մկանամբ դժգոհությունը հաճակել էր ոչ միայն շիաներին, այլև կրոնական այլ դավանանքի պատկանող լամ խավերին:

Անհանգիստ էր նաև Արարիան: Դրա պատճառը նույնն էր, ինչ որ Օմայյանների պարագայում: Արարիայի երեխյանները, որոնք իրենց համարում էին Մուհամմադ մարզարձի ուղղակի հաջորդները, դժոնի էին իրենց քաղաքական կարգավիճակից և տնտեսական դրույյունից: Աբրասյանները, ինչեւ և նրանց նախորդները Օմայյանները, նրանց գրկելի էին քաղաքական և իշխանական բռնը տեսակի ջակներից, որոնց մկանամբ նրանք մեծ հավակնություններ ունեին: Սակայն Աբրասյանները քուրույլին է տրամադրի չեմ Արարիայի վերնախավի հետ, թելուզ աննշան շափուկ, կիսել իշխանությունը:

Բացի դրանից, այդ վերնախավը հժոնու էր իր տնտեսական վիճակից: Պետական գանձարանից նրանք շատ ամնշան օգնություն էին ստամում, այն դնադրում, երբ Աբրասյաններին մոտ կամքնած կամ նրանց շրջապատող ուժերը, որոնց վրա հենվում էին խալիֆաները, առասպեկական հարստությունն էին դիմում:

Արարիայի վերնախավը, մարզարձի հետևորդների քավականին հոծ գանգված և նրանց համակիրները կազմում էին Աբրասյանների դեմ ուղղված ընդդիմության կորդին Արարիայում, պատրաստ օգնության ծեռց մեկնելու և օժանդակելու բռնը այն ուժերին, որոնք կարող էին համես գույ Աբրասյանների դեմ: Իսկ այսպիսի զիսավոր ուժը շարունակում էին մնալ շիաները, մարզարձի հորեցորորդի Ալիի հետնորդները, որոնց գգալի մասը կեմտրնացել էր Արարիայում:

Նրանք, քաջալերկած Արարիայի վերնախավի հակաբրասյան դիրքորոշումից, 762 թ. ապստամբություն բարձրացրին ալ-Մանսուր խալիֆայի դնն: Ապստամբության գլուխ անցան Ալիի որոյի Պասանի ծոռները՝ Մուհամմադը, որը կրում էր «Սաքուր հոգի» տիտղոսը, և նրա

երբայր Իբրահիմը: Նրանց միացան Իրաքում և Հիջազում քնակվող շիամները: Խակ Շիջազի քնակիչները Շասանի ծոռներին սատարելու մեջ այնքան հետուն գնացին, որ Մուհամմադին հոչակեցին խալիֆա:

Այսպիսով, դարձյալ ստեղծվեց նրկու խալիֆայի ծանոթ պատմությունը:

Ալ-Մանսուրն ինքնակու խալիֆային պատմելու և նրա զլսավորած ապստամբությունը ճնշելու համար նախապատրաստական մեծ աշխատանք կատարեց: Վճարական ծակառամարտը ապստամբական ուժերի հետ տեղի ունեցավ 762 թ. դեկտեմբերի 6-ին: Ալ-Մանսուրը տարավ իր հերթական հաղորանակը: Կաստամբները պարտություն կրեցին, իսկ «խալիֆա» Մուհամմադն ընկապ մարտում: Սակայն դա չփրկեց նրան ստորագրությունը: Նրա դիակը կախաղան հանվեց Սադինայում:

Խակ ի՞նչ էր անում Մուհամմադի նորայր Իբրահիմը: Նա այդ նոյն ժամանակ ապստամբներ Իրաքում, որին միացան ոչ միայն Իրաքի, այլև Խութիստանի շիամները: Այսպիսով, ալ-Մանսուրը հարկադրոված էր կովել երկու ճակատով, որոյ անշուշտ, դմվար դրության մեջ էր դրն նրան: Սակայն Մուհամմադի դեմ 762 թ. դեկտեմբերին տարած հաղորանակից և Հիջազում ապստամբությունը ճնշելուց հետո, ալ-Մանսուրը իր հիմնական ուժերը կինորումացրեց Իբրահիմի դեմ և 763 թ. փետրվարի 14-ին, Կորֆայի մոտ տեղի ունեցած վճարական ճակատամարտում, կարողացավ պարունաքան մատնել Պասանի մյուս ծոխին, Իբրահիմին նույնական որդիւնքում որպան ռազմական ավար ուղարկեց ալ-Մանսուրին:

Պատման պատմի արժանացան նաև քազմաթիվ այլ շիամներ, մասնաւոն նրանց վերնախավից: Նրանց զլսատելը և գլուխները որպան ընծա խալիֆային ուղարկելը դարձել էր ամենասովորական երևությունը մարմնից անջատված այդ գլուխները մի տեղ հավաքելը և գուցադրելը՝ ալ-Մանսուրի սիրած գրադումբներից մեկը:

Այսպիսով, ալ-Մանսուրին հաջողվեց իր սրբ Շերտը համախմբել Արաբական կայսրությունը, բացառությամբ Քյուփիսային Աֆրիկայի, որտեղ խալիֆայի իշխանությունը յլր տարածվում Կայրականից այն կողմ, և Խապանիայի, որտեղ արդեն հաստատվել էր Օմայյան Արդ ալ-Ռահմանը:

#### 4. Դար աս-Մալամի՝ Բաղդադի հիմնադրումը 762 թ.

Ալ-Մամուրիի անվան հետ է կապված նաև Աքբասյան խալիֆայության նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի հիմնադրումը:

Մայրաքաղաքի հարցը մշտապես եղել է արաբական խալիֆաներին հուզող հարցերից մեկը, որին նրանք բացառիկ տեղ են հասունացրել իրենց քաղաքականության մեջ: Եվ դա հասկանալի է, քանի որ պետության քաղաքական կենտրոնի, օրա տեղապահը, Խարմար աշխարհագույն դիրքի հարցերը կարևոր պետական մշանակություն ունեն: Եվ այդ առումով արաբական խալիֆաները մեծ քայլմղրությամբ են մուտքեցին մայրաքաղաքը ընտրելու խնդրին:

Սակայն արաբական խալիֆաները, դրա հետ միասին, մայրաքաղաքը ընտրելիս դեկավարվել են նաև մեկ այլ կարևոր սկզբունքով, որքանով է անվտանգ տվյալ վայրը իրենց համար: Երբեմն հարցի այս կողմը, խալիֆային և նրա արքունիքի անվտանգության և ապահովության հարցը, առաջնային և գերակա է եղել մնացած ռուրու հարցերի նկատմամբ:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ խալիֆաները, Օմայյան, թէ Աքբասյան, Խանալի նե փոխել իրենց մայրաքաղաքը ներք:

Նրանք կիրառեց են նաև մեկ այլ տարրերակ: Մայրաքաղաքը բռնել են նույնը, սակայն անվտանգության խնդրից ելնելով, իրենք տեղափոխվել են իրենց նստոցն ավելի ապահով վայր: Անվտանգություն ասելով տվյալ պարագայում ներառի ունենք ոչ այնքան արտաքին վտանգը, որքան ներքին, երբ այս կամ այն խալիֆան իրեն ապահով չգնալով տվյալ քաղաքում, վախճանակով իր դեմ հնարավոր թշնամական ելույթներից, իր նստոցը տեղափոխում էր այլ, իր համար ավելի ապահով վայր:

Այդ քաղաքականությունը լայնորեն կիրառում էին Օմայյան խալիֆաները: Օմայյան խալիֆայության ժամանակ քաղաքական կենտրոնը վերջնականացվելու տեղափոխվեց Ալարիայից Սիրիա, Մեծքան և Սեղման այլևս մայրաքաղաքներ չեն: Պետության պաշտոնական մայրաքաղաքը հոչակելել էր Դամասկոս: Սակայն խալիֆաները միշտ չեն որ մնում էին այնտեղ: Այսպես, օրինակ, խալիֆա Առվելյանն իր նստոցը Դամասկոսից տեղափոխվեց Ռամալլահ, Պաղեստին, Չիշամն իր արքունիքը հաստատեց Ռուսաֆուլ, Եփրատի ափերին, Վալիդ II, Խեոանալով Դամասկոսից, բռնկություն հաստատեց անապատում, հասուկ նրա համար կառուցված որսորդական տեսակ-պայտում: Օմայյան վերջին

Խալիֆա Մրգան II նույնական հեռանալով Սիրիայից, հաստատվեց Հարբանում, Միջազգային և այլն:

Նույն քաղաքականությանը հետևեցին նաև Արքայան առաջին երկու խալիֆաները՝ Արտ ալ-Արքաս աս-Խաֆիակը և Արտ Զաֆար ալ-Աբանուլը:

Արտ ալ-Արքայան Կուֆայում իր գահակալության ժիմակառարության ժամանակ ունեցած հետո առաջին երուսալիմ, ի շարու այլ պիտական կարսորություն ունեցող հարցնի, անդրադարձակ նաև ճայրաբաղադրի խմբին: Նա բազմահազար ամրութի հավանության մեջքո հայտարարեց, որ խալիֆայության մայրաքաղաքն այլևս Սիրիայում չի լինելու և Վաստահեցող իր հավատարիմ հետևողմերին, որ հետայս նայուարդացը լինեցու է Կուֆան:

Փաստորինն որա առաջին պաշտոնական հայտարարությունն էր այն մասին, որ խալիֆայության քաղաքական կենտրոնն Սիրիայից տեղափոխվում է Իրաք: Եվ, իրոք, Կուֆան Արտ ալ-Արքայաց հողակեց Արքայան խալիֆայության մայրաքաղաքը:

Սակայն շուտում պարզ դարձավ, որ “Պարսկաստանի սահմաններից ոչ հեռու գտնվող Կուֆան դարձնելով նոր մայրաքաղաք, Արքայանները միայն են բռնլի տունն: Բացի այն հանգամանքից, որ նոր աշխարհագրական դիրքն այնքան է հարցմար չեն ընդարձակ Արքայական կայսրությունը կատավարելու տեսանկյունից, կար նաև մեկ այլ, Արքայանների համար կենտրական նշանակության ունեցող համզամանը: Կուֆան Այդի հետևողությունից, շիաների կենտրոնն էր, որոնց ավանդաբար խալիֆայության բոլոր կատավարողներին համարում նշն իշխանության բօնագագիշներ, եթե նա շիա չեր, և պայքարել են իշխանության գրավման համար:

Դշեմին նշն ենք, Օմայյաների դեմ ուղղված պացճարի սկզբունքը Արքայանները և Ալիականները հանդես են զայխի միասնական ճակատություն: Նրանց միավորողմ ատելությունն էր Օմայյաների նշանամամբ և նրանց տապալելու նշուումը: Ընդ որում, Ալիականները կամ շիաները ներքուստ հավատացած չեն, որ Օմայյաների տապալումից հետո իշխանությունը կանցնել երանց, կամ առնվազն նրանք կլինեն իշխանական կառույցներում:

Սակայն իրականում ստացվեց բոլորովին հակառակը: Արքայաններն ամրող իշխանությունը կենտրոնացրին իրենց մեջքում և շիաները ոչինչ չստացան: Այդ պահից սկսած երանք գուախեցին հա-

կարքայան դիրքորոշում և, ինչպես արդեն նշվել է, տեղի ունեցած շիաների մի քանի ելույթներ և գինված ապստամբություններ, ուղղված խալիֆայության նոր կառավարող դիմաստիայի՝ Աքքայամիների դեմ:

Դրա հետևանքով Եփրատի ավին գտնվող Կուֆան դադարեց Արա ալ-Աքքայի համար ապահով մայրաքաղաք լինելուց: Նոր խալիֆան ակնծ լրջորեն մտածել նոր նստոց գտնելու մասին:

Ավանդական թվականական շարքում թվագրվում էր նաև Բասրայի հարցը: Սակայն նոր թեկնածությունը մերժվեց, ելնելով այն բացից, որ, առաջին, նա անմիջականորեն սահմանակից էր Պարսկաստանին և գտնվում էր խալիֆայության հարավային մասում, և այդ առությունը որոշակի դժվարություններ էր ներկայացնելու խալիֆայությունը կառավարելու տեսանկյունից, և, երկրորդ, Բասրայում նույնպես մեծ քանակությամբ շիաներ էին բնակվում: Իսկ դա նշանակում էր, որ մայրաքաղաքը Բասրա տեղափոխելով, չեղ լուծվում Աքքայամիների անվտանգության հարցը, որանք շարունակելու էին գտնվելու ոչ բարեկամական, թշնամական միջավայրում:

Արու ալ-Աքքայի ընտրությունը կանգ առավ Մնթարի վրա, որի արգարձանում, որը գտնվում էր Կուֆայի և Ջիրայի միջև, մա կառուցեց իր մասուցը, կոչելով այն ալ-Ջաշիմիյա՝ ի պատիվ իր ցանի տոհմապետ Ջաշիմի, որին պատկանում էր նաև Մուհամմադ մարզարեն: Արու ալ-Աքքայն տեղափոխվեց այստեղ, իր հետ տաճելով արքունիքը և կառավարական ամրությ անձնակազմը: Նենց այստեղ է նա 754 թ. կըբօց իր մահկանացուն:

Ալ-Մանսուրը իր կառավարման առաջին տարիներին ամրողով վին կամքած լինելով իր դեմ ուղղված քաջարիկ դավադրությունները և վտանգավոր ելույթները Ծնշելով, իր իշխանությունը ամրապնդելու և Աքքայան դիմաստիայի դիրքերն ամրապնդելու խնդրով, ժամանակ և հնարավորություն չուներ գրադարձու նոր նստավայր գտնելու հարցով: Նա շարունակում էր ապրել ալ-Ջաշիմիյայում:

Սակայն 750-ական թվականների վերջերին և 60-ական թվականների սկզբներին, դաժանորեն ճնշելով երկրի տարբեր ճամբերում զանազան ուժերի իր դեմ ուղղված քոյլոր տեսակի ելույթները և թշնամական գործողությունները, խալիֆայությունում հաստատելով հարաբերական կայություն, ալ-Մանսուրը հնարավորություն առաջարկ ամրության ալ նոր մայրաքաղաքի խնդրին, որը նրան, գահակալության առաջին օրերից, մշտապես նուահիգել էր:

Բազմաթիվ վայրեր դիւռարկելուց հետո, ալ-Մանսուրի ընտրությունը կանգ առավ Տիգրիս գետի արևմտյան ափին գտնվող, պարսկեցին կողմից հիմնված մի հին, փոքրիկ գյուղի վրա, որը կոչվում էր Բաղդադ: Նա տեղադրված էր Պարթևական և Սասանյան Պարսկաստանի երթեմնի մայրաքաղաք Տիգրոնի ավերակներից ոչ հեռու, դեպի հյուսիս: Դենց այստեղ ալ-Մանսուրը 762 թ. դրեց իր նոր մայրաքաղաքի հիմքը, որը նա կոչեց Սադինա աս-Խաջամ՝ Խաղաղության քաղաք: Սակայն ավելի գործածական դարձավ Բաղդադ անունը, ուունիսկ այն աստիճանի, որ Արքայուն խալիֆայությունը շատ հաճախ պատճական գրականության մեջ, գրավոր առջրությունում և բանավոր խոսքում անվանում էին Բաղդադի խալիֆայություն:

Իսկ ինչ վերաբերում է «Բաղդադի» խմաստացին ժագումնարանությանը, ապա դրա վերաբերյալ երկու տեսակեւու կա: Մեկ տեսակեւուն այն է, որ դրա պարսկական ծագումը ունի և նշանակում է «Աստծո տրված»: Իսկ մյուսը, դարձալ կապելով պարսկերեն «բաղդ» հետ, բարձրացնելով է որպես «այգի»:

Իսկ ինչու ալ-Մանսուրը ընտրեց հենց այս, թեև հինավուրց, բայց անհշան պարսկական թնակաստեղին: Այդ հարցի պատճառամբ տվյալն է հիմքը, խալիֆան: Ալ-Մանսուրը հիմնավորելով իր տեսակեւու, նշում է հետևյալ հանգամանքները. «Դա հոյսկապ ռազմական ճամքար է: Բացի այդ, այստեղ Տիգրիսն է, որը մեզ կարող է կապել այնպիսի հեռավոր երկրների հետ, ինչպես Չինաստանն է, մեզ թերել ծովային բարիցներ, ինչպես նաև սեմիամբերըներ Միջազգություն: Հայաստանից և շրջակա տարածքներից: Այնուհետև, կա Եփրատը, որը կարող է մեզ թերել այն ամենը, ինչ Սիրիան, առ-Շաքքան և նրան հարակից երկրները կառացարկեն մնեց»:

Այսպիսով, նոր մայրաքաղաքի ընտրությունը կապված էր նրա հարմար ռազմական և ստրատեգիական դիրքի, տրամադրության կարևոր համգույց և խաչմերուկ լինելու. ինչպես նաև առևտրատնտեսական գործունի հետ:

Բաղդադը կառուցվեց չորս տարվա ընթացքում, որի վրա ալ-Մանսուրը ծախսեց իր ժամանակի համար մի առավելական գումար՝ 4 միլիոն 833 հազար դիրիամ: Կառուցվեցին հոյակերտ պայտաներ, քաղաքացիական այլ շենքեր, ճգկիրմեր, շուկաներ և այլն: Նա իր շորս դարձաւաներով կապված էր խալիֆայության բոլոր շրջանների և աշխարհի չորս կողմերի հետ:

Բաղացի կառուցման աշխատանքներում ներգրավված էին ավելի քան 100 հազար շինարար բանվորներ, արհեստավորներ, ճարտարապետներ Սիրիայից, Սիրացինքից և հեռու ու մոտիկ այլ երկնութից: Հաստ շինանյութեր թրվեցին Սասանյանների ավերակ դարձած մայրաքաղաք Տիգրոնից:


Նրա կենտրոնում այսպիս կոչված Կլոր քաղաքն էր՝ ալ-Մուտավվարան, կորնակի հաստ պատճեռով: Այստեղ կառուցվեց խալիֆա ալ-Մանսուրի պալատը: Նրանից ոչ հեռու կառուցվեց գլխավոր մզկիթը: Ապա կառուցվեց ևս երրոր արքայական պալատը: Մենք խալիֆան անվանեց Կասր ալ-Խուրու, Անմահուրյան պալատը. իր սրանչելի պարտեզներով, որոնք միտում ունենալ մրցել դրախտի այգիների հետ: Իսկ մյուս պալատը, որն անվանվեց ալ-Ռուսաֆահ, ալ-Մանսուրը կառուցեց հատուկ իր որդու, քաջամշառանգ ալ-Մահեդի համար:

Բաղդադն այնքան արագ էր կառուցապատվում, որ շուտով նա տարածվեց Տիգրիս գետի նաև մյուս ափու: Արագ բափով աճում էր նաև նրա քաղաքությունը: Այստեղ արաբների կողմին ապրում էին նաև պարսկական, հրեաները, միջինասիացիները, հայերը, քրդերը, հույները և այլ ազգությունների և կրոնների ներկայացուցիչներ:

Բաղդադը շատ շուտով մեծ հոշակ ծնոք թրեց և միջազգային լայն ճամաչում ստացավ, դասնալով իր ժամանակի ազդեցիկ միջազգային քաղաքացական կենտրոններից մեկը:

Նա դարձավ նաև գիտության և մշակույթի կենտրոն, գիտունների, փիլիսոփամների, քանաստեղծների, երաժիշտների համարատեղի: Նա փառարանվել է տարբեր ազգերի և ժողովուրդների բանասեղծների կողմից, միջնադարյան անզուգական ասցերում, ինչպես «Դազար ու մի գիշերը» և այլն: Նրան անդրադարձել են անզամ այն ժամանակ, երբ վաղուց խամրել էր նրա փառքը: Եվ ոչ միայն արաբները, այլև հարևան ժողովուրդների ներկայացուցիչները: Դրա ամենավայր վկայություններից մեկն է հայ համբարեղ քանաստեղծ Ավետիք Խսահակյանի «Արտ Լաւա Սահարի» պրեմը, որտեղ անգերազանցելի վարպետությամբ է տրված «խալիֆաների մայրաքաղաքը Բաղդադի» սրանչելի պատկերը:

Բաղդադն իր նշանակությամբ և ներակատարումով դասվում է Ասածավոր Ասիայի կամ Մերձավոր և Միջին Արևելքի այնպիսի մայրաքաղաքների կողքին, ինչպես Տիգրոնց, Բարեղոնց, Նինվեն և շատ ուրիշներ: Սակայն այսօր նրանք կամ խալատ անհետացել են կամ էլ նրանցից մնացել են միայն խորուկ ավերակներ:



Թաղյաղն այդ մայրաբաղաբներից, բացի այլ հասլեանիշներից, տարբերվում է իր հարատնությամբ: Թեև հետագայում, XIII դ. խալիֆայության վերջնական կործանումից հետո, նա կորցրեց իր երեսմի միջազգային դերակատարությունը, սակայն եղրեց չամհետացակ քաղաքական ասպարեզից և պատուքյան թմբից: Նա դարձրի ցնրացըում կարողացել է պահպանել քաղաքական կենտրոնի իր նշանակությունը, դառնալով Օսմանյան կայսրության համանուն վիկայերի կենտրոն, ապա Իրաքի քաղաքական կենտրոն անգիտական մանդատի տիրապետության տարիներին: Եթ, վերջապես, նա մայրացաղացի իր կարգավիճակը կրկին վերակատառածեց XX դ. Իրաքի անկախ պետության առաջցումից հետո, դառնալով երեսմի Արքայան լայնածավալ խալիֆայության մի թվորի՝ Իրաքի մայրաքաղաքը:

Այսպիսով, Արու Թափար ալ-Մանսուրը պատմության մեջ մտել է որպես Արքայան դինաստիայի իրական հիմնադիր:

Նիշտ է, առաջին խալիֆան նոյն է Արու ալ-Արքասը և նա, որպես առաջին խալիֆա, ծավականորեն մնում է Արքայան խալիֆայության հիմնադիր, սակայն ալ-Մանսուրը փաստորեն նշակ այս խալիֆան, որը իրոց վերջնականապես հաստատեց Արքայան խալիֆայությունը: Նրա օրոց շրումկեց նաև նոր դինաստիայի ամրապնդման և նրա իշխանությունն Արքաքական խալիֆայության հիմնական նահանգների վրա տարածելու խնդիրը:

Նրա պատմական ծառայություններից մեկը էլ նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի, միջնադարի կարևոր քաղաքական, տնտեսական և գիտական-մշակութային կենտրոններից մեկի հիմնումն է:

Նա ունի մեկ այլ ծառայություն ևս, կապված գահաժառանգության սկզբումից և ավանդույթի հետ: Մուտքավաճական պետական իրավումը, ինչպես արդեն նշել ենք, չի ընդունումը զահն ըստ ժառանգության, իորից որոյում կամ եղրոցը և այլն, ժառանգելու օրենքը: Դա առիթ է տվել տվյալ դինաստիայի ներսում մշտական նրկպատճենությունների և գահի քազմաքրի հակակորդների հանդես գալու համար: Դրանից մեծապես տուժում էր Օմայյան դինաստիան, որտեղ ամեն մի խալիֆայի մահից հետո մկանում էր անգիտում պայքար գահի հակամորդների միջև:

Արքայանները նույնպես քախվեցին այդ դժվարության հետ: Ռւստի ալ-Մանսուրը, ծգունով զահը փոխանցել իր որդուն, փորձեց հաստատել զահաժառանգության նոր սկզբունքն առ այն, որ խալիֆայի զահը պնտը է մեկը մյուսին անցնի միայն հաշիմյան տոհմի շրջանակներում:

րում և այն էլ ալ-Մեքքասի սերումնդմերից: Ղեկավարվելով այդ սկզբունքով, նրան հաջողված ստիպել մուտքամանական աստվածաբան ու եճմերին, ինչպես նաև Աքքասյան ընտանիքի ազդեցիկ անդամներին, հավատարմության երրում տալ իր որդուն, ալ-Մահմետին, որպես իրեն հաջորդող ապագա խալիֆայի:

Սակայն, հավանաբար, ալ-Մամուռն այժման էլ վատահ չի եղել տրված եղողմանը, ուստի այն զայտոնի է պահեվո, նպատակ ունենալով կամիսել հաշիմյան տոհմի այլ հավանական թեկնածուների ժամանակոց շուտ պայքարի մեջ մտնելու հավանականությունը:

Խալիֆա ալ-Մամուռը վախճանվեց 775 թ. հոկտեմբերի 7-ին, վարչուն տարեկան հասակում, սակայն ոչ իր հիմնած Բաղրայում, այլ Մեքքայի մոտ, հաջի՝ ուստագմացության ժամանակ:

Հայտ հնտագրդիր ծնուկ է կատարվել նրա բաղրումը, որի լուսաբանությունը, կարծում ենք, կարող է լուս սփռել խալիֆայությունում, նրա վերնախավում տիրող բարեցի, սովորությունների և այն վախի մասին, թե ինչ կարող է պատահել մարդու հետ նրա մահից հետո:

Ալ-Մամուռի բաղրումը տեսիր է ռամեցել Մեքքայում: Այդ նպատակով փորձել է 100 գերեզման: Բայց խալիֆան չի բաղվել դրանցից և ոչ մեկում: Դա արվել է ապակողմնորոշելու համար: Նա բաղվել է մեկ այլ, ուրիշ գերեզմանում, որը հայտնի չէ: Դա արվել է այն նպատակով, որ նրա բազուն թշնամինը երբեք չկարողանան գտնել նրա բարձան միշտ վայրը, բացին գերեզմանը և պղծեն այն: Իսկ որ դա հնարավոր էր, կասկած չեր հարուցում: Դիշենք թեկուզ, թե ինչպիսի բարբարությամբ վարվեցին առաջին Աքքասյանները տապալված Օմայյան խալիֆանների գերեզմանների հետ, ծաղրութանակի ենթարկելով և սրբադիմելով նրանց շիրմները:

Ուրեմն ստացվում է, որ որոշ խալիֆաներ նախընտրել են կորչել անհայտության մեջ, առանց հանձնելության որևէ հուշարձանի, քան թե մահվանից հետո ենթարկելով վայրագ փորձության:

## II. ՊԵՏԱԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

### 1. Արքայան դիմաստիայի դիրքերի հետագա ամրապնդումը

Ալ-Մանաւրիին 775 թ. հաջորդեց նրա որդիին՝ ալ-Մահեյին, որի գահակալությունը տևեց մինչև 785 թ.: Նա ստացել էր իր ժամանակի համար լավ դաստիարակություն և լորություն, շնորհիլ իր պարսիկ դաստիարակի: Արքայան խալիֆայության կառավարման սկզբնական շրջանում չափազանց մեծ էր պարսիկների դերը խալիֆայության կառավարման համակարգում, քաղաքական, տնտեսական և ճշակութային կյանքում:

Ալ-Մահեյին շարունակեց իր նախորդների քաղաքականությունը դիմաստիայի, իշխանության և պնտության հետագա ամրապնդման ուղղությամբ:

Այդ նպատակով նա փորձեց նոր հիմնավորում տալ խալիֆայության զարի նկատմամբ Արքայաների իրավունքին: Այդ հարցն առաջացավ այն կապակցությամբ, որ շիա-ալիականներն առաջ քաշեցին և փորձեցին հիմնավորել նոր տեսադրույթ հմամության կամ հմամարի վերաբերյալ, որը գտնում էր, որ Ալիի յուրաքանչյուրը հետևողորդ իրավունք ունի հավակնել խալիֆայության զարին և դասմալ հմամ-խալիֆա, եթե նա ումի մեծ ծառայություններ ունետածական ումամայի հանդեպ: Ըստ որում հասուն ընդգծվում էր հմամ-խալիֆայի ընտրվելու և ոչ բա ժամանգար այն ստանալու պարագան:

Դա վկայում էր այն մասին, որ վեճերը խալիֆայության ներսում խալիֆաների օրինական լինելու, իրավունքի, զարին բազմելու, սկզբունքային հարցերի վերաբերյալ լուծված չեմ, համենայն դեպք բռնդի կողմից ընդունելի ծնուկ:

Ալ-Մահեյին հասկացավ, թե ինչպիսի վտանգ է ներկայացնում իր և իր հաջորդների համար ալիականների նոր տեսադրությը: Եվ նա փորձեց շիաների տեսադրությին հակադրել իր տեսադրությը: Մինչ այդ, Արքայանները խալիֆայական զարի նկատմամբ իրենց հավակնությունները հիմնավորում էին հենվելով այսպես կոչված Արու Շաշիմիի կտակի վրա, որը, իբր, նրանց տալիս էր խալիֆայության իրավունքը: Բայց հիմա պարզ էր դառնում, որ Ալիի հետանորդները նույնպես կարող էին օգտվել այդ կտակով տրվող իրավունքներից, քանի որ Ալին, Սուհամադ մարգարեի հորեղբորորդին, նույն Շաշիմիի տոհմից էր, ինչպես Ար-

բայց ամենիցը: Ուստի ալ-Մահդին առաջ քաշեց այն տեսադրույթը, որ այդ իրավունքը կարող է տարածվել միայն Սուհամմադ մարզարեի մյուս հորեղորդ՝ ալ-Աբբասի ժառանգույնների վրա, քանի որ ժամանակին հենց Սուհամմադ մարզարեն է իր ալ-Աբբաս հորեղորդը ճանաչել ուղղափառ Ըստով մասների գլուխվոր:

Այս հարցը շատ նորին հարց էր, որը շոշափում էր ոչ միայն գահակալության, այլև սուննի-շիա հիմնալուրց և հիմքանդավին հարաբերությունները: Իր նոր քայլուք ալ-Մահդին, անշուշու, վերացրեց սուննիների մտավախտությունը խալիֆայական գահը շիաներին անցնելու հնարավորության վերաբերյալ, որու անցնումնելի էր նրանց համար: Դրամով իսկ, նա շահեց սուննիների աջակցությունը և ամրապնդեց իր դիրքերը:

Բայց, մյուս կողմից, ալ-Մահդին լավ էր հականում, որ իր նոր տեսադրույթը փակում է ամեն մի հնարավորություն շիա-ալիականների առջև երթից խալիֆայական գահը խաղաղ և օրինական ճանապարհով գրավելու վերաբերյալ: Խոկ դա, բնականաբար, պիտու է խոր դժգոհություն առաջացնել շիաների մեջ և ուժեղացներ նրանց հակաարքայան տրամադրությունները: Ուստի նա դիմեց մի շարժ քայլերի լարվածությունը մեղմացնելու և իր դեմ ուղղված հնարավոր նըլույթները կանխելու ուղղությամբ: Դրանց մեջ ամենակարևորը իր հոր՝ խալիֆա ալ-Մամուլիի, դեմ Ալիի հասան որդու ծոռներ Սուհամմադ և Իրրահիմ իրն Արքայական նորայրների 762-763 թթ. քարծրացուած ապստամբության մասնակիցներին ներում շնորհելն էր: Դա զգալիորեն մեղմացնեց առաջացած լարվածությունը:

Ալ-Մահդիի այդ շատ նորին և լավ հաշվարկած քայլը կանխեց նոր ռազմական քայլու մները շիաների և սուննիների միջև, ինչպես նաև հակաարքայան նոր նըլույթները:

Դրան հակառակ, խիստ անհանգիստ էր դրությունը խալիֆայության արթենչյան շրջաններում, մանավանդ Միջին Ասիայում, որտեղ մեկը մյուսին էին հաջորդում ժողովրդական զանգվածալին ելույթները: Դրանց մեջ առանձնանում է 776 թ. Մելում քանկված ապստամբությունը, որը զյուսավորում էր Յաշիմ իր Յաթիմը: Նա իրեն ներկայացնում էր որպես Արու Սուլահիմի փոխանորդ: Յաշիմն ավելի շատ հայտնի է ալ-Մոււկաննա անվանումով, որը նշանակում է «փակված ծածկոցով», քանի որ նա իր երեսը մշտական փակում էր կանաչ գույնի կոտրու: Եթա կողմանակիցները ալ-Մոււկաննայի երեսը փակելու սովորությունը բացատրում էին նրանով, որ նա դրամով իր կողմանակիցներին խնայում է

անտառների փայլից, իսկ նոր հակածակորդները գտնում էին, որ դրանով նա բացցնում է իր երեսի այլանոյակությունը:

Ալ-Մուկանան աշխի չը ըմբռում իր խոր ատելությամբ հանդեպ Աքքայամները և լայնորեն օգտագործում Արու Մուսլիմի սպանության կազմակցությամբ արևելյան շրջաններում, իրանում և Մակարաննահում, Աքքայամների դեմ կրտսակմաժ խոր ատելությունը:

Նա համուսանում էր Աստծո մարդկանց մեջ անընդմեջ կերպարանափոխության տեսության ջերմ քատագով, ցատ որի, Աստված սկզբում կերպարանափոխավեճը է Մոյամից մինչև Մուհամետայ եղած մարզանների, իսկ ապա նաև առանձին առանց մեջ, որոնց հասուլը առաջեցրուն ունեն:

Այս տեսությունը, որն իրենից ներկայացնում էր գրադաշտակամ, մամերեական և քրիստոնեական ուսմունքների մի խառնուրդ, բավականին լայն տարածում էր գտել այդ շրջանում խալիֆայության, համակայես նրա արևելյան տարածքներում:

Ալ-Մուկանան մի առիրով Սերվում իր շուրջը հավաքելով մարդկանց մի խմբի, ասում է եղանց. «Ես ծեր աստվածն եմ և ամրող աշխարհի աստված: Ես ինձ ինչպես ցանկանամ, այնպես ել կկոչեմ: Ես նա եմ, որ ժողովրդին հայտնվել է Մոյամի տեսքով, իսկ հետո Նոյի տեսքով, իսկ հետո Աքրահամի տեսքով, իսկ հետո Մուկսնի տեսքով, հետո Շիսուի տեսքով, հետո Մուհամետի տեսքով, հետո Արու Մուսլիմի տեսքով, վերջապես, այն տեսքով, ինչպես որ դուք այժմ ինձ ինձ տեսնում եք»:

Նա բավականին մեծ աշխատանք ծավալեց խալիֆայության ընակության, հառեկապես զյուղացիության շրջանում այս ուսմունքը տարածելու և իրեն որպես Աստծո կենապարանափոխականության մարմացու Ծերկայացնելու ուղղությամբ: Եվ պետք է նշել, որ դա զգայինին ըստ բարձրացրեց նրա հեղինակությունը, մանավանդ Մերվում, Քեշում, Նահշերում և այլ վայրերում:

Ալ-Մուկանանի ապստամբությունը տևեց մի քանի տարի, նրա գլխավոր կենտրոններն էին Սերվը, Սողորը, Բույասրան և այլն: Ամրող զյուղեր հաւատափոխ լինելով, ընդունում էին ալ-Մուկանանի ուսմունքը: Բայց, ի վերջո, ալ-Մահեղին հաջողվեց այն ճնշել 783 թ., իսկ ալ-Մուկանան ինքնասպամությամբ վերջ տվեց իր կյանքին:

Խալիֆա ալ-Մահեղին մահացավ 785 թ.: Նա ունեց երկու արև գավակ, Սուսա ալ-Շատին, որը Զուրքանի կառավարիշն էր, և Յարուն առ-Ռաշիդը, որ Պայաստանի և Աղվանից կառավարիշն էր: Ալ-Մահեղին

շատ մտահոգ էր, որ իր մահվանից հետո կարող է գահի հանար արյունացի պայքար սկսվել. եթե ինը չկարողանա կարգավորել գահածանօքության խնդիրը:

Սկզբանական շրջանում նա հակված է եղել խալիֆայի գահը բռնել իր ավագ որդու՝ ալ-Շատիհին, քայլ հետագայում, հավանարար կասկածելով նրա կարողությունների վրա, փոխում է իր մտադրությունը: Ռևտի նա ճանապարհ է ընկնում Ֆուրջան, Նպատակ ուժենալով համդիմանել ալ-Շատիհին և ինչ-որ ձևով փորձել հանողել նրան հրաժարվել գահից հօգուտ իր եղբայր Դարրուն առ-Ռաշիդի: Մակայն նրան չի հաջողվում իրականացնել իր մտադրությունը, քանի որ ճանապարհին, Ֆուրջան չհասած, մահանում է:

Դոր մահից հետո խալիֆայության գահին անմիջապես նստում է ալ-Շատիհ, որը կառավարում է շատ կարծ ժամանակ, 785-786 թվականներին: Նրա կրտսեր եղբայրը, Դարրուն առ-Ռաշիդը, խոհեմուրյուն դրսմորելով, առերես չի վիճակում ավագ եղբար իրավունքները և նրան ճանապարհում է խալիֆա, հայտնելով իր հսկատակությունը:

Քայլ պայքարը եղբայրների միջև չի դադարում: Նա ավելի է սրբում, երբ սկսվում են լուրեր շրջել, թե ալ-Շատիհի նախապատրաստվում է սպանել իր եղբարը և այդ ձևով վերացնել ասպարեզից իր նորամկօցին և գահի գլխավոր հավակնորդին: Խալիֆայությունը կրկին կանգնած էր եղբայրասպանության և ներքին երկաւուակության աօքն, որը կարող էր բռւացնել Աքրասյան դիմաստիայի և խալիֆայության դիրքերը:

Մակայն դնապերի զարգացումն այլ ընթացք ստացավ: Գործին միհամտեց նրանց մայոր՝ Դայզուրանը, որը մեծ կամքի տեր և իր որդիների վրա մեծ ազդեցություն ունեցող կին էր:

Նա ալ-Մահդիի հարճն էր, որին որպես ստրկուի գնալ էին շուկայում ստրկագաճառից: Դայզուրանը, սակայն, շնորհիվ իր գեղացկության, խեցի, խորամանկության և նրան վարվեցողության շահել էր խալիֆայի միրտը և արքունիքում նվաճել ամառարկելի հնդինակություն: Նրա հրամանները և ցանկությունները կատարվում էին ամվերապահորեն:

Մայոր որոշեց վերջ տալ եղբայրների միջև պայքարին և պահպանել խալիֆայության ներքին կայունությունը և խաղաղությունը: Բայց նա ու իրագործեց շատ յուրահատուկ ձևով, որը չի տեղափոխվում «մայրություն» հասկացողության մեջ: Դայզուրանը, ինչ-ինչ պատճառներով, նախապատվությունը տալով իր կրտսեր որդուն, Դարրուն

առ-Ռաշիդին, 786 թ. բունավորնց ավագ որդում՝ ալ-Շահիդին (որոշ տնդեկությունների համաձայն նրան մոր հրամանով խնդրամահ են արնել նրա ստրկուհիները):

Դրանից հետո սկսվում է Ջարուն առ-Ռաշիդի կառավարման շրանց, որն ընդգրկում է 786-809 թթ.:

Աքքասյան առաջին իման խալիֆաների՝ Աքու ալ-Աքքասի, ալ-Մանսուրի, ալ-Մահմետի, ալ-Շատրիի և Ջարուն առ-Ռաշիդի կառավարման տարիները, որն ընդգրկում է մոտ 60-ամյա մի ժամանակաշրջան, Աքքասյան խալիֆայության վերեցի տարիներն են եղել: Նա հասակ իր հզորության և փառքի գագարին Ջարուն առ-Ռաշիդի օրոց:

Ջարուն առ-Ռաշիդը շարունակեց իր նախորդների քաղաքականությունը Աքքասյան դիմաստիայի դիրքերի պահպանման և ուժեղացման ուղղությամբ: Նա այդ քաղաքականությունն իրականացնում էր թե զենքի օգնությամբ, և թե խորամանկությամբ ու նենգությամբ:

Նրա անվան շուրջը ստիղծվել են առասպեսներ, որպես ինաւորուն և ժողովրդի հոգաբերով նուարոց քաջակըրի: Դրանց մեջ կմնորումանան թիման առասպելն է այս մասին, որ Ջարուն առ-Ռաշիդը, իր թե հասուրակ արարի շորեր հագած մամ էր զայսի Բարդարի փողոցներով և քայլերով, ծանրությունով ժողովրդի ծամր վիճակին, ինմանում կառավարությունի կամայականությունների մասին, և համապատասխան քայլերի դիմում նրանց վիճակը բարեւավելու և արդյարություն հաստատելու համար:

Առասպելի ստիղծմանը նպաստել է նաև արդունիցում տեղ գտած և խալիֆայի օյնքական և բարոյական հովանավորությունը վայելող քանաստեղների, երաժշտների և մուսավորականության այլ ներկայացուցիչների սովոր քանակը, որը զբաղված էր նրա անձի, խելքի, ինմաստությամ, ճաշակի, առատածենության անզուսա զովերգությամբ և փառարամությամբ, իսկ նրա մայրածաղաք Բարդարի հօչակել էին աշխարհում իր նմանը ընտեղող քաղաք:

Սակայն մասնագետ-պատմաբանների ուսումնասիրություններ վարուց են ապացուցել, որ այդ բոլոր գեղեցիկ հերիար է և իրականության հետ ոչ մի ընդհանուր քամ չունի: Այդուհանո՞նք, առասպելը շարունակում է փոխանցվել մի սերնդից մյուսին:

Իրականում Ջարուն առ-Ռաշիդը եղել է մի դաժան կառավարող, որի ժամանակ ավելացած հարկերը և խստացած նրանց զանումը կայսրության ժողովուրդներից: Ժամանակակիցների վկայությամբ, նրա օրոք հարկատու խավերից բանագանձված մնջացանակ ուկին և արծա-

քց, բնամբերքը և այլն. հեղինակ նման հրատակ էին Քաղյաղ, խալիֆայի տնօրինության տակ: Արդունիքը վեր էր ածվել մշտական խնդրությունների և վայելքների մի կենտրոնաւություն:

Դարստությունը կենտրոնացված էր Դարուն առ-Ռաշիդի և նրա մերձակորագույն խորհրդականների մեջություն: Դրանց մեջ աչքի էր ընկերում և նրա նայող, Դայզուրամն, որի տարեկան եկամուսու հասնում էր 160 միլիոն դրահմանի, որը ժամանակի համար մի վիթիսարի գումար էր: Ծավալությունը, աճիմաստ նվիրատվությունները սրվորական երևոյց էին Դարուն առ-Ռաշիդի արքունիքում: Խնճույքներից մեջ ժամանակ, Դարուն առ-Ռաշիդը շատ հավանելով երգիչներին, նրանց է նվիրում պատական գամճարանում տվյալ պահին գտնվող ամրող գումարը՝ 6 միլիոն դրահման: Նման նվիրատվությունները եզակի չեն:

Դրա հետ միասին, նա, անշուշտ, աշքաբոր չէր անում իր իշխանությունն ամրապնդելու, և իր դեմ հնարավոր մարտահրավերները կանխելու հարցերը: Այդ նպատակով նա, թերևս, առաջին Արքայան խալիֆան էր, որ մնեց ուշադրությունը դարձնեց նույսուման հոգևոր առաջնորդությունը՝ աջակցությունը և քաղաքական օժանդակությունը շահելուն: Նրանք խալիֆայից ստացան մեծ հրաժարաժիմներ, կավաճքներ և դրամական նվիրատվություններ: Ըստունակելով իր այդ գիծը, խալիֆան իր արքունիքում մնեց տեղ հատկացրեց աստվածարան-ուլունմերին:

Ի դիմաց խալիֆայի նման քարեհամ դիրքորոշման, մուտքաման հոգևոր առաջնորդները և ուշեմներն ամեն կերպ աջակցում էին Դարուն առ-Ռաշիդին ամրապնդելու: Իր իշխանությունը և Արքայան դիմաստիայի տիրապետությունը խալիֆայության ամրող տարածքում: Եվ խալիֆան, ի դեմ մուտքաման հոգևորականության, կարողացավ ընդլայնել իր տոցիալական հենարանը:

Դարուն առ-Ռաշիդի քաղաքականության մյուս կարևոր գներից մեկն է այն էր, որ նա ջանում էր գգույշ քաղաքականություն վարել շիաների նկատմամբ, չգրգռել նրանց, փոքր հարցերում ընդհատաքել և քավարարել նրանց պահանջները:

Քայլ, այդուհանունություն, խալիֆայի ծննդարկած քայլերը չկանխեցին և չէին էլ կարող կանխել մոդովորական հուզումները: Դրանց հիմնական պատճառն անընդհատ աճող հարկերն էին և դրանց գանձման դաժան մերուդները: Այդ հորին վրա ըմբռուստանում էին գլուղացիները, քաղաքի արհեստուավորները և ընդհանրապես խալիֆայության աղքատ խավերը:

798 թ. ապստամբեցին Սիստանի գյուղացիությունը և արհեստավորությունը Շամզա իրն Արքակի զյանավորությամբ: Ապստամբությունը ճնշելու համար ուղարկված խալիֆայի գործերը պարտություն կրնցին և ժամանակավորապես նահանջեցին: Արքակի առաջին և ամենակարնոր քայլն եղավ այն, որ նա ընդհանրապես դադարեցրեց հարկերի գանձումը Սիստանի մուտքված քնակչությունից: Սակայն այդ որոշումը չէր տարածվում ոչ մուսուլման քնակչության վրա, որը, քնակչությար, բուլացնում էր ապստամբների շարքերը: Խալիֆայական գորքերին, ի վերջո, հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը:

Սակայն Շարուն առ-Ռաշիդի համար ավելի մեծ սպառնալիք էր 806 թ. Խորասանում քոնկված ապստամբությունը, որը զյանավորում էր արաբական գրահրամանատար Ռաֆի իրն Լայսը: Նա այդ տարածաշրջանի երեմնի կառավարիչ Նասր իրն Սայյարի բռն էր: Շարուն առ-Ռաշիդը, որ տեղյակ էր տեղի քնակչության դժգոհության մասին և ցանկանալով կանխել հնարավոր եղույթները, դեռև 805 թ. այցելել էր Մավրաննահիր: Բայց այդ այցը դրական արդյունքներ չտվեց: 806 թ. Ռաֆի իրն Լայսը, այն բանից հետո, երբ նրան հաջողվեց իր հրամանատարության ներք հավաքել տեղի պարսիկ և բռնը քնակչության զգալի գանգվաճներ, բարձրացրեց ապստամբության դրոշը, որի կորիզ կազմում էր գյուղացիները և արհեստավորները իրենց տղիալ-տնտեսական վիճակը բարեւավելու պահանջներով: Ապստամբների թիվը հասնում էր 100 հազարի:

Շարուն առ-Ռաշիդը նրանց դեմ ուղարկեց 20 հազարանոց մի գորախումբ, որը սակայն պարտություն կրեց: Ապստամբները 808 թ. գրավեցին Սամարյանը, որը մեծ հաջողություն էր նրանց համար:

Սամարյանոի անկումը մեծ կորուստ էր խալիֆայության համար, որը կարող էր նպաստել ապստամբության հետագա ծավալմանը և նրա շարժերի համալրմանը նորանոր ուժերով: Այդ բանը լավ էր հասկանում Շարուն առ-Ռաշիդը: Ուստի նա որոշեց անձամբ դեկավարներ ապստամբությունը ճնշելու գործողությունները: Խալիֆան մի մեծ բանակի գլուխ անցած շարժվեց ապստամբների դեմ: Սակայն ճանապարհին նա հիվանդացավ թուսում և հենց այսունակ էլ մահացավ 809 թ.:

## 2. Փոփոխություններ և նորամուծություններ Խալիֆայության հայեցակարգում և պրակտիկայում

Աքրասյանների տիրապետության ժամանակաշրջանում տեղի ունեցան մի ամբողջ շարք կարևոր փոփոխություններ, այդ թվում և սկզբունքային բնույթի: Օմայյան խալիֆայությունից ժառանգելով որոշակի համակարգ, Աքրասյաններն այնուամենայնիվ, մտցրեցին տարաբնույթ փոփոխություններ, որոնք պայմանավորված էին նոր իշողություններով և բխում էին նրանց դիմաստիական շահերից և ժամանակի ոգուու:

Օմայյաններին, ինչպես արդեն նշվել է, մուսուլմանական ավագանին և աստվածարան-ուլիմները մնայորում էին, որ նրանք պետական կարգի և նրա բնույթի հարցում հեռացել էին Սուհամանադ մարզարինի և առաջին ուղղափառ խալիֆաների կողմից հաստատված սկզբունքներից և խալիֆայությունն աստվածապետությունից վերածել աշխարհիկ պետության: Նրանք Օմայյան վերջին խալիֆաններին անգամ մեղադրում էին անաստվածության մեջ: Դա շատ ծանր մեղադրանք էր, որն իր դերը խաղաց Օմայյան խալիֆայության բացասական կերպարի ստեղծման, իսկ առա նաև կործանման գործում:

Գալուք իշխանության, Աքրասյանները հաշվի առան այդ հանգամանքը և առաջին օրվանից շշչում էին հավատարմությունը մարզարինի հաստատած սկզբունքներին և ընդգծում իրենց խալիֆայության աստվածապետություն լինելու պարագան: Մասնավորապես ընդգծվում էր խալիֆայության կորոնական բնույթը: Խալիֆաններն ամեն մի առիր օգտագործում էին հայտարարելու իրենց հավատարմությունը Սուհամանադ մարզարին կողմից հոչակված և ալ-Կորանում ամրագրված աստվածապետության սկզբունքներին:

Այս նոր մուտքաման արդյունք պետք է համարել խալիֆանների կողմից մուսուլման հոգևորականության մկանմամբ ցուցաբերած նյութական հոգատարությունը, մանավանդ Քարուն առ-Ռաշիդի ժամանակ, երբ մուսուլման հոգևոր առաջնորդներն օժտվեցին հողային կայվածքներով:

Դրա արտահայտությունն էր նաև այն հանգամանքը, որ խալիֆանները իրենց շրջապատել էին մուսուլման աստվածարան-ուլիմներով, որոնք պատվավոր տեներ էին գորավում խալիֆայական արքունիքում:

Աստվածապետությանը նվիրված և հավատարիմ լինելու հարցում Աքրասյաններն այնքան հեռու գնացին, որ փաստորեն փոփոխու-

բյան ենթարկեցին անգամ խալիֆաների վերաբերյալ բանածեց, որ հաստատվել էր Մուհամմադ մարզարեկին հաջորդած առաջին խալիֆա Արու Բագրի և նրա հետմորթների կողմէց: Ըստ այդ բանաձևի, խալիֆան համարվում էր մարզարի վուխանորդ՝ «խալիֆա ռասուկ Ալլահ»:

Սակայն Արքայան խալիֆաների օրոց, ճամանակորդապես Մուրավարի խալիֆայից սկսած (847-881 թթ.), խալիֆաների անունն սկսվեց ուղղակիցորեն կապվել Ալլահի անվան հետ: Նրանց սկսեցին կոչել «Խալիֆա Ալլահ», այսինքն «Աստծո վուխանորդ»: Բայց կարծեն թե սա էլ բավական չէր, նրանց սկսեցին կոչել «Զիկ Ալլահ ալը ալ-արիշ», որը նշանակում է «Աստծո ստվերը երկրի վրա»: Եվ Արքայան խալիֆաները մինչև վերջ, մինչև իրենց անկումը, որ տևելի ուժգուակ 1258 թ. կրում էին այդ տիտղոսը:

Այս համգամանքը կարևոր դեր էր եր էր խալիֆա Արքայանների հետինակիրյան քարձրացման և դիրքների ամրապնդման գործում ոչ միայն ամրող խալիֆայության տարածքում, այլև ամրող ժուտութանական աշխարհում:

Արքայանների ժամանակ հստակեցրյան նույնից նաև մի այնպիսի կարևոր հարցում, ինչպես իշխանության աղջուրի հարցն է: Արքայան քարոզչորդներ, ուշնամերը և Արքայան այլ զաղափարախումներ անառարկելիորեն ընդգծում էին, որ իշխանության աղջուրը, կամ, ինչպես իրենք էին նաև ընտրություն կոչեն, շատրվանը, քաղաքական, իրավական, ռազմական և հրօնուր-կրթանական իշխանությունների միաև աղջուրը խալիֆան է: Եվ քանի որ խալիֆայի անունն ուղղակիրութեան ամպլիւդում էր Ալլահի հետ և նա համարվում էր նրա վուխանորդը և ստվերը երկու վրա, պայմանագիրը պահպանությունը դառնում էր աստվածացին ծագում ունեցող երևույթ: Եսկ դրանից, իր հերթին, ընտում էր, որ խալիֆայի դեմ ուղղված ամեն տեսակի ելույթներ և ընդլայնումներ անօրինական էին և ոյ աստվածահաճ:

Արքայանների օրոց, ինչպես արդեն նշվել է, խալիֆայության քարոզական կենտրոնը Միջիայից տեղափոխվեց Միջազգեալոր, Իրաց: Սակայն սիսակ կցիներ ու դիմուլ տուն աշխարհագրական տեղաշարժ: Նա ուներ խորքային որդուպատճեններ, որոնցից կարևորները երկրում էին:

Սուաշին, տեղաշարժը կապված էր արաքալական իրավականության հետ, որոնք միջցւելային հակամարտության և դիմակայության հետ, որոնք հաճախ վերածվում էին արյունալի բախումների: Արքայանները գենետիկորեն պատկանում էին արաքալական իրուժական ցեղախալքին, որի

կենտրոններից էր Միջազգետք-Իրաքը. մինչդեռ Սիրիան համդիսանում էր արարական հարավային ցեղախմբի կենտրոններից մեկը: Տեղափոխվելով Իրաք և այստեղ հիմնելով Բաղրադը որպես խալիֆայության մայրաքաղաք. Արքայանները ոչ միայն ապահով միջավայր էին տնօղաշարմում, այլև քաղենիքաց հայտարարում, որ իրենց հենքում են իրենց հարազատ հյուսիսային ցեղախմբի վրա:

Դրանով Արքայանները զգալիորեն ամրապնդեցին իրենց սոցիալական հեմարանը և իշխանությունը:

Եկրորդ, Սիրիան իրենց այսուան Օճայյանների քաղաքական կենտրոնը և հենակետն էր Ծիշու է, Օճայյանների տիրապետության վերջին տարիներին հարաբերությունները նրանց և աիրիացինների միջև միշտ չեր, որ հարթ էին, բայց, այդուհանդեռն, Սիրիան ննում էր Օճայյանների հենակետոց:

Տապալերով Օճայյան դիմաստիան, Արքայանները, ընականաբար, չեն կարող Սիրիան դիմումներ իրենց համար հուսալի և ապահով տարածք: Նրանք ուա լավ էին հասկանում և պատահականություն չեր, որ Արռ ալ-Արքասը հր խալիֆա հօչակվելու ամբողջ ծիսակատարությունը կատարեց իրացրան Կուֆա քաղաքում:

Ուրիմն այդ բողոքից կարմի է նզրակացնել, որ Արքայանների ժամանակ խալիֆայության կենտրոնի տեղափոխումը Սիրիայից Իրաք իրագործվել է ոչ թե պատահականորեն կամ քնահաճորեն, այլ գիտակցարար, քաղաքական նկատառումներից նկնծվել, որի հիմքում ընկած էին ցեղային-գենետիկական պատկանելիության, սոցիալական հուսալի հենարանի և ապահովության առանձքային դրդապատճանությունը:

Արքայանների ժամանակ տեղի ունեցավ մի կարուր փոփոխություն ևս, կապված նրանց սոցիալ-համայնքային կողմնորոշման հետ: Դադրանակ տանելով տարատեսակ ուժերի նկատմամբ, այդ բվում և շիաների, նրանք որոշեցին, որ հասել է ժամբ կողմնորոշվելու ոչ թե կրնկրեն այս կամ այն սոցիալական հավը, այլ ջամաան, այսինքն ամբողջ մուսուլմանական համայնքը, համենայն դեպք նրա քաջարծակ մեծամասությունը կազմող սունիները: Զամաայի մեջ, անկասկած, մոնում էին նաև շիաները, որոնք Արքայանների հետ համագործակցելու ցանկության դեպքում, ըստ որը մոտեցման, կարող էին ստամալ այդ հենարավորությունը:

Զամաայի սկզբումը, որ հօչակեց խալիֆա ալ-Մանաւրը, հենարավորություն էր տալիս նրան իր կողմը գոավել սունի մնամասու-

Բյանը, որը կազմում էր նաև ընդհանրապես մուսուլմանների մծամասնությունը: Ալ-Մանսուրի այդ հեռատես և լավ հաշվարկված քայլով, շխաները դրվեցին երկընտրանքի առջև: Նրանք որպես ջամաայի, մուսուլմանական համայնքի անդամ, կամ պետք է ընդունեին Արքայամանների օրինական, լեզվիմ լինելը և այդ հորի վու համագործակցելին նուանց հետ, կամ էլ մերժելով դա, իրանց հակառարելին ամբողջ ջամաային, մեկուսացվելին և զրկվելին մուսուլմանական այլ խմբավորությունների աջակցությունը: Ծիաները գնացին երկողորդ ճանապարհով և իրենց դրեցին ծանր դրուրյան մեջ, ավելի կոնկրետ, նրանք փաստորեն մեկուսացվեցին մուսուլմանական ջամաայից, ծանական Արքայամանների դեմ մղվող պայքարում:

Դրա վորհսարեն, ալ-Մանսուրը կարողացավ նվաճել սուննիների համակրանքը և աջակցությունը: Դեռ ավելին, նա հնարավորություն ստացավ իրեն ներկայացնել որպես ամրող մուսուլմանական ջամաա-համայնքի ներկայացուցիչ, որն, անշուշտ, Արքայամանների նոր քաղաքականության կարևոր նվաճումներից մեկն էր:

Արքայամանների տիրապետության շրջանում, նաևնավորապես առաջին հիմունամյակում, տեղի ունեցավ սկզբունքային բնույթի մի կարևոր փոփոխություն ևս: Դա պարսիկների դերի աննախադեպ մծանալը էր խալիֆայության ներսում: Նրանք խալիֆաների ռուկտվությամբ և հոգածակորությամբ գրավեցին շատ կարևոր դիրքեր խալիֆայության պետական, քաղաքական, տնտեսական, կրոնական, ուսագույն և մշակուրային համակարգում:

Սասանյան Պարսկաստանի կառավարական համակարգը, պալատական Շիխութուկացը և արարողակարգը դարձան իդեալ Արքայաման խալիֆաների համար, որոնք այդ ոգով համապատասխան փոփոխություններ մտցրին խալիֆայությունում: Նրանք պարսկական շահերի նման սկսեցին կառավել շքնոր պալատներ, աստիճանաբար հրաժարվելով թեղմինական պարզունակ, ոչ հավակնու ասցելածնից, անձնատուր եղան պերճանքին և գոլիությանը, շատ կողմերով անզամ գերազանցելով Սասանյան ինքնականներին:

Չափազանց մեծացավ պարսկական Ֆեռուալական արխառության դերը խալիֆայության պետական կառավարման համակարգում: Նրանց ներկայացուցիչները գրադարձնում էին ամենակարևոր պետական քարոր պաշտոնները:

Նրանց մեջ առանձմնությունը Բարձրագիմների ընտանիքը, որը մոտ կես դար առաջնակարգ դերակատարություն ունեցավ Արքայան խալիֆայության կառավարման գործում: Նրանց վերելքը սկսվեց խալիֆա Աբրու ալ-Աքքասի, ապա այլ-Մանսուրի ժամանակ և իր հզորության գագաթնակետին հասավ Դարրուն առ-Ռաշիդի օրոց: Աքքասյան առաջին երկու խալիֆաները եղախտապարտ էին նրանց այն օգնության համար, որ նրանք ցուցաբերել էին Աքքասյաններին Օմայյաների տապալման և իշխանության գայու համար:

Աքքասյաններին օգնության մեջոց մեկնած առաջին Բարձրագիմն Խալիֆ Իբն Շարմարդ էր, որի հայրը քուղայական պազողայի՝ տաճարի գուրը էր (քարմակ կամ պարմակ նշանակում է հոգևորական, քուրմ): Տաճարը կործանվել էր արաբների կողմից Խորասանը գրավվելու ժամանակ և Բարձրագիմները տեղափակվել էին Բասրա, որտեղ և ընդունել էին խալած, դատանալով մակալի:

Այլ-Մանսուրը ի հատուցումն Բարձրագիմների իրենց ցուցաբերյած օգնության, խալիֆ Իբն Շարմարդին նշանակում է Ֆարսի և Թաքրարստանի կառավարիչ:

Խալիֆի մահից հետո Բարձրագիմների ընտանիքը զլյամվորում է նոր որդին Յահյա իբն Խալիֆը, որին Պարուն առ-Ռաշիդը նշանակում է Խալիֆայության ամենակարևոր նահանգներից մեկի. Արևելյան շրջանների կառավարիչ, որը սովորաբար խալիֆայությունում հաճարվում էր շատ կարևոր պաշտոն: Խալիֆաները սովորաբար Արևելյան շրջանների կառավարիչ նշանակում էին իրենց հավատադիմ և նվիրված մարդկանց:

Բարձրագիմների ընտանիքի զլյամվոր Յահյա իբն Խալիֆը շուտով գրավում է ավելի բարձր պաշտոն: Պարուն առ-Ռաշիդը նրան նշանակում է վագիր և փաստորին նրան վստահութ նըլիրի կառավարութեալ: Պետական ոչ մի կարևոր քայլ չէր կատարվում առանց նրա զիստության և հավանության: Պարուն առ-Ռաշիդը, որը նրան հաց էր անվանում, նրան էր վստահել անգամ իր անծնական կնիքը, որը չլաված քան էր: Տահյայի լայն լիազորությունների նաևին է վկայում նաև այն փաստը, որ նա էր ընդունում և լսում նրանց, ովքեր բռնորներ ունեին և դժորն էին ինչ-որ հարցերում: Սովորաբար դա խալիֆաների առանձնաշնորհն էր: Բացի այդ նա ակտով մասնակցություն ուներ լայնածավալ խալիֆայության տարրերը շրջանների տնօղական կառավարիչներին՝ կուսակալնե-

թին նշանակեցու և ազատ արձակելու գործում: Փաստորեն Յահյա Բար-Մարին խալիֆայի ոչ թե տպորական խորհրդատուն էր, այլ ազ ծնողը:

Կարևոր պաշտոնների թին գրավել և նշանակալի դերակատարում ունենալ նաև Յահյա իբն Խալիֆի նոլոր որդիներից՝ Յաղը և Զաֆարը:

Անուրանալի է Բարիմարիների և կառավարման մյուս օդակմերում քարոզ պաշտոններ գրաված այլ պարսիկ բարձրաստիճան պաշտոնյաների դերը խալիֆայության կայացման, բարգավաճման և պիտական շնչարարության ընագավառում:

Պարսիկները հնուտ էին ոչ միայն պիտության կառավարման, այլև տնտեսական, անզամ ռազմական մարզերում: Նրանց թիվը զգալիորեն անցեց նաև բանակում, որի շարքերում նրանք ծառայում էին: Դեռ ավելին, խալիֆայական թիկնապահ զորախումը սկզբնական շրջանում կազմված էր, եթե ոչ բացառապես, ապա գլխավորապես խորասանցիներից:

Պարսիկ պիտական պաշտոնյաների, գիմվորականների, առողջության պահապետների և ընդհանրապես պարսկական տարրի դերի անձան հետևանքով բուլացան արարական տոհմիկ արիստոկրատիայի դիրքերու խալիֆայության բոլոր օրգակմերում:

Հօգուտ պարսկական տարրի տեղի ունեցած փոփոխությունները իհմք են հանդիսացել առաջ քաշելու այն տեսակետը, որ խալիֆայությունը Աքրայանների ժամանակ կորցրել էր իր արարական ընույթը կամ այդ ընույթը գուտ ծնական էր դարձել, և խալիֆայությունը վերածվել էր համախամական պիտության՝ պարսկական որոշակի նրանգով:

Այդ տեսակետն առավել ընդգծված ձևով է դրսորվել արար պառումարան Ֆիլիպ Շիթբիի մոտ: Նրա կարծիքով այն քամից հետո, երբ պարսիկները գրավեցին գլխավոր պաշտոնները կառավարության մեջ, իսկ խալիֆայական թիկնապահ զորախումը դարձավ Խորասանի պարսիկների գորագունդը. «Արարական տոհմիկ արիստոկրատիան փոխարինեց պաշտոնյաների աստիճանակարգով, որոնք ներկայացնում էին խալիֆայությունում բնակվող ռասաների ամբողջ զաման: Սուսուլմանները և օստարերլցիւ նոյն հավատադիմները (այսինքն Խալամը նոր ընդունածները — Ն. Դ.), սկսածին սերտաճել և տարրակալունելի մեջ մրսի մեջ: Արարիզմն ընկալի, բայց Խոլամը շարունակելից և միջազգային հսկամի դեկապարության ներքո Իրամիզմը հարթականորեն մտավ ներս»:

Այս տեսակետի մեջ, անշուշտ, կա ճշմարտության հաստիկ: Պարսկական տարրը, իրոք, առաջին պլան էր եկեղեց և տուանձնութ կարնոր դերակառարութ խալիֆայության պետական կյանքի համարյա բնորդ ու լորտունքը: Մակարն արդյո՞ք դա այն աստծանի էր, որ իհմք տար պնդելու արաթականության անկման, խալիֆայության արաթական բնույթի կորուստան և, ըստ Եռևյան, համայսլամական պետության վերածմամ, պարսկական ընթացված քնույթով: Կարծում ենք, որ այստեղ ակնհայտ է չափազանցությունը, քանի որ խալիֆայությունը, այդուհանդերձ, դեռևս շարունակում էր մնայ Արաթական:

Պարտկական տարրի առաջնակարգ դերակառարութ դժկամուբամբ էր ընդունվում արագների, հատկապես ցեղային, տոհմիկ արխատուկառիսայի կողմից: Այդ հորիշ վրա խուլ դժգոհություն էր կուտակվել, որը պատճի ատիրի դեպքում կարող էր պայթել և վուանգավոր հետևանքներ ունենալ խալիֆաների համար: Բացի դրամից, Բարմարինը սկսեցին իրենց իմբնուրուն խառը խաղալ Պարսկաստանում, որին նրանք, որպես պարսիկներ, մի առանձին համակրանքով և գործվանքով էին վերաբերվում, իսկ առանձին դեսպանում ավելի մեղմ, քան թե խալիֆայության մյուս, ոչ պարսկական շրջաններին:

Այս բոլոր մտահոգում էր Պարուն առ-Շաշիդին, որը տագնապով էր հետևում Բարմարիների հօգորացմանը: Նրա մեջ վախ էր առաջացնում նաև այն պարագան, որ մի ընտանիքը ծեսքում այդքան մեծ իշխանություն էր կենտրոնացված: Եվ նա որոշեց վերջ դնել այդ ամենին:

803 թ. Պարուն առ-Շաշիդի իրամանով Յահյա իբն Խալիդը և նրա նաևլ որդին ննրակալվեցին և քանոն նետովնեցին, որտեղ նրկուսն է մահացան: Խև Յահյայի մյուս որդին, Զաֆարը, որը Պարուն առ-Շաշիդի կարմեջայրը էր և այդ պահին հանդիսանում էր նրա խորհրդականը, զիմաստվեց: Նրա մարմնից անջատված գլուխը գուցադրվեց Բաղրամի մի կամքջի վրա, իսկ երկու մասի թաժանված մարմնինը Բաղրամի երկու այլ կամուրջների վրա:

Յարուն առ-Շաշիդի այդ քայլով, որը շատերի համար անսպասելի էր, արմատախիլ արվեց Բարմարիների ընտանիքը, որը միաժամանակ ծանր հարված էր պարսկականությանը Աբբասյան խալիֆայությունում:

Աբբասյան խալիֆայության կառավարման շրջանում, հատկապես սկսած խալիֆա Մամրունի (833-842 թթ.) գահակալության տարիներից, ակտիվացավ, ապա բարձրացավ նաև մեկ ոչ արաթական եր-

նիկական տարրի՝ բուրցերի դերը: Դա կապված էր առաջին հերքին խալիքայական բուրցական գվարդիայի ծնավորման հետ:

Ինչպես հայունվեցին նրանց խալիքայական գվարդիայում:

Դրանց հիմնականում գերի բուրցեր էին, որոնց գնդապում էին խալիքայական կուսակալները Սմու Դարյայի և Սիր Դարյայի սահմանամերդ շրջաններում մշկող պատճերազմների ժամանակ: Գերի ընկած բուրցերին անմիջապես ստրկացնում ն վաճառում էին տարբեր շուկաներում, մասնավորապես Միջին Ասիայի և սահմանամերձ Իրանի: Անս այս գերիների մը մասց հայունվեց խալիքաների գվարդիայում: Դա բացատրվում է մրանուկ, որ գերւարված բուրցերը հնագանդորն էին կատարում բոլոր հրամանները և ազդի էին ընկույտ իրենց դաժանությամբ:

Տրանց դրսից քննված էին և ոչ նի կապ չունեին տեղական բնակչության հետ, հետևաբար խալիքաների հրանամները կատարելիս նրանց կաշկանդոր որևէ հանգամանց գոյություն չունեի: Տեղական բնակչության մեջ արդատներ շրմնեցր բուրցերը պատրաստ էին անհայտ դաժանությամբ արյան մօց խեղդել հակախալիքայական նլույթները: Այս պարագան շատ վճռորոշ դեր խաղաց խալիքայական գվարդիան բուրցերով կազմակերպ խնդրում:

Խալիքաների հարաբերությունները պարբռաբար լարվում էին Բաղրամի թնակիչների հետ, Ծովնիսկ այն աստիճաննի, որ անվտանգության նկատառութենարով նրանց երթեն հեռանում էին նայրաբաղարից: Արդպես վարվեց, օրինակ, խալիքա Սամունը, որը սարսափած բարդադիմների դժգոհությունից, հեռացավ Բաղրամից և հաստավեց Ասմարդայում: Այստեղ նա իր պալատից ու հեռու կառուցեց նոր գորանցներ, որոներ տեղակերեց իր բուրցական գվարդիան: Այսպիսով, բուրց գվարդիայականները դաշտն էլու հնագանդ, սակայն դաժան գործիք խալիքաների ծննդում:

Անս այս ճամապարհով Բաղրամում մկնեց աստիճանաբար կուտակվել բուրցական չքննիկական տարրը, որը այնքան հգորացավ, որ գորանցներից դուրս գալով, արդեն միջամտում էր խալիքայության ներքին գործերին:

Տակատագիրի հեղեանքով խալիքաներն իրենց խաղալիք դարձան բուրցական գվարդիայի և նրա բուրց գոյամիանանատարմների ծննդում: Այս վերջիններս այնքան հգորացան, որ կարողանում էին տապալել իրենց համար անցանկայի խալիքաներին, անգամ սպանել

նրանց, և գաի վրա նստեցնել իրենց ձեռնորու, թուլամորթ և կամագուրկ Արքայաններից որևէ մեկին:

### III. ՊԵՏԱԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՆՈՐԱՄՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արքայանները Օմայյաններից ժառանգեցին պետական-կառավարական ողոշակե համակարգ, որը գործել էր մոտ 90 տարի: Արդեն Օմայյանները գգում էին, որ այդ համակարգը հստակ չի գործում և յի ապահովում պետական ներքենայի անխափան գործունեությունը, մասնավանդ իշխանության խիստ կինուրունացման և հովայածավալ կայսրության ներդաշնակ կառավարման առումով: Սակայն մշտական նրկապահություններն Օմայյան ընտանիքում, զայի վրա խալիֆանների արագոներաց փոփոխությունները, ինչպես նաև ավելի շատ աշխարհիկ կյանքի հաճուքներին, քան ոք երկրի կառավարմանը ժամանակ հատկացնելը և ուշադրությունը դարձնելը, նրանց հնարավորություն չտվեց ոիմեկ գործնական քայլերի:

Արքայանների առջև կանգնեց կառավարման համակարգում լուրջ փոփոխություններ մտցնելու խնդիրը, կանգ չառնելով անգամ նորամությունների ամրաժեշտության առջև:

Ինարկե, սրանից շաբաթը է օգոստացնել, քանի Արքայանները իրաժարվեցին այն ամենից, ինչ տանըթե էին Օմայյանները, և ամեն ինչ փոխարինեցին նորներով: Երանք դեռ նետնեցին միայն այն, ինչն այլև չեղ ծառայում իշխանության ամրապնդմանը և խալիֆայության կառավարման բարեկամմանը: Ելենիով այդ իհմնախմուրից, նրանք մի շարք ինստիտուտներ պահպանեցին, սակայն դրանք բարեփոխեցին, նրանց ֆունկցիաները կատարենլագործեցին և հարատացրին նոր բռվանդակությամբ, իսկ մի շարք ինստիտուտներ էլ բռնորովին մոյ առողջեցին:

#### 1. Խալիֆա

Արքայանների, ինչպես և Օմայյանների ժամանակ, պետության գլուխը համարվում էր խալիֆան: Սակայն Արքայանների օրոք ավելի էր ընդգծվում խալիֆայության աստվածապետություն լինելու պարագան: Նա իրենից ներթայացնում էր միջնադարին բնորոշ ֆեոդալական

աստվածապետական ինքնակալություն: Խալիֆայի իրավունքները և լիազորությունները ոչնչով չեն սահմանափակված:

Արքայան խալիֆաներն առաջին օրվանից ընդունում էին իրենց իշխանության և խալիֆայության լորունակամ բնույթը, այն դիտարկելով որպես մի իմամաթ իմամություն: Դենք այս հանգամանքը հնտապայում հիմք հանդիսացավ, որ Արքայան խալիֆաները, ի տարբերություն Օմայյաների, կոչվեն ոչ թե Ալլահի առարյալ Մուհամմադի փոխանորդ՝խալիֆա, այլ ուղղակի Ալլահի խալիֆա, իսկ ապա նաև Ալլահի ստվերը երկրի վրա:

Արքայան խալիֆաները, ըստ սուննիակամ պետական իրավունքի դրույթների, մարդմավորում էին և աշխարհիկ և հոգուր իշխանությունը, եռա բոլոր ճյուղերը՝ խալիֆան հանդիսանում եր իշխանության միակ աղյուսը, սրբագրությամբ Կորանով և շարիաթով:

Նա լիմերով իշխանության բոլոր չորս ճյուղերի՝ քաղաքական, դատակամ, ուսումական և հոգևոր, մարմնավորույթ, կարող էր դրանց իրականացնումը, քացածությամբ հոգևոր-կորոնականի, փոխանցեց-լիազորեց կամ հանձնարարել, իր ընտրությամբ, հանգաւառախան բարձրաստիճան պաշտոնյայի: Արքայան խալիֆաներն աստիճանաբար քաղաքացիական իշխանության իրավունքում հանձնարարեցին վայերին, դատականը՝ կաղին և ուսումականը՝ ամիրին: Սակայն դա չեղ նշանակում, որ իշխանությունը անցավ նրանց ձեռքը, այլ լոկ դրա կատառումը, իրազործումը, քանի որ խալիֆան իր ծնուցում էր պահում ամրությ իշխանությունը, նրան էր պատկանում վերջին խոսքը և նա էր միակ գերազանց իրավաբարբարը:

Իսկ ինչ վերաբերում է հոգևոր իշխանությանը, ապա այս հարցում խալիֆաները ոչ մի նորամուծության չոփնեցին, նրանք իրենց լիազորությունն այս բնագավառում չփոխանցնեցին որևէ մեկին, այլ ամրությունամբ պահեցին իրենց ծեռքում:

Արքայան խալիֆաները, ի տարբերություն Օմայյաների, չափազանց մեծ ուշադրություն էին դարձնում իշխանության կենտրոնացմանը և խալիֆայության տարբեր շրջանների վրա հոմքության ուժեղացմանը: Երանց մկնեցին նրանից, որ սահմանափակեցնեցին տեղական կառավարիչների և գորակութանառների իրավունքներն ու պարտականությունները, և ուժեղացրին նրանց կախվածությունը կենտրոնական իշխանությունից:

Եթե Օմայյաների ժամանակ տեղական կառավարիչները փաստութիւնն ինքնուրույն էին և տեր ու տնօրին իրենց իշխանության ներքո գտնվող կուսակալություններում, ապա Արքայանները դրան վերջ տվեցին, հասնելով նրանց լիակատար ներակայությանը խաղաղ ճանապարհով, իսկ ի հարկին նաև զենքի միջոցով՝ Դրա շնորհիվ, հատկապն առաջին Արքայան խալիֆաների ժամանակ, ամրապնդեց ուղղածից իշխանությունը և նվաճեց իշխանության կենտրոնացնան նոր, ավելի բարձր մակարդակ:

Իշխանության կենտրոնացմանը միտված քաղաքականությունն անհնար էր իրականացնել և հասնել դրական արդյունքների առանց կառավարող նոր դասի՝ բյուրոկրատական խավի ծնավորման, որն ընդհանրապն մինչ այդ որպես այդպիսին քացակայում էր խալիֆայության կառավարման համակարգում:

Իշխանության կենտրոնացման և վերահսկողության պահանջից կյանքի կոչվեց ասյան կոչված «քաթիրների» ազդեցիկ դասը: «Քաթիր» արաբերեն նշանակում է գրող, սակայն այս դեպքում դա ծեծը քերաց նաև նոր՝ ցարությարի իմաստ: Նրանք նստած էին հասուլ առյաններում և մարմիններում, որոնք կոչվում էին դիվաններ, և նստագույնն ամեն ինչ հաշվի էին առնեմ և վերահսկում ամրուց խալիֆայության տարածքում և այդ ճասին տեղյակ պահում խալիֆային կամ նրա խորհրդականներին: Խալիֆան քաթիրներին սահմանափակ չափով վիճանցեց գործադիր իշխանությունը, նրանց, սակայն, պահելով խիստ հակողության տակ:

Բյուրոկրատական ապարատի և դասի ծնավորումը մեծապն նպաստեց կենտրոնածից իշխանության ուժեղացմանը Արքայան խալիֆայությունում:

Քաթիրների մեջ նաև համայրվեց մավալներից, պայմանը համեմատարար նոր դավանափոխ եղած և խաչամ ընդունած խավերից, որոնց մեծամասնությունը կազմում էին իրանցիներ: Դա քացատրվում է երկու հանգանանքով:

Սուաջին, Արքայան խալիֆաների համար պետական կառավարման տիպար էր հանդիսանութ Սասանյան Պարսկաստանը, որի ուներ խիստ կենտրոնացված կառավարման համակարգ և գործառու ու գրագետ բյուրոկրատական: Եվ նրանք շատ բան վերցրեցին Սասանյան պետական բյուրոկրատական մեքնայից: Այդ պատճառով էլ Արքայան խալիֆաներն իրենց բյուրոկրատական ապարատը ստեղծելիս նախա-

պատվությունը տվեցին պարսիկներին, որոնք հմուտ էին վարչական կառավարման մարզում:

Երևորդ, մավալները, շնայած այն հաճամանքին, որ մռասուլ-ման էին համարվում, այդուհանդեռն, նրանք լավ էին հասկանում, որ իշխանական բարձր ուղուժները և շատ այլ ասպարեզներ նրանց մատչելի չեին և նրանք չեին կարող առանձին հավակնություններ ունենալ և պատեհնելա վտանգ ներկայացնե խալիֆաների իշխանությանց: Այս հաճամանքը մկանի առնելով, խալիֆաները դռները լայնորեն բացեցին ծագումով պարսիկ մավալի գրագիրների, քարտուղարների և այլ կարգի միջին կարգի պաշտոնաների առջև:

Եվ այսոք է ընդումել, որ նրանք իրենց դրական դերը խաղացին նոր տիպի, կենտրոնացված պետական-վարչական սպարատի ստեղծնան գործում Արքայան խալիֆայության կազմակորման և գոյության առաջին տարիներին:

< Արքայանները Սասանյան կառավարման համակարգից ներսունեցին նաև սենիեկապետի՝ հացիքի պաշտոնը՝ Նրա պարտականությունների մեջ մտնում էր մեծապատիկ մարդկանց, օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաններին ու հյուրերին խալիֆային ներկայացնելը, նախօրոց նրա մասին և նրա ստարձնության վերաբերյալ խալիֆային համապատասխան տեղեկություններ հայորինը և նրա համաձայնությունը տուանալց: Թանի որ սենիեկապետն անընդհատ խալիֆայի կողմին էր և մասնակից նրա պաշտոնական ընդունելություններին, ապա նա աստիճանաբար մեծ ազնեցուրյուն ծնոր քննեց խալիֆայի վկա և աղութիրում, դասնալով կարևոր դեմքերից մեկը:

Արքայանները Սասանյան պետական պրակտիկայից ներսունեցին նաև դահճի պաշտոնը, որն մինչ այլ անհայտ էր արարական իրականությանը, և որն ի կատար էր ածում Բաղրամի դատարանի որոշումները, ինչպես նաև աստղագուշակի պաշտոնը, որի ծառայություններից և կանխագուշակումներից մկնեցին լայնորեն օգտվել խալիֆաները:

## 2. Վագիր

Արքայան խալիֆայության կառավարման համակարգում կարևոր նորամուծություններից մեկը վագիրների ինստիտուտի հաստատումն էր:

Իր նախասկզբնական իմաստով վազիր տերմինը օգտագործվում էր որպես խալիֆայի օգնական, իսկ մեր օրերում նա համարժեք է եվրոպական մինիստր խալկացորդությանց:

Արքայան խալիֆայուրբան ժամանակ ծանակակ ծանալութեանցին վարչական գանձարան մարմիններ, զլիսավորապես դիվաններ, որոնք ժամանակակից տերմինորդիայով կարելի է բնութագրել որպես զերատեսչություններ կամ մինիստրություններ: Առաջին խալիֆաների ժամանակ կառավարման ֆունկցիաները հստակ քաժանված չեն և դեռ ծնավորվել ըյուրուկրատական աստիճանավորմերի խավը: Այդ պատճառով էլ այդ մարմինները, համենայն դեպք նրանցից ամենակարևորները, դեկավորում էին իրենք խալիֆաները: Ստական հետազայում, նրանց գարզացմանը և գործառույթների բարդացմանը զուգահեռ, խալիֆաներն մկեցին աստծանարար նրանց զնկավարություն հաճնել իրենց գանձարան օգնականներին կամ խորհրդականներին: Նրանց մեջ առանձնացավ և արքունիքում հաստուկ կարելի է ասել անհասանելի դիրք գրավեց վազիրը, որպես խալիֆայի զլիսավոր օգնական:

Օնայյաների ժամանակ վազիրների իմստիտուտ գոյություն չուներ: Խալիֆա ալ-Մամուտը, որը Սասանյան Պարսկաստանի պետական համակարգի երկրպագուն էր, առաջինն իմքը մտցրեց վազիրի պաշտոնը:

Եհարկե. Վազիրները միանգամից շնասան շատ բարձր դիրքի պետական կառավարման համակարգում: Ակզերնական շրջանում, օրինակ, ալ-Մամուտը և ալ-Մահմեդի խալիֆաների ժամանակ, վազիրները նրանց անձնական քարտուղարներն էին: Նրանք երեք զլիսավոր պարտականություն ունեին. իրականացնում էին խալիֆայի նամակագրությունը, այդ պատճառով էլ նրանք պարտադիր կերպով պետք է գրագիտ լինեն, ուստի և մեծ մասամբ նշանակյուն էին քարտուղարների շարժերից, պետք է հետևեին խալիֆայի գույքին և ունեցվածքին, և, որ շատ կարևոր է, նրանց վրա եր դրվում քազամառանգին դաստիարակելու և կորելու պատասխանատու պարտականությունը: Այս վերջին հանգամքը մեծապես նպաստեց վազիրների դիրքերի ամրապնդմանը և հեղինակուրյան ամին Արքայան արքունիքում: Նրանք առանձնացան խալիֆայի այլ օգնականներից և խորհրդատուներից:

Աստիճանաբար վազիրների լիազորությունները և իշխանությունը մեծանում է և նրանց դառնում են խալիֆաների զլիսավոր օգնականը: Նրա խնդիրների մեջ մտնում է նախ և առաջ խալիֆային խորհուրդ-

նոր տալը պետական առանց բացառության բլուզ հարցելի գծով: Եվ նրա քաղացական, իսկ նորմեն նաև անօնական ճակատագիրը կախված էր այն քանից, թե որքանով էր նրան հաջողվում կատարել իր այս պատշաճանությունը, մասնավանդ եթե նկատի ունենանց, որ խալիֆան նոր որպես կամուն լինում էին կասկածամիտ և քմահան բնավորության տեղ մարդիկ: Խալիֆայի անօնական վաստակությունը վազիրի նկատմամբ առանցքային խնդիր էր:

Այնուհետև վազիրի իշխանությունն այնքան է մեծանում, որ նա զլաւավորում է Ֆիրմանական գործը, որը խալիֆայության համար ուներ արտակարգ նշանակություն, դասում խալիֆայի լիազոր ներկայացուցիչը դատական համակարգում, այլ կերպ ասած նաև փաստորնեն գլխավորում է ամրող դատական համականությունը, այլ կերպ ասած նաև փաստորնեն գլխավորում է ազգույթ և ազգային կամաց ազգային կառույցների նշանականը և ազգայինը, իսկ համաստ նաև ինքն է երանց նշանակում և ազգայում այդ քարձու պաշտոններից, քավարարվելով այդ մասին խալիֆային տեղյակ պահելով:

Վազիրներին են խալիֆաները վատառում իրենց, որ նույն է թե, պետական կնիքը: Թե դա ինչ է նշանակում, ասենք, որ այդ ժամանակ ընդունված չէր խալիֆայի անունից արծակված հրամանների և կարգադրությունների կամ պաշտոնական փաստորդյուրի տակ դնել նրա անօնական ստորագրությունը: Բավական էր միայն դրամը կնքել: «Նազիրն ինքն էր ուղղակի կնքում այդ փաստություրը, առանց անզամ նախօրոց համաձայնեցնելու դա խալիֆայի հետ: Ինարկե, հետո վազիրն իր խալիֆային տեղյակ էր պահում իր կրողից կնքված նորվախուալների, հրամանների և պաշտոնական այլ փաստությունների մասին:

Վազիրներն ըստ եռքան օժտված էին անսահմանափակ իշխանությամբ: Նրանց իշխանությունը միակ սահմանափակողը և նրանցից քարձու կամգնածը խալիֆան էր:

Վազիրը մի կարևոր պարտականություն է ունեն: Նա պիտք է խալիֆային գրանցեներ հետաքրքիր գրույցներով և պատմություններով, մասնաւեցեր նրա կրողից կազմակերպվող հանդիսություններին, խախանմներին ու այլ վայելքներին, միշտ փայլատակներ իր հմաստուն խորհրդներով, սրամություններով և այլն:

Ամենամի հավաճականությամբ վազիրի այս արտակարգ լիազորություններն ի նկատի ունի Յ. Քիրին, եթու նշում է, որ «Վազիրը գրուում էր որպես խալիֆայի alter ego (մոլու նոց — Ն. Յ.)»:

Մեզ է հասել Արքասյան վերջին խալիֆաներից մեկի, խալիֆա ան-Նասիրի, որը կառավարել է 1180-1225 թթ., իրաման-վկայագիրը ալ-Բումմին վագիր նշանակվելու և նրա լիազորությունների մասին՝ «Սուհամմատ» իբն Բարդ ալ-Բումմին մեր ներկայացուցիչն է ամրող երկրում և մեր հայատակների մեր: Ուստի և նա, ով ենթարկվում է նրան, ենթարկվում է մեզ, իսկ նա, ով ենթարկվում է մեզ, ենթարկվում է Աստծուն և Աստված Կյառօքադրի նրան, ով չի ենթարկվելի մեր վագիրին, նշանակում է նա չի ենթարկվում ինձ, և նա, ով ինձ չի ենթարկվում, նա չի ենթարկվում Աստծուն, և Աստված նրան, ով չի ենթարկվում իրեն, կուղարկի դժոխք»:

Խալիֆայի կողմից վագիրին տրված սույն Վկայագիրը աներկարության հաստատում է վագիրի: Իրոք, խալիֆայի մյուս եսը լինելու կարգավիճակը և վկայում նրա արտակարգ լիազորություններով և իշխանությամբ օժտված լինելու փաստը:

Վագիրների մեջ մեծ թիվ էին կազմում ծագումով ոչ արաթները, մասնավորապես մավակիները և առաջին հերթին պարտիկները: Մենք արդեն նշել ենք, որ մոտ կեսինայուրամյակ Արքասյան խալիֆայությունում վագիրի պաշտոնը գրանցուել են պարսիկ Բարձմարիները: Չարուն առ-Ռաշիդի կողմից նրանց արմատախիլ անելուց հետո էլ վագիրների մեջ թիվ շնորհական կազմել դարձյալ պարսիկները:

### 3. Պիգան

Պիգանական մեջենայի կատարելագործումը և կառավարական գործառությունների բարդացումն անհրաժեշտ էին դարձնում համարժեք վիոլինություններ կիրառել Արքասյան խալիֆայությունում վաշշական-կազմակերպական առողջությունը: Նախկին ոչ հստակ և պարզունակ ծովով կիրառվող կառավարման համակարգն այլևս սպառել էր իրեն և չէր կարող ապահովել պետական մեջենայի սահում և անխափան գործունեությունը:

Հայությունում աշխատանքների կազմակերպման նոր մեթոդների կիրառման արտահայտություն հանդիսացավ դիվաների հիմնումը: Դա կապված էր նաև կառավարման ըրուրուկրատական համակարգին անցնելու հետ, որի հիմքը որնց խալիֆա ալ-Մամուրը և որն

իր հետագա գարզացումն ստացավ նրան հաջորդած խալիֆաների կառավարման տարիներին:

Հիւմանները կենտրոնական մարդիներ կամ զերառեալության ենք էին, ապագա նախարարությունների մասնակարապետները, որոնց ստեղծման հիմքում, վերևից ներքև, որոշած էր իշխանութեան-կառավարկան գործառությունների և աշխատանքների մասնագիտական բաժանման սկզբունքը:

Կառավարման նման ըյուրուկդատական համակարգ առաջին անգամ էր կիրառվում Արարական խալիֆայությունում, թեև նրանց առանձին տեսակներ տաղմանյին վիճակում գոյություն ունեցել են:

Հիւմանները տիպարանորեն, ըստ իրենց գործառությունների կարևորության, քաժանիք են երեք խմբի: Առաջին խումքը, որը համարակառության կարելի է անվանել զրատնյակային (օֆիսային), ուղղակիորեն առնչվում էր խալիֆայի և արքունիքի հշիսանության, նրանց ապահովության խնդիրների հետ: Երկրորդ խումքը կազմում էին ֆինանսների, հարկերի և զանձարանի հետ առնչվող դիվանները, իսկ երրորդը՝ հիմնականում բանակի և ռազմական գործի հետ:

Դիվանների տակիրները՝ դեկավարները, մտնում էին խալիֆային կեց գոյություն ունեցող խորհրդի մեջ, որի աշխատանքները գիշավորում էր վասիրը կամ ինչպես սկսել էին նրանց կողքը մեծ վագիրը: Վագիրներն էին նախագահում խորհրդի նհանություններին:

Հիւմանները ոչ բայց էին համարժներ իրենց կարևորությամբ և գործառությունների նշանակությամբ: Դրամց մեջ կային առավել կարևոր ներք, որոնց գործունեությունից շատ բանով էր կախված խալիֆայության ներքին կանոնը, կայունությունը, տնտեսական զարգացումը և այլն, և, ընդհակառակը, այնպիսի դիվաններ, որոնք համեմատարար ավելի համեստ դրականացում ունեին խալիֆայական վարչա-կառավարական համակարգում:

Որանց մեջ էր կարևորությամբ առանձնանում էր կապի և փոստի դիվանը՝ դիվան ալ-քարիդ: Այս ծառադրյունը գոյություն ուներ նաև Օմայանների ժամանակ, սակայն նա համեմատում էր որպես սուրհանդակների ծառադրյուն: Իսկ Աթբայանների օրոց այն ավելի կատարելագործվեց և վերածվեց առանձին դիվանի:

Նրա խնդիրները շատ բազմազան էին: Այդ ծառադրյունն ապահովում էր խալիֆայի բրակցությունը կուսականությունների կառավարիչների և տեղական գորահրամանատարների հետ: Գլխավոր փոստա-

յին ուղիները մի քանիսն էին, որոնց մայրաքաղաքը Բաղրաղը կապում էին խալիֆայության տարբեր շրջանների և ծայրամասերի հետ: Դրանցից էին Բաղրաղը Շինաստանի հետ կառապող ուղին, որն անցնում էր Շամադան-ալ-Ռիյ-Նիշապոր-Թուս-Մերվ-Բուխարա-Սամարղամոց երթուղով և դրւու գալիս Շինաստանի սահմանը: Կարևոր ուղիներից էին նաև Բաղրաղ-Կուֆա-Բասրա-Մերրա և Բաղրաղ-Շիզրիս գետ-Կասիր-Բասրա-Ակվազ-Խուզիստան-Ֆարս երթուղիները և այլն: Այս երթուղիներով խալիֆայությունը դրւու էր գալիս նաև արտօքին աշխարհ:

Փռստային և կապի ծառայությունը տեղիբում քավականին լավ էր կազմակերպված: Խանապարհների վրա ստեղծվել էին փոստակայաններ, որտեղ կային պատրաստ տուրիանոցներ, որոնք մեկը մուսհին էին փոխանցում թթվակցությունները և այլ կարևոր լուրեր: Այդ փոստակայաններն ապահովված էին անհրաժեշտ երիվարներով՝ ուղտերով, ծիերով և ավանակներով:

Մակայն թթվակցության ապահովումը դիվան ալ-Քարիջի միայն մի, արտօքին երևացող կողմն էր: Նա կատարում էր ավելի կարևոր պարտականություններ, որը կարելի է ժամանակակից տեղըմինալոգիայով բնութագրել որպես վերահսկողական-լրտեսական և հետախուզական: Դիվանի ծառայողների պարտականությունների մեջ էր նույնում զայտնի վերահսկողությունը նահանգների կառավարչների և գրադարանների վրա, անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը նրանց գրութեանուբերյան և տրամադրությունների վեցարերյաց:

Նրանց պարտականությունն էր տեղեկություններ հավաքել նաև կուսակալությունների բնակչության տրամադրությունների, նահանգային վարչության գործունեության, հողագործության և արհեստական ուղղաման վիճակի, հարկերի և տուրքերի հավաքածան, տեղական կառավարիչների կողմից ուղյա և արձարյա դրամների հաստին մասին և այլն: Այդ կարևոր խնդրի կատարումն ոյսուացնելու նպատակով, դիվանի տեղական ծառայողները ենթարկվում էին ոչ թե նահանգային կառավարիչներին, այլ ուղղակի կենտրոնական կառավարությանը: Տեղական ծառայողները և տուրիանոցները համարվում էին խալիֆաների «աշքերը և ականցները տեղերում»: Նրանց իրավունք էր վերապահված նաև թթվակցությունների և նամակների գաղտնազնությունը: Նրանց բացելը, բովանդակության հետ ժամորանալը և այդունից բարված լուրերը կենտրոն հաղորդելը: Նրանք ամեն օր խալիֆայության նահանգներից և շրջաններից մանրամասն հաղորդագրություն էին փոխանցում

Բաղյատ դիվանի պատին, որը կոչվում էր սահիբ ալ-բարի, իսկ վերցին իր հերթին այդ բուրի մասին զեկուցում էր վագիրին: Առանձին հարցերի կարտորության դեպքում սահիբ առ-ալ բարին իրավունք ուներ, շրջանցելով վագիրին, անմիջապես զեկուցն խալիֆային:

Նետախուժական նպատակներով օգտագործվում էին ոչ միայն սուրիանոյակները, այլև ուխտազնացները, վաճառականները և ճանապարհորդները: Նրանց հայկապես մեծ չափով էին օգտագործում Ալ-Մանսուրը և Հարուլ ալ-Շաշիդը և Ջոյն խալիֆաները: Մեծ դերակատարում ունեին այդ մարզում նաև կանաքը: Խալիֆա ալ-Մամունը Բարդասի իր հետախուժական կենտրոնում ուներ 1700 լին հետախուցներ, որոնք ամենատարբեր և պատասխանառու հանճնարարություններն էին կատարում:

Սուրիանոյակների, վաճառականների, թժշկների և այլ մասմազիտուրունների քողի տակ քարենած հետախուզվների գործունեությանը չեր սահմանափակվում միայն խալիֆայության սահմաններում: Նրանց գործունեությունը տարածվում էր նաև արտսահմանյան երկների, առաջին հերթին Բյուզանդյական կայսրության վրա, որտեղ գործում էր հետախուժական լավ կազմակերպված ցանց:

IX դ. սկզբներից խալիֆայությունում փոստաշին ծառայության մեջ սկսվեց աղավնիների օգտագործումը: Առաջին լուրը, որ այդ ուղիղությունը Սահլ Սմբատյանի միջոցով ստուգվել է, եղել է ապատամբ Բաբեկին ծերակալեցու լուրը, որը պատահել է 837 թ. խալիֆա ալ-Մուրասիմի օրոք:

Միա այդ պատճառով սահիբ ալ-բարինը կոչվում էր նաև սահիբ ալ-բարի վա ալ-ախրար, այսինքն փոստի և հետախուզության ծառայության պետ: Նա շատ կարևոր դիրք ուներ արքունիքում և համարվում էր խալիֆայության ազդեցիկ պաշտոնյաներից մեկը:

Արքայամների ժամանակ առեղծվեց նաև ոստիկանության դիվան, դիվան ալ-շուրքա, որի պետը՝ սահիբ ալ-շուրքան, միաժամանակ համարվում էր խալիֆայի թիկնապահների պետ: Այս դիվանի պարտականությունների մեջ էր մտնում խալիֆայի կամքի և անվտանգության ապահովումը, կարգութեանումի պահպանումը խալիֆայությունում, վերահսկողությունը թնակության վրա և այլն: Ուստի պատահականություն չեր, որ ոստիկանության դիվանապետն իր նշանակությամբ հավասար էր համարվում վագիրին և, իրոք, հետազոտում սկսեց կոչվել վագիր:

Պստիկանների պարտականությունների մեջ, քաջի ներդին կարգուկանոնին հետևելուց, մտնում էր նաև բարոյական նորմերի պահպաններն ինչպես սեռերի միջև։ Նրանք մեծ դերակատարություն ունեին այն վայրերում, որտեղ սովորաբար մեծ ամբոխ էր հավաքվում, հատկապես շուկաներում։ Նրանք պետք է հետևեին, որ հասարակական վայրերում, շուկաներում գիմի շվաճառեմ, որն արգելված էր Կորանով, արզելեն թրախաղը, պատմեն նրանց, ովքեր շուկաներում առջուվանարքի ժամանակ խախտում էին սահմանված լավին ու կշիռ և այլն։

Պստիկանության պարտականությունների մեջ մտնում էին նաև այնպիսի խորհրմեր, որոնք այլ կերպ ցան զավճշտական, ամինար է անվանել։ Օրինակ, պստիկանները պետք է հետևեին, որ տարեց և ալեհեր մարդիկ չներկեն իրենց մորուքը մև գույնի, որը ուստիկանության կողմից համարվում էր կանանց դուր գալու և նրանց գայթակղեցնելու միտում, որը հավասարազոր էր անքարույականության։

Մրրասյան խալիֆայության կառավարման համակարգում առանցքային դիվաններից էր Ֆիմանսների դիվանը՝ դիվան ալ-Ճալ, որը հայտնի է նաև որպես հարկերի դիվան՝ դիվան ալ-Խարաց, անվանումով։ Նրա պարտականությունների մեջ էր մտնում տարատեսակ հարլերի, տուրքերի և ավետական եկամուտների հավաքումը։

Պետական եկամուտների գլխավոր ադրբյուններից մենք շարունակում եր մեռայ հարկերի գանձումը։ Դրա մեջ մտնում էր առաջին հերթին հարլի այն տեսակը, որը կոչվում էր զաքա կամ զաքար, որը զանձվում էր բոլոր ծուռութափաններից։ Նա գանձվում էր վարելահողներից, արտավայրներից, առնորոշական ապրանքներից, ուկուց, արծաթից և սեփականության այլ տեսակներից։ Սակայն այս հարլի գանձման մեջ կար մի նրբություն, կապված այն իրողության հետ, որ չկար հարլի արձանագրված կամ սահմանված կոմերես չափարաժին։ Յարկահավաքն ինքը դիտելով վարելահողը, արտավայրերը և այլն, կարելի է ասել այքաշափով սահմանում էր հարլի քանակը։ Իսկ ինչ վերաբերում էր մուսուլմանի ծեռք թրած ուկուն և արծաթի, կամ առնորոշական գործունեությունից նրա հարստության և եկամուտների ամին, ապա նրանից վճարվելիք հարլի չափ բողնվում էր նրա տիրոջ խղճին։

Այս հարլին ուներ մի առանձմահասկություն ևս։ Նրանից գանձված եկամուտը պետական զանձմարանը կարող էր օգտագործել միայն հավատացյալների, մուսուլմանների կարիքները հոգալու նպատակով, ի մասմավորին աղքատների և որբերի կարիքների, սրբազն պատերազ-

մի կամավոր ծասմակիցների, ստրուկների, գերի ընկած մուսուլմանների ազատման համար փորկագին վճարելու և նման այլ նպատակներով:

Այդ հարկից գանձված վիթխարի գումարները իշխանություններմ իրավունք չունեին ծախսել այլ նպատակների, ասենք արքունիքի պահանջների բավարարման, տնտեսական զանազան գործառությունների, ռազմական նպատակների համար և այլի:

Եկամուտների մյուս կարևոր աղյուրներն են հարկի նրկու մյուս գլխավոր տնօսակները, ինչպես հողային հարկը, խարացք, որը գանձվում էր մուսուլմաններից ու այդ հարկի ամուսնու դիմանց կոչքում էր դիման ալ-խարաց, և գլխահարկը, ջիզիան, որ գանձվում էր միայն խալիֆայության ոչ մուսուլմաններից: Այս երկու հարկները մոր շին և գոյություն ունեն ու գանձվում են նաև Օմայանների ժամանակ, որի մասին խոսվել է աշխատության նախորդ հասերությամբ: Արքայաններն այս բնագավառում որևէ նոր բան չներմուծեցին և ամեն ինչ պահպանեցին նույնուրյամբ:

Խարաց և ջիզիա հարկերից ստացվող եկամուտներն անհամեմատ մեծ են, քան թե զաքարից ստացվող եկամուտները:

Խարացից և ջիզիայից ստացվող եկամուտները խալիֆանները սովորաբ ծախսում են արքունիքը, քանակը՝ նզկիրները պահեցու, ռազմական նշանակություն ունեցող ճամապարհներ և կամուրջներ կառուցելու և, բնականարար, պատերազմական գործողությունների համար:

Մեծ կարևորություն ունեցող դիմանների շարքում պետք է նշել նաև գիննորուական կամ ռազմական դիման՝ դիման ալ-քունդին: Սա, ինչպես և անունն է հուշում, պատասխանառու եր ռազմական գործի, քանակի կազմակերպման և մարտունակալության բարձրացման համար:

Այլ դիմաններից, թերևս, հիշատակության են արժանի նաև զինարանի, կնիքի, ստուգման և հաշվառման և այլ դիմանները:

Այսպիսով, կարենի է ասել, որ Արքայանների ժամանակ ամենի կառարելագործվեց և արդիականացվեց պիտուական մեթենան, տեղի ունեցավ իշխանական գործառույթների հատակ բաժանում ու մասնագիտացում, և դրան համապատասխան կազմակերպական վերակառումներ ու վարչական-կառավարչական նարմինների ստեղծում, ինչպիսիք հանդիսացան դիմանները:

#### 4. Թիեզուժ

Արքայան խալիֆայությունում, ինչպես և բոլոր արևելյան թռնակալություններում, բացասիկ դերակատարությունն էր վերապահված բանակին, ռազմական ուժերին՝ իր բոլոր տարրատեսակներուն:

Ռազմական ուժերը հիմնականում կատարում էին եղիկո, պարտականությունը, առաջին, ներքին, ժողովրդական, հակակառավարական ելույթները և ապառամբությունները նշնչելու, և նրկորոշ, երևի պաշտպանություն արտաքին հարձակություններից ու նվաճողական պատերազմական գործողությունների մորում:

Արքայան խալիֆաների ժամանակ կարևոր փոփոխություններ կատարվեցին ռազմական ուժերում կառուցվածքային և երիտեական առումով:

Կառուցվածքային առումով ռազմական ուժերը կազմված էին երեք տիեզերակից-քուն քանակից, խալիֆայության թիվականական գործերից կամ գվարդիայից, և կամավորական զորամիավորումներից:

Ռազմական ուժերի կորիզը կազմում էր կանոնավոր քանակը՝ ջունող, որը սովորաբար լինում էր չափ զինված և մարտունակ: Արաբական քանակի մարտունակության մասին շատ քարձոր կարծիք լուծեն բյուզանդական կայսրերը և գրուակամասաւարները: Երանց կարծիքն արժեցավոր է, քանի որ Արաբական խալիֆայության ծնավորումը անմիջապես հնտո, նրանք դարձել շարունակ պատնիրազմներ են մոյել միմյանց դեմ, բազմաթիվ հարցանակներ տարել և պարտություններ կրել:

Արքայան խալիֆայությունում պետությունը սովորաբար իր վրա էր վերընում քանակը միայն սենյամբքեցով, իսկ հեծելազորը անասմակերով ապահովելու հոգաց: Ինչ վերաբերում է զենքին և զինվորական հանդերձանքին, ապա պետությունն այդ հարցում որևէ պարտականություն չուներ, քանի որ զինվորն ինքը պետք է իրեն ապահովեր զենքով և համապատասխան զինվորական հագուստով, իսկ եթե նա ծառայում էր հեծելազորում, ապա նաև ծիռը կամ ուղտով:

Դասկանայի է, որ ամեն ոք չէր կարող ծառայել հեծելազորում, որ համարվում էր ավելի հեղինակավոր: Դա իրենց կարող էին բույն տալ համեմատաբար բարեկեցիկ ապրուստ ունեցողները, հարցուստները, խոշոր և միջին հողատերերը, որոնք ի վիճակի էին տրամադրել ծի կամ ուղտ, և ծեռք բերել համապատասխան զննք ու գրահ:

Բանակը բաժանվում էր երեք գրատեսակների—հետևակ՝ հարդիյահ, հեծելազորի՝ ֆուրսան և նետածիգների՝ ոսամիյահ։ Դետեսկայինների հիմնական գննքերն էին կարճ նիզակը կամ տեղը, տուրը և վահանը, հեծյալներինց՝ ասուավարությ, գրահր, երկար նիզակը և մարտական կացինը, իսկ նետածիգներինց՝ նետն ու աղեղն էր։

Մրրայսյան բանակում լայնորեն կիրառվում էին պաշտրված բաղաքների գրավման համար անհրաժեշտ ռոլոր տեխնիկական միջոցները, մասնավորապես քարանետ սարքեր, բարաններ, աստիճաններ և այլն, որոնց մշտական ուղեկցում էին բանակին նրա ռազմական արշավանցների ժամանակ։ Ուշագրավ է, որ կային բաղաքների պաշտրումը և գրավումը կազմակերպող հատուկ մասնագետներ, որոնց ժամանակակից տերմինալոգիայով կարենի է անվանել ռազմական ինժեներներ։

Բանակում կար նաև թշշկական ծառայություն, ի դեմս թշշկական ռազմական դաշտային հիվանդանոցների և աճրուատորիաների, որոնց տեղաշարժերն ապահովում էին ուղետերը։ Այս նորամուծությունը և ընդհանրապես գիտության նվաճումները ռազմական գործում կիրառելը, սովորաբար կասկում են խալիքա Շարուն առ-Ռաշիդի անվան և գրունենության հետ։

Բանակն ունեց հետևյալ կառուցվածքային և հրամանառարակամ ստորաբաժանումը, որը շատ նման էր հօնմեա-թյուզանդականին։

Նա բաժանվում էր տասնյակմերի, որի հրամանառարարն էր արիֆք. հիմյակմերի խալիքայի հրամանառարությամբ, և հարդուրակմերի, որի հրամանառարարն էր կահիդը։ Այս վերջինը համապատասխանում էր հօնմեական կենտուրիոնին։

Բանակն ունեց նաև գնդեր և կորպուսներ։ Մի քանի գնդերի կամ կորպուսների միավորումը կազմում էր կորդոս, որը հօնմեական կոհորտայի համարժեքն էր։ Ցուրացնանյուուր 10 հազար զինվորից կազմակորչում էր մեկ կորպուս, որի կազմի մեջ մտնում էին 10 գումարտակ. ցուրացնայուուր կազմական 1000 մարդուց։ Կորպուսի հրամանառարը լցում էր ամիր ռազմական կողումը, որը հավասար էր եվրոպական զեօրալին։

Բանակում շատ լավ էին վճարում, ընդորում, թէ՝ մթերքով, թէ՝ դրամով։ Հասարակ գիններին տարեկան վճարում էին 960 դիրիհամ։ Թե դա ինչ էր իրենից ներկայացնում, նշենք, որ, օրինակ, խալիքա աղ-Մանսուրը Բաղրամը կառուցելիս շինարար վարպետին վճարել է օրեկամ

մեկ դիրիհամ կամ տարիին 360 դիրիհամ. իսկ շինարար բանվորներին օրեկան մեկ երրորդական դիրիհամ:

Արքայան ռազմական ուժերի մյուս քաղաքամասց հարասն էր, խալիֆայական թիկնապահ գործը. որը կանոնավոր գորատեսակ էր և միշտ գտնվում էր նարուական բարձր պատրաստականության վիճակում, ու շատ չափ վճարվում: Դա այն գորատեսակն էր, որը հանդիսանում էր խալիֆայի ամփոփական հենարանը: Դարասց լրիվ պահպում էր պետական գանձարանի հաշվին:

Եվ, վերջապես, երրորդ գորատեսակց կամավորական գործն էր: Դա վարձու զինվորների համախմբությունն էր, որը հավաքագրվում էր քաղաքի բնակչության աղքատ խավերից, հողագուրկ գուլացիներից, ինչպես նաև իրենց սոցիալական հենարանը և ապահովագործությունը կորցրած բնդվիններից: Թիչ չեն նրանց մեջ զանազան արկածախնդիրները:

Նրանք որպես վարձու կամավորներ ժառայության մեջ էին մտնում նաև անգնաների կառավարիչների մոտ, այսինքն կամավորների գորագումոյք գտնվում էր կուսակալների անմիջական տնօրինության տակ և նրանց էր ենթակալվում:

Վարձկան կամավորների հիմնական պարտականությունը սահմանների պաշտպանությունն էր: Իսկ հնչ վերաբերում է նրանց գոյության ապահովման և ժառայության դիմաց նրանց աշխատավարձ վճարելու աղյուրներին, ապա կամավորականների պահպանման և վճարման երկու աղյուր կար: Առաջին, նրանց պահպանները թե՛ռ արդյունքամբ ընկնում էր տվյալ նահանգի տնդական բնակչության վրա: “Պետական գանձարանից նրանց ֆինանսական ոչ մի հատկացում շեր կատարվում:

Երկրորդ աղյուրը՝ ռազմական ավարն էր: Ուազմական գործողությունների ժամանակ մնաց թերած ամրող ավարը և բալանը նրանք էին տնօրինում: Այստեղից էլ կամավորական այդ ռազմագործկանությունի արտակարգ ռազմամուլությունը և բալաններու անսպառ տննչը:

Արքայանների ժամանակ բանակը, ինչպես նշվեց, տեղի ունեցան նաև եքնիկական փոփոխություններ:

Օճայյանների օրոր բանակը հիմնականում կազմավորված էր արարներից, նրանք էին տիրապետող եքնիկական տարրը: Եթե ժամանակ իմրդիրներ կային բանակում, ապա դրանք ոչ թե եքնիկական բնույթի էին, այլ ցեղային պատկանելության: “Պայքարը գնում էր այն

հարցի շուրջը, թե որ տոհմացեղային խումբը պիտի է տիրապետող լիներ, իյուսիսային՝ կայսիակա՞ն, թե՝ հարավային՝ կալրիական կամ յաճանական:

Արքայանների ժամանակ, ինչպես նշվեց, խալիֆայությունում, նույն պետական, վարչա-կառավարական, քաղաքական, առևտրառն-տեսական և այլ ուղղութեալում խիստ ուժեղացած նավալիների, առաջին հերթին պարսիկների դերը: Դանից ամենասն չմնացին նաև խալիֆայության ուսագելական ուժերը, առաջին հերթին բանակն ամրողությամբ վերցրած, և խալիֆայի գվարդիան:

Պարսիկների դիրքերի ամրապնդումը կատարվեց ի հաշիվ ուսագելական ուժերում արաբների դիրքերի քույզանան: Մավալիներին կամ պարսիկներին ուսագելական ուժերում ներգրավելուն և նրանցում առաջատար դիրքեր տրամադրվուեն նպաստեց այս հանգամանքը, որ Արքայան խալիֆաններն այլևս չեն ցանկանում պահել մի բանակ, որը խարսխված էր տոհմացեղային պատկանեցրեյան և դրանից օխոյ հատկանիշների վրա: Այդ սկզբումընթաց մշտական տարածանությունների, դիմակայության և արյունայի բախումների առյուղը կրն հանդիսանում, որոնք մի կողմից բացասաբար կմն ամրությանում բանակի նարուունակության վրա, իսկ մյուս կողմից կախման մեջ կմն գցում խալիֆային այս կամ այն տոհմացեղային միտուրումից:

Դրան նպաստեց մի հանգամանք ևս: Արքայան առաջին խալիֆանները աօնակատման մեջ կմն գտնվում արարական տոհմիկ արիստոկրատիայի տարրեր խմբավորութմների, ոչ միայն շիսների, խարիցիականների, այլևս ուշնիմների հետ, ինչպես Սիրիայի, Մեծքայի, Մասինայի և այլն, և մեկ անգամ չե, որ դամանորեն նշշել և արյան մեջ խեղդել կմն Օրանց հակառարքասյան եղույթները և ապստամբությունները: Պարզ է, որ խալիֆաններն այլևս չեն կարող բանակը հավաքագրեն գնրազանցապես արարաներից, որոնց նրանք այլևս անվերապահորեն չեն վստահում: Այստեղոյն էլ բանակի երնիկական համալրման հարցում խալիֆանների նոր քաղաքականության որդեգրումը:

Համանման փոփոխություն տեսի ունեցավ նաև խալիֆայական հարասում՝ թիկնապահ գործերում, նույնիսկ ավելի վաղ, քան թե բանակում: Ենց առաջին խալիֆաններն իրենց թիկնապահ գործը, գվարդիան, որն Օմայանների ժամանակ զերազանցապես կազմավորված էր արարաներից, վերոնշյալ պատճառներով հրամարվեցին այդ սկզբուն-

քից, և մկնեցին կազմավորել բացառապես խորասանցիներից, իրանաւեզու տարբեր եթիկական տարրերից:

Մակայն հետագայում տեղի ունեցան նոր փոփոխություններ: Ալ-Մութասիմն նդավ առաջին խալիֆան, որը իր գվարդիայի մեջ ներդրավեց թուրքներին, որոնք շատ չանցած տիրապետող դարձան հարասում: Այդ ռուրբերը խալիֆայի ստրուկներն էին, որոնց նա գնրի եր վերցրել Սիցին Ասիայում, մասնավորապես Ենթանայում: Խալիֆան հույս ուներ նրանց դարձնել իրեն հնագան, և հուսայի հենարան: Մակայն նրանք իրենց շատ շուտով դրսմորեցին որպես անկազմակերպ, անկառավարելի և արյունախում մի ամրուս, որը ահ ու սարսափ տարածեց Բաղրամյում: Դրույթումն այնքան լարվեց, որ ալ-Մութասիմն ստիպված էր կառուցնել մի նոր քաղաք, Մամարրան, ուր նա 836 թ. տեղափոխվեց իր կառավարության հետ միասին: Թուրքական գվարդիան, ինչպես արդեն նշել ենք, հետագայում այնքան ուժեղացավ, որ դարձավ Վեօսկան ուժ պետության մեջ:

Ահա այսպիսին էին այն կարևոր փոփոխությունները և նորամուծությունները, որոնք տեղի ունեցան Աբբասյան խալիֆայության ժամանակ պետական-կառավարական համակարգում:

## Գլուխ ուրեմնորդ

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՎՉՈՒՄՆԵՐՆ ԱԲՐԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ (VIII-IX ԴԱՐԵՐ)

## I. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՄՈՅԻԱԿԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

### 1. Կակառքասայան ելույթների բնույթը և պատճառները

Արքասայան խալիֆայության պատմությունը շատ հարուստ է ժողովրդական լայն հականակավարական, սոցիալական և ազատազրական շարժումներով, տարբեր բնույթի ելույթներով, հոգումներով, բավականին լավ կազմակերպված ու օրեկարառև ապստամբություններով: Երբեմն դրանք այնքան հումկու էին լինում, որ ցնցում էին ամրող խալիֆայությունը և սպառնում ջրա ամբողջականությանը, անգամ գրությանը:

Այս տեսակետից Արքասայան խալիֆայության պատճությունը նույնանձն հարուստ և ուսանելի է, եթե ոչ ավելին, որքան և Օմայյաների խալիֆայության պատճությունը:

Սոցիալական առումով այդ շարժումներն ընդգրկում էին հողագործ գյուղացիներին և անսամբլավաներին, նաև ակյացներին և քոչվոր ըեղվաններին, մանր, երթեան նաև միջին հողատերերին, արհեստավորներին, առևտրականներին, ստորոկներին և սոցիալական այլ խավերի:

Ազգային-երնիկական առումով այդ ընդլայնումների մասնակիցներն էին խալիֆայության բնակչության բոլոր նորկայացուցիչները՝ առաքնները, պարտիկները, աֆղանները, խորասանցիները և միջինասիա-

կան այլ, այդ բնում և թուրքական ծագում ունեցող ժողովուրդները, հայերը, վրացիները, աղվանները, ղպտիները, օսերը և այլն:

Կրոնական առումով Աքրասյամների տիրապետության դեմ ուղղված եղույթներին մասնակցել են մուռառման սունդիները, բայց առաջին հերթին շիա-ալիականները, ինչպես նաև զրայաշտականները, քրիստոնյաները, կրոնական գանազան աղանդները:

Եվ եթե ամփոփին լինենք, ապա կարելի է ասել, որ ժողովրդային տարածնույթը շարժումներում ներկայացված էր խալիֆայության տոցիական, ազգային-էրնիկական և կրոնական կառուցքածքը՝ իր աճողջական ներկապնակով:

Աքրասյան խալիֆայությունում ծավալված հակաարքասյան շատումների պատճառները ռազմազան են. միշտնավոր մարդկանց տնտեսական անմիջիքար վիճակը, ծայրահեն աղքատությունը, գանձվող տարատեսակ հարկերի, մասնավորապես հողահարկի՝ խարածի, և գիշահարկի՝ ջիգիայի, ծանր, կարելի է ասել անտանելի բեօթ, բանությունները և հայածանքները և՛ կրոնական և՛ էրնիկական հորիշ վրա. նախնինեւա իրենց պետականությունն ունեցած և խալիֆայության տիրապետության տակ հայտնիված տարրեր ժողովուրդների ազատությանց միտված ազատագրական նըրառումները արյան մեջ խեղդելու քաղաքականությունը. այդ ժողովուրդների վերնախավի, իշխանական տոհմերի ոչնչացման ճգոտումը և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդ շարժումների պատճառները շատ հիմնավոր են, ուստի և նրանք միանգամայն պատճառարամված և արուրացված են:

Տիպարանորեն դրանք ոչ թե անհմաստ բռնտեր են, այլ սոցիալական և ազատագրական պայքար, նույնիսկ այն դեպքում, երբ այդ պայքարն ընթանում էր կրոնական բողոք տակ կամ առաջնորդվում կրոնական կարգախոսների ներքը:

Այսուհետեւ իետևում է, որ դրանց արմատները պետք է փնտորել Աքրասյան խալիֆայության պետական, քաղաքական, տնտեսական և կրոնական-դավանաբանական համակարգում. Խոկ այդ համակարգը, համեմատած Օմայյան խալիֆայության հետ, Աքրասյանների ժամանակ. ըստ երրյան, տիպարանորեն նույն էր:

Թերևս ավելի էր խորացել տիպարանուրդ կարգերի քայլայումը, ավելի մեծ ծավալներ մեռք թիրել հասարակության ֆեռադականությունը, թեղվինների նստակյաց դատնալու գործընթացը. ավելի խս-

տացել հայկազաննումը, ինչպես նաև խալիֆայության մեծամասմուրյուն կազմող ոչ արար ազգաբնակչության հալածանցները և այլն:

Իսմայիլականությունը ծագել է շիական վեցնրորդ իմամ Զաֆար աս-Սադիկի, որը մահացել է 765 թ., մի վիճակարույց քայլի հետևանքով: Իմամ Զաֆար աս-Սադիկը ինքը իմամական շիականության ամենահինունողական և քննուած կողմնակիցն էր և նանաշում էր այդ ուղղության գլխավոր դոգման՝ իմամների հետևողական հաջորդայնությունը: Այդ հերթականությունը կամ իմամների մեկը մյուսին հաջորդելու կարգի խախտումը, համարվում է մեծագույն նահանջ շիականության հիմնադրություններից, որը, սովորաբար դառնում է պատակտման ադրյուր:

Վեցերորդ իմամ Զաֆար աս-Սադիկը դեռևս իր կենյանության օրոք յոթերորդ իմամ Նշանակեց իր կորուսի որդուուշ Մուսա ալ-Կազիմին, իմամությունից զրկելով մինչ այդ իմամ Նշանակված իր ավագ որդուն՝ Իսմայիլին, որը մահացել էր 760 թ.: Իմամ Զաֆարի կողմնակիցները և հետմորդները երա այդ որոշումը համարեցին օրինական և որպես իմամ նանաշնչի՛ Մուսա ալ-Կազիմին և նրա հետեւրդներին, մինչև տասներկուերորդ իմամ Մուհամմադը, որն ամենայացել էր 874 թ.: Այդ պատճառով էլ այն շիամները, որոնք ճանաչում են 12 իմամներին, համարվում են իմամականներ կամ տասներկուականներ:

Սակայն շիամների մի մասս հրաժարվեց ճանաչել Զաֆարի այդ որոշումը, գտնելով, որ նա իրավունք չուներ իր ավագ որդուն, Իսմայիլին, զրկել իմամությունից: Նրանց փաստարկները հանգրու էին հետևյալին:

Սոացին, յուրաքանչյուր հաջորդ իմամի նշանակումը չի կարող տեղի ունենալ նրա նախորդի կամայական որոշումով, քանի որ իմամ Նշանակվելը աստվածային քարեհիանություն է և Ամենագարճորյալի իմաստնության դրսերում: Իսկ աստվածային քարեհիանությունը և իմաստնությունը դրսերովում է միայն մեկ անգամ: Եվ քանի որ իմամ Զաֆար աս-Սադիկն արդին մեկ անգամ Խսմայիլին, համաձայն հերթական հաջորդայնության սկզբունքի, արդին հօշակել էր իմամ, ապա նույն իրա-

վունք չուներ նրան գրկել իմամությունոց, եթև նույնիսկ նա արդեն ծահացել էր:

Երկրորդ, Խսմահիլի ցեղմետունու կողմնակիցները հայտարարեցին, որ իրենք չեն հավատում Խսմահիլի մահվանը, գտնում են, որ նա կենցած է, և նույնիսկ եղան ակամատեսներ, ովքեր հավաստում էին, թե նրան տեսնե են 760 թ. հետո, որը համարվում է նրա մահվան տարեթիվը:

Դյուրահակառ շիամեց վատահություն ընծայեցին այդ լուրերին, որը ծանր դժության մեջ դրեց իման Զաֆարին ու նրա կողմնակիցներին, և առող լարգածություն ստեղծեց շիա համայնքի ներսում:

Երրորդ, իման Զաֆարի կողմնակիցները, իրենց դիրքերն աճռապնդելու միտուազով, սկսեցին այն վարկածը տարածել, որ Խսմահիլի համարվյան ժառանգական իրավունքներից հայրը գրկել է այն պատճառով, որ նա գինեմության հակումներ ուներ, իսկ Կորանն արգելում է գինին և դատապարտում գինեմությունը:

Խսմահիլի կողմնակիցները չզնացին այդ տեսակիցը, այսինքն Խսմահիլի կողմից գինի խմելը ժամանելու ուղիով: Նրանք առաջ ցաշեցին մի քառ, որի համաձայն Ալիի սերունդներին պատկանող խմաների տոմարի ոչ մի արարք, այդ բայում ն գինեմությունը, չի կարող մնեց համարվել:

Խսմահիլի համարվյան միջ գրկելու պատճառների հարցում ավելի հավանական է համարվում այն տեսակիցը, որ իման Զաֆարը կողմնակից էր ավելի մերժ քաղաքականությամ, այդ բայում և Աքքայանների հետ փոխհարաբերություններում, որն առաջացնում էր շատ շիաների դժգոհությունը, որոնց համեմ էին զայիս և վելի արմատական քաղաքականություն, ընդուակ մինչև թանություններ կիրատելու պահանջով: Իսկ Խսմահիլ ավելի եռանդուն, կոչու և նույնիսկ ծայրահեղական քաղաքականության կողմնակից էր և, ըստ երևությն, արտահայտում էր շիաների արմատական թեր տրամադրությունները և շահերը: Այս թեր հատրանալը կանխինելու միտուազ իման Զաֆարը գրկել է Խսմահիլի համարվյան իր ժառանգական իրավունքից:

Ահա այս հոդի վրա տեղի ունեցակ շիաների պառակտումը իմամականների և խսմահիլականների:

Այն շիաները, ովքեր կողմնակից էին իմանների նշանակմանն ըստ դիմաստիական մկրունքի և, ելնելով դրանից, գտնում էին, որ օդիմական իման պետք է ճանաչել Խսմահիլին, իսկ նրա որդուն, Սուհամմադ իբն Խսմահիլին պետք է ընդունել որպես յոթերորդ իման, կոչվեցին Խսմահիլականներ:

Իսկ նրանք, ովքեր ճանաչեցին իմամ նրա նախորդի կամոց նշանակելու մկրունքը և այդ հիման վրա օրինական ճանաչեցին Սուսա ալ-Կազիմին և նրան հաջորդած ևս հինգ իմամներին, որոնց ընդհանուր թիվը կազմում է 12, նրանց համարվում են շիա իմամականներ:

Բայց դա ոյն բոլորը չեն: Նետագայում պատակտում առաջացավ արդեն խսմահյականների շարքերում:

Խսմահյականների մի մասց գտնում էր, որ Մուհամմադ իր Խսմահյականների վերջին ու յորերորդ իմամն է, և նրանով ավարտվում է իմամների պարագիծը: Միաժամանակ նրանց գտնում էին, որ այդ յորերորդ իմամը գտնվում է ինչ—որ տեղ թարառողություն, և վայ թ ուշ դուրս է գալու իր թարառոցից և մարդկությանց երջանկություն է թերելու: Այն շիաները, ովքեր կողմնակից էին իմամների թիվը սահմանափակել յորով և վերջին իմամ ընդունել Մուհամմադ իր Խսմահյան, նրանք կոչվեցին յոթականներ:

Խսմահյական շիաների մյուս խումբն այլ դիրք գրավեց: Նրանք ընդունում էին Մուհամմադ իր Խսմահյականների տղամբերից մեկի և նրա հաջորդների իմամությունը, նրանց հաճարելով «ծպոյալ իմամներ»: Դրա հետ մեկտեղ, նրանք գտնում էին, որ իրենց կողմնակիցներից մաս կա ընտրյալների մի խումբ, որին հայտնի է այդ «ծպոյալ իմամների» անունները և նրանց գտնվելու վայրը:

Նետագայում, X դարի մկրներից, խսմահյականների այս թիյ հետևորդները կոչվեցին «Ֆարիմյան խսմահյականներ» Մուհամմադ մարդարեի առջևկա և Ալիի կոմոց՝ Ֆարիմյայի անունով: Դրանով նրանք ընդգծում էին իրենց ուղղակի կապը մարդարեի տոհմի և Ալիի հետ:

## 2. Կարմաքները և Բահրեյնի կարմաքական խալիֆայությունը

Յորական խսմահյականները հայտնի են նաև կարմաքներ անվամբ: Խսմահյական այս աղանդն իր կարմաք անվանակրությունը ստացել է Համդան Կարմաքի անունից: Նա Կուֆայի մերձակայքում ընակվու մի հասարակ գյուղացի էր, որը ջերմեռանդորրեն սկսեց քարոզել յորական իմամության գաղափարները և կարողացավ իր շուրջը հավաքել հավատացյալների հոծ օճապված: Դա տեղի ունեցավ IX դարի վերջներին:

Կարմաքների շարժումը շուտով գուտ կողմանական աղանդավորական շարժումից վերածվեց սոցիալ-քաղաքական շարժման: Նրա հիմնական պահանջը դարձավ սոցիալական արդարության և հաջատարու-

թյան հաստատումը, հավասարության վրա հիմնված մի նոր հասարակության կառուցումը, որը երջանկություն կրերի բոլոր նրանց, ովքեր կիսվատան կարմաքննիր ուսմունքին և կիեւունեն նրանց:

Կարմաքնները երկրի վրա արդարության և հավասարության հաստատումը կապում էին իմամ Մուհամմադի իրմ Խսմախիլի նոր հայրածության, թաքստոցից դուրս գալու հետ, որը պետք է տեղի ունենար շուտով: Ելնելով Մուհամմադի իրն Խսմախիլի նույալուտ գալուստի տեսադրությից, կարմաքնները խալամական օրենքները հայտարարեցին չեղյալ:

Քանզության ամենալայմ խավերը՝ զյուդացիները, արիստուկորները և թղթինները, խանդավառությամբ էին ընդունում կարմաքննիրի նման հայտնությունները:

Կարմաքննիր Խամայնքներ առաջացան Վասիլի և Կուֆայի շրջաններում և հարավային Իրաքի այլ վայրերում, սարսափի մնջ գցելով Արքայաններին, որոնց սակայն, անզոր էին որևէ քան աննլ:

Կարմաքնները մեծ հաջողության հասան Բահրեյնում, որտեղ 899 թ. նրանք հիմնեցին իրենց պետությունը, որը նույնակա կոչվում էր Խալիֆայություն: Նրա նայուարադացը դարձավ Պացցար ամրոց քաղաքը: Այս նորաստեղծ պետության ղեկավար դարձավ Արու Սահիր ալ-Զամնաթին, որը Պամուան Կարմաքի մերժավոր գինակիցներից ծեկն էր:

Կարմաքնները Բահրեյնը վերածելով իրենց հենակետի, անընդհատ արշավանքներ էին ձեռնարկում հեռու և մոտիկ հարնամ շրջանների վրա և չեին խուսափում ճակատամարտ տալուց իրենց հակառակորդներին: 902 թ. Կուֆայի մոտ նրանք պարտության մատնեցին Բաղդադի ուղարկված գործերին և ամրապնդեցին իրենց դիրքերը Պարավային Իրաքում:

Ծննդով Ֆարիմյան Խսմախիլական խմանության անզիցող հակառակորդներ, կարմաքնները 903 թ. ներխուժեցին Միջիայի տարածքում զտնվող Սալամիյա ոչ մեծ քաղաքը, որտեղ բարձնված էր ինքնակոչ Խմամ Ռուպայիշալլահը և փորձեցին սպանել նրան և նրա ընտանիքը, բայց խմամը կառողացավ փախչել և փրկել իր կյանքը, սակայն նրա ամրող ընուանիցը ոչնչացվեց: Այդ նույն քականին նրանք պաշարեցին Պամակոսը, որը գրավել նրանց շիաթողվեց: 923 թ. նրանք գրավեցին Բարսան և ընդուակ մոտեցան Բաղդադին:

Կարմաքններն ակտիվ գործողություններ էին ծավալել նաև Արարիայում: 930 թ. նրանք հարծակվեցին Մեքքայի վրա: Այս հարծակումը նշանավոր էր նրանով, որ կարմաքնները Կաարայից տարան «Ան քարը»,

մուտուլանների սրբության ամենակարևոր խորհրդանշներից մեկը, որը կրկին Սեբաստում հանգրիվանեց միայն 951 թ.:

Կարմաքական շարժման հաջողությունների մասին է վկայում այն հանգամանքը, որ այն ընդգրկում էր Մքրասյան Խալիֆայության համարյա ամրող տարածքը, Հյուսիսային Աֆրիկայից նինչև Հնդկաստանի սահմանները:

Բահրենցում հաստատված կարմաքների խալիֆայությունը յուրատեսակ համայնք-պետություն էր, որը գլխավորում էր 6 հզուց կազմված ավագների՝ շեյխների, խորհրդարյաց: Նա իրավատու էր ընդունել համայնքին վերաբերող բոլոր տեսակի որոշումները՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, դաստիարական և այլն: Կարմաքների խալիֆայությունը իրականում իրենից ներկայացնում էր գուրղացիական-արիեստավորական համայնք, որը հիմնված էր համայնքային սորոկատիրության վրա: Ստրուկների թիվը հասնում էր 30 հազարի, որոնց օգտագործում էին զին նաև այն ստրուկները, որոնց օգտագործվում էին կարմաքների անձնական տնտեսության մեջ:

Կարմաքները ծգուում էին համայնքային արդարության և հավասարության սկզբունքների վրա խարսխակած իրենց նրանք համայնքը ստեղծել ստրուկների համայնքային տիրապետության հիմքի վրա: Բայց նրանք, ինչպես և պետք էր սպասել, մատուցեցին անհաջորդության: Անհաջորդություններն սկսեցին նրանց հետապնդել նաև արտաքին ասպարեզում: Կարմաքներին ծանր հարվածներ հասցրեցին Շազմնիները, նրանց դեմ հաջող էին գործում Սամանիները և այլն:

Կարմաքների հեղինակությանը մեծ հարված հասցեց նրանց ֆանատիզմը և դամանությունը, որի պատճառով նրանց շուրջը ստեղծվեց քշնամական մեմոլորտ և շատերը սկսեցին հեռանալ նրանցից: Կարմաքների շարքերը պարակուվեցին և առաջացան առանձին, փոքրիկ աղանդներ: Սկսվեց նրանց պատմության վայրընթաց շրջանը, որն ավարտին հասցրեցին սեւուկները XI դ. կեսերին:

### 3. Յարիմյան խալիֆայության հաստատումը

Յարիմյան խամահլականների հայրարշավը սկսվեց Հյուսիսային Աֆրիկայից, որտեղ 909 թ. կազմավորվեց Յարիմյան խալիֆայությունը.

հետագայում ընդարձակվելով և իր մեջ ներգրավելով նորանոր տարածաշրջաններ:

Պատահականություն չեղ Ֆարիմյան խալիֆայությամ առաջացումը հենց Քյուսիսային Աֆրիկայում: Արդեն նշան ենք, որ խալիֆայությամ այս ծայրամասում իր դիրքերը կորցրել էին Արքայանները: Արքայան խալիֆայությամ տրոհման հնտևանքով Քյուսիսային Աֆրիկայում առաջացել էին ինքնակար, ըստ եռքյան ամեկախ, պիտական կազմակերումներ, իրեմց համապատասխան կաօպակարող ոյնաստիաններով, ինչպես Ալլահինները Իֆրիկերայում, Ուստամինները Ալժիրում, Իրջիզները Մարդիրում և այլն: Ինչպես կանքը ցուց տվեց, այս կազմավորումները կենտրոնակ դրվագ չեկան: Նրանցում ծայր առան ներքին երկպատճենությունները, ուժեղացավ տեղական բնակչության, առաջին հերթին քրթեանքների դժգոհությունը, որը շատ հաճախ վերածվում էր գինված ելույթների, ապա և մկանք նրանց քուլացման գործընթացը: X դարի սկզբներին հյուսիսաֆրիկյան պիտական կազմակորումներն այլևս ի վճակի չեն լուրջ դիմադրություն ցուց տալ որևէ հզոր և կազմակերպված ուժի, եթե այդպիսին հայտնվեր ասպարեզում:

Միա այս առումով Քյուսիսային Աֆրիկայի երկրները հարմար պատաս էին Ֆարիմյանների համար:

Ֆարիմյանների ընտրությունն ընկավ Քյուսիսային Աֆրիկայի վրա նաև այն պատճեառով, որ նրանք չեն կարող նվաճողական ծրագրեր իրականացնել և իշխանություն գրավել Արքայան խալիֆայությամ այլ մասերում: Կենտրոնական մասում՝ Իրաքում, Արքայաններն ինչքան էլ, որ քուլացած լիննին, այնուշանդեմ, զետ ի վիճակի էին պահպանել իրենց դիրքերը: Բացի դրանց, այդունք օրեցօր ուժեղանում էր խամահականների մյուս թե՞ կարմաքները, որոնց հետ բախումներից Ֆարիմյանները նախընտրում էին խուսափել:

Ֆարիմյանների համար դժվար էր ազդեցություն ունենալ և իշխանություն գրավել նաև խալիֆայության արևելյան շրջաններում, որոնք բնակչության մասերում կարենի է ասել, որ Սուհամադաղ մարզական հետո ոչ մի կրոնական կամ քաղաքական հոսանքի արարական աշխարհում դեռևս չեր հաջողվեց այդպիսի լայն ծավալ-

Ֆարիմյանների հաջողություններում մեծ դեր խաղաց քարոզությունը, որը հզոր գենք դարձավ նրանց ծեսքում: Կարենի է ասել, որ Սուհամադաղ մարզական հետո ոչ մի կրոնական կամ քաղաքական հոսանքի արարական աշխարհում դեռևս չեր հաջողվեց այդպիսի լայն ծավալ-

ներով, նպատակառությամբ, մեծ հմտությամբ և վարպետությամբ օգտագործել քարոզչությունը և դրա օգնությամբ հասնել այնպիսի տապալորիշ հաղթանակների, ինչպես դա հաջողվեց Ֆարիմյաններին: Բարդ գիշերը՝ դուքս, դարձան իսմահլական շարժման և քարոզչական մեթնայի գլխավոր դերակատարները:

Դեռ նրանք IX դարի վերջերին և X դարի սկզբներին հոյ Զախար պատրիարքությամբ մեր կողմից արդեն նշված Ուրայդալլահի, որպես իմամի, քացատոցից դրւու գալու և փորկիշ՝ մահոյի ներկայանալու համար: Դուքսները իսլամական աշխարհի համարյա որորի մասերում եւամդուն կերպով նրա գովքն էին ամուս և քանի չին խնայում ապացուցելու, որ հենց նա է «Ժպույալ իմամը», որը փրկելու է մարդկությանը: Նրանց մեջ հատկապես ացի ընկավ Ուրայդալլահի կողմնակից Արու Մրդալլահը, ու ոչ 893 թ. ուղարկվեց Պյուտսային Աֆրիկա իսմահլականության զաղափարները տեղական թերթերական բնակչության մեջ քարոզելու և տարածելու համար: Նա զարմանայիրն արագ կերպով հասավ մեծ հաջորդության: Նրա կողմնակիցների թիվն արագործն ամուս էր:

Ուրայդալլահը, 902 թ., կարողաբների ապատամբությունը ճնշելու հետ, որին նա միացել էր, վախտավ Եգիպտոս, իսկ այնտեղից անցավ Իֆրիկիյա, ապա Մատորի, Ալյասի շրջանը: Մակայա այստեղ նուա քայլու չի եղելն: Նա ընկավ թերթեր խարիֆիականների ծեսքը, որոնց նրան թշնամարար էին վերթերվում: Նրան ծերթակալեցին և բանտ նետեցին:

Իսկ Իֆրիկիյայում իր դիրքերն եր շարունակում ամրապնդել Արու Մրդալլահը: Նրա նոր կազմակորած խմահլական քանակը թերթերական ցեղերի և Իֆրիկիյայի մայրաքաղաք Կայրավանի արաքական կայագորիք աջակցությամբ 909 թ. ամրության տիրագուավ Իֆրիկիյային: Սոլլաթիների դինաստիան տապալվեց և իշխանությունն անցավ Ֆարիմյան իսմահլականների ծեսքը: Բանտից ազատվեց Ուրայդալլահը, որն այդ նույն թվականին ժամանեց Կայրավան և պաշտոնապես հռչակվեց իմամ-իսլամիքա և ուղղահավատների վեհապետ:

Այսպէս, 909 թ. պատմության մեջ հայտնինց մի նոր խալիֆայություն, որը ստացավ Ֆարիմյան իսլամիքայություն ամուսնը: Դա շիական-իսմահլական խալիֆայություն էր, որն իր ամվանակոչության մեջ նշցնելու «Ֆարիմյան» ամուսնը, ոյնանով ուզում էր շնչտել իր ուղղակի կապը մարգարի Մուհամմադի դստեր՝ Ֆարիմյան, և նորորորդի՝ Ալիի հետ, որը, ինչպես նշվել է, Ֆարիմյանի ամուսինն էր:

Ուժայդալլահօ իրեն պաշտոնապես անվանեց ալ-Մահեհի, մուսուլմանների փրկիչ, որը թաքստողից հայտնվել և թագահայտվել է մուսուլմաններին փրկելու և երջանկացնելու համար: Նա խալիֆայությունը կառավարեց մինչև իր մահը՝ 934 թ.:

Մակայն մինչ այդ, նա հասցրեց Ֆարիմյան խալիֆայությունում իսաստատել կառավարման դիմաստիական սկզբունքը և իրեն ժառանգորդ նշանակեց իր որդուն՝ Արու ալ-Խասիմին, նրան տալով «ալ-Կա՛հմ» տիտղոսը, որը նշանակում է «հարության իմամ»:

Ալ-Մահեհին իր տիտղապետությանը միացրեց նաև Ալժիրը, իսկ Սարությունը կառավարող Իղրիմները ընկան երանեց վասալական կախման մեջ: Նա դարձավ համարյա ամրոց Յյուսիսային Աֆրիկայի տիրակալը:

Ֆարիմյան խալիֆայության կազմավորումով ավելի խորացավ իսլամական աշխարհի պատճենումը: Այդ պահից քաղաքական ասպարեզում գոյություն ունենալ երեք ինքնուրույն խալիֆայություններ՝ Աքքայան, Ֆարիմյան և Կորողովայի Օմայյան խալիֆայությունները: Նրանց համար ընդհանուրը «խալիֆայություն» բառն էր, իսկ մնացած բոլոր հիմնական հարցերում նրանք անհաջու հակառակորդներ էին:

Ուժայդալլահի մահեից հոչակվելուց հետո խզումը խմախլական երկու թմբերի՝ Ֆարիմյան խմախլականների և կարմաքների միջև, դարձավ վերջնական: Ֆարիմյան խմախլականները ճամաչում և ընդունում էին Ուժայդալլահի ինմանությունը, կարմաքները՝ շնանաշեցին Ֆարիմյաններին ոչ որպես իմամներ, և ոչ էլ որպես խալիֆաներ: Նրանք մնացին հավատարիմ յոթերորդ իմամ Մուհամմադի իր հաճախին, սպասելով նրա հայտնելուն: Կարմաքները ճախիկինի պես նրա հետ էին կապում ինմանության ամրողացումը և նրա մնավորման ավարտը, որը նշանակուր էր, որ Ֆարիմյան իմամներին այդ պատճական կարևոր առաջելությունը չէր տրված:

Նրանց միջև հարաբերություններն ավելի սրվեցին, եղր Ֆարիմյանները, ի տարբերություն կարմաքների, չվերացրին շարիաթի օրենքները և նրանց գործադրումը, և դադարեցրին հոչակել «մահեհի» հարություն առնելը, քավարարվելով կառավարել որպես խալիֆաներ և իմամներ:

Մակայն ալ-Մահեհին և նրա հաջորդները չեին ցանկանում բավարպվել միայն Յյուսիսային Աֆրիկայով: Իրենց համարելով Ֆարիմյայի և Ալիի ուղղակի ժառանգորդները, նրանք գտնում էին, որ իրավունք ունեն

տապալել Աքբասյաններին և դաօնալ մուսուլմանական աշխարհի միակ լեգիսլիմ կառավարողները:

Ֆարիմյաններն իրենց հայացքն ուղղեցին նախ և առաջ Եգիպտուսին, շատ լավ հասկանալով, որ այդ քաղաքական, տնտեսական և ռազմավարական մեջ կշիռ ունեցող և հարուստ երկրի նվաճումը շրջադարձային կարող էր լինել նորաստեղծ խալիֆայության համար:

Ֆարիմյանները Եգիպտոսը գրավելու առաջին փորձը կատարեցին 914 թ.: Նրանց գործերը բազաժառանգ ալ-Կասիմի գլխավորությամբ ներխուժեցին Եգիպտոս, բավականին խորացան և անգամ գրավեցին Ալեքսանդրիան: Սակայն Աքբասյան գործերը կարողացան պարտության մատնել Երանց և դրւու շպրտել Եգիպտոսի սահմաններից: Նույնական անհաջողությամբ ավարտվեց 919 թ. Եգիպտոսը գրավելու ալ-Մահմետի երկրորդ փորձը: Դրան հաջորդեց բավականին երկար դադար, որը կապված էր Իֆրիկիյայում ներքին խաօնակությունների հետ: Ֆարիմյաններից դժողով բերրերական ցեղեղը և սումնիմեց 943 թ. ապստամբվեցին, գրավեցին Կայրով վաճար և 945 թ. պաշարեցին Ֆարիմյանների մայրաքաղաք ալ-Մահմետիան:

Ալ-Կահմին, որը 934 թ. հաջորդել էր իր հորը և խալիֆայությունը կառավարել մինչև 946 թ., այդ ապստամբությունը մնշել շիազորվեց: Դև վիճակված էր կատարելու խալիֆա ալ-Մանսուրին (946–953 թթ.):

Մնշելով Եթրքին խոռվությունները և հաստատելով հարաբերական կայունություն երկրի ներսում, Ֆարիմյաններն ավելի լավ սկսեցին նախապատրաստելու Եգիպտոսը գրավելու համար: Դա իրագործեց խալիֆա ալ-Մուհամմադ 959 թ.: Նրա հարյուրիհազարամոց բանակը տաղանդավոր գրահրամանառար Շատուհարի գլխավորությամբ այդ նույն տարվա գարնանը ներխուժեց Եգիպտոս և Գիզայի մոտ տեղի ունեցած վճական ճակատամարտում ջախճախեց Եգիպտոսի բանակը ու նույն նրա մայրաքաղաքը Ֆուստադ:

Ֆարիմյանները դրույցին մայրաքաղաքը տեղափոխել Ֆուստադից և Զառուհարիի հրամանով 969 թ. դրվեցին նոր մայրաքաղաքի հիմքները, որը կոչվեց ալ-Կահմին՝ «Կայրոր»: Այսպիսով, Եգիպտոսը դրւու նկատ Քաղաքական տիրապետությունից և դարձավ Ֆարիմյան խալիֆայության ամենազիստավոր շրջանը:

971 թ. Կահմինը հիմնվեց ալ-Ազիար մզկիթը, որը հետագայում դարձավ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր գիտական և կրթական կենտրոններից մեկը:

Խալիֆա ալ-Մուհամմադ ծեռնարկեց մի կարևոր, թեև ամսովոր, քայլ: Նա 972 թ. տեղափոխվելով Էֆրիկյանց Եգիպտոս, իր հետ նոր մայրաքաղաք Կամիլին տեղափոխեց նաև իր բոլոր Շախմիների աճյունները:

Այսպիսով, Ֆարիմյաններին հաջողվեց նվաճնել կամ իրենց ենթարկել Ռիֆիկյան, Ալժիրը, Մաորիքը, Եգիպտոսը, Սիրիան, Արաբիան, Իրաքի որոշ շրջաններ, Դիջազգ Մեծքայով և Մաղրինայով, և այլ տարածքներ: Նա վերածվեց նոր նորագույն կայսրության, որը ծգվում էր Ալյամտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծովի ափնորը:

Ֆարիմյան խալիֆայության գոյության առաջին հարուրամյակը նորի է նրա վերընթաց գաղղացման և քաղաքական ու տնտեսական հզորության շրջանը: Ամրապնդվեցին նրա միջազգային դիրքերը: Նա ակտիվ առևտորական կապեր էր պահպանում աշխարհի տարբեր երկրների հետ: Ֆարիմյանները հավասարակշուկած քաղաքականություն էին վարում ներքին կյանքում: Այդ ուղղությամբ հատկապես այցի էր ընկերում խալիֆա Ազիզը (976–996 թթ.) Նրա ներքին քաղաքականությանը բնորոշ էր հանդուրժողականությունը այլարավանների՝ քրիստոնյաների և իրեանների նկատմամբ: Նրանց օգույում էին ազատությամբ կրոնական հարցերում, գրադաւում էին կարևոր պաշտոններ պետական կառավարման համակարգում, տնտեսության մեջ և այլ քննազավակներում:

Սակայն ամեն ինչ փոխվեց խալիֆա Ֆարիմի գահակալության շրջանում (996–1021 թթ.), մասնավորապես ներքին քաղաքականության մեջ: Խալիֆա Ազիզի տոլերանտ քաղաքականությանը փոխարինեց նկազ այլարավանների նկատմամբ Քաջիմի անհանդուրժողականության քաղաքականությունը, որն ընդունեց աններինու նմերը: Դրա սկիզբը դրվեց 1003 թ., երբ քանիվեցին կամ ավելիվեցին քրիստոնյաններին պատուանող քազմաքիլ եւեղինցիներ: Չքավարարվելով դրանով, նոյեմբեռնորդ Ֆարիմյան–խալիֆականները եկեղեցիների տեղերում նգևիրներ էին կատուցում: Սրբադիմում էին քրիստոնյանների գերեզմանները: Բարեգարսական արարողներն այն ասինանի հասան, որ 1009 թ. քանիվեցին Տիրոց գնրեզմամբ Երուսաղեմում և ալ-Կուսայր վաճը Կահիրենում: Արգելվեցին քրիստոնեական հրապարակային տոնահանդեսները, քրիստոնյաններին պարտադրվեց վգից մշտապես կախնի ծանր փայտյա խաչ, իսկ իրեամերին՝ ծանր գնդեր:

Երկրում քաղաքական և քարոյքական մբնուրուտը խիստ սրվել էր: Միա այսպիսի պայմաններում 1021 թ. անհայտացավ խալիֆա ալ-Համիդը, թեև մինչև իհման իրապարակի վրա է այն վարկածը, որ նրան սպա-

նել են նրա քրոջ գիտությամբ և ծասնակցությամբ, որը դարձավ «անհատացած» խալիֆայի անշափահաս որոյն խնամակալը, բայց փաստորեն խալիֆայության խևական տիրուհին: Սիս այս շրջանից սկսվում է Ֆարիմյան խալիֆայության քաղաքական և տնտեսական քուլացման ժամանակաշրջանը, որը հատկապես դրսորվեց ալ-Մուսրանսիրի խալիֆայության (1036–1094 թթ.) և դրան հաջորդած շրջանում:

#### 4. Ֆարիմյան խալիֆայության հայ կառավարիչները՝ Բաղր ալ Գամալի և Աֆդալ

Ֆարիմյան խալիֆաների հետ պատահեց այն, ինչ պատահել էր Աբրայանների հետ՝ նրանք խաղակից դարձան էթնիկական տարրների խմբերից կազմավորված իրենց զվարդիայի, առաջին հերթին քուրթի ժնուրում: Ֆարիմյան խալիֆաների, այդ բվում և ալ-Մուսրանսիրի, զինված ուժերը և թիկնապահ զնուրքը կազմված էին թերթերների, սունանցիների և թուրքերի զումարտակներից: Նրանց ոչ միայն հաջոտ չէին միջանց հետ, այլև բացահայտ քննամանը էին տաճում միջանց նկատմամբ: Նրանք Եգիպտոսց բաժանել էին յուրատնասկ ազդեցության գոտիների և նրանցից յուրաքանչյուրը տիրապետող դիրքեր ուներ համապատասխան զուտում: “Պայթարն այդ երեք ռազմական խմբավորութերի միջև խևական քառսային վիճակի մեջ դրեց խալիֆայությունը: Առանձնակետ ժամը էր դրույթունը մայրաքաղաք Կահիրենում, որտեղ տեր ու տնօրին էին թուրքական զվարդիականները: Նրանց չին ենթարկվում խալիֆային և իրենց զորակիրամանաւարմների գլխավորությամբ ան ու տարսափ էին տարածել մայրաքաղացում:

Անծխանելի դրույթան մեջ հայտնված խալիֆա ալ-Մուսրանսիրը, 1073 թ. հարկադրված ոյմեց Ալքի կառավարիչ հայազգի Թաղր ալ-Գամալի (Զամալի) ալ-Մըրանիի օգնությամբ, հրավիրելով նրան և նրա հայկական զնուրին Կահիրե, անհնազանդ թուրքական զվարդիականներին սահմանադրելու և նրկուում կարգ ու կանոն հաստատել համար: Բայցն ըստունց խալիֆայի հրավերը և հայերից կազմված իր զորքերով 1074 թ. մտավ Կահիրե: Նա շատ արագ և փայլուն կերպով իրականացրեց իր ատարելությունը, ջախջախնեց թուրքական զորքերին, պատժեց նրանց հրամանաւարմներին և նրանց հետ համագործակցած եղիպտական պաշտոնյաներին:

Ալ-Սուսրամնայիրը Բաղր ալ-Գամալիին օժտեց ամենալայն պետական և ռազմական լիազորություններով: Նա նշանակվեց վազիր և խալիֆայական գրոքերի ընդհանուր հրամանատր՝ ենի՛ ալ-Չույուշ, ինչպես նաև խմահիլական միսիոներական կորպուսի ղեկավար: Նրա ծննդում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը և նա 20 տարի՝ 1074–1094 թթ., մինչև իր մահը, նրավ երկրի փաստական և անսահմանական իշխողը: Նա կարողացավ երկիրը դրան քեզե քառոսային վիճակից հաստատել օրինականությունը ու կարգապահությունը և նոր շունչ փշել հոգևարքի մեջ հայտնված Ֆարիմյան խալիֆայության:

Երկրում հաստառված խաղաղությունը և կարգապահությունը նպաստեց տմունական վետերանն, որին Բաղրը և նրան հաջորդած որդին, մեծ Եշանակություն էին տալիս: Բաղրը, իրեն զգալով քավականին ուժեղ, հարուրյուն տվեց ամրող մուսուլմանական աշխարհի առաջնորդ լինելու Ֆարիմյանների հավակնություններին: Նրա մեծագույն հաջորդություններից շարքը պատր է դասել նաև այն, որ նա, առեղծելով լավ կազմակերպակած և կարգապահ զինված ուժեր, որոնց միջուկը կազմում էին նրան նվիրված հայկական գրադադարը, և հիմնալի կերպով օգուազործելով խմահիականների քարոզական արվեստը, կարողաց ամրապնդել Կամիլիի իշխանությունը և ազդեցությունը խալիֆայության ծայրանասերի վրա, մի կողմից, և հարուրությամբ ողնուականից սեղուկներին, մյուս կողմից:

Բաղր ալ-Գամալի ալ-Արմանիի ոլիբօնը այն աստիճանի ուժեղ էին, որ նրա մահից հետո, որը տեղի ունեցավ 1094 թ., ոչ ոք չեղ կասկածում, որ նրան փոխարինելու էր նրա որդին, որն իր խելքով և գենքով սուսակին օրվանից ների էր իր՝ Բաղրի, ամփոխարինելի աջակեցը: Եվ, իրոք, խալիֆա ալ-Սուսրամնայիր 1094 թ. վագիրի և գործնիրի հրամանատարի՝ նաիր ալ-Չույուշի պաշտոնում նշանակվեց Բաղրի որդուն՝ Մամիք ալ-Աֆրայիլին, որը հայտնի է նաև ալ-Աֆրայ Շահնշահ անունով: Նա իր ծննդում կենտրոնացրեց ամրող քարծրագույն իշխանությունը և դարձավ Ֆարիմյան խալիֆայության իրական կառավարողը, մնական դարձնելով խալիֆայի պաշտոնը:

Աֆրայն ամեն քանում նրավ Թաղր ալ-Գամալիի գործի հաջող շարունակողը: Նրավ մի պահ, նոր ոչ միայն խալիֆա ալ-Սուսրամնայիր, այլև նրան հաջորդած խալիֆաներ Մուսաքալին (1094–1101 թթ.) և Ամիրը (1101–1130 թթ.), լոկվ կախման մեջ էին գտնվում Աֆրայից, յիամարձակելով հակառակվել նրա կամքին:

1094 թ., Բաղրի մահից քիչ անց, վախճանվեց նաև ալ-Մուսթամ-սիրը: Նա գահաժառանգ էր նշանակել իր ավագ որդի Նիզամին, որը նա-նաշել և հաստատել էին խամախական հեղինակավոր առաջնորդները: Սակայն ալ-Աֆղալը, անտեսելով այդ բոլոր, խալիֆա նշանակեց նրա կուսանք որդում՝ ալ-Մուսթամին: Դա համարձակ էր ոչ համուզն քայլ էր Աֆղալի կողմից, քանի որ նա մարտահրավիր նետեց և խախտեց խամախական մի շատ կարուղու հիմնադրույթի, խս-լիֆայի կողմից իր հաջորդին ընտրելը համարվում էր աստվածային կամքի իրականացում և որպես այդպիսին կարող էր տեսի ունենալ միայն մեկ անգամ: Հետևապես, այդ որոշումն անհնար էր փոփոխու-թյան ենթակել:

Աֆղալի այդ քայլը ծամր դրույթամ մեջ դրեց խամախական ավան-դույրներն անառարու պահելու կողմնակիցներին: Նրանք կամ պետք է ընդունեին Աֆղալի որոշումը, կամ ըմբռառանային դրա դեմ: Խամախա-կանների մի ազդեցիկ խումբ, հիմնականում խալիֆայուրյան արևելյան շրջաններում, հրամարվեց օրինական ճանաչել Աֆղալի որոշումը: Խևկ ոնանք, այդուհանդերձ, ընդունեցին այն և այդ հոդի վրա պառակտում առաջացավ Ֆարիմյանների շարժերում: Սակայն ամենազդր Աֆղալը անտեսեց այդ բոլորը և շարունակեց իր քաղաքականուրյունը:

Մուսթամին խալիֆա դարձնելը պնտը է քաջատրել նրանով, որ նա բույլ անձնավորություն էր և չունեց որևէ հուսալի քաղաքական և սո-ցիալական հենարան: Նման խալիֆայի դեպքում, Աֆղալը պահպանում էր խալիֆայուրյան փաստացի դեկավարի իր դիրքերը:

Մուսթամին մահից հետո, Աֆղալը խալիֆա հօշակեց նրա հինգա-մյա որդում, որին հենց ինքը՝ Աֆղալը, շնորհեց Ամիր տիտղոսը: Աֆղա-լը դարձավ անշահակառ խալիֆայի խամակալը, որն ավելի ամրապն-դեց նրա անսահմանափակ իշխանությունը: Եվ Ֆարիմյանների խալի-ֆայուրյունում Աֆղալ Շահնշահը իր այդ կարգավիճակը պահպանեց մինչև իր մահը, որը տեսի ունեցավ 1121 թ.:

Այսպիսով, մոտ կես դար Ֆարիմյան խալիֆայուրյան փաստացի կառավարողները եղան երկու հայագիտ ականավոր պետական, քաղա-քական և ռազմական գործիչներ, հայտ և որդի Բաղր ալ-Գամալին և Աֆ-ղալ Շահնշահը, որոնց անջնջելի հետը են բոլել Ֆարիմյան խալիֆայու-րյան, ի մասնավորին, Եգիպտոսի պատմուրյան մեջ: Նրանց դերը հենց այդպես է գնահատվում պատմագրության մեջ, ժամանակի արար պատ-միչների Մարտիզի, իրն խալիքանի, եվրոպական պատմաքանների,

ինչպես Ա. Մյուլլեր, ոռւս հետազոտողներ Բ. Տուրաևի, Ի. Ֆիլշտիմսկու, արաբական պատմության հմուտ գիտակ Ֆ. Շիրքին և այլոց կողմից:

Մաքրիզին և Իրն Խալիքանը շեշտում են, որ խալիֆա ալ-Մուսանիրը Բայրո ալ-Գամալիին իր հայոց գորազնոյով Կահիրե կամշեց մի այնպիսի ծանր պահի, երբ Եգիպտոսում սաստիկ սուլ էր, տարրեն էրնիկան խմբերից կազմված գործերը խուզություններ էին թարձրացնում, վագիրների հրամանները չեն գործադրվում, երբ սևամորթները գորակի էին Վերին Եգիպտոսը և այն, «որպեսզի իր պետությունը կարգի դնենու պաշտոնը ստանձնեն»: Եվ նա, ընդունելով Խալիֆայի տառաջրկությունը, փայլում կերպով է կատարում այդ գործը, մայրաքաղաքում և գավառներում «բնացինց և ամում բռնու կանոնունախույս տարրերին»: Հասուն Ծցվում է Բաղրի քայլացակամ Վերաբերմունքը զյուղացիության համեմատ, որնց նա երեք տարի ազատում է բռնու տեսակի հարկերից, որը վճարեան նշանակություն ունեցավ երկրի տնտեսական դրույթամբ բարելավման համար:

Ա. Մյուլլերը ալ-Մուսանիրի կողմից հայացքի Բայրին Կահիրե հրավիրելը և նրան իշխանական լայն լիազորություններով օժտելը համարում է «խելացի միտք»: Նշելով, որ 60-ամյա Բաղրի Խօսանդուն ամենավլորդաբան էր, որը շիրապիրքինց դաստիք քաններով, Ա. Մյուլլերն ընդգծում է, որ նա խաղաղություն հաստատեց Եգիպտոսում, որն սկսեց ուժի կանգնել և ծաղկեց, ավելացնելով, որ նա այդպիսի վիթակում Եգիպտոսի կառավարումը փոխանցեց իր որդուն, որն «ընդունեց ալ-Մալիք ալ-Աֆրայ՝ «Ամենակատարյալ քաջավոր» տիտղոսը: Նա հենց այդպիսին է եր երկիրը կառավարելիս»:

Արար Խայտի պատմարան Ֆ. Շիրքին Բաղր ալ-Գամալիի անվան հետ է կապում ծանր դրույթամ մեջ հայտնված «Նարիմյան Խալիֆայության կյանքի ուր շունչ տալը»: Նա Բաղրի ամենամեծ ծառայություններից մեկն է համարում այն, որ նա կարողացավ երկիրը քառոսից դուրս թքել:

Բաղր ալ-Գամալիի և Աֆրայի գործունեությունը շատ քարոզ գնահատականի է արժանացել Արաբական Խալիֆայության պատմության լավագույն մասնագետներց նեկի, Ի Ֆիլշտիմսկու կողմից: «Նրանց ժամանակ, — գործը է պատմարանը, — Եգիպտոսում հաստատվեց Խաղաղություն և կարգ ու կանոն: Նրանք կարողացան բարելավել երկրի տնտեսական դրույթունը և փաստորն կասեցրին Նարիմյան Խալիֆայության կործանումը մի ամբողջ հարյուրամյակ»:

## 5. Ֆարիմյան Խալիֆայության կործանումը

Աֆղանի մահից հետո, վիճակը խալիֆայությունում աստիճանաբար սկսեց վատանակ: Բանսարկությունները, նախանձը և թշնամուրյուն XII դարի 40-ական թվականների վերջերից դարձան արքունիցում տիրող հիմնական բարերը: Դավադրությունների զոհ էին դաշնում ոչ միայն վագիրները, այլև խալիֆան, ինչպես խալիֆա ալ-Չաֆիրը, որը սպանվեց 1154 թ.: Կենտրոնական իշխանության վերահսկողությունը ժայրամասերի վրա բռլացավ, դարձաւ զլուս բարձրացրեցին զինվորական տարրեր խմբավորություններ, որոնց պատկանում էին հակադիր ճամբարների: Նրանց մտահոգությունն այլևս պետության ամրապնդման հոգսերը չէին, այլ սեփական իշխանության և դիրքերի ամրապնդումը: Ֆարիմյան վերջին երկու խալիֆաները երեխաներ էին: Սպանված Զաֆիրի որդին խալիֆա հօջակեց, երբ նա ընդամենը չորս տարեկամ էր, իսկ նրան հաջորդած ալ-Ապիրը՝ ինը տարեկան: Երկիրը նույն անունից կառավարում էին մարդիկ, ույթը հոգ էին տառում միայն իրենց և իրենց խմբավորությունների բարեկեցությամ, հարստություն կուտակելու և հմարավոր մոցակիցներին ասպարեզից վերացնելու մասին:

Վատանավ նաև Ֆարիմյան խալիֆայության միջազգային դրույթնեց: Նա թույանում էր օրենքոր և կորցնում էր դիրքերը: Նրան դժվար էր պայքարել ասպարեզում հայտնված Սելջուկյան մեծ տուքանության հետ, որն էր տիրապետությունը էր հաստատել Իրաքում և Իրանում, արդեն ներբափանցել Փոքր Ասիա և այլը: Խալիֆայությունը շոշափելի հարվածներ ստացավ խաչակրիներից, մասնավորապես նրանց կողմից հիմնված Երևանիների քագավորությունից: Ֆարիմյանները կորցրուցին իրենց տիրապետությունը Դյուսիսային Աֆրիկայում և այլն:

Այսպիսի քաղաքական հեղեղուկ պայմաններում շատ բան կախված էր այն քանից, թե ով է տվյալ պահին երկրի ուժնոր անձնավորությունը, որը իր ծնուցում էր պահում երկրի դեմքը: 1169 թ. Ֆարիմյան խալիֆայության վագիր դարձավ Սալլահ աղ-Դիմը: Նա 1171 թ. տապալեց Ֆարիմյան վերջին խալիֆա ալ-Ապիրին և իշխանությունը վերցրնց իր ծնուցը: Ֆարիմյաններին վիխարինեցու նկան Այրուբինները:

### III. ՄԵԼԶՈՒԿՆԵՐԸ ԵՎ ՄՈՆԴՈՒՆԵՐԸ

#### 1. Արքասյան խալիֆայությունը սելջուկյան տիրապետության ներքո

Սելջուկների պետությունը պատմության բատերաբեմում հայտնվեց XI դարի 30-աման թվականներին, և մեծ դերակատարում ունեցավ Միջին Ասիայի և Մերձավոր ու Միջին Արևելյան պատմության մեջ:

Նրա անվանումը կապված է բուրքական օրդուզ ցեղի ցեղապետներից մեկի՝ Սելջուկի անվան հետ: Օղուզների քոյզորական ցեղախումբը, շարժվելով դրագական տափաստաններից, հաստատվեց Բուխարայի շրջակա տարածածքներում, որտեղ և ընդունեց իսլամը որպես կրոն, հարելով սուննիզմին: Սելջուկը և նրա տղամերն աստիճանաբար գրավեցին Ետրանոր տարածածքներ: Սակայն Սելջուկի երկու թռաններին՝ Զարդի-թեկին և Տուրդիլ-թեկի և էր վիճակված Սելջուկյան պետություն հիմնելու առաջերկրությունը: Եղրայրները նվաճեցին Պազճինիների տիրապետության տակ գտնվող Խորասանը, Մերքը և Նիշապուրը: 1038 թ. Զարդի-թեկը սույցան հօչակվեց Մերքուր, իսկ Տուրդիլ-թեկը և Նիշապուրը: Նրանք իրենց տիրություններին միացրին Բալիջը, Գուրգանը, Թաքարստանը, Խորեզմը, Ջամահամը, Ուսյը և Սպահանը: Հիմնվեց Սելջուկների Սելջուկությունը:

Տուրդիլ-թեկը և քոյզորներից կազմված իր բանակը շարժեց դեպի Բաղդադ, որը գրավելը շարունակվեց էր մնալ ամեն մի նվաճողի գլխավոր նպատակներից մեկը: 1055 թ. ղեկաններների 18-ին օա իր բանակի գլուխն անցած հայտնվեց Բաղդադի մասուցմերում: Ակնկալվող մեծ ճակատամարտը տեղի չունեցավ: Օղուզական բանակը Բաղդադին մոտենալու պահին, Բաղդադի զինվորական կառավարիչ, թուրքական զորակիումանատար ալ-Բասսասիդը, հապճապորեն հեռացավ Արքասյանների նալուածադիրից, անպաշտուական թողեներով խալիֆային և թագավորությանը: Բուխարի տիրապետությունը Արքասյան խալիֆայության վրա վերացվեց: Սակայն նա ընկած եղի տիրապետությունների՝ Սելջուկների լծի տակ:

Արքասյան խալիֆա ալ-Կահիմ իր պալատում մեծ պատիվնորով ցնորւնեց Տուրդիլ-թեկի, նրա գլխին դրեց երկնջայուր բազ, իսկ մեջքին կապն գոտի՝ երկու բրերուց: Խալիֆան նրան շնորհեց «Արևելյան և Արևմուտքի բազավորի» տիտղոս, սակայն Տուրդիլ-թեկը և պաշտոնա-

պես կրում էր «աշ-սուլթան» կոչումը: Նա դարձավ ամրող խալիֆայության խնամակալը:

Եվ, այսպիս, հնագետ Բրեդների ժամանակ, այժմ ևս, Սելջուկների տիրապետության օրոց, խալիֆայի պաշտոնը չվերացավ: Խալիֆան մնաց իր գահին, բայց լրիվ իշխանազորությունը: Նա մնաց այսպիս կոչված հոգևոր առաջնորդ, այն է ոչ լիարժեք: Դրա մասին է վկայում այն փաստը, որ ուրաքարյա խուռայքի ժամանակ Արքայան խալիֆայի անվան հետ միասին հիշատակվում էր Սելջուկյան սուլթանի առումը:

Տուրքիլ-թեկ և Բաղդադից շարժվեց հյուսիս, իր պետությանց նորանոր տարածքներ միացնելու նպատակով և ժամանակավորապես բացառացնելով Բաղդադից: Դրանից օգտվեց Բասսասիլոց, որը կապեր եր հաստատել Ֆարիմյանների հետ և պայքարում էր ի շահ նրանց: Նա 1058 թ., հենվելով իր դաշտամիական գործորի վկա, վերագրավեց Բաղդադը: Բասսասիլի ճնշման տակ Արքայան խալիֆա ալ-Կամիլ ստորագրեց մի փաստառույթ, որով ինքը և բոլոր Արքայանները հրամարվում էին իրավունքներից հօգուտ Ֆարիմյան խալիֆա ալ-Մուսանցիրի: Ալ-Կամիլ Մուսանամիրին Կահիր ուղարկեց խալիֆայության բոլոր խորհրդանշները, այդ թվում և խալիֆայական թիվնուոց:

Ինձանուու այդ մասին, անեղ Տուրքիլ-թեկ և իր հզոր ժամանելով վերադարձակ և կրկին գրավեց Բաղդադը, ցուց դաշտամինների քամակը, ծերակալեց և մահապատճի ենթարկեց Բասսասիլին և վերջնականապես ու անվերադարձ կերպով կործանեց Բուհների իշխանությունը: Նա ալ-Կամիլին վերահսկուածուց խալիֆայի իր իրավունքների մեջ և շնորհ հայտարարեց խալիֆայական իրավունքները Ֆարիմյաններին փոխանցելու հարկադրական որոշումը:

Սելջուկյան պետությունն իր հզորության զագարնակետին հասավ Տուրքիլ-թեկ (1037–1063 թթ.), Ալփ Մրալամի (1063–1072 թթ.) և Մալիք շահի (1072–1092 թթ.) օրոց:

Ալփ Մրալամը, որը Չաղիրի-թեկի որդին և Տուրքիլ թեկ և եղբորորդին էր, շարունակելով իր նախորդության նվաճողական քաղաքականությունը ընդարձակեց Սելջուկյան պետության սահմանները, որի մեջ մտան ամրող Իրանը, Իրաքը, Միջիայի մեծ մասը, Անդրկովկասը և այլն: Նա 1065 թ. գրավեց Աթին, իսկ 1071 թ. Սանագկերտի մուտ տեղի ունեցած Ծակատամարտում զվարվել քախօսից բյուզանդական ժամանակակից բանակը բանակը և գերի վերցողեց բյուզանդական կայսր Բյոնանու զիրօքենեսին: Սելջուկները մտան Փոքր Ասիա, որտեղ նրանք իշմնեցին

իրենց նրկորոր պետությունը, Ռուսի կամ Իկոնիայի սուլթանությունը: Ինչպես նշշու նկատել է Ֆ. Դիբրին, այդ պահից սկսվեց Փռք Ասիայի թուրքացումը միջնասիական տափաստաններից ներխուժած քոչվոր թուրքական-օղուզական ցեղենի կողմից:

Սելջուկյան սուլթանները աստիճանաբար սկսեցին յուրացնել կատավարման Արքայան և պարսկական ծննդը ու մերուները: Նրանց մոտ նև մեծ դիրակաստարում ուներ վազիրը, որոնց մեջ այքի է ընկել Մալիք շահի վազիր Նիզամ ալ-Մուլքը, որը կենտրոնացված պետության ջառագույն էր և գտնված էր, որ սուլթանները պետք է ունենան հզոր քանակ՝ զանազան էմիրների և տեղական կառավարողների կենտրոնախույս ծգուռնմերոց գույքու, Սելջուկների սուլթանության հզորությունն ապահովելու և տարածքային ամրողականությունը պահպանելու համար: Մեծ տեղ հատկացնելով կրթությանը և մշակութին, Նիզամ ալ-Մուլքը 1065–1067 թթ. Բարղաջում հիմնեց բարձրագույն դպրոց, որը նրա անունով կոչվեց «Նիզամիյա»: Նրա հրորորներով Մալիք շահը հիմնեց աստղադիտարան և նոր բացված այդ աստղադիտարանում 1074–1075 թթ. գումարեց ժամանակի ականավոր աստղագետների ժողով, առաջարկելով նրանց բարեփոխմել պարսկական տոմարը և ընդունել նորը: Նրանք սուլթանի այդ հաճճարարությունը կատարեցին հաջորդությամբ և ստեղծեցին նոր տոմար, որը կոչվեց Զալալի:

Այլի Արաւանին հաջորդած նրա որդին նույնպես հրապուրվեց արաբա-պարսկական մշակություն և տուրք տալով դրան, իրամարզեց թուրքական ամունից և գահ բարձրացավ Մալիք շահ անունով, ստեղծելով մի նոր անուն, բաղկացած արարական «մալիք» և պարսկական «շահ» տիտղոսների համադրումից, որոնցից երկուսն էլ նշանակում են «թագավոր»:

Մալիք շահը հաջորդությամբ իրականացնում էր կենտրոնացված հզոր սուլթանության ստեղծելու իր վազիրի ծրագիրները: Նրա զահակալության տարիներին Սելջուկների Մեծ պետությունը վերածվել էր մի հսկայածավալ կայսրության, որն լայնությամբ տարածվել էր հնդկական սահմաններից, Կաչգարից մինչև Երուսաղեմ, իսկ Երկարությամբ Կոմիտանինուպոլիսից մինչև Կասպից ծով: Նրա մայրաքարտաքը Սպահանն էր: Իսկ Ալի Արաւանը երթեց էլ չեղավ Բաղդաջում: Միայն Մալիք շահը իր մահվանից քիչ առաջ կառավարության նստաց տեղափոխեց Բաղդայա:

Սալիք շահի մահվանից հետո սկսվեց Մեծ Սելջուկների աստիճանական թուլացումը, մրցակցությունը բազմաժամանակների, եղայրների և ազգականների, զանազան մօծ ու փոքր նվիրների միջև և տրոհումը մի քանի կիսանկախ պետությունների, որը, ի վերջո, 1194 հանգեցրեց նրա տիրապետության վերացմանը Արքայան խալիֆայության վրա:

Այդ խանունաշխոր վիճակից օգտվեցին երկու գլխավոր ուժներ՝ Խորեզմը և Մերքասյան խալիֆայությունը:

Խորեզմը գրադեցնում էր Ամու Դարյայի ստորին հոսանքի քարերեր տարածքները և հաջողությամբ կարողանում էր դիմագրավել տարրեր քշնամական հարմակումները և պահպանել իր անկախությունը: Դեռևս 995 թ. Խորեզմի կառավարող Մամունիների ոյն համատիան ընդունեց «Խորեզմշահ» տիտղոսը: Սակայն 1041 թ. նա ընկալ Մեծության ի տիրապետության տակ, թեև հարկ է նշել, որ սելջուկյան տիրապետությունը երրեք էլ ամուր չի եղել Խորեզմում և իրականում կրտել է ծնական թույզը: Այս հանգամանքը վերական դեր խալաց հորեզմի պետական և քաղաքական դիրքերի վերականգնման գործում, երբ Մեծության պետությունը բռնացավ: XII դարի վերջերին Խորեզմշահերն ընդարձակեցին իրենց տիրությունը և արտեն XIII դարի սկզբներին նրանց տիրապետությունը տարածվում էր Մավլանամահրի, Արևմտյան Շրամի, Աֆրանուանի և Անորկուվլասի մի մասի վրա:

Մելջուկյան պետության բռնացումից փորձեց օգտվել նաև Արքայան խալիֆա ան-Նասիրը (1180–1225 թթ.): Նրա նոր դիրքորոշման վրա աղդեցություն ունեցավ ոչ միայն սելջուկների թուլացումը, այլև Ֆարինյան խալիֆայությունը 1171 թ. տապալած և Եգիպտոսի ու Սիրիայի սուլթան հարծած Սալահ առ-Դինի համեմատ գալն ի պաշտպանություն Արքայան խալիֆաների: Նրա հրամանով խուսրայի ժամանակ նորից սկսվեց հիշատակվել Արքայան խալիֆայի անունը: Իսկ ու նշանակում էր, որ ամենազոր Սալահ առ-Դինը վերականգնում էր Արքայանները գնրակայությունը արարական աշխարհի այդ երկու կարևոր երկրներում:

Ան-Նասիրը կապերի մեջ մտավ Խորեզմշահերի հետ և դրույթ Խորեզմշահերը, որոնց իրենց սեփական նպատակներն էին հետապնդում, որի մասին անտեղյակ էր ան-Նասիրը. Իրոք, պատերազմ սկսեցին սելջուկների դեմ: Վճռական ճակատամարտը Թակաչի և Մեծության սուլթան Տուլյիլ II միջև տեղի ունեցավ 1194 թ., որն ավարտվեց Մեծության

սուբբրանի կատարյալ պարտուքյամբ: Դրանով վերացավ Սելջուկյան այդ ճյուղի տիրապետությունը Իրառում և Քրդատանում:

Խալիֆա ան-Նասիրը հավատացած էր, թե Թակաշը նրան կիանձնի հաղթանակով մեռը թերած տարածքները: Սակայն Թակաշը միանգամայն այլ կերպ վարվեց, ավելի ճիշտ վարվեց այնպես, ինչպես Բաղդադ մերժումած մյուս նվաճողները: Նա իր անունով դրամ հատեց և իր ճնշորում կենտրոնացից ամբողջ աշխարհին իշխանությունը: Խալիֆա ան-Նասիրին, ինչպես նրա նախորդուներին, բաժին հասավ հոգևոր «ղեկավարությունը»:

Բայց Խորեզմշահերը դրանով ջրավարարվեցին: Թակաշին հաջորդած նրա որդին, Ալա ադ-Դին Մուհամմադը (1200-1220 թթ.), որը տանձլով մի շարք հաղթանակներ, Խորեզմշահերի պետությանը կօքաց Պարսկաստանի մեծ մասը, Բուխարան, Սամարղանդը և Ղազանից, ծրագրում էր տապալել Արքայաններին և վերջնականական լուծնի շիաների հայութանակներ տևող պայքարը իշխանության համար: Նրա նպատակն էր Արքայանների դիմաստիայի տապալումից հետո խալիֆայության գահին նատենանել Սլեիի հետևորդներից որևէ մեկին: Բայց Խորեզմշահերի այս ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալ:

Ասպարեզ իջակ մի նոր քաղաքական ուժը, որը խառննց բոլորի քաղաքական ծրագրերը:

Խոսքը Շինօգիգ խանի և մոնղոլների մասին է:

## 2. Մոնղոլները և Արքայան խալիֆայության կործանումը

Մոնղոլները քաղաքական ասպարեզ իջան դեռևս XI դարի վերջերին, Ալբայի և Կենտրոնական Ասիայի իրենց հարևան ժողովուրդներին և նրկոներին անհանգստացնելով մշտական հարձակումներով, որոնց հիմնական նպատակը քալանը ու կողովուտն էր: XIII դարի սկզբներին մոնղոլական տարրեր ցեղեր միավորվելու են մեկ միության մեջ, որը գլխավորում է ցեղապետներից մեկը՝ Թեմուշինը: 1206 թ. ցեղերի ներկայացուցիչների համաժողովը՝ կուրուլտայը, նրան ընտրում է քաջավոր և կոչվում Շինօգիգ խան: Նա մի նույնուն, դաման, խելացի և նենց գրահրամանառար էր, որը շատ կարճ ժամանակամիջոցում կարողացավ մոնղոլական ցեղերի միությունը վերածել մի հզոր ռազմական պետության, որն ահ ու սարսափ էր տարածում ամբողջ աշխարհում:

Չինգիզ խանը իր տիրապետության տարիներին (1206–1227 թ.) կարողացավ նվաճել և իր խամությամբ միացնել Յուսիսային Չինաստանը, Խորեզմահերի տարածքների մեջ մասը (սարսափահար Ալա առ–Ղին Խորեզմահար Փախսավ և երկար դնձերություններից հետո այսաւտանց Կասպից ծովի կղզիներից մեկում, որտեղ և մահացավ 1220 թ.), Միջին Ասիան և այլն: Սոնդուղական հորդաները ամեն ինչ ավելում, իոյ ու նոխիր էին դարձնում իրենց ճանապարհին, անողոյ կերպով սրի մատնում ճարդկանց, չխնայելով ոչ կանանց և ոչ էլ մանուկներին: Գրավելով Երաքը, երա 100 հազար բնակչություն մոնղոլների սրից փրկվեց միայն 40 հազար մարդ: Չանգվածային կոտորածներ տեղի ունեցան Սանարդանում և Բալխում, իսկ Խորեզմը հիմնահասարակ կործանվեց: Կոտորելով Բուխարայի բնակչություն (1219 թ.), Չինգիզ խանը նորա հոչակավոր մզկիր վերածեց ախտոյի: Ընդհանրապես մոնղոլները, որոնց պատերազմական գործողություններում և նվաճողական քաղաքանակություններում մեծ նվաճումներ հաջանագործ չափազանց «հոգատար էին» մինչեւ նկատմամբ և նվաճված վայրերում ըստվագույն շինությունները շաբան հաճախ էին վերածում ախտոների: Փորձելով արդարացնել իր անույթ դամանությունը, Չինգիզ խանը Բուխարան ավերածությունների ենթակեցլոց և զանգվածային մոռք կազմակերպելուց հետո, հայտարարում է: «Ես Աստծո օնտրակն եմ, որն ինձ ուղարկել է մարդկանց պատժելու մրանց մեղքերի հանար»:

Չինգիզ խանի մահից հետո, նույն քաղաքականությունը նույն դամանությանը վարժեցին նրան հաջորդած Մեծ խաններ՝ Ռոգինեց, Գյուլց և մյուսները: Նրանք նորանոր տարածքներ գրավելով և առաջ շարժվելով զեայի արևմուտք ու ընդարձակելով իրենց կայսրության սահմանները, աստիճանաբար մոտենաւ էին Բաղդադին: Աքրասյան վերջին չորս խալիֆաները՝ ալ–Խասիրը, ալ–Զահիրը, ալ–Սուլյամիրը և ալ–Մուսրասիմը, փակչական Բաղդադում, ահ ու դորի մեջ էին, ի վիճակի չլինելով որևէ քայլ ճեմարկել պաշտպանվելու համար:

1251 թ. Չինգիզ խանի գահին է նստում որպես մեծ խան նրա բոոց՝ Մոնղոլներ: Նա իր առջև կոնցեսու խնդիր որոշ գրավել Բաղդադը և վերացնել Աքրասյանների խալիֆայությունը: Այդ դժվար խնդիրը նա հանձնարարություն իր Եղբարը՝ Շուկայու խանին, որը 1253 թ. մի մեծ գրաքանակի զրկին անցած, դուրս եկավ Մոնղոլիայից և շարժվեց Բաղդադի ուղղությամբ: Նրա նպատակը ոչ միայն Աքրասյան խալիֆայության, այլև այսպիս կոչված ասսասինների վերացումն էր: Ասսասինները խ-

ճահլական-շիական մի աղանդ էին, որոնք իրենց նպատակներին հասնելու գլխավոր միջոցը համարում էին իրենց հակառակրթների սպառությունը, որը երանք նախապատրաստում էին մեծ զայտնապահութամբ և իմամցով։ Երանք համարվում էին շատ վտանգավոր ծայրահեղականներ և ամենուր առեղջել էին վայսի մքնոյրու։

Պուլադուն նախքան ասսասինների դեմ գրքովություններ սկսել, առաջարկեց Աքքայան վերջին խալիֆա Մուսաֆահմին (1242-1258 թ.) միանալ իրեն և համատեղ ուժերով վերացնել մարդասպան ասսասիններին։ Սակայն խալիֆան չքարենիանց պատահանմի արժամացնել Պուլադուն, ոննոյների ահեղ դեկավարներից մեկին։ Պուլադուն գործեց միայնակ և 1256 թ. կարողացավ գրավել ասսասինների ռուրությունները, այդ բվում նրանց միջնաբերդը համուսացող Ազամուրը, մահացու հարված հասցնել և վերացնել նրանց։ Պուլադուն այնքան անողոք էր, որ մորթեց ռուրություններին ու մանուկներին, ասսասինների օրիենտ արմատախիլ անելու համար։

Պուլադուն, լուծերով ասսասինների հարցը, 1257 թ. սեպտեմբերին վերջանագիր ուղարկեց խալիֆա Մուսաֆահմին, պահանջելով նրանց անձնատուր լինել։ Դա ռուրությին նոր իրավիճակ ստեղծեց։ Սա արդեն նման չէր նախկին նվաճողներին, որոնք մտնելով Բաղդադ, խալիֆային գահընկեց չեն անում, ընդհակառակը, նրա հրովարտակով ամրապնդում էին իրենց կարգավիճակը, խալիֆային բողնուկ հազընը առաջնորդի ֆունկցիանները։ Մոնղոլական գորակրանաւուրը խալիֆայից պահանջեց նաև քանի թաղողական պատերը։

Խալիֆայի պատասխանը Պուլադունի խուսափողական էր, որը, սակայն վերջինիս կողմից ընկալվեց որպես վերջնագրի մերժում։

1258 թ. հունվարին Պուլադունի մոնղոլական գործերն արդեն կանգնած էին Աքքայան խալիֆայության մայրաքաղաքը Բաղդադի դարպասների մոտ։ Միայն այդ ժամանակ, զիտալցելով կախված ահեղ վտանգի իրական և մոտալուս լինելը, խալիֆան և նրա խորհրդատուները վերջապես փորձեցին քանակցությունների մեջ մտնել մոնղոլական խանի հետ։ Բաղդադի արտաքին պատերի աշխարհականներից մեկի դոները քացլեցին և վազիր էին ալ-Կամին և մեստորական կարողիկուսը դիմեցին Պուլադունի հարցումով, թե որոնք են նրա պայմանները։ Վազիրը քրիստոնյա նեստորական կաթողիկոսին իր հետ որպես ուղեկից էր վերցրել այս նկատառումով, որ Պուլադունի կյանքը քրիստոնյա էր, և նրանք հույս ուներին, որ դա իր ներգործությունը կունենա Պուլադունի

պայմանների վրա: Բայց արդեն ուշ էր և, բացի դրանից, խալիքայական կողմը վատ էր ճանաչում մոնղոլներին: Շուլաղուն մերժեց նրանց ընդունել և որևէ բանակցություններ վարել նրանց հետ:

Աբրասյանները փորձեցին գանձագան փաստարկներով բարոյական ընշում գրոծադրել Մոնղոլական խանի վրա: Նրա կողմնակիցները զգուշացրեցին, որ նարաւահրավեր կլինի տուրքի ճակառագրին, ովքեր կոտառակարն «Խաղաղության քաղաքը», այսինքն Բաղրայոց, և «Աբրասյան խալիքայությունը»: Նրանք «քացարթըցին» Շուլաղուին, որ «եթև խալիքան սպանվի, ապա ամրությ տիեզերքը կերպմալուծվի, արևն իր դիմքը կրագըմի, ամքնները կուշարանն ու բուսականությունն այլև չի աճի»:

Շուլաղուն անտեսեց սպառնալիքների բնույթը կրող այդ կամբագուշակումները, մասնավամոց, որ նա ևս խորիրդակցել էր իր աստղագուշակների հետ և նրանք որոն նման քամ չեմ կանխագուշակել: Ծնողակառաւը, նրանք գուշակել էին Շուլաղուին լիիվ հաղթանակ:

1258 թ. փետրվարի 10-ին մոնղոլական գործերը ներխուժեցին Բաղրայոց Բաղրայն ավերվեց և հրկիզվեց: Շուլաղուն հինգ օր Բաղրայոց համանեց իր գործերի քալամին և կողոպուտին: Թաղամը նրա հրամանով դադարեցվեց հինգերորդ օրը, եթե այլևս քամ չեր մնացել քալամելու: Գերի ընկած խալիքային Շուլաղուն ստիպեց ցուց տալ իր քարցիած զանձերը, որը օս հետազանդորեն կատարեց: Ականատեսները ցնցված էին խալիքայի անհամար ոսկեղենից և քանկարմներ քարերից, որոնք բոլորն անցան մոնղոլական խանի տրամադրության տակ: Փետրվարի 20-ին Աբրասյան վերջին խալիքա ալ-Մուսթամիմը մահապտօի ենթարկվեց: Նրա հետ սպամվեցին Աբրասյան ընտանիքը բռոր արու անշամները, պաշտոնյաները, կաղինները և այլն, թվով 300 մարդ:

Բաղրայի քաղերը և փորոցները ծածկված էին ամեամար դիակներով, որոնք քաղող չկարի: Դիակների նեխուժից տարածված գարշահուտությունը պատճե էր քաղաքը և Շուլաղու խամը ստիպված էր մի քանի օրով հնառանու Բաղրայոց: Ավերակների վերածված, հրկիզված, քալանկած և ամայացած Բաղրայոց դաշտանց մայրաքաղաքը լինելուց, և հետագա դարերում նա զավառական մակարդակի քաղաքից այն կողմը չկարողացավ քարծրանալ:

Դինք հարյուր հիսունուր տարի գոյատևած Աբրասյան խալիքայությունը դադարեց գոյություն ունենալ: Նրա կործանումը դարձավ պատմական իրողություն:

## Գլուխ լրասմերկուերրոդ

# ԽԱՉԱԿԻՐՆԵՐԸ, ԱՅՅՈՒԹԻՆԵՐԸ ԵՎ ՄԱՍԼՈՒՔՆԵՐԸ

## *I. ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐԾԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ*

### **1. Խաչակիրների հայտնվելն Առաջավոր Ասիայում**

XI դարի վերջերից Առաջավոր Ասիայում կամ Մերձավոր ու Միջին Արևելյան տեղի ունեցան աշնախի իրադարձություններ, որոնց թիվը սնբանում էին վերոնշյալ տարածաշրջանում, սակայն իրենց նշանակութամբ դուրս եկամ նրա սահմաններից և կազմեցին համաշխարհային պատմության ամենակարևոր եղեցից մեկը: Խոսքը խաչակրաց արշավանքների և պատերազմների մասին է:

Նրա նախածեռնորդները եղան Դոռմի կարուլիկ եկեղեցին և եկողության միապետները, որոնց առաջին շարքնում գտնվում էին Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի քագավորները, եվրոպական զանազան իշխաններ, ինչպես նաև Խուալիայի ներքուա, Վենետիկի և Պիզա քաղաքները, որոնց ամենաակտիվ աշակցությունը էր գույց տալիս Բյուզանդական կայսրությունը, իսկ պատճական որոշ ժամանակաշրջանում նաև Կիլիկիայի Կայական քագավորությունը:

Խաչակրաց պատերազմների սկիզբը դրվեց 1095 թ., երբ Դոռմի պապ Ուրբան II կըսմոնում գումարված կարողիկական եկեղեցական ժողովում հանդիս եկավ Տիրոց՝ Քիոսւի գերեզմանը ամենավատների՝ մուտքամբների ծնեցից ազատազրելու կոչով: Պոնտիֆիկի եղութք և աշաքարկությունը խուներամ ժողովուի և եկողության միասնական

ու նրանց արքունիքների կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ, առաջացնելով իսկական էֆորիա:

Ստացին արշավանքը տեղի ունեցավ 1096 թ. վերջներին: Նրա մասնակիցները կոչվեցին խաչակրիներ, որովհետև նրանք հրենց աջ քիչին կարում էին կարմիր կոտորից նաև:

Կրտնական պատերազմի ըրոյի տակ ընթացող, իրականում տարբեր նպատակներ էին հետապնդում: Չքացանելով քարեպաշտ քրիստոնյաների առկայությունը նրանց շարժերում, որոնք, իրոք, նուահոգ էին վիտուսի գերեզմանի ճակատագրով, և Արևելք շարժմանը գուտ կրտնական մղումներով, այսուամենայնիվ, պետք է Ծել, որ այդ արշավանքներն ավելի շատ քաղաքական և նվաճողական բռնույթ էին կորում:

Եվրոպական միապետական վերնախավը ծարավի էր նոր նվաճումների, հուսալով տիրանալ, իրենց կարծիքով և ըստ չափազանցված լուրերի, Արևելքի առասպելական հարստություններին: Տարածքային նոր ծեռցբերումները և Արևելքի երկրների հարստություններին տիրանալը, որից իր մասնարաաժինն ուներ Պողմեական եկեղեցին, դարձավ նրանց համար գլխավոր մոլոր ուժը:

Իրենց ուրույն նպատակներն էին հետապնդում մասն ազնվականները, նրանց ծոցից դուրս ելած ասաբեմները, որոնք հողագույկ էին, քանի որ Եվրոպայի երկրների մեծ մասուն հաստատված կարգի համաձայն դուրսի, կոճախ, դերկոճախ կամ մարդիկի լիիրավ ժառանգորդը նրա ավագ որդին էր, իսկ մնացած զավակները չէին ստանում որևէ հոդարաժին: Ահա այս հոդազորությա ազնվականությունը Ֆիրոզ գերեզմանը փրկելու պատրիարքությունների Արևելք, հույս ունենալով արարական երկրներում լուծել իր համար կարևոր կմնական խմբիրները:

Խաչակրիների շարքերը գանգվածարար համալցեցին զյուդացիները, որոնք տնօրում էին Ֆնոռալական հարկերի տակ, ինգնած ու զգված էին ավատատերների կամայականություններից ու քոնություններից, ինչպես նաև քաղաքային առջաւատ խավը: Նրանք, տեղյակ շինելով արարական և արևելյան մյուս երկրներում տիրող իրական վիճակին, միամտորեն կարծում էին, թե այնուո՞ւ նրանց կարող են գտնել ազատություն և զյուդացին ավելի տանելի պայմաններ:

Եվ, վերջապես, թիւ չէին զանազան քախտախնդիրներ, ավագակներ, գոյեր ու ավարառուներ, որոնք Արևելք էին զնում թալամի ու կողոպուտի, ինչտ ուղիով հարստություն դիմելու համար:

## 2. Եղեսիայի կոմսության, Անտիոքի իշխանապետության և Երուսաղեմի թագավորության հիմնումը

Միա այս խաօնինադան ամրոխը, քաջակեր առաջնորդների գլխավորությամբ, վարարուն և պղտոր գետի նման հորդեց դնաց Սիրիա և այն տարածքները, որոնց տարբեր ժամանակներ կազմել են Մրարական խալիֆայության բաղկացացիչ մասերը:

Նրանք առաջին արշավանքի ժամանակ հասան բավականին լուրջ հաջողությունների և կարողացան կարճ ժամանակամիջոցով ստեղծել երեք պետական կազմավորում, որը դարձավ նրանց հենարանը հետագա գործողությունների համար:

Խաչակրիների գլխավոր նպատակն էր նվաճել Եախ և առաջ Սիրիան, Պաղեստինը և Եգիպտոսը՝ իրենց հարակից տարածքներով։ Այդ մասնապարհին առաջին խոշոր հաղթանակը եղավ ալ-Շահայի՝ Եղեսիայի գրավումը 1097 թ. կոմը Բողոքինի կողմից և Եղեսիայի կոմսության հիմնումը։ Դա դարձավ Լատին առաջին իշխանապետությունը։

Ծարունակելով առաջամայ և խորանար Սիրիայի ու Պաղեստինի ուղղությամբ, խաչակրիների հիմնական ուժերը 1097 թ. հոկտեմբերին պաշարեցին Անտիոքը։ Սակայն նա եղավ շատ ամուռ ընթույզ խաչակրիների համար։ Պաշարվածները ենիր Յահյա Սիյանի գլխավորությամբ, որին ենիր էր նշանակել յեւսև սեպուկյան սուլթան Մալիք շահը, համար դիմադրություն էին ցույց տալիս խաչակրիներին։ Թաղացն ընկավ նրանց ծեռը միայն 1098 թ. հունիսին, և այն է քաղաքի աշխարհականերից մեկի հրամանատարի դավանանության պատճառով։ Խաչակրիները շատ դաժան գտնվեցին քաղաքի բնակչիների նկատմամբ, որոնց սպանությունը և չարչարանցների ենթարկելը զանգվածային ընսյուր էր կրում։

Անտիոքը գրավելուց հետո, խաչակրիները հիմնեցին իրենց երկրորդ պետական կազմավորումը՝ Անտիոքի իշխանապետությունը, որը գլխավորեց Բոհեմումը։

Խաչակրիների մի գորարանակ Ռայմոն Ցուլուզեցու հրամանատարությամբ, Անտիոքից, որը դարձավ նորաստեղծ համանուն իշխանապետության մայրաքաղաքը, շարժվեց դնաց հարավ և մտավ Մասրաք ալ-Շուման, որը արարական հշչակավոր քանաստեղծ և փիլիսոփա Աբու ալ-Ալա ալ-Մաարիի ծննդավայրն էր։ Այդուղի մի առժամանակ մնալուց հետո, նա 1099 թ. հունվարի 13-ին հեռացավ, կուտրելով բնակչու-

բյան մեծ մասին և իրի մատնելով քաղաքը: Այնուհետև գրավելով մի շարք այլ բնակչավայրեր, կոմս Ռայմոնի գործեցր մտան Դյուսիսացին Էլիքանամ և առանց դիմացրության գրավեցին Անտարտիդաս: Լիքանամի նարոնի քրիստոնյաները լավ ընդունելուրբեր գործարերեցին խաչակիրներին, նրանցից շատերը նույնիսկ համալցեցին խաչակիրների շարքերը: Այնուհետև Ռայմոնը միացավ խաչակիրների հիմնական ուժերին, որոնք նախապատրաստվում էին գրավել Երուսաղեմը, որն, ի վերջո, հանդիսանում էր խաչակրաց արշականըների զիշապիր նպատակ:

Խաչակիրների 40 հազարանոց բանացը, որն արդեն գրավել էր պայմանագրական ալ-Շամալլահ քաղաքը, 1099 թ. հունիսի 7-ին արդեն Երուսաղելու դարպասների մոտ էր: Բաղացը պաշտպանում էր ոչ մեծաթիվ, ընդամենը մեկ հազարանոց եգիպտական կայազորը: Դասկանալի է, որ նա երկար ժամանակ չէր կարող դիմադրել, և խաչակիրները հովվի 15-ին գրոհով գրավեցին Երուսաղեմը: Նրանք սարսափելի շարու կազմակերպեցին: Դապերի ականատեսք վկայում է, որ որ Երուսաղեմի փողոցներում և հրապարակներում կարելի էր տեսնել ճարդիկանց զլուխներից, ծեսքերից և ոտքերից առաջացած բլուզներ: Մրար պատմի է Իբն ալ-Սահր Շշում է, որ միայն ալ-Աքսա մզկիրում մորրվել է մոտ 75 հազար ճարդ:

Խաչակիրները հարթանակ տարան եգիպտացիների դեմ նաև Աչկելոնի մոտ, քայլ Ֆարիմյան վազիր, հայազգի Մայիր ալ-Աֆոյալը կարողացավ հականարդած տալ խաչակիրներին և Աչկելոնը պահել իր ծեսքում որպես եգիպտական նավաստորմի հենակետ: Դեռ ավելին, պահպանելով իր դիմուրն Աչկելոնում, ալ-Աֆոյալն անընդհատ սպառնալիքներ էր աստղեցում և մեծ տիանություններ պատճառում խաչակիրներին:

Երուսաղեմի գրավումով, խաչակիրները 1099 թ. հիմնեցին Երուսաղեմի բազմավորությունը, որը ներառնում էր Պալեստինը և Պարավայի Սիրիան: Նրա առաջին բազմավորը դարձավ Գողթիրեց Բուլիհումը, որը, սակայն, պաշտոնական կրում էր «Սուոր գերեզմանի բարոն և պաշտպան» տիտղոսը:

Այնուհետև, խաչակիրները գրավեցին Հայֆան, Նարլուսը և այլ բնակչավայրեր:

Խաչակիրների երեք հենակետերի միջև զիշապիրը Երուսաղեմի բազմավորությունն էր: Եղիսիայի կոմսությունը և Անտիոքի իշխանապետությունը ընդունում էին նրա գրակայությունը և փաստողներ գտնվում էին վասալական կայսրան մեջ նրանից: Ավելի ուշ նման կարգավիճա-

կում հայտնվեց նաև 1109 թ. Իիմնված Տրիպոլիի կոմսությունը: Ծագում-նարանական պատկանելության առումով, Եղեսչամ և Երուսաղեմը Թուրքունուական, Անտիոքը Նորմանուական, իսկ Տրիպոլիս Պիրովանալական իշխանապետությունների էին: Այս չորս կազմավորումները պատմության մեջ, արարական աշխարհում, անլլավների ծնուկ առաջին և վերջին անգամ կազմավորված քրիստոնեական-կաթոլիկական, կամ ինչպես ընդունված էր ասել, Լատին պետությունների էին:

### 3. Արարա-իշխանական պետական կազմավորումների դիրքորոշումը խաչակիրների նկատմամբ

Խաչակիրների արշավանքները և նրանց հայտնվելը Արևելյում ուղղակի տակնույնա արեցին արարա-մուսուլմանական աշխարհը: Միրիայի, Պաղեստինի, Եգիպտոսի ընակիչներն առաջին անգամ ընդհարվեցին քրիստոնյա ուժերի հետ, որոնք գալիս էին ոչ թե Բյուզանդական կայսրությունից, որին նրանք լավ ժանոր էին և որի հետ նրանք մարտնչում էին արդյօն մի քանի հարյուրամյակ, այլ հետուներից եկած, ինչպես նրանք էին անգանում, «Ֆրանկների» հետ: Պասարակ ընակչությունը կամ բոլորովին անտեսյակ էր նրանց մասին, կամ ուներ շատ աղոյտ պատկերացումներ: Եվ, որ ամենագլխավորը է, նրանք չէին հասկանում, թե խաչակիրներն ինչ են ուզում իրենցից, ինչու համար նն ներխուժեց իրենց երկիրը և որն է նրանց նպատակը: Այս հարցերն առանձնապես սուր ընույթ էին կրում խաչակիրների կողմից նվաճված մի շարք քաղաքների բնակչության նկատմամբ կիրառված բռնություններից ու զանգվածային սպանություններից հետո:

Թվում էր, թե խաչակիրների արշավանքները կատապեն մռայլ-մանական անտություններին միավորվել և միասնական ուժերով դիմագրավել արտաքին վտանգը, որն ուղղված էր ոչ թե առանձին պատությունների, առվաճանությունների և տիրությունների, այլ նրանց բոլորի դեմ: Խոսքն առաջին հերթին Արքայան խալիֆայության, Սելջուկյան Մեծ սուլթանության, Ռումի կամ Խերենիայի Սելջուկյան սուլթանության և Զաքիմյան խալիֆայության մասին և Սակայն դա տեղի չընեցավ: Նրանց կողմից դրամորվել է անքացատրենի անտարբերություն և կրավորական վերաբերմունք: Քամենայն դեպք, այդպիսին է պատմական իրողությունը:

Սբրասյան խալիֆայության պարագայում դա կարելի է. եթե ոչ արդյարացնել, ապա բացատրեն: Արդեն նշվել է, որ Սբրասյան խալիֆայությունը անցել էր Սելջուկյան Մեծ սուլթանության տիրապետության տակ, որը թեև ծևականողեն պահպանել էր նրա գոյությունը, սակայն զրկել էր խալիֆամերին իշխանական, քաղաքական և ռազմական լաւագներից. բողնուկ նրանց լոյկ հոգևոր—կրոնական գործառությունը: Բայց նրանք զարմանալիորեն իրենց բողնուկ այդ իրավունքից ել չօգտվեցին, ցուցաբերելով իրենց կատարյալ անկարողությունը համախանական առաջնորդ հանդես գալու և համայն մուսուլմանական աշխարհը խաչակրաների դեմ ռագի հանդելու համար:

Տարօրինակ կերպով Աբրասյանները, Սելջուկները, դեռ ավելին, մուսուլմանների իհմնական զանգվածը, խաչակրաների ներխուժումը համարել են «հետուներու տեղի ունեցող իրադարձություններ» և «անկարութ եպիզոդ»: Նրանք նույնիսկ չափակի վեցին, երբ խաչակրաները հասան տպավորի հայթամակների:

Խաչակրաները, ինչպես նշվեց, 1099 թ. գրավեցին Երուսաղեմը: Նրա անկումից հետո քաղաքի մուսուլմանների մի պատվիրակություն է գալիս Թաղթագ և Մուստաֆիր խալիֆայից օգնություն խնդրում: «Ան-Շինս առաջ արցունեցներ քափելով և ցավ հայտնելով կատարվածի կապակցությանը, Երուսաղեմի պատվիրակությանց խորհրդուր է տալիս օգնության համար ողիմել Սելջուկյան սուլթան Քարլիջարութին, որը նույն պես որևէ գործնական քայլ չձեռնարկեց, ուստի և քանակցություններն ավարտվեցին անարդյունը: Նույն քայլադիմ արժանացավ խաչակրաներուն պաշարված Տրիփոլի պատվիրակության առաջնությունը 1106 թ.:

Խաչակրաների դեմ ավելի վճռական գտնվեցին Զանգիները: Այդ ոինաստիայի իհմնատիրը եղավ Ինադ աղ-Դին Զանգին, մի բռուր ստորև կորչի որդի, որը դարձել էր գրողակրամանատար և ծառայության մեջ եր գտնվում սելջուկյան սուլթանի մոտ որպես նրա երկու որդիների արարեկ: Աքարենքները (աքարենք բռությունն առա է, որը նշանակում է թեևի հայր), սուլթանների կողմից նշանակված նրանց որդիների դաստիարակները և պահապաններն էին, որոց լայն տարածում էր գտել հատկապես Սելջուկյանների ժամանակներում: Դա շատ ազդեցիկ պաշտոն էր, որը նրանց առջև մնեց հետանքարներ էր քացում: Սելջուկյան սուլթանը ահա այդ աքարենք Ինադ աղ-Դին Զանգին 1127 թ. նշանակում է Մոսուլի ենիր և այդ բժականից ել հաստատվում է Զանգիների դիմաստիան (1127–1262 թթ.): Այդ կապուտացյա աքարենք իրեն դրանորեց որպես ե-

ռանդուն, խնչացի և վճռական գործողությունների ընդունակ գործիք։ Տա իր իշխանությունը տարածեց նաև Մծրինի, Յարրամի, իսկ ապա նաև Շաշերի և Սիրիայի այլ քաղաքների և բնակչավայրերի վրա։ Տա գործիք նաև Բաալաքաք Լիբանանում, որի կառավարիչ նշանակեց իր օգնականներից մեկին, ծագումով քուրդ Նաջմ առ-Ղին Ազյուքիին, որը շատ չանցած մեծ ղերակատարում ունեցավ ոչ միայն Սիրիայում, այլև եզիստուում։

Ի՞նա՞ առ-Ղին Զանգին, ամրապնդելով իր իշխանությունը Մոսուլում, և ընդարձակելով իր տիրութեներ Սիրիայի որոշ մասերում, անխուսափելիորն ավելոց է բախչեր Ֆրանկների, այսինքն խաչակիրների հետ։ Այդ քայլում տեսի ունեցավ 1144 թ., որն ավարտվեց Զանգիի հաղթանակով։ Նա գրավեց Եղեսիան, որը համարվում է մուսուլմանների առաջին հաղթանակը խաչակիրների նկատմամբ։ Ահա այս պահին ասպարեզում հայունվեց Աքրասյան խալիֆան, որը Զանգիին շնորհեց նիանգամից երկու շատ պատվավոր տիտղոս՝ «Խալամի զարդ» և «Ռեզ-Դահակատմերի վեհապետի օգնական»։

Սակայն Զանգին երկար չվայելեց իր հաղթանակի պտուղները, որը նրան թիւն էր մեծ փառք և հեղինակություն մուսուլմանական աշխարհում։ 1146 թ. նա դավադրաբար սպանվեց։ Երա Էմիրությունը բաժանվեց երկու որդիների միջև։ Մուսուլի և Զագիրայի կառավարումը ստացավ նրա պահ որդին, Սայֆ առ-Ղին Ղազին, իսկ Շալերը և մնացած տարածքներն անցան կրտսեր որդու։ Նույ առ-Ղինի տնօրինության տակ։ Այս երկու նորայիններից առավել կարևոր ղերակատարում ունեցավ և պատմության մեջ հետոց բոլոց կրտսեր որդին, որն իրն զրուելով խալամին Ծիփրոված և նրա շահերի հետնողական պաշտպան։ Նույ առ-Ղինի առջև կանգնած էին երկու կարևոր ինորիներ, առաջին, իր իշխանության ներքո միավորել Սիրիայի որոյր այն տարածքները, որոնց գտնվում էին մուսուլմանական առանձին իշխանավորների տիրապետության տակ, և, երկրորդ, հակահարված հասցման խաչակիրներին և հնարավորին ազատագործ նուանց տիրապետության տակ անցած հոդերը։ Կարելի է ասել, որ երկու քնազականներում էլ նա հասակ շոշափելի հաջողությունների։

Եղեսիայի կրուստը և խաչակիրների մոր պարտությունը շատ ծանր տպավորություն գործեց ֆրանկների ղեկավարների վրա։ Երուսաղեմի քաջավորը և Անտիոքի ու Տրիպոլի իշխանները լուրջ տագնապ էին ապրում։ Քամկանալով, որ եղած ուժերով դժվար է հասնել հա-

ջողովրդուների, Երուսաղեմի թագավորը ոյիմեց Յոռմի պատին Եվրոպայից լրացուցիչ ուժեր ուղարկել: Վերջինս որականորեն արծագանցց Երուսաղեմի թագավորի աշերսանցին և նախաձեռնեց խաչակրաց երկրորդ արշավանքը, որը տեղի ունեցավ 1147-1149 թթ.: Եվրոպայից Արևելք Եթովեց ասպետների նոր հոսանք գերմանական կայսր Կոմրադ III և ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս VII գլխավորությամբ:

Նրանք փորձեցին գրավել Դամասկոսը և պաշարեցին այն: Սակայն պաշարվածներին օգնության գնաց Նուր առ-Ղինը մեծ զրոարանակով: Խաչակրաները, խուսափելով Նուր առ-Ղինի գործերի հետ քախումից, վերացրին Սիրիայի մայրաքաղաքի պաշարումը և հեօացան: Սիրիայից հետացան և իրենց երկրները վերադարձան, մեծ կորուստներից հետո, օաև Կոմրադ III և Լյուդովիկոս VII:

Իսկ Նուր առ-Ղինը տարավ մի նոր և շատ կարևոր հաղթանակ: Նա 1151 թ. պարտության մասնեց խաչակրաներին, որոնց փորձեցին հետ գրավել Եղեսչիան: Դա նրանց ոչ միայն չհաջողվեց, այլև նրանք կորցրեցին ամբողջ կոմսությունը, որն անցավ Նուր առ-Ղինի իշխանության ներքո: Իսկ Եղեսչիայի կոնճ Շոսելին II գերի ընկավ, որին Նուր առ-Ղինը շրբայակաց նետեց թանը:

Նուր առ-Ղինը 1164 թ. տարավ նոր հաղթանակ, այս ամենամ ԱՕ-տիրոցի իշխան Ռայմոնդի դիմ: Նրա տիրապետության տակ անցավ Անտիոքի իշխանականության մի մասը: Նրա երիտասարդ իշխան՝ Բոհեմոն III իր դաշնակից, Տրիպոլիի իշխան Ռայմոն III հետ միասին գերի ընկան:

Նուր առ-Ղինը մեծ հաջողություններ ունեցավ նաև Սիրիայի ճակատում: 1164 թ. նրան անձնատուր եղավ Պամասկոսը, որով նրա տիրապետության տակ անցավ ամբողջ Սիրիան իր այն մասով, որը գտնվում էր ճուսումանների ծերություն:

Այսպիսով, Նուր առ-Ղինը դարձավ մուսուլմանական աշխարհի ամենահզորներց մեկը, թեև մասկանորեն նա շարունակում էր մնալ ճառայության մեջ Սելջուկյան տությանին և համարվում նրա վասալը:

## II. ԱՅԵՒԹԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՄԻՐԻԱՑՈՒՄ (1169-1252 թթ.)

### 1. Հայաստանից արտագաղթած քուրդ Այյուբիները: Մալահ այ-Դին ալ-Այյուբին

Խաչակիրների անհաջողությունները և տարածքների կորուստը Միրիայում և Պաղեստինում, ստիպեցին նրանց վիխուել իրենց հարվածի ուղղությունը և քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխել եղիպտոս։ Նրանք հույս ունեին հասնել հաջողության այստեղ, նկատի ունենալով Ֆարիմյանների օրիցօր բռլացող դիրքերը և անկայուն վիճակը, որ հաստատվել էր Եգիպտոսում։ Նրանք միաժամանակ ակնկալում էին այդ հարուստ երկրամասի գրավումով քարնչավել իրենց վատրարացող տնտեսական և ֆինանսական վիճակու։

Խաչակիրների առաջին քայլերն այս ուղղությամբ քվում էին հուսադրությունունքու։ Նրանք տարան մի շարք հաղորդակներ, իսկ 1143 թ. Երուսաղեմի քաջավոր Բոլղվին III գրավեց Եգիպտոսին պատմանող Աշկելոն քաղաքը։ Նրա այդ քաղաքականությունը, նրա մահից հետո (1163 թ.), փորձեց շարունակել նրա եղբայրը՝ Ամալրիկ ։ Երուսաղեմի այդ նոր քաջավորը ուներ կառավարման որոշ փորձ, քանի որ մինչև քաջավորական գահին նստելը նա Շահինի և Աշկելոնի կառավարիչն էր եղել։

Խաչակիրների այս հաջողություններից վախեցած Ֆարիմյանները, որպեսզի կանխան Ամալրիկի հետագա ներքավանցումը Եգիպտոսի խորքերը, համաձայնեցին հարկ վճարել Երուսաղեմի քաջավորությանը։ Նրանք հույս ունեին այդպիսի նվազաւացման ուղիւով պահպանել իրենց իշխանությունը։ Սակայն նրանք սխալվեցին իրենց հաշիվներում։

Ամալրիկ I, որն ուշի ուշով հետևում էր Եգիպտոսի ներքաղաքական զարգացումներին և լավատենյակ էր Ֆարիմյանների ծանր վիճակին, 1163 թ. ներխուժեց Եգիպտոս և շատ արագ մոտեցավ Կահիրեին, լուրջ սպառնալիք տանըծելով նրան։ Կահիրեի պաշտպանները հույս չունենալով, որ գենքի ուժով կկարողանան պաշտպանել իրենց քաղաքը և կանխել նրա անցումը Քրամների ծեռքը, ընդունեցին մի հուսահատական որոշում, որը, սակայն, արդարացրեց իրեն։ Նրանք քանի ներդու ամքարտակները և ջրի տակ բռնեցին Վերին Եգիպտոսը։ Նման պայմաններում, եղր խաչակիրների գործերը, մանավանդ հեօ-

լազորը, այլևս չեխն կարող ազատ գործել, Երանց այլ բան չեր մնում, թան նահանջել և վերադառնալ իրենց օլման ոդրերը:

Եգիապոսում ծավալված դեպքերի սկզբնական փուլում Նուր առ-Դիմի ցուցաքերը զգուշավորություն և մեծ ցամկություն լուսներ միջամտել այդ դեպքերին: Այստեղ իր դերն ունեցավ այն պարագան, որ մինչ այդ նա զինադադար էր կնքել Երուսաղեմի թագավոր Բոլովկին III հետ և մուտքություն չուներ ինքը դատուա Ֆրանկների հետ կըրպած հաշտության պայմանագրի խախտողը: Մակամ Երուսաղեմի Եր գահակալ Ամալրիկ I հարձակումը Եգիապոսի Վրա արմատականորեն լույսեց իրադրությունը: Նուր առ-Դիմի 1164 թ. որոշեց Եգիապոս ուղարկել մի գորաքանակ իր վասակերից մեկի, որըս գորաքանականատար Շիրկուիի զինավորությամբ: Այդ արշավանքի ժամանակ նրան ուղեկցում էր իր եղբոր՝ Նաշմ առ-Դիմ Այյուրիի որդին, երիտասարդ Սալահ առ-Դիմը, որին պատմությունը նախասաւրաստել էր վճռական դերականատարում արարական նրկուների կամքում և խաչակիրների դեմ մղված պատերազմներում:

Եգիապոսում Շիրկուիի գորաքանակի հայլովելու արդյունքը եղավ այն, որ Ամալրիկը հեռացավ Եգիապոսից: Նրանց միջև ստորագրվեց պայմանագիր, որով երկու կողմերը պարտավորվում էին իրենց գործերը դուսու թերմ Եգիապոսից: Ուստի Ամալրիկն Ի գործերի հետ միասին Եգիապոսից դուսու նկան նաև Շիրկուիի գործերը: Բայց եթե Ամալրիկ I 1167 թ. խախտեց պայմանագիրը, Ֆարհիմյան վերցին խալիֆա ալ-Ալիկի խնդրանքով նրան օգնության եկավ Շիրկուիը և իր գործերը մտցրեց Եգիապոսի մայրաքաղաք Կահիրեն, և կրկին դուսու շարութեց խաչակիրներին Եգիապոսից: Խալիֆա ալ-Ալիկի Շիրկուիին նշանակեց Եգիապոսի վազիր: Բայց նա այդ պաշտոնում ննաց շատ կարծ ժամանակամիջոց: Նև նահացավ 1169 թ. և վազիրի պաշտոնում նրան հաջորդեց Սալահ առ-Դիմը:

Եգիապոտում հաստակեց նոր ոհնաստիա, Այյուրիների քրուական դիմաստիան:

Ո՞վեր էին նրանք, այու քրոնք, որոնք հասան այդպիսի քարծունեցների, ո՞րտեղից և ինչպես է էին նրանք հայտնվել արարական աշխարհում:

Սալահ առ-Դիմի պապը՝ Շազին ծնվել էր Յայաստանում, Դվին քաղաքի մերձակա լեռնային գյուղերից մեկում: Այստեղ են ծնվել նաև նրա երկու որդիները՝ Նաշմ առ-Դիմ Այյուրին և Ասադ առ-Դիմ Շիրկու-

ից: Ըստամուտ իր համար հեռամկարային գործունեություն ապահովելու խնդրով, վերցնում է իր երկու որդիներին և ամբողջ ընտանիք հեռանում ՝ յայտատամից, ուղղություն վերցնելով դեպի արարական երկրները: Ի վերջո նա հաստատվում է իրաքում, ծառայության մտնում սեղուկների մոտ և նշանակվում Բաղրամից հրուսիս գտնվող Թիգրիթ քաղաքի ամրոցի պարես: Հորոն այդ պաշտոնում փոխարիժնում է Ըստի ավագ որդին, երիտասարդ Նազմ ար-Դին ալ-Այյուբին: Յնտագյում նրա անունով էլ կոչվում է Եգիպտոսում հաստատված դինաստիան: Բայց այդ ժամանակը դեռ հետու էր և նա շատ երկար ճանապարհ ուներ անցնելու:

Թիգրիթում 1138 թ. ծնվում է Նազմ ար-Դին Այյուբիի որդին՝ Սալահ ար-Դինը: Մեկ տարի անց Նազմ ար-Դինին արարեկ Զանգին նշանակում է Բաալբակում տեղակայված գրողերի հրամանատար և կառավարիչ: Խոկ Զանգիի մահից հետո, Սալահ ար-Դինի հայրն անցնում է նրա որդու Նուր ար-Դինի կողմը, հավատարմորեն ժառայում նրան և վայելում նրա վստահությունը:

Սիա այսպիսի միջավայրում եր ծնվել և մեծացել Սալահ ար-Դին իր Այյուբը, որը 1171 թ. դարձավ Եգիպտոսի տիրակալ:

## 2. Սալահ ար-Դին ալ-Այյուբին Եգիպտոսի և Սիրիայի տիրակալ

Արարական և Եվրոպական պատմագրության մեջ այն տեսակետն է տիրապետում, որ XII դարում իսլամական աշխարհն ունեցել է երեք նշանավոր քաղաքական և ռազմական դեմքեր՝ Մոտուկի կառավարիչ, արարեկ Իմամ ար-Դին Զանգին, նրա որդին, արարեկ Նուր ար-Դինը, և Սալահ ար-Դին ալ-Այյուբին: Պամաճայն լինելով նման տեսակետի հետ, բայց կարծում ենց, որ նրանց մեջ իր դերակատարությունով առանձնանում է Սալահ ար-Դինը, որն անցնելի հետք է բռնի արարմերի և բռլոր մուսուլմանների պատմության մեջ, և իր տրամաչափով գերազանցում է վերոնշյալ երկու գործիչներին:

Սալահ ար-Դինը լինելով խիզախս անձնավորություն, որու հետ միասին գործում էր շատ հաշվենկատ և համբերատարությամբ, ոյիվանագիտությունը գուգակցելով քաղաքական համարժակ քայլերին և ռազմական գործողություններին: Այդ հատկանիշներին տիրապետելու հատկապես անհրաժեշտ էր նրա իշխանության գլուխ գալու սկզբանական շրջանում, երբ նա դեռևս չէր աամրապնդել իր դիրքերը Եգիպտոսում:

Երբ 1171 թ. մահացավ Յաքիմյան վերջին խալիֆա ալ-Մեհրը, ապա Սալահ ադ-Դինը նրա փոխարքն ջրողեց, որ որն մնեց գահ բարձրածած: Դա համարձակ քայլ էր նրա կողմից, որն ուղենացվեց մեկ այլ համարձակ քայլով: Երկար դադարից հետո, առաջին ամգամ օրա հրամանով ուրբաթօրյա խուստրայում, Կահիրենի մզկիրում, հիշատակվեց Աքրասյան խալիֆայի՝ ալ-Մուստաչիի անունը: Դա նշանակում էր Յաքիմյանների վերջնական տապալում և հեռացում քաղաքական ասպարեզից, մի կողմից, և Եգիպտոսի վերադարձ սումմիզմին, մյուս կողմից: Այս քայլով նա նվաճեց Աքրասյան խալիֆայի, որոր Աքրասյանների և սումմինների համակրանքն ու աջակցությունը խալիֆա ալ-Մուստաչին ըստ արժանվույն գնահատեց Սալահ ադ-Դինի խիզախ քայլը և նրան ուղարկեց նրա աստիճանակարգին վայել քանվարթեր հագուստներ:

Սակայն Սալահ ադ-Դինը դնուս շարունակում էր մնալ Նուր ադ-Դինի վասարը: Թեև դա մնական բնույթ էր կրում, այդուհանդեռ, Սալահ ադ-Դինը հարկադրված էր հաշվի առնել այդ հանգամանքը և զգույշ լինել դնուս հզոր և ազդեցիկ իր սուլտաններ նկատմամբ: Նա լավ էր հասկանում, որ հարաբերությունների սրումը Նուր ադ-Դինի հետ իրեն ճեղքուու չէր: Այդ պատճառով նա շարունակում էր Եգիպտոսում հակացած հարկերի մի մասն ուղարկել Նուր ադ-Դինին, երբեմն իր գործերով մասնակցել Նուր ադ-Դինի միջոցառումներին և այլն:

Քայլ Նուր ադ-Դինը իմքը կասկածանքով էր վերաբերվում Սալահ ադ-Դինին, որի դիրքերի ամրապնդումը նրան անհանգստացնում էր: Յարաբնորությունների հետազա սրումը և խզումը նրանց միջև կանխելու գործում դրական դրականատարում ունեցավ Սալահ ադ-Դինի հայրը: Նաօք ադ-Դին ալ-Այյուրին, որը երկար տարիներ ժառայել էր Նուր ադ-Դինի մոտ, և որին վերջին շատ էր վստահում: Նրա հանճնարարությամբ Նաօք ադ-Դինը զնաց Եգիպտոս, հանդիսաց որդում, և, ի վեցոր, կարողացավ կանխել խզումը Սալահ ադ-Դինի և Նուր ադ-Դինի միջև: Սակայն ինչպես պարզվեց, դա մամանակալոր բնույթ էր կրում: Նուր ադ-Դինը լրջորին պատրաստվում էր հարձակվել Սալահ ադ-Դինի վրա և նրան գրնել իշխանությունից: Այդ ծրագիրը մնաց անկատար, քանի որ 1174 թ. Նուր ադ-Դինը մահացավ:

Նուր ադ-Դինի մահից հետո նոր իրավիճակ ստեղծվեց, որը բարենպաստ էր Սալահ ադ-Դինի համար, և նա չհապաղեց օգտվել դրանից: 1174 թ. նա Եգիպտոսը հայտարարեց անկախ: Այնուհետև նա իր հայացքն ուղղեց դեպի Սիրիա: Նա կարողացավ Սիրիան, այսպես ա-

սած, ուղղակի խլել Նուր աղ-Դիմի որդուց, 11-ամյա Խսմահլից և կցել իր տիրութքներին: Սալահ աղ-Դիմի եղբայրը, Թուրքան Շահը Այսութիների տիրապետությունը հաստատեց Եմենում: Եգիպտոսին միացավ նաև Դիօքազը՝ իր նրկու սուրբ քաղաքներով, Մերքայով և Մադինայով:

Այսպիսով, Այսութիների տիրապետության ներքո պատմության բատերաբնմի վրա հայտնվեց մի նոր, բավականին հզոր պետություն, որի կազմում մտնում էին Եգիպտոս, Մաղրիթ, Նութիան, Կենաքրոնական Միջիան Դամասկոս, Յալեք և այլ քաղաքներով, Արևմտյան Արարիան, Եմենը և Պաղեստինը: 1175 թ. Արքայան խալիֆան Սալահ աղ-Դիմին տվեց համապատասխան հրովարտակագիր, որով նրան ճանաչում էր նշյալ տարածքների տիրակալ: Դա Սալահ աղ-Դիմի կարևոր քաղաքական հաղթանակն էր:

Հարուսեակելով արարակամ տարածքներն իր տիրապետությամ ներու միավորեցու քաղաքականությունը, Սալահ աղ-Դիմին 1185 թ. գրավեց Սուսուի Եմիրությունը և Միջազգության մեջ ու փոքր իշխանականությունները, ուստանալով տարածաշրջանի ամենազոր պետությունը:

Սակայն, օրույրին ց, որ դուր էր գալիս Սալահ աղ-Դիմի հաջողությունները և հզորացումը: Նրա վտանգավոր հակառակորդների բնույթ էին ասսասինները, Խսմահլական ծայրահեռականները, որոնք ոժգոհ էին, որ Սալահ աղ-Դիմի տապալել էր նույնանուն խսմահլական Ֆարիմյաններին և Եգիպտոս վերադարձրել առանձինների գիրկը: Եվ նրանք գործի դրեցին իրենց իհմնական գենեցը՝ ճահավործի տակտիկան, որի գործ էին դարձել մի շարք նշանակալի մուսավան և ցրիհատումյա գործիչներ: Նրանք երկու անգամ մահափործ կատարեցին Սալահ աղ-Դիմի դեմ, քայլ անահաջող: 1176 թ. Սալահ աղ-Դիմի դիմոնց վճռական գործողությունների ասսասինների դեմ, պաշարեց լուսնարում գտնվող Մայսաղը, որը նրանց կենտրոնն էր, որտեղ և գտնվում էր նրանց առաջնորդ Բաշիդ աղ-Դիմ Մինանը: Քայլ վեճը լուծվեց խաղաղությամբ: Ասսասինների առաջնորդը խստացավ այլևս մահափործ լկատարել Սալահ աղ-Դիմի դեմ, իսկ վերջինս վերացրեց Մայսաղի պաշարումը:

Սալահ աղ-Դիմը սկսնց կրել «ալ-Մալիք ան-Խասիր աս-Սուլթան» տիտղոսը, որը նշանակում էր «Պատրիարք ան-Խասիր, սուլթան»: Նա իր տիտղոսակարգի մեջ միացրեց քաջավոր՝ «մայիր», և սուլթան տիտղոսները, դրանով ընդգծելով իր առանձնահատուկ կարգավիճակը և ըուրից իր քարձի լինելու հանգանակը:

### 3. Սալահ աղ-Դինը և Խաչակիրները

Սալիք ան-Նասիր աս-Մուլքան Սալահ աղ-Դինը իր տիրասահ-տուքյան ներքո միավորելով՝ արաբական հիմնական երկրները, ան-րապես ներկա է իր դիրքները իր սուլթանության սահմաններում, որը նրա քաղաքական ճակատագրի համար ուներ համգուցային նշանակություն, կարգավորելով իր հարաբերությունները վասնգավոր աստավին-ների հետ, իր քաղաքականության հիմնական խնդիրը համարեց այլ-քարոզ խաչակիրների դիմ, մուտքվածական գրավելաւ տարածքների ազատագրումը և իր պետության հետօազ հղուացումը: Եվ այս բնագավառում նա Խաչակ փայլուն հայրածանակների:

Նորա լայմածավալ և նորմարտն պայքարու ֆրամենտների դեմ սկսվեց 1187 թ. և շարունակվեց մինչև նրա մահը: Պուլիսի 1-ին Սալահ աղ-Դինի գործերը վեցօրյա պաշարություն հետո գրավեցին Տիբերիան, իսկ երեք օր անց՝ Շիթրինը: Շիթրինի մոտ տեղի ունեցած նաև ատամարտը սուլթանի կարևոր հաղթանակները մեզն եր: Գերի ընկալվ Խաչակիրների 20 հազարանոց բանակը Երուսաղեմի բազավոր Գի Լուգինյանը գլխավորությամբ: Դա միանգամից վատրարացրեց խաչակիրների վիճակը և դուռ բացեց Երուսաղեմի առջև: 1187 թ. իկունների 2-ին Երուսաղեմի անձնատուր եղավ Սալահ աղ-Դինին: Դա նշանակում էր Երուսաղեմի կամ Լատինների քաջավորության կործանում, որը ցնցեց խաչակիրներին և քարոյալքեց նրանց:

Երուսաղեմի անկումից հետո Սալահ աղ-Դինը առանց դժկարությունների գրավեց Սիրիայում և Պաղեստինում խաչակիրների տիրապետության տակ գտնվող քաջարիկ բնակավայրեր, և երկու տարրվա ընթացքում ազգատարեց Լաթրադիան, Զարայակը, ալ-Կարակը, Շաքի Արտուրը, Սաֆադը և բազմարիկ այլ քաղաքներ ու գյուղեր:

Երուսաղեմի անկումը խաբանց խաչակիրների երրորդ արշավանց 1189–1192 թթ., որը գիշակիրեցին Գերմանիայի կայսր Հռիփորի Ծիկամորուսը, Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Ավգուստը և Անգլիայի թագավոր Ուիլյամ Սույուծասիրությունը: Բայց նրանցից ոչ բոլորը հասան Արևելքը: Նաև ապարիկ Կիլիկիայում, գնում անցնելիս խեղդվեց գերմանական կայսրը և նրա հետ արշավանքի դուրս եկած գերմանական ասպետների մեջ մասը վերադարձավ Գերմանիա:

Դասմելով Պաղեստին, խաչակիրներն իրենց գլխավոր խնդիրը համարեցին Ալիքի գրավումը, որը ինչպես նրանք հավատացած էին, ու-

դի կիհրեքը դեպի Երրուսաղեմ: Նրանք կարողացան շրջապատել այն, որի համար մարտերը զնում էին ծովում և ցամացում: Ֆրամկինների գրոհն առաջնորդեց Գի Լուգինյանը, որին զերությունից բաց էր թորել Սալահ ադ-Դինը, ստանալով քաջավորի երրումն առ այն, որ նա երբեց իր կյանքում զենք չի բարձրացնել սուլթանի դեմ: Սակայն, ինչպես տեսնում ենք, նա դոժեց իր քաջավորական երրումը:

Աօնելով Ակրի պաշարման լուրջ, Սալահ ադ-Դինը շտապեց օգնության իր պաշարված կայագորին, որը հերոսարար հետ էր մղում խաչակրների գրոհը: Պատերազմը Ակրի համար տևեց մոտ երկու տարի: Սալահ ադ-Դինը օգնություն խնդրեց խալիֆայից, բայց չստացավ նրանից ոչ մի բան: Մտեղծված պայմաններում Ակրի կայագորը 1191 թ. հունիսի 12-ին հարկադրված անձնատուր նշավ:

Այս հակամարտությունն ունեցավ շատ հետաքրքիր վերջավորություն: Անզիհական քաջավոր Ռիշարդ Ալյութասիրուն առաջարկեց իր բրոջ կողույան Սալահ ադ-Դինի եղբոր՝ Սալիհ ալ-Ալիյին: Միաժամանակ նա առաջարկեց նորապատճեներին որպես հարսանեկան նվեր տալ Երրուսաղեմը և այդ կերպ վերացնել հակամարտությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև: Նրա այդ առաջարկությունն ընդունվեց և 1192 թ. մայիսի 29-ին կայացավ նրանց ամուսնությունը:

Իսկ նոյեմբերի 2-ին ստորագրվեց հաշտության պայմանագիրը: Կողմերը համաձայնության եկան, որ առափնյա մասերն անցնում են խաչակրների, իսկ նորդին, ցամաքային մասերը մուսուլմանների տնօրինության տակ: Սուրբ քաղաք, այսինքն Երրուսաղեմ ուխտագնացության եկողմների առջև չափոր է ստեղծվելին խոշընդուներ և այլն:

Դա եղավ Սալահ ադ-Դինի վերջին ծառայությունը մուսուլմաններին: Նա հիվանդացավ և 1193 թ. նոյեմբերի 19-ին մահացավ Պամասկում, որտեղ և թաղված է:

#### **4. Այլուրինների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը**

Սալահ ադ-Դինը և նրան հաջորդած սուլթանները խայակիրների դեմ անընդմեջ պատերազմների և նրանց ոտնձգություններից խլամական աշխարհը պաշտպանելու գերագույն խնդրի հետ միասին, հարկադրված էին մեծ ուշադրություն դարձնել նաև պետական կառուցվածքի կատարելագործման, տնտեսական զարգացման, սոցիալական և այլ հարցերի:

Պետական կառավարման և քաղաքական համակարգի ընազավածում նրանք շատ բան վերցրեցին Սելջուկներից, ինչպես նաև Ֆարիզյանների լողաց Եգիպտոսում հաստատված կառուցվածքներից: Այդուրինները Սելջուկյան Մեծ սուլթանությունը վերցրեցին նախ և առաջ պիտության կառավարման ընտանեկան համակարգը, երբ որոյ պաշտոնները կարող էին գրավել միայն տվյալ դիմասդիայի, այսինքն ընտանիքի գլխավոր անդամները: Դրա հետևանքով երկրի կառավարությունը նձամկում էր մի տեսակ մի մեծ ընտանիքի կառավարմանը, որն ուներ իր գլխավորը, տվյալ պարագայում սուլթանը, և նրան լուր ու ենթակա ընտանիքի ամեամները՝ պաշտօնյամները: Թե՛ Սելջուկները, թե՛ Այրուրինները այդ կերպ ցանկանում էին պետուրյան կառավարմանը տալ ընտանիքական բնույթը, չցանկանալով իշխանությունը կիսել ընտանիքին չարտկամունքներին ու այդ ուժիով պահպանել միասնությունը կառավարման վերին կառուցվածքներում: Նրանք հույս ունեին այդ ուժիով ամրապնդել իրենց իշխանությունը և իրենց ապահովագրել հմարակործ ճարտահրապերներից:

Դեկապարիվելով այդ սկզբունքներով, Սալահ առ-Դինն իր հորը՝ Նաջմ առ-Դին Այրուրին տվյալ Ալեքսանդրիա ու Պամիր նազարան-գիտներից և Բուհայրա նահանգից հարկեց հսկաբնույթ պաշտոնը, իսկ իր եղբարը՝ Ծամս առ-Դին Թուրքան Հակիմ, Աշանակեց Վերին Եգիպտոսի կառավարիչ և այլն: Կառավարման ներընտանեկան սկզբունքը պահպանվեց նաև Սալահ առ-Դինի մահից հետո: Նրա ստեղծած սուլթանությունը, որը ծգվում էր Թիգրիսից մինչև Նեղոս, քամանվեց նրա ժառանգործների, որդիների և եղբայրների միջև: Նրա որդիներից Մալիք ալ-Աֆղանը ստացավ Դամակեռաց, ալ-Ազգիզ՝ Կահիրեն, ալ-Զահիր՝ Հայերը, իսկ նրա կրտսեր եղբայրը, Սալիհը, ստացավ ալ-Կարակը և ալ-Շուակը: Արտաքուստ նրանք այդ եղբայրական կառուցվածքը էին որպես մի ընտանիքի անդամներ:

Սալահ առ-Դինը վերացրեց Ֆարիզյանների ժամանակ ծնալորդված վիրիարի առքուները իր քաջարիկ պաշտօնյամներով, թթվածով միայն այն պաշտօնները, որոնք ամենանիրամեծներն էին: Դրանց թվում առաջին հնրիմ պետը է Եղել հարկերի հավաքածն ողիվամու պահպանություն:

Այրուրինների ժամանակ ավելի զարգացան պահատիրական հարաբերությունները, որին նպաստնեցին նաև խաչալիրներն իրենց նվաճած շրջաններում: Նրանք ամենուր ներդնում էին Եվրոպայից իրենց հետ թերած տնտեսական կացութածները, առաջին հերին ավատատի-

րական հարաբերությունները: Ավելի լայնորեն սկսվեց կիրառվել իշտայի՝ ծառայության (պետական, ռազմական և այլն) դիմաց ժամանակավոր հողօգտագործման սկզբունքը:

Այսուրիները փոփոխություններ մտցրեցին դատական համակարգում: Նյուանց վերացրեցին խմախլական սկզբունքներով դատական գործերի ընթացկումն ու դատավճիռների ընդունումը և դատական գործերը համձնեցին սումնի իրավարամներին, մասնավորապես նրանց, ովքեր պատկանում էին շաֆիական մագիստրին:

Այսուրիական առաջին սուլթանների հաջորդությունները նպաստեցին տնտեսական վերելքին: Սալահ աղ-Դինը իր քաղաքականությամբ խրախուսաւ և գործատանշառության զարգացմանը: Նա կառուցում էր ամրարտականեր, փորում քրանցքներ և այլն: Զարգացավ առևտուրը: Առևտրական աշխատված հարաբերություններ հաստատվեցին Եվրոպական երկրների, հատկապես Իտալիայի, Ֆրանսիայի և Կատալոնիայի առևտրականների հետ: Սուլթան ալ-Աղմահ (1199–1218 թթ.) թույլտվությամբ Վենետիկի վաճառականները, որոնք առաջնակարգ դիրքեր ունեին Եգիպտոսի հետ առևտուի մեջ, Ազերբանդրիայում ստեղծեցին ինձնց առանձին առևտրական գոտիները: Ըստ Երևանի առևտուրն այնպիսի մեծ ծավալների է եղել, որ այնտեղ նրանք անգամ պահպանվեն և ունենցել: Խև խոալացիները Պիզայից թերևս առաջին էին, որ Միջերկրականի ափներին գտնվող և Եգիպտոսի ծովային ու առևտրական դարպանամերը համարվող Ազերբանդրիայում քացցեցին իրենց կյուպատությունը առևտրական գործարքները կանոնակարգելու և պիզացի առևտրականների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար: Եգիպտական շատ ապրանքներ արտահանվում էին աշխարհի տարրեր երկրներ: Եգիպտոսն իր հերթին ներմուծում էր օստարելիքյա զամազան ապրանքներ և դրանից, մասնավորապես մաքրացին տուրքերից ստացված եկամուտներով համալրում առվաճանական զանձարանը: Վուլքանության տարածությունը հաստատված ապահովությունը նաև տարանցիկ առնորդին: Եգիպտական վաճառականները հասնում էին մինչև Շելլկաստան և Շեռավոր Արևելքի երկրներ:

Սալահ աղ-Դինը, լինելով խալամի համոզված հետևորդ և պաշտպան, մեծ ուշադրություն էր գարմանում իր սուլթանության մեջ սումնիամի, նրա գաղափարների և դրույթների տարածմանը: Այդ նպատակով նա և նրա հաջորդները կառուցում էին դաստիարակությունը, որտեղ հիմնականում դատավանդում էին կրոնին նվիրված առարկաներ: Նույն քաղաքական

նուրայումն էր վարում նաև ալ-Արջիլը, որի Դամասկոսում կառուցած դպրոցներից մեկը մինչև օրս կրում է նրա անունը և կոչվում է ալ-Արջիլյա:

Մեծ քափ ստացավ Կահիրենում և ամբողջ տուքանուրյունում ճգկիրների կառուցումը: Կառուցվում էին նաև քաղաքացիական շինություններ, որոնց մեջ հիշատակության է արժանի Կահիրնի միջնաբների կառուցումը XII դարի վերջերին:

### 5. Այյուրիների տապալումը

Սալահ առ-Ղինի մահից հետո, ինչպես հաճախ է լինում արևելյան միասնականություններում, երբ ուժեղ և հեռատես դժկավարը մահանում է և նրան համարժեց փոխարինող յի գտնվում, սկսվեց Այյուրիների տուքանուրյան բուկացումը: Եպ, ինչպես պարզվեց, ներշնտանելիան կառավարման համակարգն ի վիճակի չեղավ կանխել այդ գործընթացը:

Սալահ առ-Ղինը, ինչպես նշվեց, մնացրվ Այյուրյան տուքանուրյան գերազույն սյուլետները, տուքանուրյան տարրեր մասնից կառավարիչներ նշանակեց իր մերձափրագուցն հարազաւոներին: Նրանց միջև, Սալահ առ-Ղինի մահից հետ, ծայր առավ, սկզբում խուզ մրցակցություն, որն այնուհետև վերածվեց քացահայտ պայքարի տուքանուրյան առաջնի դեմքը լինելու համար: Այդ պայքարում հաջողակ գտնվեց նրա եղբայր ալ-Արջիլ I, որը կարողացավ իր գերիշխանությունը հաստատել նգիտուսի և Սիրիայի մեջ մասի վրա, ինչ 1200 թ. Միջազգությունը կառավարիչ նշանակել իր որդուն:

Պայքարը իշխանության համար Այյուրիների դիմաստիայի անդամների միջև ավելի մեծ քափ առավ ալ-Արջիլի մահից հետո: Արդյունքն եղավ այն, որ Այյուրիները քածանվեցին մի քանի ճուտերի: Ալ-Արջիլի անմիջական շառավիղներն իշխում էին եօփասուում, Միջազգանությունը և Դամասկոսում, ինչ Այյուրիների ընտանիքի մյուս անդամներն իշխում էին եմենում, Յուսիսային Սիրիայում՝ Քիմսում, Դամայում և այլն: Այյուրիների իշխանությունը Յուսիսային Սիրիայում պահպանվեց մինչև 1260 թ., երբ մոնղոլները Յուլայու խամի գլխավորությամբ գրավեցին այդ շրջանը:

Անմիաբանությունը և ներդիմաստիական պայքարը Այյուրիների տուքանուրյունում, նպաստավոր եղավ խաչակիրների համար, որոնք կարողացան Այյուրիներից հետ նվաճել մի շարք տարածքներ և քաղաքներ, ինչպես Բեյրութը, Աշկենզը, Սաֆադը, Տիբերիան և այլն: Ինկ

1229 թ. ֆրանկները կարողացան գրավել նաև Երուսաղեմը: Դեռագայում, 1244 թ. խորհօմշահերի օգնությամբ հնարավոր նդավ Երուսաղեմը հետ նվաճել խաչակիրներից, բայց ընդհանուր առմամբ ոյս արդեն որևէ նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ Այյութիների բուլացման գործընթացը շատ էր խորացել:

Խթ դարի 40-ական թվականների վերջներին Այյութիների սուլթանությունն արդեմ հոգևարդի մեջ էր: 1249 թ. մահացավ սուլթան Սալիհը և այդ պահից քաղաքական դեսպանը գարողացան շատ արագ և որոշ իմաստով անսուլտոր կերպով: Սալիհի մահը նրա այրին՝ Շաջար աղ-Ռուդը, որը, իմաստությունը է Ֆ. Շիրինի «ծագումով թուրք կամ հայ ստրկուի» էր, երթ ամիս գաղտնի պահեց, սպասեցով հանգուցյալ սուլթանի որդու՝ ալ-Մուտազզամ Թուրքան Շահի վերադարձին Միջազգային ամսությունը ունեցած էր նա: Այդ ընթացքում նա էր հրամաններ տալիս Սալիհի ամսությունը, կեղծելով նրա ստորագրությունը: Նա այդ քայլին դիմեց, որ անսպից գործը պահեց հնազանդության մեջ: Ալ-Մուտազզամ Թուրքան Շահը վերադարձնալով եգիպտոս, ստանձնեց Այյութիների սուլթանի պարտականությունները: Սակայն նա չկարողացավ միշտ հաշվարկել ուժեղի դասավորությունը, որ ստիշովել էր սուլթանությունում, և հակասությունների մեջ մտավ իր հոր գվարդիայի հետ, որը կազմված էր թուրք, ալյապես կոչված բահրի մամլուքներից: Նա քախման մեջ մտավ նաև իր, այսպես ասած, խորը մոր՝ Շաջար աղ-Ռուդի հետ, անտեսելով վերջնին քաղաքական հավակնությունները:

Ալ-Մուտազզամ Թուրքան Շահը, որ չէր վստահում թուրք մամլուքներին, նրանց փորձեց հետին պլան միջեւ և քանակից ու պետության բարձր պաշտոններուն նշանակեց իր կողմնակիցներին, հեռացնելով մամլուքներին և Շաջար աղ-Ռուդին հավատարին նարդիկան: Եվ սկսվեց քացահայտ պայքար նրանց միջև իշխանության համար: Ալ-Մուտազզամը հայտնվեց ծանր դրության մեջ, որն ավելի վատացավ, եթե նրան պաշտպանող մամլուքների մի մասը, բահրիները, իրենց գրահիրամանատար Բայբարսի գլխավորությամբ, ապառամբվեցին ալ-Մուտազզամի ովք և անցան Շաջարի կողմը: Սուլթան ալ-Մուտազզամ Թուրքան Շահը Շաջար աղ-Ռուդի համաձայնությամբ 1250 թ. տապալվեց և Բայբարսի հրամանով գլխավութեց:

Սակայն դեսպանը հետագա գարօնացումն ունեցավ աննախաղեակ վախճանմ: Ապանձած սուլթանի փոխարին սուլթան նոյակիլից Շաջար

աղ-Շուկրը, կին, Չախվելին ստրկումի և հարճ: Նա իրեն հօշակեց «Առառվանների բազուիի»:

Այդուրինների իշխանությունը տապալվեց և 1250 թ. հաստատվեց մամլուքների դիկտատուրան:

### III. ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ՄԻՒԻԱՆ ՄԱՍԼՈՒՔՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՑՈ (1250-1517 թթ.)

#### 1. Մամուլքները

Դեւևս Արքայաններն իրենց գահակալությամ առաջին տարիններին զգալի փոփոխություններ մտցրեցին իրենց ռազմական ուժերում, մասնավորապես իրենց զվարդիայում: Նրանց բանակը, որ մինչ այդ հիմնականում կազմված էր արաքսներից, ավելի նիշտ արար քրիստոնեության աշխարհագորից, առտիմանարար իր տեղոց գիշեց վարձու բանակին, որն ուներ մի շարք առավելություններ: Նախ, Զա ավելի լավ էր կազմակերպված և բնդվյան աշխարհագործականներին գերազանցում էր իր մարտունակությամբ, և, երկրորդ, նրանք օտարներ էին, դրսից քերպաններ, որոնք արարական ծրկներում չունեին արժատներ և ամրողապես կախված էին հայլիքաներից: Խսկ հետագայում արտակարգ կերպով բարձրացավ զվարդիայի դեղը՝ ի հաշիվ բանակի:

Սկզբնական շրջանում զվարդիականները հիմնականում գերի ընկած կամ սորկավաճառական շուկաններում գնված ստրուկներ էին, մասնավորապես Միջին Ասիայից՝ Մավարաննահիլից, Զայկունից, Գիլանից, ինչպես նաև Իրանից: Դեւագայում նրանց մեղքերնան աշխարհագրությունն ընդլայնվեց:

Անա այս ստրուկ գերիները կոչվում էին մամլուքներ կամ գուլամներ, որն իմաստային առումով հաճախ բարգմանվում է «պատամններ» և «ծառամեր»: Դեւագայում նրանց ծեղը էին քերում զվարդապես պատամի հասակում բուրքներից, դիշարներից, քրդերից, հույներից, սլավոններից, մասամբ վրացիներից և այլ ազգություններից: Այս պատամնույթը Արքայաններից անցավ Ֆարիմյաններին, Այլուրիններին և ներ ու փոքր այլ դիմաստիանների, որոնցից յուրաքանչյուրն ատելում էր մամլուքան իր զվարդիայի, անզամ գորարանակը: Օրինակ, Ֆարիմյաններն իրենց մամլուքներին հավաքագրում էին եվրոպացիներից՝ ի-

տալացիներից, հովմերից և սլավոններից, և միայն խալիֆա Ազիջի ժամանակ սկսվեց թուրք մամլուքների գանգվածային հավաքագրումը: Ահա այս պատճառով մամլուքներին համարում են սպիտակ կամ սպիտակամորթ սորուկներ:

Սովորաբար մամլուքներին հավաքագրում էին երեխա կամ պատանի հասակոց՝ նվաճված երկրների թնակիչներից, նրանց գերի վերցնելով, զնելով կամ ստանալով հարկի դիմաց որպես դևշիրման: Արդ մանկահասակներին անջատում էին նրանց ծնողներից և հարազատ ազգային միջազգայիրից ու տանում խալիֆաների, սուլթանների, էմիրների մոտ ծառայությամբ: Նրանց նախ և առաջ քվատում և խլամացնում էին, ապա սկսում դաստիարակել խալիֆային կամ սուլթանին անձնական անսահման նվիրվածությամբ ծառայելու ոգով, վարժեցնում ռազմական գործին և նրանցից պատրաստում հիմնայի, սակայն դաժան ու արյունաշում զինվորական: Միայն այդամիտ պատրաստությունից հետո մամլուքին վերցնում էին ծառայության մամլուքյան քանակում, որի մասին նրանց տրվում էր հատուկ վկայական: Նա ստանում էր նաև ծի, ռազմական հանդերձանք և զինվորական ծառայության հաճար անհրաժեշտ այլ պարագաներ: Ահա այսպիսիներից էր կազմվում խալիֆայի և սուլթանի պահակագունոց կամ անձնական գվարդիան:

Մի յուրահատուկ կողմի վեա ևս հարկ է ուշադրություն դարձնել: Մամլուքները մտնելով խալիֆայի և սուլթանի գվարդիան, ազատություն էին ծեռօր քերում և նրանց առջև գործունեության մեջ հեռանկարներ էին բացվում: Նրանք արդեն որպես նախակին ստրուկներ, կարող էին դառնալ և, իրոք, դառնում էին գորահրամանատարներ, էմիրներ, նահանգների կառավարիչներ, քարծր դիրքեր գրավել արքունիքում և անգամ դառնալ սուլթաններ: Նրանք ամուսնանալու իրավունք ունեին և նրանց զավակները համարվում էին ազատ մուսուլմաններ: Մամլուքները դառնում էին այն աստիճանի ազդեցիկ, որ շատ հաճախ, ինչպես նշել ենք, խալիֆաները և սուլթանները գործիք կամ խաղալիք էին դառնում նրանց ծեռօրում, նրանք էին տնօրինում այս կամ այն զահակայի ճակատագիրը:

Այս նույն ուղյուվ ընթացան Այյուբիները: Բայց եթե Սալահ ալ-Դինի և նրան հաջորդած մի շարք սուլթանների ժամանակ մամլուքների տեսակարար կշիռը մեծ չէ, կային մամլուքներից կազմված միայն ոչ մեծ գորագորկատներ, ապա սուլթան ալ-Սալիհ Նազմ ալ-Դինի ժամանակ (1240–1249 թթ.), մամլուքների թիվը կտրուկ աճեց և որպան համա-

պատասխան խիստ մեծացավ նրանց դերը ոչ միայն Այրուրիների սուրբանուրյան ռազմական, այլև քաղաքական կյանքում: Չենց նրանց էին, ինչպես ցույց տրվեց, որ տապալեցին և սպանեցին Այրուրիների սուրբան աշ-Մուսազզամ Թուրամ Շահին և գրավեցին իշխանությունը Եղիսաբետում:

Այսպիսին է ընդհանուր գծերով մամլուքների ինստիտուտի եռյունը:

## 2. Մամլուքյան Բահրիների կառավարումը (1250–1382 թթ.)

Շաջար աղ-Դուրի մուսուլմանների բազուի հօչակվելուց հետո, ինչպես նշվեց, տապալվեց Այրուրիների տիրապետությունը և արաբների, հակասարապես նաև մուսուլմանների պատմուրյան մեջ սկսվեց մի նոր շրջան, մամլուքների տիրապետության շրջանը:

Սակայն մամլուքներն իրենց երիկական ծագումով միատարր չեն և կազմված են տարբեր խմբավորումներից: Այրուրիներին տապալեց և Շաջար աղ-Դուրին թիկունք կամքեց մամլուքների այն խմբավորումը, որը հայտնի էր «Բահրի մամլուքներ» հորոգործությունով: Անվան ծագումը գալիք է այն համացամանցից, որ նրանց կենտրոնաւորին կամ նստոցը ներկա գտնի արաբերեն Բահր ալ-Նիլի, կողմիներից մեկն էր: Իսկ երիկական առումով, Բահրի մամլուքները բռնորդել և նոնդուներ են: Նրանց ամենաականավոր գորահրամամատարներից մեկը մեր կողմից արդեն հիշատակաված Բայրարսն էր, որն իրականացրեց Այրուրիների դինաստիայի տապալումը և մամլուքների տիրապետության հաստատումը Եղիսաբետում և Սիրիայում:

Շաջար աղ-Դուրի բազուի հօչակվելը դժգոհությամբ ընդունվեց արաբների և ցնդիանքապես մուսուլմանների դեկավարների կողմից:

Իր դժգոհությունը հայտնեց Արքայան խալիֆա ալ-Մուսքամիմը, որը Ֆարիյանների անկումից հետո բավականին ակտիվացել էր: Նա դեմ էր, որ պետուրյան դեկավարը կիմ լինի, և այն էլ իր հարծմի հարժենից մեկը, որին նա որպես հարճ ծամանակին նվիրել էր սուլթան աս-Սալիհին: Ուստի նա պահանջեց մամլուքներից հեռացնել նրան և պետուրյան նոր դեկավար ընտրել տղամարդու:

Այրուրիների տապալումը Կահիրեան և Շաջար աղ-Դուրի բազուի դաստիարակության անհանգամատացրեց Այրուրիների սիրիական ցյուղին, առաջին հօրբին Դամասկոսի Այրուրիներին: Նրանց հիմնական կողմանը կազմող քրդական կայսրադիյա ցեղը, գայրացած բահրիական

մամլուքների գործողություններից Եգիպտոսում, զրկեց Միրիայում գտնվող բարիհական մամլուքներին Դամասկոսի նահանգում ունեցած իշխանությունից, և Դամասկոսում ու նրա նահանգում իշխանությունը հանձնեց Շալերի Այյութիական կառավարիլ Նասիր Յուսուֆին։ Միրիական Այյութիների դիրքորոշումը և գործողությունները լրիվ աջակցություն գտան Արքայան խալիֆա ալ-Մուստաքիմի կողմէից։

Ստեղծված յուրահատուկ իրադրույթունն առաջացրեց քաղաքական ճգնաժամ և բարիհները որոշեցին երկրի ընկավարի հարցում զնալ զիջման, իշխանությունից գրկել Եաշարին որպես կին, և պետության դեկավար ընտրել տղամարդու։

Եաշարը միանձնյա կառավարեց մոտ երեք ամիս, որի ընթացքում նա սկսեց անգամ իր անունով և պատկերով դրամ հատել։ Նա հարկադրված իրաժարվեց գահից և մամլուքները 1250 թ. Եգիպտոսի նոր տուքան ընտրեցին իրենց հայտնի գորավարներից մեկին՝ Իզզ ալ-Շիհ Այրակին։ Այրակը համբասացավ Քարիների դիմաստիայի հիմնադիրը։ Սակայն Եաշարն իրեն չկորցրեց և ամուսնացավ Այրակի հետ և սկսվեց նրանց այսպես կոչված համատեղ կառավարությունը։

Բայց ոչ բոլոր մամլուք դեկավարներն ընդունեցին ճգնաժամից դուրս գալու այս տարրերակը։ Սամլուքների մի խումբ, որի մեջ մտնում էին այնպիսի ազգիներիկ գորահրամանատարներ, ինչպես Բայբարազ, Ակտայը և ուրիշներ, պնդում էին անգամ սուլթանությունը հանձննել Այյութիներին։ Այրակը հարկադրված զիջծոց և 1250 թ. սուլթանական գահին նստեցրեց Այյութի սուլթան Թամիզ Մուհամմադի ծոռին, տասնամյա ալ-Աշրաֆ Մուսային։ Բայց դա ծնակեալ էր և ժամանակավոր բնույթ էր կորում։ Այրակը կարողացավ դասնալ անշափահաս սուլթանի արքաեկը՝ դաստիարակը և խնամակալը, և իր ծեսորում պահել գլխավոր հրամանատարի շատ կարևոր պաշտոնը։ Նա շարունակում էր մնալ Եգիպտոսի իրական կառավարողը։

1252 թ. նա զահրմկեց արեց Ալ-Աշրաֆ Մուսային և նրան արտաքսեց Եգիպտոսից։ Այդ պահից Այրակը Եգիպտոսուց կառավարում էր արդեն որպես միանձնյա տուքան։ Սակայն նա դա երկար չվայելեց։

Հարունակում էին նրա հարաբերությունները լարված մենալ Քահրի մամլուքների մի շարք առաջնորդների հետ։ Դիմակայությունը սիրիական Այյութիների հետ լիարվեց, անգամ Արքայան խալիֆայի միջամտությունից հետո։ Մրկեցին նրա հարաբերություններն իր կոուր, Ըաշարի հետ, մանականի այն բանից հետո, եթե վերջինիս հայտնի հար-

ճավ, որ Այցակն ուզում է ամուսնանալ ուրիշ կնոջ հետ: Շաօարք, հավատարիծ իր բնափրությամբ, անցավ վճռական գործողությունների: Նրա ստորևուի 1257 թ., Կատիրեի միջնաբերում, բաղմիքում, իրենց վիայտն կոչիններով սպամեցին Այցակին և դիակը վայր նետեցին միջնաբերոյի աշտարակից:

Թահրի մամլութերի ամենաակամավոր սուլթանը եղավ Բայբարս (1260–1277 թ.): Ունամը նույնիսկ նրան են համարում Թահրիների դինաստիայի հսկական հիմնադիրը:

Թահրի մամլութերի կարողացան մոտ 140 տարի իրենց ծեսում պահել ոչ միայն Եգիպտոսը, այլև փոքր ընդմիջումներով իրենց իշխանությունը տարածել նաև Սիրիայի, Պաղեստինի և Յիշազի ու Խարակից այլ տարածների վրա:

Նրանց մեծ ծառայություններից մեկը կայանում է նրանում, որ նրանք հետևողականորեն կարողացան հաջակիրներից հետ նվաճել փաստորոն բոլոր այն տարածները, քաղաքները և բնակավայրերը, որ գտնվում էին նրանց տիրապետության տակ: Այդ գործում հաւելացած հաջողակ եղավ սուլթան Բայբարսը, որի քաղաքական և անձնական երազանքը եր լինել երկրորդ Սալահ առ-Դինը և պատմության մեջ մտնել դրանք մուսալմանական տարածները թիվառությա հաջակիրներից ազատագործությունը:

Թահրի մամլութերի մյուս ծառայությունը կայանում է նրանում, որ նրանք կարողացան հականարկած տակ նոնդուներին և կամիսել Եգիպտոսի նվաճումը նրանց կողմից: Այդ առումով մկրունքային նշանակություն ունեցավ 1260 թ. Այն Զայնուլի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որն ավարտվեց մոնղուների պարտությամբ: Այդ հայրամական շնորհիվ մամլութերի տիրապետությունը տարածվեց Սիրիայի վրա:

Այս ճակատամարտում այրի ընկավ Բայբարսը, որը շատ չանցած դարձավ սուլթան, դավադրաբար իր սրով կտրմալով իր նախորդի, սուլթան Կուտուզի գլուխը:

Թահրի մամլութերն իրենց հեղինակությունը քարձրացմենու և դիրքերը մուսաւանական աշխարհում ամրապնդելու համար, պատուապարեցին Բայբարս գրաված և Յուլայու խանի սրից պատահականուն ճողուարած Այցակյան ընտանիքի անդամներից մեկին: Բայբարսը նրան, որը վերջին Այցակյան խալիֆայի հորենքայրն էր, Սիրիայից հրամայիրեց Կատիրե և 1261 թ. հունիսին մեծ հանդիսական օծեց դրան խալիֆա ալ-Մուստանսիրը: Այս խալիֆան, ինչպես և նրա ուղղու հաջողու-

Ծերց ինարկե, գուրկ էին որևէ իշխանությունից և ամրողովիմ կախված էին մամլուք առլրամներից: Նրանց նույնիսկ անվանում էին «թշակառու Խաչիֆաներ»:

Բայց Խաչվենկատ Բայբարսը մեծապես օգտվում էր Խաչիֆայի ծառայություններից որն իր հասուն հրովարտակով Բայբարսին հաստատեց Եգիպտոսի, Միջիայի, Դիլար Բարքի, Քիջազի, Եմենի և Սերժեփիլատյան տարածքների սուլթան: Դեռ ավելին, Խաչիֆայի հրովարտակում նշված էր, որ Բայբարսը «կիմնի բոլոր այն տարածքների սուլթանը, որոնք նա ապագայում կգրավի»:

Խաչիֆաները որպես նուուզմանական աշխարհի հոգնոր առաջնորդներ, որոնք այդ ժամանակ միայն մի իրավունք ունեին՝ այս կամ այն սուլթանին հրովարտակներ շնորհել և հաստատել սուլթանական պաշտոններում, Կահիրենում մնացին մինչև XVI դարի սկիզբները, մինչև թուրք օսմանների կողմից Եգիպտոսի և արարական մյուս երկրների գուազումը:

Մամլուքների տիրապետությունը հարատևնեց 267 տարի: Այդ ժամանակաշրջանում կառավարել են երկու մամլուքյան դիմաստիաներ: Առաջինը Բահրեների դինաստիան էր, որը, ինչպես նշել ենք, կազմված էր թուրքներից և մոնղոլներից, և կառավարեց 1250–1390 թթ., ունենալով 24 մամլուք սուլթան: Վերջին Բահրենի սուլթանը եղավ Իրն Շաարանը, որին 1390 թ. վերջնականապես տապալեց Բուրջի շերքեզական մամլուք զորակրամանատար Բարբուքը, որը և դարձավ երկրորդ մամլուքյան դինաստիայի՝ Բուրջիների դինաստիայի հիմնադիրը:

### 3. Բահրեն մամլուքները և Կիլիկիյան Յայաստանը

Կիլիկիայում հայկական պնտությունը կազմավորվել է 1080 թ., Ուրբեն իշխանի կողմից, որը Բագրատումի վերջին թագավոր Գագիկ II մերձավորներից էր: Ակզրում դա իշխանապետություն էր, իսկ 1198 թ. նա վերածվեց թագավորության, որի առաջին թագավորը եղավ Լուս Ուլիմիյանը:

Կիլիկիայի հայկական պնտությունը գոյություն է ունեցել նրա համար շատ բարդ միջազգային իրադրության պայմաններում: Նա շրջապատված էր տարբեր պնտություններով, որոնցից յուրաքանչյուրը ծգտում էր տիրանալ Կիլիկիային: Դրանց մեջ էին Բյուզանդական կայսրությունը, Ուսմի կամ Խորնիայի Սելջուկյան սուլթանությունը, Զօռմի պա-

պը, որը գործում էր կարուիկ և կերեցուն միանալու կողմնակիցների՝ ունիշորականների միջոցով, ապա նաև մոնղոլները և եզիստական մամլուքները: Դայ բազավորները ստիպված էին մեծ խիզախություն և ոյն վաճառագիտական բարձր հմտություն ցուցաբերել հայկական պետական նավի համար անվտանգ նավարկություն ապահովելու համար են, ի պատիվ Շուանց, պնտը է Ցշել, որ նրանց երկար ժամանակ հիմնականում հարդրվում էր լուծել այդ խնդիրը, որի փայլուն ապացույցն է Կիլիկիայում հայկական աշտուքյան մոտ երթրդայրայ գոյրությունը:

Կիլիկիայի հայկական պետությանը մեծ վտանգ էին ներկայացնում Բարեի մամլուքները, մանական այն բամից հետո, երբ նրանց սուլթաններն իրենց զիսավոր խմբիներից մեկը համարեցին խաչակիրներին վերջնականացնելու դուռը նոյնի և ազատազրել նրանց տիրապետության տակ գտնվող մուտքամանական տարածքները:

Նրանց կողմից այդ հիմնախմբից հաջողությամբ լուծելուց հետո, երբ նրանց գրավեցին Եղեսչիայի և Տրիպոլիի կոմսությունները, ԱՍտիքի հշխանապետությունը, Երոսալիմի բազավորությունը, միջերկրածովյան առափնյա բոլոր մեջ ու վիզոր քաղաքները, ամրոցները և բնակավայրերը, ինչպես Թբիլիսը, Սյունիքը, Ալբր և այլն, նրանց անմիջական հարևանությամբ մեաց մեկ քրիստոնեական պետություն՝ Կիլիկիայի հայկական բազավորությունը: Խմբիրը քարոզանում էր նաև Շուանով, որ մամլուքների աշքում հայկական պետությունը ներկայանում էր որպես մի պետություն, որը ժամանակին օժանդակել էր խաչակիրներին մուտքամանների դեմ ուղղված արշավանքների ժամանակ: Յարկ է նկատի առնել մի կարևոր հանգամանք ևս:

Մերձավոր ու Միջին Արևելքում մննդուների հայտնվելուց հետո, Կիլիկիայի հայ բազավորներին հաջողվել էր կարգավորել իրենց հարացերությունները նրանց հետ և կամնիք ահարկու մոնղոլների ներխուժումը Կիլիկիա: Այդ հարկադրյալ դաշնակցության պայմաններում, հայ գորարանակը 1299–1303 թթ. նախակցել էր մամլուքների դեմ ուղղված մոնղոլների արշավանքներին:

Ահա այս պատճառաշներն էին ընկած հայ–մամլուքյամ հարաբերությունների լարվածության հիմքում և եզիստական նամլուքներին նրանք հարցուվում էր ներխուժման Կիլիկիա և ավերածություններ գործել:

Սակայն հայ զահակալները գիտակցում էին Եզիստոսի հետ հարաբերությունները կարգավորելու և խաղաղ գոյակցելու ամերամեծ տուքյունը և այդ ուղղությամբ մենարկում համապատասխան քայլեր:

Որանում շահագրգռված էին նաև Եղիպտոսի մանլուքները, որովհետև նրանց վիճակը նույնապես ծանր է և նրանք շատ հաճախ էին հայտնվում անծանելի դրության մեջ: Դետևաբար, պատմական որոշակի ժամանակահատվածներում նրանց շահերը խաղաղության հարցում համընկնում էին և նրանք գնում էին մեկը մյուսին ընդառաջ:

Այդ տեսակետից բարձր զնահատականի են արժանի Եղիպտոսի Բահրիական իներրոդ սուլթան ալ-Սամիրի (1298–1308, 1309–1340 թթ.) և հայոց գափի խնամակալ, իշխան Օշին Պայյի գործադրած քանթեզը, որի արդյունքում Եղիպտոսի և Կիլիկիայի հայոց բազավորության միջև 1323 թ. կնքվեց պայմանագիր հաշտության և համագործակցության վերաբերյալ: Այդ պայմանագրով երկու պետությունների միջև հաստատվում էր խաղաղություն: Դայոց պետությունը պարտավորվում էր Եղիպտոսին տարեկան վճարել 120 հազար դիրհամ հարկ: Եղիպտոսի առաջանց պարտավորվում էր վերականգնելու մամլուց գործելու կողմից ավելիված տրդոր հայկական քաղաքներն ու ամրոցները: Պայմանագիրը պարունակում էր մի կարևոր կետ ևս, որը վերաբերում էր հարաբերություններին եվրոպական երկրների հետ: Նրանում արծանագրված էր, որ եվրոպական պետությունների հետ Կիլիկյան Հայաստանի ամեն մի քանչըռություն կդիտվի որպես Եղիպտա-հայկական պայմանագրի խախտում և Եղիպտոսի դեմ ուղղված թշնամական գործողություն:

Դայ-Եղիպտական պայմանագիրը որոշ ժամանակ խաղաղություն բնութ ընթաց Կիլիկիային և նպաստեց նրա անվտանգության ապահովմանը: Նա միաժամանակ անհանգստացրեց Շօրմի պատմին և նրա կողմնակիցներին Դայաստանի Ենրում, որոնց շահերին հակառակ էր հայ-Եղիպտական հարաբերությունների նորմանացումը: Շօրմի պապը ծրագրում էր նոր խաչակրաց արշավանքի կազմակերպում, նրանում ներգրավվելով նաև հայերին: Սակայն Կիլիկյան Հայաստանի քննակցության մեջ մասը դեմ էր մասնակցելու խաչակրաց պատերազմներին և ցանկանում էր հաշտ ապրել իր մուտքամանական հարմանների հետ: Շորմի պապը և նրա համակիրները կազմակերպեցին դավադրություն Օշին Պայյի և Եղիպտոսի հետ համագործակցության կողմնակիցների դեմ: Դավադրությունը ժամանակին բացահայտվեց և նրա կատարողները մահապատճի ենրարկվեցին: Բայց հետազայտ այդ ուժերին հացողվեց ի վերջո սպանել Օշին Պայյին: Նոյն ճակատագրին արժանացավ նաև հայոց բազավոր Ըստ ԽV այն քանից հետո, երբ նա հրաժարվելով նվրոպամետ կողմնորոշումից, մկնեց վարել Եղիպտոսի հետ ներ-

ծեցման քաղաքականություն և Եգիպտոսի հետ կանչեց գաղտնի պայմանագիր:

Քարաքերությունները Եգիպտոսի և Կիլիկիան Հայաստանի միջև կրկին սրբեցին: Սամուրաները ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին Դաշտավայրային Կիլիկիան, որը Կիլիկյան Հայաստանի կարսոր տմտեսական և մշակութային կենտրոնն էր, այնուհետև, 1375 թ., հաճառ դիմադրությունից հետո գրավեցին մայրաքաղաքը Մինը:

Այդ բնականը համեխանություն է Կիլիկիայի Հայկական թագավորության անկման տարերիվը:

#### 4. Թուրքիների մամլության դիմաստիան և մամլությունի տիրապետության վերջը

Թարիիներին փոխարինելու եկած Թուրքի մամլությունը, կենտրոնացված էին Կահիրեի ամրոցում՝ Թուրքում: Այստեղից է նրանց անվանումը: Այս դիմաստիան մինչև 1517 թ., մինչև իր անկումը, ուժամասվ 23 տուրքան, որոնք շատ վատ հիշողություն են բողոք պատմության մեր հրենց դամանությամբ և քառությամբ արարությունը: Պաշված է, որ այդ 23 տուրքաններից մի քանիսն ազգի են ընկեր իրանց նենգությամբ և ուխտադրությամբ, ունան տառապել են մոտավոր թթվարգագությամբ, իսկ ոճանք՝ լուրջ հոգեկան արաւոներով, շատ քշերն են գրել և կարդալ իմացել, մեծ մասն անզամ Կիրանի որևէ տուրքի չի կարողացել անսխալ պատասաննել, իսկ համարյա բոլորը, սակայ թագաօությամբ, եղել են անվիրը և ամելուտուրական մարդիկ:

Սմբայում էր Թուրքիների կաօավարման համակարգը: Սուլթանները գահի վրա արագրեն փոխարինում էին մեկը մյուսին: Ամենաերկար՝ վեց տարի, կառավարել է Թահիտրայը, մասցածները մեկը, երկու կամ երեք՝ լուրջ տարուց ոչ ավել, իսկ 1412 թ. գահի վրա միմյանց փոխարինել են երեք տուրքան: Գահընկեց անելու, և գահին նստելու հիմնական միջոցը նոյնի է դավադրությունը և ապամությունը:

Սուլթանները կարծու թե միմյանց հետ մրցում էին դամանության և անմարդկային լինելու մեջ: Սուլթան Բարսրայ (1422–1438 թ.) իր երկու ամենական թժիշկներին գլխատեց, մերայրելով նրանց, որ նրանք չեն կարողանում գրա ցավերը թթվացնել: Իսկ առլեռան թախտայու իր աւշիմիկոս Շահն ալ-Մարշուշին կուրացրեց և լեզում կորից այն բանի համար, որ նա խարաճը չէր կարողանում ուսկու վերածել:

Երևի ոչ մի անգամ այնպես չեղ ծաղկել կաշառակերությունը, ինչպես Բուրցի մամլուքների ժամանակ: Դրամաշորբությունը, կաշառակերությունը և զանձագողությունը համակել էր ոչ միայն սուլթաններին, այլև ամրության վերնախավին: Որոնք այդ նպատակներով միավորվել էին առանձին, միմյանց հակառակ խմբավորումների մեջ:

Ավելի արատավոր և ահավոր էր Բուրցիների տնտեսական քաղաքականությունը, որը ժողովրդին հասցել էր հուսահատության: Սուլթան Բայսուրային արգելեց համեմունքների ներմուծումը Յնոյկաստամից, որի հետևանքով քարձրացավ Եգիպտոսում արտադրությունը և նրա մնացնորդի տակ գտնվող մքերքների գինը: Նրա մենաշնորհն էր նաև շաքարի արտադրությունը: Կուտակված շաքարի գինը քարձրացնելու և շաքարից ստացվող իր շահույթները մեծացնելու համար, նա երկար ժամանակով արգելեց շաքարինքնի մշակումը Եգիպտոսում: Այդ բոլորից մեծագույն տուժում էր ժողովրդը: Սուլթանները շատ հաճախ պակասեցնում էին դրամների արժեքի պարունակությունը, սակայն վաճառքը և փոխանակումը կատարում էին քարձր զներով:

Դրամ ծեռօղ թրենու մոլուցքով տարված: Բուրցի սուլթանները և նրանց մերժավորները խում էին հարստացած մարդկանց ունեցվածքը:

Տնտեսական ծանր վիճակում հայտնված թափվիները հարձակվում էին հողագործ ֆելլահների վրա, խլում նրանցից գրույատնեսական մքերքները և ամայացնում նրանց հողերը: Սովորական նրկույթ էր դարձել հարկերի քարձրացումը սննդամբքերքների, մասնավորապես Եգիպտացորենի վրա, որը մահացու հարված էր քշվառության եզրին հասած հասպարակ ժողովրդի համար: Մովզ, հատկապես սուլթան Ֆարաջի և սուլթան Շայխի ժամանակ, դարձել էր սովորական նրկույթը:

Նման աղետայի տնտեսական քաղաքականության և անհրաժեշտ թշնական ծառայության բացակայության հետևանքով, տնտեսագետների և ղեկողաֆների հաշվարկներով, նաև մուլտիմեդիա տիեզրապետության ժամանակաշրջանում Եգիպտոսի և Միջիայի թնակչությունը կրճատվել էր նրկու երդորդուով:

Բուրցիները որևէ նշամակեալի հաջողություն չունեցան նաև արտաքին հարաբերություններում: Նրանք չկարողացան շատ թե ցից դիմակայել Լենկ Թեմուրին, որի հորդաները 1380 թ. գրավեցին Բաղրամյ, առավ Միջագետք: Թիկրիթում Լենկ Թեմուրը մարդկանց գանձերից կառուցնց բոլոց, այդպես վարդվեց նաև Պամակոսում: Միայն նրա մա-

հց 1404 թ. կանխաց նրա հորդանների ներխուժումը Եգիպտոս, որն, անկասկած, արժանանալու էր նույն ճակատագրին:

Շուտով ասպարեզում հայունվեցին օսմանյան թուրքերը, որոնք իրենց նվաճողական քաղաքականությամբ, XVI դարի սկզբններին ընդհուար մուտքամբ արարական Երևաններին: 1516 թ. հոկտեմբերի 24-ին Պալերմից հյուսիս, Մարտ Դարիքի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ սուլթան Բամսուջի մամլուքների և օսմանյան բանակի միջև, որը գիտավորում էր սուլթան Սալիհը ճակատամարտ ավարտվեց մամլուքների քանակի պարտությամբ, որի ժամանակ գրնչեց նաև սուլթան Բանտան: Սուլթան Սալիհը գրավվելով Միջիան, 1517 թ. ներխուժումը Եգիպտոս: Նրա դեմ դուրս նկազ մամլուքյան բանակը, սուլթան Բուման-բեյի գլխավորությամբ: Նա սուլթան էր դարձել Բանսուջի նահիյ հետո: 1517 թ. հունվարի 22-ին, Կահինեցից ոչ հեռու տեղի ունեցած վճռական մարտում դարձալ հաղթեցին օսմանցիները:

Դա մամլուքների սուլթանության կործանումն էր: Դրանով փակվեց արարական Երևանների պատմության մի կարևոր էջը և սկսվեց նոր ժամանակաշրջան, Օսմանյան տիրապետության շրջանը, որը տևեց 400 տարի:

Այդ հարցերի լուսաթամությանը կանորադառնանը սույն աշխատության երկրորդ հատորում:

## Գլուխ դասմերեքերորդ

### ԱՐԱՐԱ-ՄՈՒՍՈՒՏԱՎԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

#### I. ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

##### 1. Արարա-մուսուլմանական մշակույթ հասկացողությունը

Քետօնայայն դարաշրջանում նոր փուլ սկսվեց մշակույթի, արկածոների և գիտության զարգացման բնագավառում, որն ընդունված է անվանել արարա-մուսուլմանական մշակույթ:

Եթե մինչ այդ խոսքը զնում էր արարական մշակույթի ծնակորման և զարգացման մասին, ապա մկան Արքայան խալիֆայությունից, նրա հետ գուգահետաքար գոյություն ունեցած կամ նրան հաջորդած խալիֆայություններից, սուլթանություններից, Էմիրություններից և այլ իշխանականություններից, ի հայտ է զայիս մշակութային մի նոր երանույթ, ողն տուացնել «Արարա-մուսուլմանական մշակույթ» անվանումը: Դա մնական անվանափոխություն չէր, այլ խորքային, իյ նախադիմք և գուգահետնոր չունեցող վերին աստիճանի հետաքրքիր նրանույթ:

Սուհամադ մարգարեթի, առաջին չորս ուղղադավան խալիֆաների, ինչպես նաև Օմայյան խալիֆայության շրջանում, երբ նոր էր ծևավորում խսլամք, երբ նա նոր էր ամրապնդում իր ոյրքնոց արարական աշխարհում, ոչ միայն քաղաքականության, այլև մշակույթի բնագավառում հիմնական գործող անձն ինքը արարան էր: Մարգարեթի կողմից հիմնադրված խսլամական ուժնամ ցատ եռթյան արարական ուժմա էր, քանի որ նա երիկական առումով հիմնականում կազմված էր արարաներից: Դոգնութ կրանքի, նշակույթի զարգագարական և հայեցակացզային ընդունումների և պատկերացումների հիմքում ընկած էին արարաների ստեղծած կորունք, նրա հիմնադրույթները և դրամաները: Եվ դա ոչ միայն

աստվածաբարանության և փիլիսոփայության, այլև պատմագրության, եթիկայի, ասքի, պոեզիայի և այլ բնագավառներուն:

Արաբները մարդկությանց պարզեցնեցին իրենց սնփական գիրը՝ արաբերներ, որի հիման վրա զարգանում էին կրորությունը, գիտությունը և Անդրանիկացիները:

Այսպիսով, թե՛ կատարողների, թե՛ ռումանիակության և թե՛ ծին առումով, Սուհածմաղ օնարդարների, առաջին շրու ուղղադիմանների, ինչպես նաև Օճախյան խալիֆայության շրջանում ստեղծված մշակությունը և մշակության համակարգը, ըստ Եղիշյան, արաբական մշակույթ էր:

Այս գնահատականը վերաբերում է նաև պետական և քաղաքական իրողություններին, և այդ պատճառով այդ դարաշրջանում գոյություն ունեցած պետությունները իրավացնորդն կոչվել է «Արաբական խալիֆայություն», իսկ մշակույթը «Արաբական մշակույթ»:

Իրադրությունը փոխվում է Օճախյան խալիֆայության կործանումից (750 թ.) հետո: Արաբական խալիֆայությունը վերածվում է Արաբ-իսլամական կամ ուղղակի Խալամական խալիֆայության: Ծիշու է, նա շարունակվում էր կրոն արաբական անուններ՝ Ասրայան, Ֆաթիմյան և այլն, քայլ դա սկսելի շատ տուրք էր ավանդույթին, որով ընգծվում էր նոր գենետիկական կապը արաբական արժատների հետ:

Արաբական նվաճումները, խալամի տարածումը և ոչ էրիկ քաղում ժողովրդների խալամադավան դառնալը, որակական փոփոխություններ առաջացրին խալիֆայության քաղաքական, Էթնիկական և մշակութային համակարգությունը:

Առաջինը փոփոխության ննարկվեց մուսուլմանական ուժման էթնիկական նկազմի տեսակետից: Խալամի ընդունումն իրանական ժողովուրդների, բուրգերի, քերերների, շերեքների, ապա նաև ովկանների, մոնղոլների, Միջին Ասիայի, Փոքր Ասիայի, Պյուսիային Աֆրիկայի, Կովկասի, ՄերձՎոլգյան տափաստանների, Պարակ-Արևելյան Ասիայի, անգամ եվրոպական զանազան ժողովուրդների կողմից, հիմնականութեն փոխեց խալամական ուժմայի էթնիկական պատկանելությունը: Նա դաշտեց մաքուր արաբական լինելուց և վերածվեց խալամական ուժմայի, որտեղ արաբները այլև մենաշնորհ ուղղություն չեն կազմում և դաշտեցին գլխավոր դերակատարները լինելուց: Արաբներն իրենց դիրքերը գիրեցին մուսուլման այլ ժողովուրդների: Չափազանց մեծացավ իրանական ժողովուրդների, առաջին հերթին աքարսիկների, ոերց բոլոր բնագավառների:

բուժ, այդ թվում նաև մշակույթի ոլորտում, իսկ հետագայում նաև քուր-  
քական և այլ ժողովուրդների դիրք:

Նոր, ոչ արար ժողովուրդներն իրենց ուսերի վրա վերցրեցին մշա-  
կույթի և գիտության գարզացման ամրությ թեռը: Նրանք արաքնների հետ  
միասին մեծ ներդրում ունեն պատմական նոր պայմաններում մշակու-  
թային նոր համակարգի ստեղծման մեջ, որն արդեն ոչ թե գուտ արարա-  
կան, այլ համախալամական էր: Այդ ժողովուրդներից յուրաքանչյուրն իր  
հետ թիրոց և մշակույթի օնթիանուր գամճարանը ներմուծեց իր ազգա-  
յին ավանդությունները, պատկերացումները և նախասիրությունները:

Իր մեծ դերը խայաց նաև «հյուլամական ազգի» հայեցակարգը, ո-  
րի համաձայն խայացը չի ցնողունում առանձին ազգությունների գոյու-  
թյունը և արիստուական պատմենքները չի ստեղծում նրանց միջև: Նա գտ-  
նում է, որ բոլոր ժողովուրդները, որոնց խյալամաղական են, կազմում են  
մեկ ազգ՝ հյուլամական ուսմա կամ խայամական ազգ: Նրանց կողմից  
ստեղծված արժեքները համարվում են համախալամական և բոլոր մո-  
ւումների սիմխականությունը: Ուստի այն, ինչ ստեղծել և ստեղծում  
են արարները, պարախկները, աֆդանները, տացիկները, և մուսուլման  
այլ ժողովուրդներ, մտնում է «մուսուլմանական մշակույթ» հասկացու-  
թության մեջ:

Այսպես է ծևավորվել «Արարա-մուսուլմանական մշակույթ» բա-  
նաձևի «մուսուլմանական բաղադրյալարություն»:

Իսկ ինչ վերաբերում է բանաձևի «Արարական» մասին, ապա նա  
պահպանվեց նաև հետօնայաց դարաշրջանուն: Նրա գոյությունն ար-  
դարացված էր ոչ միայն այն պատճառով, որ արարները շարութակում  
էին մնալ այդ մշակույթի ակտուիվ ստեղծողներից մեկը: Գլխավոր պատ-  
ճառներից մեկն է այն էր, որ խյալամական մշակույթի և գիտության գրա-  
վոր արտահայտության միակ միջոցը շարութակում էր մնալ արարներն  
լեզուն: Արարներն լեզվով էին գրվում և տարածվում մուսուլմանական  
բույր գիտմականների՝ պատմաբանների, աստվածաբանների, միջնա-  
դանության բժիշկների, մաթեմատիկոսների, աստղագետների, իրավա-  
բանների տրակտաստները, բանաստեղծների ստեղծագործությունները  
և այլն: Նրանք մեզ են հասնել արարներն լեզվով, որն անգնահատնելի  
հարստություն է: Խյալամական միջնադարյան գիտության կարկառուն  
դիմքերից մեկը, ծագումով պարսիկ.ալ-Քիրունին (973–1048 թ.), որը  
բնակվում էր Աֆդանստանի Պազճահ քաղաքում, նշել է, որ արարներն  
լեզուն համեմատանում է գիտական նպատակների համար միակ պիտա-

Ոյ լեզուն: Նա հիմք և իրավունք ուներ նման կատուօրինի հայտարարության համար, քանի որ նա ոչ միայն արարերեն լեզվով գրված բազմաթիվ գիտական տրակտատների հեղինակ էր, այլև իսկական պոլիգոն, ազատողեն տիրապետում էր արարերենին, պարսկերենին, թուրքերենին, երրաԵրենին, սամսկրիտին և աստրերենին:

Անորոշ խալիքայության սահմաններում արարերեն լեզվով եր կատարվում պաշտոնական գործությունը և նամակագրությունը:

Արաբերեն լեզվով էին զնում նաև գիտնականների բանավոր վճերը, գիտական քննարկումները և պետությունի ու աշխուժների մրցությունը: Մի խորով, արարենին միջոցով էին երիշկական տարրեր ծագում ունեցու գիտնականները միջանց հետ հաղորդակցվում և կազ պահպանում:

Միջնադարում ընդունված էր, որ մարդ չէր կարող զարգացած համարվել, եթե նա չէր տիրապետում արարերենին, չէր օգտվում արարենին գրավոր, և բանավոր խոսքից: «Պատահականություն չէր, որ բոլոր մատրասաններում ուսուցումը տարվում էր արարերեն լեզվով»:

Ռևոլի սխալված շնոր լինի, եթե ասեմք, հանիր ասպարեզից առարերենը և դու չես ունենա համախյալական մշակույք:

«Արարա-մուսուլմանական» բանաձեխ «արարերեն» մյուս, լուրելի է ասել առանցքային բաղադրատարրը, խարսխված էր Կորանի և նրանից բխող հիմնադրույթների վրա: Ենիշու է, հետօնայան շրջանում մեծ զարգացում ապրեց աստվածաբանությունը, Կորանի դրույթների նեկոնությունը, գրյագան զանազան աստվածաբանական դպրոցներ, գրվեհին բազում տրակտատներ և այլն, քայլ, այդուհանդերձ, նրանց հանգար երակեսացինը մնում էր Կորանը, նրանք ներթուիսած լին կորանական հիմնարար սկզբունքներով: Յուրաքանչյուր շնոր մրանցից, այդ բոլում և մշակույթի բնագավառում, համարվում էր Օսմաննց խալամից, անգամ հեթանությունություն, և անվերապահորեն ներժվում:

Ահա այս երկու տարրերի՝ արարերենի և խալամի սինթեզը տվել է այն, ինչ գոյություն ունի, և որը միանգամայն օրինաչափորեն կոչվում է «Արարա-մուսուլմանական» մշակույք:

## 2. Մուսուլմանական վերածնունդ (օսմանան), թե՝ մշակույթի ծաղկում

IX և հատկապես X դարից սկսվում է արարա-խալամական մշակույթի բուն զարգացումը, որի շուրջը մինչև օրս լուրջ գիտական վեճեր

եմ գնում արևելագիտության մեջ: Վիճարանության հիմնական առարկա է հանդիսանում այն հարցը, թե ինչպես բնութագրել արդ վերելքը, արդյոր ո՞ւ ո՞ննեսա՞նս էր, թե՝ պարզապես գայոգացման մի նոր, մինչ այդ չտեսնված որակ և մակարդակ:

Վիճարանությունը հարուցել և խթանել է շվեյցարական արևելագիտ Սովոր Մեծի (1869–1917 թ.) «Մուտուլմանական Ռենեսանս» վերին աստիճանի արժեքավոր և ինքնատիպ աշխատությունը. որը լուս է տեսած նորա մահից հետո, 1922 թ. Պայտեցրերգում, գերմաներեն լեզվով: Նա անմիջապես իր վյա սնետեց ժամանակի ավանավոր արևելագիտների ուշադրությունը և քարգմանելեց աշխարհի տարրերը լեզուներով, այդ թվում անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ուստի ռուսերեն և այլն: Գիրքը հեղինակն անվանել է «Խաղամի Ռենեսանս», սակայն մի շաբաթ քարգմանություններում, այդ թվում և ուստի քարգմ. Պ. Բերտելսը), այն դարձել է «Մուտուլմանական Ռենեսանս», և այժմ երկուսն է հավասար շափով կիրառվում ՖԲ:

Արևելագիտ գիտնականները քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտում են հակառակ կարծիքներ և չունեն միասնական տեսակետ:

Նրանց մի մասը գտնում է, որ «Վերածննդունու» կամ «Ռենեսանս» հասկացությունը կապված է Եվրոպայի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության, հելլենիզմի դարաշրջանին հաջորդած միջնադարի խավարի և վանուալիզմի տիրապետության հետ, որը հազիվ թե կիրառելի լինել Արևելքի համար: Վերածննդի դարաշրջանու վերոպատճ վերադարձ է տնօրի ունենում դեսի կրոնուածք, դասական կամ անտիկ հելլենական կուլտուրան ու արվեստը, որի վրա հենակելով Եվրոպական մշակույթը և արվեստը նոր թօնքը է կատարում: Ելմելով այդ տեսադրությունը մի շաբաթ արևելագիտներ՝ Պ. Բերելը, Պ. Գարտմանը, Պ. Մարգուլյանը, Վ. Բարտոլոդը, Վ. Տուխմանը և ուրիշներ, մերժում կամ կամածի տակ են վերցնում Ա. Մեծի կողմից առաջ քաշված «Մուտուլմանական վերածննդունու» հասկացողության օրինաչափությունը: Նրանց գտնում են, որ խչամի, նուտուլմանական մշակույթի մեջ ընդհիւնում, անկուտ կամ խավարամուռության քազավորություն չի եղել, և խոր չի կարող լինել խաղամի կամ մուտուլմանական վերածննդունի մասին: Այդ տեսակենտրոն շատ հստակ է արտահայտված Վ. Տուխմանի մոտ, որի կարծիքը Արևելքում ունենան չեղ կարող լինել, «որովհետև այստեղ անկուտ չի եղել, չի եղել անկմնդանություն, կասկած պառաստիկայի հետ»: Ուստի և «Վերածննդունու ինչի՞ց և ո՞ւր» հարցի պատասխանը մու-

սուլմանական միջավայրի համար, ըստ այդ տեսակետի կողմանակիցների, մնում է օդից կախված:

Նրանց փաստարկներում կարևոր տեղ է գրավում հունա-լատինական, հելենիստական արմատներին վերադարձի հարցը, որն առանցքային է «Ունիսան» հասկացողության հայեցակարգում, և որը նստ Երանց, բացակայում է մուտք մանական ոննեսանուում:

Դժվար չէ կոսիել, որ դա Արևոտրի մոտեցումն է Վերածնննոյի հիմնախմբորին և այդ պրիզմայով նև նվյուպական հիոյինակները դիտարկում ոննեսանսի հարցերը արարա-մուտքանական մշակութային համակարգում:

Դարձ է նշել, որ Ա. Մեծի աշխատության մեջ կա հոդում հունական արմատներին: Նրա «Աշխարհագրություն» գլխում ուղղակի ասվում է, որ «Աշխարհագրությունը III–IX դարի (III դ. հիօդիի, արարական բվագրության) Ունիսանսի արդյունը է Նրա գարգացման ակտուների մոտ կանգնած են 200–800 թ. վերաբերող ալ-Կիմնիի աշխատությունները, որոնք հունական գիտության գլխավոր փոխանցողներից մեկն էին»: Բայց ամենայն հաւանականությամբ դա, ըստ նվյուպական շափակիշների, բավարար չէ, որի համար մեղքը շնեցարական գիտնականին չէ: Դա արտացոլումն է այն իրողությամբ, որը գոյություն է ունեցել տվյալ պատմական դարաշրջանում:

Արևելագետների մի ուրիշ, համեմատաբար ավելի փոքրարիվ խումբ, համամիտ է, կամ հիմնականում կիսում է Մեծի «Մուտքանական ոննեսանս» սահմանումը: Դրանց շարքում պետք է առանձնացնել գիտական աշխարհում մեծ հիոյինակություն վայելող արարագետ Ի. Կրաչկովսկուն, որը գրում է, որ «Անժամանակ մահացած Ա. Մեծի հետմահու ստեղծագործությունը տայլս է հիցրայի IV դարի (մ.թ. Ք. դ. — Ն. թ.) ընդհանուր պատկերը, որը հիոյինակը լիկ իրավունքով անվանել է «հայամի վերածնունդ»: Թեև հետագայում Ի. Կրաչկովսկին մի փոքր փոխում է իր մուտեցումը և Ա. Մեծի կողմից «Բալամի Ունիսանս» անվանումը կոչում է «հակասական անվանում», այդուհամենքը, նա սկզբունքուն չի ժիստում այդ ֆենոմենը: Որոշ վերապահումներով և գործներով բացատրել, թե ինչու է Աղամ Մեծը նման վերնազիր ընտրել, «Մուտքանական վերածնունդ» սահմանումն ընդունում են Խոգան Ֆյունկը և այլ արևելագետներ:

Արևելքի վերածնունդի վերաբերյալ կցանկանայինը ավելացնել, որ անցյալ դարի կեսերին գիտությունը կարևոր նվաճումներ արծանագ-

թեց այս բնագավառում: Ծնորիկը մի շարք գիտնականների՝ Ն. Կոնրադյանի, Գ. Չալոյանի, Շ. Նուցուրիծենի, Վ. Ժիրմունսկու, Ռ. Ֆրայի և այլոց աշխատությունների, քաղաքացիական իրավունք ծեռք բերեց «Վերածնունդ» Արևնելքում: Խասկացողությունը:

Չայայած այս տարրերակարությունին, անգամ նրանք, ովքեր չեն ընդունում ծուառվաճանական վերածնունդը, համաձայն նն, որ այն ֆենոմենը, որը տեղի ունեցավ սկած IX-X դարերից, մշակութային աճմանապես նեալ վերջութեք: Վ. Բարտոլոդ դա համարում է «մուտուլմանական կուլտուրայի ծաղկություն», որը շատ մոտ է Ի. Կրաչկովսկու տվյալ սահմանումին առ այն, որ «X դարոց խալիքայության վերջնական փլուզման դարաշրջանն է, որը միաժամանակ արարական մշակույթի բարձրագույն ծաղկմանը՝ «Խուամի Ունեսանս» դարաշրջանն է»:

Կարծում ենք, որ այս բնութագրությունը առավել մոտ է ճշմարտությանը: Եկ եթե դա վերածնունդ էր, ապա ուներ իր յուրահատկությունները, որոնց նրան տարրերակությունը չին նվորուական դասական մոտելից: Իսկ եթե ոչ, ապա միևնույն է, դա մշակութային որակական նոր երևույթ էր, արարա-մուտուլմանական մշակույթի բարձրագույն ծաղկություն, որով նա ընդուած մոտենում է Ունեսանս-Վերածնունդ կատեգորիային, նրա թե՛ Արևմտյան, և թե՛ Արևելյան ըմբռնութենարուկ:

## II. ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ-ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՑԱՆՔԸ

### 1. Կրթություն և կյուր մարդ

Ինչպիս ամեն մի մշակույթի, այնպիս էլ արարա-մուտուլմանական մշակույթի հիմքը կրթական համակարգն է տվյալ սկանմանական դարաշրջանում: Երանուէ պայմանավորված մշակույթի, արվեստի և գիտության զարգացման մակարդակը:

Կրթությունը և կրթական համակարգը VIII-XV դարերում Արքայան և Ֆարիմյան խալիքայություններում, նրանց հաջորդած մուսուլմանական առլրամություններում (Սելջուկների, Այրաքհների, Մամլութեների և այլն), հակառակ քաղաքական խառնաչկոր իրավիշնակներին, անվերը և ավերիչ պատերազմներին ու արշավանքներին, չնայած տնտեսական ոժվարություններին, զարգանում ու կատարելագործվում եր: Դա, մի կողմից, օնողի և ընդհանրապիս հասարակության գիտակցու-

բյան ամի ու նրանց կողմից կրթության կարևորությունն ըմբռնելու, իսկ մյուս կողմից, խավիթաների և տռւամների կրթությունը խրախուսելու և հովանակիրելու քաղաքականության արդյունք էր: Դաժան ու արդյունարու, ցույց ու անառակ կյանքի սիրահար տռւամների կողքին եղել են բազմաթիվ բազակիր կառավարողներ, որոնք խրախուսել ու հովանակորնել են մշակություն, իրենց և իրենց արքունիքը շրջապատել գիտությունով, պնդումներով և կրթված մարդկանցով: Նրանց հիմնել են դպրոցներ, բացել գրադարաններ և մյուրաքանչ աջակցել մտավորականներին:

Երեխայի ուսուցումը սկսվել է վեց տարեկանից, երբ նա արդեմ կարող էր ծիսական աղոքներ ստվորել, դրանց միտքը պահել և արտասանել: Այդ պահից սկսվում էր նրա, ժամանակակից տերմինալոգիայով ևսած, տարրական կրթություն ստանալը, որն իրագործվում էր մզկիթում մուսալլիմի՝ ուսուցչի, դեկապարությամբ: Ակզրնական փուլում իմացաւական առարկան Կորանն էր և երեխաները դասերը մկանում և ավարտում չեն Կորանը ընթերցելով: Ըստեղոցանության հետ միասին նրանց սովորեցնում էին նաև գործ: Աստիճանաբար ընդլայնվում էր առարկաների ուսուցման ցանկը: Կորանի, գործ-կարդալու հետ միասին, աշակերտներին սովորեցնում և դասավանդում էին Մուհամմադ մարդկաներին վեճաբերող պատմությունները՝ հայտիները, արարերեն լեզվի ցերականություն, տարրական թվարանության հիմունքներ, քանաստեղծությունները: Այս փուլում հասուն ուշադրություն էր դարձվում աշակերտների հիշողության զարգացմանը և նյութը անցիր անելուն: Հայ անցիր անելու: Կորանից և հայոցներից մեծ հալովաններ անցիր արտասաննելու համարվում էր աշակերտի առաջադիմության չափանիշներից մեկը: Եվ Բարդադի տարրական դպրոցներում ընդունված է եղել, որ բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտներին, որպես պարզաբնուրություն, ուղղություն մատուց տանում էին ճայրաքաղաքի փողոցներով, իսկ ամրություն սահմանված ավանուցիր համաձայն, նրանց վրա, որպես գոհունակության նշան և քաջալերանը, նույն էր նետում:

Տարրական կրթությունը հասանելի է եղել նաև աղջիկների համար: Այդ տարիեցում նրանք սահմանափակում չեն ունեցել: Սահմանափակումները սկսվել են հետո, ավելի հասուն տարիեցում, երբ այլև նպատակահարմար չի համարվել նրանց հետագա դպրոցական ուսուցումը:

Ուսուցումը որպես կանոն եղել է ճիշ, թեև եղել են նաև վճարովի դպրոցներ:

Իսկ խալիքաները, արքունիքի թարծուաստիճան պաշտոնյաները և ընդհանրապես հարուստներն իրենց գավակների համար պահել են նաև անավագոր ուսուցիչներ, որոնց սովորաբար եղել են օտարերկրացիներ: Նրանք իրենց սամերին դասավանդել են կրոն, նորածաշակ գրականություն և գեղեցիկ արվեստներ, մասնավորապես նրգ և պար:

Արքայան խալիքաներյան ժամանակ հիմք դրվեց կրթական ավելի բարձր ճակարտակի: X դարում բացվեցին ավելի բարձր կարգավիճակ ունեցող դպրոցներ, մադրասաներ, որտ ոմանց անգամ անվանում են թարծուագույն դպրոցներ: Նրանցում ավելի մեծ տեղ էին գրավում աշխարհիկ առարկաները: Կրոնի և աստվածաբանության հետ միասին նրանցում դասավանդում էին մարեմատիկա, աստղաբաշխություն, աշխարհագրություն, պատմություն, գրականություն և այլ առարկաներ: Իսկ մեծ անուն ունեցող ուսուցիչները, որոնց մեջ թիվ չեն հեղինակավոր գիտնականներ, իրենց աշակերտների հետ պարապում էին տամց: Առաջին անգամ Արքայանների ժամանակ սկսվել է կիրառվել աշակերտներին ավարտական վկայական՝ իցազա, տաըը:

Այդ նոր տիպի հաստատությունները կոչվում էին հասումնական համատառություններ: Նրանցից պետք է նշել Թայր ալ-Շիբման՝ «Իմաստության տունը», որը հիմնել է խալիքա Մամունը 830 թ. Բարդադում: Այստեղ կատարվում էին թարգմանություններ, ուսումնասիրվում աշխարհիկ առարկաներ, նրանց կից գործում էր աստղադիտարան և այլն: Ֆ. Շիբրին այդ հաստատությունն անցամ անվանում է ալբադիյա: Նմանարնույք հաստատությունները թիվ չեն: Երբ IX-X դարերից սկսած հիմնվում են ինվանդանոցներ, ապա նրանք ոչ միայն բուժական կենտրոններ են, այլև դասումն են թշշկական ուսումնական կենտրոններ, որը նորություն էր իր ժամանակների համար:

Սակայն այս նոր՝ թարծուագույն և մասնագիտական հաստատությունների մեջ, առանձմանում է նիզամիյա անունը կողու դպրոցը, որը հիմնվել է 1055–1067 թթ. վազիր Նիզամ ալ-Մուլքի կողմէց: Այս լուսամիտ պարսկաց նողել է Սելջուկյան սուլթաններ Ալփ Արալանի և Մալիք շահի վազիրը: Նա հայտնի է Օսմաննով, որ երկար ժամանակ հովանավորել է միջնադարի ամենափայլում պոտենցիալից մեկին: Օմար Խայյամին:

Սեծանուն գորդներին, լիիլստիաններին, արվեստագետներին, աստվածաբարաներին և այլ իմաստումներին հովանավորելը կազմել է դարաշրջանի սուլթանների, իշխանների և լմիրների քաղաքականու-

թյան բաղկացուցիչ մասը և կրթական-մշակութային կյանքի ամենահական տարրերից մեկը: Սուբյանները ծգուում էին փառը նվաճել ոչ միայն ուսազմական հաղթանակներով, այլև կրթությունը, մշակույթը և գիտությունը հովանավորելով:

Նիգամիյան պաշտոնավես ճանաչվում էր պետության կողմից: Նա դարձել էր Յմուշ ճմանալիք մատրասամերի համար, որոնք աստիճանաբար հիմնվել են Օսմ Իրանում, Խորասանում, Իրաքում, Ալիրիայում և Խալիֆայության այլ նորության մասնաւորություն: Արար ճանապարհորդ Իրն Զուքայրի վկայությամբ Բարդարում գրոնջ է այդախոյ 30, Դամասկոս 20, Սուսուլում 6 և Ճիմսում 1 դաշտում:

Արքայանների գահակալության սկզբնական փուլում կրթական համակարգում հայտնվեց մի կարևոր նորություն ևս՝ հիմնելեցին գրադարաններ: Նրանք գրոնջ էին մզկիթներին աշբնքեր: Սեծ և հարուստ գրադարանը նպաստում էր տվյալ մզկիթի հեղինակության բարձրացմանը: Շատ գրադարաններում ծեսագրերը և գրքերը կանոնավոր կնքով մշակվում էին օստ մասնագիտությունների, անգամ կազմվում էին քարտարաններ: Աղյախին էր, օրինակ, Ծիրագում Բուի սուլթան Մշուշ աղ-Դավթակի (977–982 թթ.) հիմնած գրադարանը, որը նույնիսկ ուներ հասուլ աշխատակազմ, ընթերցողներին սպասարկելու համար:

Այդ շրջանում, երբ թուրքը նոր էր Ճիմսուանից մուտք գրոնջ խալիֆայություն և դեռևս մատչելի չէր շատերի համար, որոշ գրադարաններում, ինչպես Սոսուլ քաղաքի գրադարանում, որն իր անմական միջոցներով կառուցել էր մի մոռուցի մեծահարուստ և նվիրել իր հարազարդ քաղաքին, այդտեղ թուրքը ճրի էր տրվում ընթերցողներին:

Գրադարաններն ունեին մի կարևոր յուրահատկություն ևս: Նրանք միայն ընթերցատեղիներ չեն, այլև համելիպահումների, գիտական շնորհարկումների, բանավեճերի, անգամ ռատուցման կննորումներ: Գրադարաններ կային ոչ միայն մզկիթներին կից: Իրենց անձնական գրադարաններն ունեին նաև մեծահարուստները, հասարակության վերնախավը և Մաժալիս ալ-արաբները, այսպես կոչված Մշակութային ընկերությունները, որոնք հանդիսանում էին մուսավորական մարդկանց համարատների: Այդ գրադարաններում հավաքված ծեսագրերը և գրքերն իրենց թույլով տարիքում էին մզկիթապատկան գրադարանները: Եթե մզկիթների գրադարաններում գերակշռող կրոնական և աստվածաբանական գրականությունն էր, ապա անհատների, մասնավորապես Մաջալիս ալ-արաբների գրադարաններում, հավաքված էին զյուսավո-

ուապես փիլիսոփիայության, աստղաբաշխության, տրամարանության, թժկության, նարծմատիկայի և այլ գիտություններին վերաբերող գրականություն:

Այդ թվոր գրադարանները, ներառյալ անհատներին պատկանողները, միանգամայն մատչելի էին գրասեր և ուսումնասեր մարդկանց համար:

Գրադարանները, ինչպես մարդիկ, ունեցել են իրենց սեփական ճակատագիրը: Միջնադարում, երբ ոչինչ կայուն ու ապահով չէր, երբ ավելիու արշավանքները հաջորդում էին մեւը մյուսին, որոնք շատ հաճախ կործանում և հրկիգում էին ամրող քաղաքներ, նրանց առաջին զոհերը դառնում էին մշակույթի կենտրոնները և արվեստի հուշարձանները: Նրանք նաև խօսվությունների գործ էին դառնում, երբ պալատները գրոհող ամբոխը թալանում, կորոպտում կամ ոչնչացնում էր, ինչ որ կարողանում էր:

Այդպես պատահեց Ֆարիմյան խալիֆա ալ-Ազիջի (975-996 թ.): Իիմնած գրադարանի հետ խալիֆա ալ-Մուսաբանիրի տիրապետության օրոք: Սաքրիգին մշում է, որ 1068 թ. խոռվության ժամանակ կողոպտվեցին պալատի թանկարժեք զանձերը: Սակայն նա ավելի մեծ լուրսու և համարում արքայական գրադարանի ոչնչացումը, որը պարունակում էր 200 հազար կտոր գիր, որոնց մեջ չին գիտական մեծ արժեք ներկայացնող և հազվագյուղ գրքերը: Նա հաղորդում է, որ «Բասանիմն ուղարկեք բարձած տանում էին գրքերը: Արժեքավոր ծեռագույրը օգտագործվում էին թուրք սպաների տանը կրակ վարելու համար և գրքերի հիմնայի կազմերն օգտագործվում էին նրանց ստրուկների կոչիկները կարկատելու համար»:

Այդպիսին էր դարը, այդպիսին էին թարգերը:

Աքսայանների ժամանակ հայտնվեցին և հետագա դարերում տարածվեցին գրախանությունները կամ գրավանառատությունները: Դա բոլորին նոր ներսուք էր մուսուլմանական աշխարհում, որը վկայում էր գրածանչության բավականին լայն տարածման և կրթական գործի զարգացման մասին: Ալ-Ֆարաբին, որը 890-ական թվականներին նոյն է Բաղդադում, վկայում է, որ գրախանությունն այմբամ շատ են եղել, որ կենտրոնացված են եղել մի տեղ և գրադեցրել մի ամրող փողոց: Նրա հաշվումներում նրանց թիվն անցել է հարյուրից: Քետազայում, բացի Բաղդադից, նման գրախանություններ են թացվել Պամակոսում, Կահիրենում և այլ քաղաքներում:

Գրավաճառք չեր գրադաւում միայն գրքերի վաճառքուի: Նա միաժամանակ պատմենահանող էր, որը պատվերով և համապատասխան վճարով կոլեմորինակում էր ծեռագիրը: Նա միաժամանակ զեղագիր էր (կալլիգրաֆ), որը պատվերով պատրաստում էր զանազան գրություններ, այդ թվում և փաստաթղթեր: Եվ գրախամուքները, զարմանալիութեն, ինչպես գրադարանները, հանդիսանում էին նաև գրական քննարկումների վայր, անգամ կենտրոններ:

Այսպիսով, հետու լինելով այդ ամենց գերազանահատելուց, առավել ևս իշխանականացնելու մորից, չեմք կարող շնորհնել, որ Արքայան և հետարքայան շրջանում գոյություն ուներ որոշակի գրական ժողովու և կրթական միջավայր, որի պայմաններում ծնավորվում և ասպարեզ է իշխում ադիրը՝ կիրա մարդը:

Սղիր հասկացողությունը բարդ հասկացողություն է, որի հիմքում ընկած է արագերին «աղաք»՝ գրականություն, բայց: Նա ներաօնում է հասկացությունների մի քանի շերտ: Նա, նաև և առաջ, աշխարհիկ գիտությունների՝ արաքերին գրական լեզվի, թերականության, Մուհամադյան մարզարձի կյանքի և գործունեության հետ կապված իրադարձությունների և արաքական հերոսականությունների համատ գիտակ էր: Այդ բոլորը միասին կազմում էր «արաքական գիտելիքներ» հասկացողության շերտը:

Սղիր հասկացողության հաջորդ շերտը, որը գոյանում է VIII դարի սկզբան, հիմնված էր հնդկական, իրանական, հունական և հելլենական, այսինքն ոչ արաքական գիտելիքների վրա: Դրանց հիմնականում խրառական, ռաւուցողական, քարոյա-վիլխոսփայական բնույթի գիտելիքներ էին, որ ադիրը ծեզը էր թերում ծամորանալով մարդկային պատմության ամսիկ դարաշշրջանում ոչ արաք վիլխոսփայականների, պատմիչների, բարոյախոսների, գրողների ստեղծած գրքերի հետ:

Եթե տվյալ անձնավորությունը գիտակ էր արաքական և ամսիկ շրջամի գիտելիքներին, ապա նա համարվում էր զարգացած մարդ:

Եվ, վերջապահ, ադիրը նա էր, որը, վերտնշյալ հասկանիշների հետ մեկտեղ, օժտված էր հոգնոր քարծր հասկանիշներով, ավելի էր ընկույտ իր արժանավայրի պահպանով հասարակության մեջ ու կենցաղում, հարգանքով էր վերաբերիվում մարդկանց, չեր վիրավորում նրանց արժանապատվությունը, իրեն քարծր չել դատում մյուսներից և այլն:

Պավանաքար այս հասկանիշներն է նկատի ունեցել Ա. Սեցը, երբ նա գրում է, որ «III-IX դարու շարունակեց քարծուացնել ասպետականութեն և կիրա դաստիարակված մարդու (ադիրի) կրթական մակարդակը»:

Սիև այսպիսին էր աղիքը. որը համովանում էր միջնադարյան մուսուլմանական աշխարհի կիրք մարդու և մտավորականի տիամար:

## 2. Գիտություն և գիտնական

IX դարից մեծ վերելք ապրեց գիտությունը: Տեղի ունեցավ գիտական ուղղությունների անջատում և սահմանագրատում, առաջացան նոր գիտական ուղղություններ, փոխվեցիմ նուանց տեղերին առաջնայնության առօւմով և ավելի հստակ դարձավ յուրաքանչյուր գիտության ուսումնասիրության և հետազոտության առարկան: Ընդարձակվեց և կոնկրետացվեց «գիտություն» հասկացողությունը, որը հիմք է տալիս խոսելու գիտության գարզացման փուլերի մասին:

Առաջին փուլը ընդգրկում է վաղ իսլամի շրջանը, որը գլխավոր խմբիրը իսլամի, որպես նոր կրոնի օրինաչափ լինելու հիմնայորություն էր, եղր անհրաժեշտ էր առաջին, նախնական գիտելիքները տարածել իսլամի, միաստվածության, մարգարեի, օրա հրաշագործությունների, կորանի, սուննայի, հայդաների մասին և այլն: «Պատմականորեն միանգամայն հիմնավորված այդ պահանջն ինքն էր թելադրում գիտության խնդիրները և ուղղությունները: Ըստ այլմ, այդ փուլում, այսինքն վաղ իսլամի շրջանում, գիտությունը դա գուազիտությունը, Կորանն իմանալը և այնուհետև թելովզիան՝ աստվածարաբանությունն էր: Եվ եթե շոշափիվում կամ անդրադաւոնում էին այլ առարկաների և երևոյթների, որոնց չեն տեղակրույթ վերոնշյալ շրջանակներում, ապա դա արվում էր միայն մի նպատակով. ծառայեցնել դրանք վաղ իսլամի, ավելի նոշտ, իսլամագիտության շահերին:»

Բայց այդպես երկար շարումնակիլ չէր կարող: Կյանքն առաջ էր գնում, որու խնդիրներ էին առաջ քաշվում, որոնք պահանջում էին իրենց պատասխանները և լուծումները: Մարդկային պրատուն միտքը, այդ թվում և մուսուլմանական աշխարհում, քափանցում էր առարկաների և երևոյթների խորքը և հայտնաբերում նոր օրինաչափությունները: Առաջին փուլում մնավորված սկզբունքները և դոգմաները ներ էին գալիս և համապատասխանաբար ազատ տարածություն շին ստեղծում գիտական մտքի գարզացման համար: Անհրաժեշտ էր գիտության ընազավառում կատարել նոր և համարձակ քայլ: Եվ այդ քայլը կատարվեց:

Դա արտահայտվեց, նախ և առաջ օրանում, որ VIII դարից, համապես նոր երկրորդ կեսից, «գիտություն» հասկացողությունը հար-

տանում է նոր ծեռցերումներով, որի շնորհիվ ընդլայնվում են նրա շրջանակներու և բռվանդակությունը: Պահպամելով և կատարելագործելով նախորդ փուլի ուղղությունները, առաջին հերթին աստվածարանությունը, արարա-իսլամական գիտությունը հարատանում է նոր առարկաներով և ուղղություններով, որոնք հետագայում ստացան բնական գիտություններ անվանումը: Արարա-մուսուլմանական միջավայրում հատկապիս զարգացրում տրամադրությունը, վիճակի պահպատճենը և այլն:

Նշված պատմական դարաշրջանում տեղի է ունենում գիտությունների տարանցառում, մի կողմից, և գիտական ուղղությունների սահմանների ճշգրտում և հատակեցում, մյուս կողմից: Դավանարար առաջինը տարանցառաւթյան աստվածարանությունը և մուսուլմանական իրավունքը: Եթե նախկինում մուսուլմանական իրավունքն աստվածարանության աղային էր, ապա այժմ, առանձնանալով, նա դառնում է հնընդուրույն գիտական ուղղություն: Առանց դրա մուսուլմանական իրավագիտությունը հագիվ թե կարողանար համընթաց քայլել ժամանակի պահանջների հետ և կամզմել իր սեփական ուղթերի վրա: Մյուս կողմից ավելի հառակ դարձան աստվածարանության առարկան և սահմանները: Այդ առումով նա նույնպես շահեց զարգացման հեռանկարների տեսակետից:

IX դարից որպես առանձին և ծևավորված գիտություն է համուս գալիս աշխարհագրությունը, որի հիմքում ընկած էին արար մեծ գիտնական ալ-Կիմուխի աշխատությունները: Որոշակի սահմանագատում է տեղի ունենում նաև բանասիրության և պատմագիտության միջև՝ հետազոտվող նյութի առումով: Նախ երևությունը են տեղի ունենում նաև բնական գիտությունների բնագավառում, մասնավորապես սահմանակից գիտությունների դրույտում:

Խոսնելով գիտության զարգացման նախին, հարկ է կանգ առնել գիտական մեթոդի հարցի վրա: Արարա-մուսուլմանական գիտության մեջ այս բնագավառում ևս տեղի են ունենում կարնոր փոփոխություններ: Գիտական յուրաքանչյուր ուղղություն՝ մաթեմատիկան, աստղաբաշխությունը, բժշկագիտությունը, պատմագիտությունը և այլն, մշակում է իր մեթոդը, որի հետևանքով ստացված արդյունքները դառնում են ավելի համոզիչ ու հավասարի: Այսպես, օրինակ, պատմաբանները և բանասերներն այլևս նախապատվությունը չեն տալիս զվարճայի պատմություններին, հերիաքններին, կամ նրանք այլևս չեն ծգուում ներառնել:

տարբեր, մինյանց հետ չկապված հարցերի լուսարամությունը: Դրամարկելով այդ մերութից, արարա-մուսուլմանական պատմագրությունը և քանասիրությունը, ինչպես նաև փիլիսոփայությունը, որդեգրում են մասնագիտացման, գիտելիքների համակարգման և վերլուծության մեթոդը: Մեծ տեղ է հատկացվում գիտական տերմինարամության ստեղծմանը: Այդ առումով հիշատակության է արժանի ծագումով ասորի, փիլիսոփա Կոստա իր Լոււկան, որն իր ուսումնասիրությունների հիմքում դրել էր գիտական վերլուծության մեթոդ, որին նա ծանոթ էր շնորհիվ հունական փիլիսոփաների աշխատությունների:

Գիտական վերլուծական մեթոդն արար և մուսուլման գիտնականները՝ ալ-Կիմյին (IX դ.), ալ-Ֆարաբին (X դ.), Իրն Սինան (X-XI դդ.), Իրն Ռուզին (XII դ.) և մյուսները, հաջողությամբ կիրառում էին հատկապես հունական դասական գիտական փիլիսոփաների աշխատությունների իրենց մեջնություններում:

Արարա-մուսուլմանական գիտնականների մոտ մեծ տեղ էր գրավում գիտությունների դասակարգման խնդիրը: Այդ հարցում, սակայն, նրանք միասնական տեսակետ չունեին և առաջարկվում էր տարբեր մոդելներ:

Սովելմանից մեկը ժամանակակի համաշխարհային գիտությունը երկու խմբի դասակարգելն էր: Առաջին խումքը կազմում էին այսպես կոչված արարա-մուսուլմանական գիտությունները, որի մեջ մտնում էին մուսուլմանական իրավունքը, քանակիրությունը, արարերեն լեզուն ու գնրամկանությունը, Կորանի, սուննայի և հաղիսմերի ուսումնասիրությունը, նրանց մեջնությունը և այլը: Երկրորդ խմբի մեջ մտնում էին այսպես կոչված օտարերկրյա գիտությունները, որոնք ստեղծվել էին այլ կրոնի պատկանող ժողովուրդների կողմից և փոխառնվել էին արաբների, պարսկաների և այլ մուսուլման ժողովուրդների կողմից: Դրանց մեջ մտնում էին անտիկ շրջանի դասական փիլիսոփայությունը, թշկագիտությունը, քննական գիտությունները, ինչպես նաև պատմագիտությունը:

Գիտությունների դասակարգման իր մոդելն էր առաջարիկ միջնադարյան արար խոշոր գիտական Իրն Խալիֆունը (1332-1406 թթ.): Նա նույնպես գիտությունը քաժամում էր ավանդական արարական և օտարերկրյա գիտությունների, սակայն դրանք այլ կերպ էր խմբավորում: Արարական գիտությունների մեջ նա Կորանի, սուննայի, հաղիսմերի և մուսուլմանական իրավունքի հետ մտցնում էր նաև կալամը՝ աստվածաբանությունը, քասավութը՝ մուսուլմանական միստիցիզմը, քանա-

սիրությունը՝ արարերեն լեզվի ու պոեզիայի հետ միասին, և երազների մեկնությունը:

Իսկ հենց վերաբերում է օտարերկյալ գիտություններին, ապա հրեական և առաջ, դրանք բոլորը կը լուրս է փիլիսոփայություն, ապա ստորաբաժանում է ըստ մասնագիտական ուղղությունների: Անա դրանք – տրամաբանություն, որը հիմնական է Արիստոտելի «Օրգանոնի» վրա, ֆիզիկա, որի բաղադրամասերն են բժշկագիտությունը, մոգությունը կամ հմայիւթյունը, զյուղատնտեսական գիտությունը, աճպարարությունը ու աշքիմիան, մետաֆիզիկա, մաքենատիկա, որի մեջ նաև մոտցնում էր նաև առևտուրը և մառանգությունը, օպուիկա, աստղաբաշխական աշյուսակների կազմում, աստղագուշակություն և, վերջապես, երաժշտություն:

Ինչպես տեսնում եմք, Իրեն Խալյունին կազմած գիտությունների ցամկեն ավելի հարուստ է ու բազմազան, թեև որոշ ուղղություններ հագիկ թե կարելի է գիտական առնվազել: Սակայն դա տուրք էր իր ժամանակին և գիտության վերաբերյալ տիրապետող պատկերացումներին, որից շրջ կարողացել խուսափել և չէր էլ կարող խուսափել Եռվյժիսկ մի այնպիսի գիտնական, ինչպիսին Իրեն Խալյունը էր:

VIII–XV դարերում հրապարակ հրամ բազմաթիվ ականավոր գիտնականներ գիտությունների տարբեր բնագավառներում, որոնք մեծապես նպաստել են գիտության զարգացմանը. իսկ ոմանք ծեղք թարմ համաշխարհային հոգակ:

Նոր մակարդակի վրա բարձրացավ թշշկագիտությունը, որն առաջին հերթին կապված էր երեք մեծ, ծագումով պարսիկ, թշշկագիտների՝ Ալի ար-Շաբարիի, Արու Բալըր առ-Ռազիի և Իրեն Սիմայի գործություններից հետ, որոնց իրենց առեղծագործությունները գրել են արաբերեն լեզվով:

Ար-Շաբարին, նաև ինքն քրիստոնյա, Մութավաքիլ Խալիֆայի աջնական թշշկակն էր: Նրա հիմնական աշխատություններից մեկն էր «Ֆիրդաոս ալ-Շիբան»՝ «Խմաստության դրախտը», որը նա ավարտել է 850 թ., և որը համարվում է արարերեն լեզվով գրված առաջին թշշկական համառոտ տեղեկատուն:

Առ-Ռազին (865–925 թթ.), մասնագիտների վկայությամբ «Բոլոր մուտքանական թշշկակներից ամենամեծը և ամենախնդրավորը», եղել է Բաղդադի հիմքանդանոցի գլխավոր թշշկակը: Նա հայտնի է որպես ծաղկախտ և կարմրուկ հիվանդությունների մասնագետ: Այդ հիվանդու-

բյուլմների և մրանց բուժման վերաբերյալ մրա տրակտատները համարվում են արաքական թշչկական գրականության զարդը: Նրա այդ և այլ տրակտատներ միջնադարում բարգմանվել են լատիներեն և մեծ տարածում գտել եվրոպական գրունական թշչկագիտության մեջ:

Մոռանձնահատուկ տեղ է գրավում Արու Ալի ալ-Ջուսային Իրն Սիւնան (980–1037 թ.), մեծագույն թշչկապիտներից մեկը, որին արաբները կոչել են «աշ-շնյու առ-օսախս», այսինքն՝ գիտավոր շնյու կամ շնյու և իշխան: Նա ծնվել է Բուխարայում, որտեղ կայր Սամանիմների սուլթանի հարուստ գրադարանու, որից նա օգտվել է ազատորեն, ցանդի որ նա ուժով էր սուլթանին և այդ պատճառով նրա առջև թաց էին որոշ դժնելոց: Նրա հիմնարար բնույրի գիտավոր թշչկագիտական աշխատությունն էր «Կանուն ֆիլ-Թիփի»: «Բժշկության կանոն» տրակտատը, որտեղ ի մի են բերված և կանոնակարգված թշչկագիտության նվաճումները: Այս համբագիտական բնույրի աշխատությունը արաբերենից լատիններն է բարգմանվելու դեռևս XII դարում:

Սակայն Իրն Սիւնան, ի տարբերություն իր շատ նախորդների և հաջորդների, միայն թշչկագիտ չէ: Նա լայնապրոֆիլ գիտնական էր, որ բնորոշ էր միջնադարի շատ գիտնականներին: Իրն Սիւնան նաև հայտնի փիլիսոփա, մաթեմատիկոս, աստվածաբարան, աստղագիտ, բանասեր և երաժշտագիտ էր:

Արար և այլ մուսուլման գիտնականները մեծ ներդրում են ունեցել նաև բնական գիտությունների, առաջին հերթին մաթեմատիկայի, աստղաբաշխության և ջիմիայի (այդիմիայի) բնագավառներում: Գիտության այդ մարզերում մեծ նանազում էին ծերեւ ալ-Խորեզմին (780–850 թթ.), հայանական աշխարհի մեծագույն մաթեմատիկոսը, որի անվան հետ է կապված «ալգեբրա» և «ալգորիմ» տերմինների ստեղծումը, IX դարի հեջակալոր սույնարաշներ Աննայ Ֆերգանին Ֆերգանայից և Արու Արդալյահ ալ-Բասանին Քարրամից, որոնք ուսումնասիրել են Լուսնի, մի շաբ մոլորակների և երկնային այլ լուսասրությունների ուղեծքները. կազմել համապատասխան աշյուսակներ և այլն: Բնական գիտությունների բնագավառում կատարած իր իմքնանդիպ ռուսմնամիջություններով առանձնանում է Արու ալ-Շայխան ալ-Քիրումին (973–1048 թթ.): Նա հեղինակն է Երկրաշափության, թվարանության, աստղաբաշխության և աստղագուշակության կարելի հզիսի և տոռարային բնույրի աշխատությունների:

Որակական գործություններ կրեց արարա–մուսուլմանական փիլիսոփայությունը: Եթե նախորդ դարաշրջաններում արաբները հիմ-

նականում բարդմանում էին հույն փիլիսոփաներին և հաճախ նաև տալիս իրենց մեկնուրյունները, ապա IX դարից սկսած, արաք և աջ մուտքան փիլիսոփաները, շարունակելով իրենց նախորդների բարձրանշական գործունեությունը, միաժամանակ կատարում են ինքնուրույն ուսումնասիրություններ:

Այսուղի հարկ է առաջին հերին նշել ալ-Կիմոդին (մահ. 873 թ.), որը համարվում է արաքական փիլիսոփայության հիմնադիրը: Ընդհանրապես պետք է նշել, որ արաքա-մուսուլմանական փիլիսոփայության ծառակորումը սերտորեն կապված էր հռոմեական դասական փիլիսոփայության հետ, որից նա մեծապես ազդվել է: Նրանց համար Արիստոտելը եղել է յուրաստեսակ կուռք: Այդ առումով քացարություն չէ նաև ալ-Կիմոդին: Սակայն տուրք տալով նոոպատունիզմին, նա փորձել է սիմբօգել և միավորել Արիստոտելի և Պլատոնի փիլիսոփայական հայացքները: Ալ-Կիմոդին համոզված էր, որ որոյ գիտությունների հիմքում ընկած են նորայութագրուայան մաքնատիկունների դրույթները:

Ալ-Կիմոդի ծառայությունները գիտությանը միայն փիլիսոփայությամբ չեն սահմանափակվում: Նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել իր ժամանակի այսպիսի գիտական ուղղությունների նկատմամբ, ինչպիսի օպոտիկամ, աստղագուշակությունը, ալքիմիան, երաժշտագիտությունը և այլն:

Արաքա-մուսուլմանական փիլիսոփայության առօս կանգնած կարևորագույն խորհրդներից մեկը հրամական դասական փիլիսոփայությունը իսլամի, նրա հիմնարար դրույթների հետ ներդաշնակելով էր, փորձել գտնել նրանց միավորող կամ համադրող եզրեր: Այդ գործը սկսել էր դժունս ալ-Կիմոդին, որի պատճառով նրա շատ փիլիսոփայական աշխատություններ իրենց վրա կրում են էկեկությունի կնիքը: Նրա գործն ավելի մեծ ծավալներով ու խորությամբ շարունակենց ծագումով բռնը (Ալիցին Սսիալից), Մուհամմադ Արու Նասր ալ-Խարարին (X դ.): Նա ուսանել էր Քաղղաղում, քրիստոնյա ուսուցչի մոտ, որը մասնագիտացնել էր բարօնանությունների մեջ: Բաղդադում ծանոթանալով հրունական փիլիսոփայական տարրեր ուղղություններին, ապա նաև սովորման Պայտերում, ալ-Խարարին փորձում է իր երկար ու ծիծ կյանքի ընթացքում (նա մահացնել է 80 տարեկան հսակում), ստեղծել իր փիլիսոփայական միստեմը, որն իր քնություն սինկրետիկ էր, հիմնված պատունիզմի, արիստոտելիզմի և սուֆիզմի դրույթների համացընան վրա: Նա այնքան ոգեշնչված է եղած հրունական այդ երկու հսկաններով, որ Պլատոնի «Համ-

բապետություն» և Արիստոտելի «Բաղաքականություն» աշխառությունների ազդեցությամ տակ և ընդօրինակությամբ, ստեղծել է պուհա-քաղաքի իր իդեալը: Նա այդ քաղաքը դիտում էր որպես նարովային մի ներդաշնակ օրգանիզմ՝ հիմնված հիերարխիայի սկզբունքի վրա: Նրա գագարում գտնվում էր վեհապետը (սյուլցերենց), որը համընկում էր նարովային օրգանիզմի սրտի հետ, որին սպասարկում էին կամ ծառայում ֆունկցիոնները, իսկ որպես է ամենի ստորին աստիճանի վրա գտնվող ֆունկցիոնները և այլն: Ալ-Ֆարարիի համոզմունքով, վեհապետը քարոյական և մտավոր առումով պետք է լիներ կատարյալ, իսկ այդ իդեալական քաղաքի բնակիչներին միավորող պետք է լիներ նրանց երջանկությունը:

Ալ-Ֆարարիի հետաքրքրությունը է նաև թշկագիտությամբ, մաքնատիկայով, երաժշտությամբ և այլն, և այդ բնագավառներում նև գգալի հետք բողել: Նրա հոչակն այնքան քարձու է նույն, որ նրան դասել են երկրորդ ուսուցիչ՝ Արիստոտելից հետո:

Փիլիսոփայության բնագավառում իրենց ուրուցն խոսքն են ասել նաև Իբն Ռուշը (1126–1198 թթ.) Կորորվայից, որը հայտնի է նաև Ալեքսանդրոս անվամբ, Իբն Թուքալը (մահ. 1186 թ.) և ուրիշներ:

Ուսումնասիրովոր դարաշշրջանում տպավորիչ էին նաև արարա-մուսուլմանական պատմագրության մվաճումները: Դարեւ է նշել, որ պատմիչներից շատերը միաժամանակ աշխարհագրագետներ և ազգագրագետներ էին, որի շնորհիվ մրանց աշխատություններն աչքի թիվ ընկնում հարցերի պվելի լայն ընդգրկումով:


Դիմնախամնիքների քննարկման առումով, արաբա-մուսուլմանական պատմագրությունը կարելի բաժանել երեք խմբի:


Առաջին խումքը կազմում են այն աշխատությունները, որոնց նվիրված են խալիֆայության բուն պատմությամբ, Սուհամամայ մարգարեին, արարական նախառավողներին, դինաստիաներին և այլն: Այդ հարցերն են լուսարանված արարական պատմագրության հիմնադիր Բայազիրի (մահ. 892 թ.), IX դարի պատմիչներ Ահմադ իբն Թայֆուրի, «Բիթար ալ-Մարիֆ»՝ «Գիտելիքների զիրը» արժեքավոր ուսումնասիրության հեղինակ Իբն Բութայրահի, X դարի հեղինակ աս-Մուլիի «Աբբասյանների պատմությունը» և այլոց աշխատություններում:

Երկրորդ խումքը ներառում է այն պատմիչներին, որոնց գործություն նվիրված են համաշխարհային պատմությանց: Դրանց մեջ իր կարևորությամբ առանձնանում է աթ-Ֆարարիի (838–923 թթ.) «Թարիխ



Ալ-Սալամին, սարսուզած, մինարե, Սամարիա, IX դ.






Օմարի գմբեթավոր մզկիթը, Երուսաղեմ, VII դ.



Ծերեցանու բյուն պատրիարքութ, մանրանկար, 1237 թ.





Սգկիթ Խաջիմալինում, Շահզադի արքարձան, XVI դ.



Ֆալէքի ամրոցը, 1210 թ.



Արարական անապատուհ (Սիրիա) կառուցված պալատի մուտքը. 730 թ.



Մամիւլա, գյուղ Դամասկոսի մերձակայքում, որի բնակչութեց  
խառնմ են արանքերեն

Ե Ա Խ Ա Ր Մ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ



1952. február 15. - 1952. február 15. - 1952. február 15. -





Օճաշյաների մզկիթը, Դամասկոս, VIII դ-



Կալյա Յուսուս, XII դ-

ալ-Ռուսուց վա ալ-Մուլուց»՝ «Մարգարենների և թագավորների պատմությունը» մեծարժեց աշխատությունը: Այստեղ ար-Թարարին ննդիմայացնում է համաշխարհային պատմությունը աշխարհի ստեղծումից և հասցնում է մինչև 915 թ.: Դամաշխարհային պատմությամ հարցերն են (ուսարանության առարկա եղն և նաև ար-Թարարի հետևորդներ ալ-Ցակութի) (IX դ.): Իրն ալ-Ասիրի (1160–1234 թթ.) և այլոց թողած պատմագիտական աշխատություններուն, որոնք մեծապես օգտվել են ար-Թարարից:

Երրորդ խումբն ընդգրկում է այն պատմչներին, որոնք գրի են առել խալիֆայության պատմությունը նրա տրոհման շրջանում: Ուստի նրանց մոտ գերակայում է ոչ թե խալիֆայության ամրուցական, այլ նրա առանձին մասերի տնդական պատմության ուսումնասիրությունը: Այս ուղղության ամենափայլըն ներկայացուցիչը X–XI դարների պարսիկ պատմաբան Միհսկավային է, որը հայտնի է իր «Գիրը ժողովուրդների վիրճի» աշխատությամբ:

Ար-Թարարիի և նրա հետնորդների մեջ մասի համար ընորոշ եր պատմության, պատմական դեպքերի և իրադարձությունների շարության ժամանակագրական մեթոդը: Խրոնոգիան նրա համար առաջնային նշանակություն ուներ և կազմում էր նրա գրի առած պատմության առանձը:

Իսկ աղյուսների առումով ար-Թարարին օգտագործել է գրավոր աղյուսներ, առաջին հերթին իր մախորդների՝ Իրն Խսակի, ալ-Կալբի, Իրն Սաադի և այլոց գրած պատմությունները, և բանավոր աղյուսներ: Դրամբ իր բազմարիվ ճանապարհորդությունների ժամանակ գրի առած պատմություններն էին:

